

ԶԱՐԻԿ ԽԱԶԱՏՈՒՐԻ ԱՂԱԶԱՆՅԱՆ

**ՇԵՇՏԸ ԵՎ ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ՆԱԻՐԻ
2019**

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.2Հ

Ա 458

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը

Խմբագիր՝ ք. գ. դ., պրոֆ. Ռ. Սաքապետոյան

Աղաջանյան Չ. Խ.

Ա 458 Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում/
Չ. Խ. Աղաջանյան.- Եր.: Նաիրի, 2019.- 232 էջ:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-550-01838-5

© Աղաջանյան Չ.Խ., 2019
© «Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ, 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի երեխայի համար բնությունը ստեղծել է զանգի և բերանի խոռոչի կառուցվածք, և ազգային լեզուն դարերի ընթացքում հարմարվել է այդ կառուցվածքին: Բերանի խոռոչը և այլ օրգաններ հարմարվել են ձշգրիտ արտաբերման համար: Հակառակ դեպքում դա տալիս է լեզվական շեղումներ»:

Բյուխներ

Ցանկացած հասարակության մեջ լեզվի արտասանության օրենքներին համաձայն կանոնավորված ուղղախոսությունը օգնում է արագ, հեշտ և ճիշտ հաղորդակցվելուն: Ուղղախոսական սխալները, չկանոնարկված արտասանությունը շեղում են հաղորդակցման հիմնական նպատակից, կասկածի տակ դնում լեզվի հիմնական գործառույթը: Ինչքան էլ հաջողություններ գրանցվեն կրթական համակարգում, ինչքան էլ բարձրաձայնվի, որ 21-րդ դարը գրագիտության դար է, այնուամենայնիվ ուղղախոսությունը հայերենի նորմավորման գործընթացի թույլ օղակներից մեկն է:

Անվիճելի է, որ ուղղախոսության (մասնավորապես շեշտադրության) նորմավորման հարցում էական նշանակություն ունեն հնչյունների թե՛ որակական և թե՛ վիճակարար (իրադրական) հատկանիշները:

Լեզվախոսքային համընդհանրական օրինաչափություն է՝ շեշտվում են ձայնավորները: Հայերենը ևս սահմանում է՝ **հնչաշղթայում շեշտն ընկնում է ձայնավորի վրա՝ անկախ այն բանից՝ գծանշված է, թե ոչ:** Այս դեպքում արդեն կարևոր նշանակություն ունի ցանկացած լեզվի ձայնավորական համակարգի ուսումնասիրությունը: Ձայնավորների հիմնական տարբերությունները որակական հատկանիշներով են պայմանավորված (կապված արձագանքարանի՝ բերանի խոռոչի ձևի և չափի, լեզվի տարբեր մասերի և դրանց

բարձրացման տարբեր աստիճանների, շրթունքների կլորացման և այլ հատկանիշների հետ): Դրանց հետ հանդես են գալիս վերինչութային, առոգանական (տոնի, բարձրության, ուժգնության) տարբերություններ: Եթե մի շարք լեզուներում տևողության, ուժգնության տարբեր աստիճանները, բարձրության տարբեր տիպերը կարող են լեզվական նշանների իմաստային տարբերակման միջոց դառնալ, ապա հայերենն այս առանձնահատկությամբ չի հատկանշվում. սրանք ամենից առաջ ծառայում են խոսող, հաղորդակցվող լեզվակրի անհատական վերաբերմունքի դրսևորմանը: Ընդունված է ասել, որ վերաբերմունքային տարբերությունները գրության մեջ նշվում են առոգանության հատուկ նշաններով (‘, ’, երբեմն էլ` ’), և որ վերինչութային հատկանիշները հայերենում հազվադեպ են հանդես գալիս «մաքուր» ձևով. ավելի հաճախ են դրանց տարբեր տիպի համակցությունները: Այս մասին Գ. Զահուկյանը գրում է. «Լեզվաբանության, հատկապես ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ, ընդունված է տոնի, ուժգնության և տևողության տարբերությունները դիտել որպես ինքնուրույն հնչյույթներ` **առոգանույթներ (պրոսոդեմաներ)**, սակայն այստեղ մենք գործ ունենք ոչ թե միավորների, այլ հատկանիշների հետ, հատկանիշներ, որոնք կարող են ստեղծել հնչութային տարբերություններ կամ ծառայել խոսքի ձևավորմանն ու սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը»¹:

Արտաքուստ թվում է, թե արդի հայերենում շեշտադրական դժվարություններն այդքան էլ էական, այդքան էլ «վտանգավոր» չեն. գործում է գրեթե բացառություն չճանաչող և բացարձակության միտող համընդհանրական կանոն. **հայերենում շեշտը կայուն-շարժական է և վերջընթեր**: Մինչև անցյալ դարի վերջերը շեշտադրական կանոնը հարաբերականորեն կայուն էր, կարելի է ասել` նաև կարծրացած: Միայն թե վերջին ժամանակներում կանոնարկված շեշտադրությունն սկսեց առավել չափով ենթարկվել խոսակցական լեզվի ազդեցությանը. խոսակցական նորմը դարձավ մրցակից լեզ-

¹ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 80:

վական նորմի համար: Ներկա օրերում, երբ Հայաստանում (և ոչ միայն Հայաստանում) ակնառու են մարդկանց հասարակական կարգավիճակի փոփոխություններ՝ հոգուտ նրանց, ովքեր լավ չեն տիրապետում կամ ընդհանրապես չեն տիրապետում լեզվականոններին, և որոնց լեզուն խառնուրդային է, երբ «բաց են աշխարհի դռները», և փոխներթափանցումների ալիքը դառնում է լեզվասպառնալիք փոքր տերությունների լեզվապահպանության հարցում, երբ զանգվածային լրատվամիջոցների ազդեցությունն անհամեմատ ընդլայնվել-ընդլայնվում է, երբ ուղիղ եթերում, ուղիղ ռադիոկապում լեզվակիրների, նաև «ոչ լեզվակիրների» քանակային աճ է գրանցվում, և հեռարձակվում ու հնչում են «կենդանի ձայներ», բնականաբար առավել սրությամբ պիտի դրվեն ուղղախոսության, շեշտադրության նորմավորման հարցերը:

Շեշտը լեզուների մեծ մասի արտասանական բնութագրիչներից է: Իհարկե, կան նաև անշեշտ լեզուներ, ինչպես ճապոներենը: Լեզվական շեշտն անկախ է զգայական ու իմացական պատճառներից, և այն, որ հայերենում շեշտը կայուն-շարժական է և վերջընթեր, մեր լեզվի պատմական կյանքի արդյունքն է:

Նորմավորման գործընթացում շեշտադրական յուրաքանչյուր կանոն սահմանելիս շեշտի բնույթի, տեղի, դիրքի բնութագրման հետ անհրաժեշտաբար պիտի հաշվի առնվեն նաև շեշտակիր լեզվանշանի հնչյունական միջավայրը (հատկապես բաղաձայնական գուգորդումներում), շեշտակիր վանկի հնչյունային շրջապատը, նրա դիրքը վանկային և բառական շղթաներում, հնչաշղթայում, վանկերի քանակը և դրանց փոխհարաբերությունները: **Շեշտը հնչյունաշղթայում՝ վանկարար հնչյունի, բառում՝ վանկի, նախադասության մեջ բառի առանձնացումն է հնչաբանական միջոցներով** (ձայնի ուժգնությամբ, տոնի բարձրությամբ, հնչման երկարատևությամբ, մկանային լարվածության և օդի հոսանքի ուժեղացմամբ և այլն): Շեշտի միջոցով նշված լեզվական միավորների հնչերանգային-արտասանական ընդգծումը (առանձնացումը) հարաբերակից նմանատիպ միավորների համեմատությամբ կատարվում է ավելի ուժգին արտասանությամբ:

Պատմահամեմատական հնդեվրոպաբանության տվյալները թույլ են տալիս ասել, որ շեշտը ծագել է տոնայնությունից, որի հիման վրա ձևավորվել է տոնային շեշտը, ապա՝ ուժաբանական շեշտը: Այս մասին Տ. Վենդինան գրում է. «Исследования в области сравнительно-исторического языкознания позволили высказать предположение, что ударение развилось из тона, на основе которого сначала сформировалось тоновое ударение, а затем динамическое»²: Բնականաբար, եթե գրաբարին նախորդող դարերում հայերենի շեշտը եղել է վերջընթեր, ապա բացառված չէ, որ է՛լ ավելի վաղ շրջանում այլ բնույթ ունեցած լինի (ազատ կամ շարժական, կայուն շարժական կամ սահմանափակ ազատ և այլն): Ընդհանուր լեզվաբանության մեջ իշխող տեսակետի համաձայն՝ գրաբարում արդեն զգալի չէր երաժշտական շեշտը, և հայերենը՝ իբրև հնդեվրոպական լեզու, պիտի որ կրեր մայր լեզվի երաժշտական շեշտից ուժային շեշտի անցման հետևանքները: Մասնավորապես հայերենի համար նույնը նշում է Հ. Աճառյանը. «Տոն կա անշուշտ նաև հայերենի մեջ, իբրև ժառանգորդ հնդեվրոպական նախալեզվի, բայց նրա հետքը իսպառ կորել է և որևէ կերպ վերականգնել անկարելի է: Միայն հետևցնելով այն բանից, որ նա ուժեղ չէ և չի ազդում իրենից առաջ գտնված բոլոր ծայնավորների վրա, կարելի է ասել, թե պարզապես ուժգնության շեշտ չէր, այլ ուներ նաև տոնի բնույթ, նման լատիներենի, ուր շեշտը տոնի վրա ավելացած է առանց նրան բոլորովին ջնջելու»³: Ընդգծելով շատ լեզուների պատմության մեջ նկատված այն երևույթը, որ շեշտը նախապես եղել է անհաստատ, հետո դարձել է հաստատուն, եղել է երաժշտական, հետո դարձել է ուժգնության կամ տևական, կամ վերջընթերայինից դարձել է վերջնականակային, և հակառակը, լեզվաբանն այն (կամ տոնը) դիտում է նաև որպես «**ձևակ**»: Նա գրում է. «Երաժշտական շեշտի գործածությամբ նայելով՝ մենք տեսնում ենք, որ հնդեվրոպական լեզվի մեջ ոչ մի ծայնական օրենք չկար սահմանափակելու համար այդ. բառի տոնը ներկայացնում է

² **Т. И. Вендина**, Введение в языкознание, Москва, «Высшая школа», 2003, էջ 81:

³ **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 1971, հ. 6, էջ 311:

հարաշարժ մի վիճակ: Ահա այս վիճակը օգտագործվեց ձևաբանության մեջ, և հնդեվրոպական լեզուն գործածեց շեշտի տեղափոխությունը իբրև միջոց՝ տալու համար բառին ինչպես տարբեր իմաստ, նույնպես և տարբեր քերականական ձև... Հնդեվրոպական լեզվի մեջ ուրեմն շեշտի դիրքը ճանաչել անհրաժեշտ է և նա է շատ անգամ, որ որոշում է քերականական այս կամ այն ձևը: Հայերենի մեջ շարժական շեշտը ջնջված լինելով՝ այսպիսի ձևաբանական տարբերություններն էլ ջնջված են»⁴:

Շեշտն էլ, տոնի նման, ենթակա է փոփոխությունների, և այդ փոփոխությունները վերաբերում են նրա տեղին, աստիճանին ու բնույթին: Շեշտի դիրքային խախտման կամ տեղափոխության հիմքում ընկած են՝ **ա)** ծայնական և հոգեբանական պատճառներ (ծայնի երանգի կամ տևողության ազդեցություն, զգայական և տրամաբանական ուժգնության ազդեցություն և այլն). **բ)** համանմանությունը (համաբանությունը). **գ)** փոխառությունները. **դ)** շարադասությունը և այլն:

Շեշտի տեղի փոփոխությունը հանկարծական շարժման արդյունք չէ, այսինքն՝ միանգամից չի կատարվում, այլ ունի երկարժամանակյա տատանումների և պատրաստության անցումային շրջան: Շեշտի աստիճանն էլ կարող է փոխվել, այսինքն՝ անշեշտ վանկերի նկատմամբ նրա ունեցած ուժգնության թափը կարող է մեծանալ կամ փոքրանալ:

Տարբեր ժամանակներում տարբեր տիպի շեշտեր են առանձնացվել՝ **ուժգնության շեշտ**, որը երբեմն կոչվում է **արտաշնչական շեշտ**, **դինամիկ շեշտ** (հանդիպում են **արտաբերական**, **լիահունչ** եզրույթները), **երաժշտական շեշտ**, որ երբեմն կոչվում է **տոնիկ շեշտ** կամ ուղղակի **տոն** և կարող է լինել **սուր**, **բութ** և **պարույկային**, **քանակական** կամ **ժամանակային շեշտ** (պայմանավորված հնչման հատուկ տևողությամբ), **որական** կամ **տեմբրային շեշտ**, **տաղաչափական** կամ **ռիթմային շեշտ**, որ ընկնում է տաղաչափական խմբի որոշակի վանկերի վրա և այլն: Որոշ լեզվաբաններ **բառային**

⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր, 1957, էջ 21-22:

կամ արտասանական շեշտին հակադրում են **խմբային** կամ **շարահյուսական** շեշտը, ինչպես նաև **տրամաբանական** կամ **իմաստային** շեշտը և այլն: Շեշտը կարող է լինել նաև «**հոգեկան**» (այսպիսի շեշտը առաջին վանկի վրա է):

Աշխարհի լեզուներում տարբերակվում են շեշտի հնչաբանական-հնչարտաբերական, կառուցվածքային և ձևակազմական-բառակազմական տեսակներ:

Ա. Հնչաբանական տեսակետից շեշտադրված կամ շեշտակիր վանկի առանձնացումը կատարվում է տարբեր ձևերով՝

ա) Ձայնի ուժգնությամբ. այս դեպքում երբեմն տեղի է ունենում վանկի երկարացում (երկարաձգում). շեշտը կոչվում է **ուժգին** (ուժգնության), **հզոր**, **ուժային** կամ **ուժաբանական** (ինչպես թյուրքական լեզուներում է կամ չեխերենում): Ձայնի ուժգնության աստիճանների տարբերությամբ պայմանավորված՝ առանձնացվում են **ուժեղ շեշտ** կամ **երկշեշտ** (**’**), **սուր շեշտ** (**’**), **բութ** կամ **թույլ շեշտ** (**˘**) և այլն: Այսպիսի շեշտով հատկանշվող լեզուներին առավելապես բնորոշ են կարճ ձայնավորները: Հայերենում ուժգնությունը հանդես է գալիս սովորական և սաստկական աստիճաններով. սովորական ուժգնությունը գրության մեջ չի նշանակվում, սաստկականը նշանակվում է հատուկ նշանով՝ շեշտով (**’**):

բ) Ձայնի, ձայներանգի (տոնի) բարձրացմամբ. շեշտված վանկն առանձնանում է **հնչերանգով**, **առոգանությամբ**, **ձայնի ելևէջով**. այս տիպի շեշտադրումը **տոնայնային** է կամ **երաժշտական** (ինչպես չինարենում): Երաժշտական շեշտադրումը կարող է նաև ելևէջող լինել, որի դեպքում շեշտված վանկն ունի ձայնի տարբեր ելևէջում, օրինակ՝ **բարձրացող** կամ **իջնող** և այլն: Այսպիսի շեշտադրություն ունեցող լեզուներին առավելապես բնորոշ են երկար և կարճ ձայնավորները:

գ) Արտասանության տևականությամբ. շեշտված վանկը երկարացվում է, բայց և չի ուժգնացվում. այսպիսի շեշտադրումը **տևական** է (ինչպես նոր հունարենում, ինդոնեզական լեզվում և այլն): Տևողության փոփոխությունը սովորաբար օժանդակ դեր է խաղում բարձրության և ուժգնության փոփոխությունների համար:

Հայերենում գրության մեջ երկարության հատուկ նշանն () արտահայտում է հատկապես տոնի հետ կապված փոփոխություն:

Հնչաբանական այս տեսակներից ելնելով՝ ընդհանուր լեզվաբանության մեջ տարբերակվում է 3 տիպի շեշտ՝ **ուժային** կամ **դինամիկ**, **քանակական** և **երաժշտական**: Առաջին դեպքում խոսքում շեշտված վանկը առանձնանում է առավել ուժեղ լարվածությամբ, երկրորդ դեպքում ուշադրություն են դարձնում շեշտակիր վանկի ձայնավորի արտաբերության տևականությանը (երկարությանը), երրորդում հաշվի է առնվում շեշտված վանկում տոնի բարձրության փոփոխությունը կամ ձայնային հանգույցների թրթռման հաճախականությունը: Այսպիսի բաժանումը հիմնականում պայմանական է, քանի որ միշտ չէ, որ գործում է միայն մեկ տեսակը, այլ տեղի է ունենում արտասանական-հնչերանգային փոխներթափանցում, որի հետևանքով երբեմն շեշտված վանկը առանձնանում է տոնի բարձրությամբ կամ շեշտված վանկի ձայնավորի տևողության մեծացմամբ: Նման երևույթ դիտվում է նաև քանակային և երաժշտական շեշտ ունեցող լեզուներում: Նման փոխներթափանցումները, տեսակային խաչավորումը հաստատվում են փորձառական հնչյունաբանության տվյալներով: Օրինակ՝ ավանդական մոտեցմամբ, ռուսերենում բոլոր 3 տեսակներն էլ համատեղվում են այն հաշվարկմամբ, որ շեշտակիր վանկը և՛ ամենաուժեղն է հնչում, և՛ ամենաերկարատևն է, և՛ նրանում տեղի է ունենում տոնայնային շարժում (բարձրացում կամ իջեցում): Սակայն փորձառական հնչյունաբանության ժամանակակից տվյալները չեն հաստատում այս տեսակետը (կարելի է ասել՝ ռուսերենում շեշտը տևական է):

Բ. Ձայնի հնչարտաբերական հատկանիշներից ելնելով՝ շեշտը դասակարգվում է նաև ըստ ձայնային բարձրության. այս դեպքում այն լինում է՝

ա) միատոն կամ արտաշնչական. բնութագրվում է ձայնային միևնույն բարձրությամբ և հատկանշվում է ուժգնության փոփոխությամբ ու վանկարար հնչյունի տևականությամբ:

բ) բազմատոն կամ երաժշտական. այսպիսի շեշտը քիչ լեզուների է հատուկ: Կարելի է ասել, որ ուժգնության և քանակային շեշտ

ունեցող լեզուները միատոն են. պարզ է, որ դրանք քանակապես շատ են, իսկ բազմատոն են երաժշտական շեշտ ունեցող լեզուները:

Շեշտված վանկի ուժգնությունը կախված է մի քանի գործոններից՝

1. **Շեշտ կրող ձայնավորի որակից** (օրինակ՝ ռուսերենում ամենաուժեղը կամ ամենաբարձրը հնչում է **а**-ն, իսկ ամենաթույլը կամ կամացը՝ **ы**-ն, հայերենում ուժեղ են **ա**-ն, **ու**-ն, բայց համեմատաբար թույլ է **ի**-ն, գաղտնավանկի **ը**-ն ամենաթույլն է կամ ընդհանրապես չեշտագուրկ է և այլն):

2. **Բառում շեշտվող ձայնավորի գրաված դիրքից**. ինչքան շեշտակիր ձայնավորը մոտ է բառասկզբին, այդքան բարձր է հնչում: Օրինակ՝ վերջնաշեշտ հայերենում շեշտված վանկի ուժգնությունը համեմատաբար թույլ է:

3. **Վանկի բաց կամ փակ լինելուց**. բաց վանկում ձայնավորն ավելի ուժգին է հնչում: Տոնի տարբերությունները արտահայտվում են երկու հակադիր հատկանիշներով՝ բարձրացմամբ և իջեցմամբ (ցածրացմամբ):

4. **Բացի** հնչաբանական տեսակներից՝ առանձնացվում են շեշտի նաև կառուցվածքային տեսակներ: Կախված այն բանից, թե շեշտը վանկազմական կառուցվածքի ո՞ր դիրքում է, տարբերակում են **կայուն** և **ազատ** շեշտեր: Ազատ շեշտադրումը չամրակայված շեշտադրումն է, որի դեպքում շեշտը կարող է ընկնել բառի ցանկացած վանկի վրա: Այս դեպքում այն կարող է իր տեղն ազատ փոխել և որոշ դեպքերում դառնալ իմաստային, անգամ խոսքիմասային տարբերակման միջոց: Իսկ կայուն շեշտադրումն ամրակայված է (օրինակ՝ ֆրանսերենում այն ընկնում է վերջին վանկի վրա. այդպես է և հայերենում, լեհերենում՝ նախավերջին, անգլերենում և չեխերենում՝ առաջին, լեզգիերենում՝ երկրորդ և այլն): Որոշ լեզուներում շեշտը որոշակի է և կախված է վանկերի քանակից: Այն լեզուներում, որոնցում շեշտը տարբեր բառերի տարբեր դիրքերում կարող է դրվել (տարբեր վանկերում կարող է հայտնվել), այն դառնում է յուրաքանչյուր առանձին վերցված բառի առանձնահատկությունը:

Որոշ լեզվաբանության մեջ նշվում է ռուսերենի այս առանձնահատկությունը. «Ударение в русском свободное... В русском языке ударение может падать на любой слог, поэтому его называют **разноместным**. Кроме того, ударение в русском языке бывает **подвижным** и **неподвижным**. Большая часть слов русского языка имеет неподвижное ударение... Ударение имеет большое значение в русском языке и выполняет различные функции. От ударения зависит семантика слов... Оно указывает на грамматическую форму. Наконец, ударение помогает различать значение слов и их формы»⁵:

Ղ. Ձևակազմական և բառակազմական առումով շեշտը կարող է լինել **շարժական** և **ոչ շարժական**: Շարժական է, երբ տարբեր ձևափոխությունների դեպքում այն տեղափոխվում է՝ պայմանավորված որոշակի ձևակազմիչի կամ բառակազմիչի ավելացմամբ: Շարժական շեշտը շատ հաճախ անվանում են «խաղացող», «բափառող», «ման եկող»: Օրինակ՝ ռուսերենում շեշտը շարժական է, և ինչպես նկատում է Հ. Աճառյանը, «կարող է առաջին վանկից սկսած մինչև վերջինը խաղալ շարունակ, առանց որևէ կանոնի, ինչպես «ման եկող», դանիերենում, իտալերենում, պորտուգալերենում «շեշտը խաղում է բառի վերջին երեք վանկերի վրա», իսպաներենում շեշտը դրվում է վերջընթեր կամ վերջին վանկի վրա՝ «կախված այն բանից, թե ինչ բաղաձայնով կամ ձայնավորով, երկբարբառով է վերջանում»⁶: Իսկ ոչ շարժականի դեպքում բառակազմական և ձևակազմական ձևայինները շեշտի դիրքի տեղափոխության պատճառ չեն դառնում: Օրինակ՝ անգլերենում բառում շեշտի դիրքը չի փոխվում, ինչքան էլ նախդիրներ ավելացվեն սկզբից:

Այսպիսով՝ ընդհանուր լեզվաբանության մեջ, շեշտի դիրքային նկարագրից ելնելով, տարբերում են 3 տեսակ շեշտ՝ **կայուն**, **շարժական** և **կայուն-շարժական**: Իսկ արտաբերության առումով՝ **երաժշտական**, **ուժգնության** և **քանակային**: Այս դեպքում ինչպիսի՞ հարաբերություն կա շեշտի դիրքային և արտաբերական բնույթների

⁵ А. Введенская, А. Павлова, Е. Кашаева, Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2004, էջ 21-22:

⁶ Տե՛ս՝ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 318:

միջև: Եղած տեսակետների համադրական և համեմատական քննությունից ելնելով՝ կարող ենք ասել՝ դրանք որոշակիորեն փոխկապակցված են. ցանկացած լեզվում ինչ-որ առումով երաժշտական շեշտի առկայությունը ենթադրում է չարժական կամ կայուն-չարժական շեշտի առկայություն, իսկ դիրքայնորեն կայուն շեշտի առկայությունը ենթադրում է ուժգնության շեշտի առկայություն: Շեշտակիր հնչյունի տևականություն նկատելի է գրեթե բոլոր լեզուներում:

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՃՅՈՒՂ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԼԵԶՎԱԲԱՂԱԴՐԻՉ

Շեշտը բանավոր խոսքի կարևորագույն բաղադրիչներից է, և նրա բնույթի, առանձնահատկությունների, գործառնությունների ուսումնասիրությամբ ավանդաբար զբաղվել, զբաղվում է արտասանվածքի վերլուծության ենթաբաժիններից մեկը՝ **շեշտադրությունը**: Յուրատեսակ լեզվախոսքային խաչաձևման ենթ առնչվում. լայն առումով շեշտադրությունը ուղղախոսության մանրահամակարգերից է. ավանդական հայերենագիտության մեջ արտասանության, քերականական որոշ ձևերի կազմության կանոնների կողքին (օրինակ՝ **արյունով**, թե՞ **արյամբ**, **բերի՞**, թե՞ **բերեցի**, **տվի՞**, թե՞ **տվեցի**, **չպիտի տա՞մ**, թե՞ **պիտի չտամ** և այլն) նպատակահարմար է դիտվել լեզվական-ուղղախոսական նորմի մեջ ներառել նաև շեշտադրականը: Մյուս կողմից, է՛լ ավելի լայն ըմբռնմամբ, շեշտադրությունը՝ որպես արտասանության բաղադրիչ-տարր, նաև խոսքային ենթահամակարգ է: Մերօրյա հայերենում շեշտադրության մակերեսային և խորքային նկարագրության արդյունքներն անվիճելիորեն թույլ են տալիս ենթադրել, որ ճիշտ չէ շեշտի, շեշտադրության, վերջինիս նորմավորման գործընթացը «կաշկանդել» հնչյունաբանական-ուղղախոսական մակարդակի սահմաններում:

Ընդունված սովորույթի համաձայն՝ շեշտի մասին խոսելիս առավելապես բազմավանկ բառերին են ուշադրություն դարձնում՝ նրանցում առանձնացնելով շեշտակիր վանկը, որը հակադրվում է մյուսներին իր ուժգնությամբ, հստակությամբ և հնչեղությամբ: Բայց շեշտ ունեն նաև միավանկ բառերը, որոնցում հակադրության բացակայության պատճառով չի երևում շեշտի գոյությունը: Միավանկ

բառերում շեշտված վանկի և անշեշտի կամ անշեշտների հակադրության հիմունքը գրոյանում է, սակայն միավանկ և բազմավանկ բառերի հակադրությունն է դառնում հիմք՝ դրանք միավորելու բառային շեշտ կրելու անհերքելի իրողությամբ: Այս հակադրությունը իրավունք է տալիս սահմանել, որ միավանկ բառերը ևս շեշտվում են:

Շեշտադրության ուսումնասիրության գործընթացում առավելապես նյութական խոսքի մասերի շեշտադրությունն է կանոնարկվել, իսկ ոչ նյութական խոսքի մասերից միայն պարտադիր սրաշեշտությամբ հատկանշվող բառերն են առանձնացել, և լեզվագիտական աղբյուրներում առ այսօր անպատասխան է մնացել՝ մնացածները բառային շեշտ կրո՞ւմ են, թե՞ ոչ:

Նմանատիպ հարցերի քննությունը պարտադիր է շեշտադրության նորմավորման գործընթացում, և շեշտի հնչական-հնչարտաբերական, արտասանական-ուղղախոսական բնութագիրը անհրաժեշտ է լրացնել բառական-բառակազմական և ձևաբանական-ձևակազմական քննության տվյալներով:

Մյուս կողմից՝ շեշտադրության հաղորդակցական գործառնությունը՝ զգայական, իմացական, կամային, ամբողջական ու լիարժեք չեն լինի, եթե դրանք պարզաբանվեն միայն նախադասության սահմաններում՝ լեզվական-շարահյուսական մակարդակում: Ահա թե ինչու այսօր, երբ լեզվի և խոսքի մշակույթի համակցված ուսումնասիրության անհրաժեշտությունն անժխտելի է, և երբ լեզվական նորմը դիտվում է որպես խոսքի մշակույթի հիմնաբաղադրիչ, արդի լեզվամտածողությանը համապատասխան՝ անվերապահորեն կարելի է պնդել նաև՝ ընդհանուր առմամբ շեշտադրական նորմը և՛ լեզվական, և՛ խոսքային արտասանական-հնչական մանրահամակարգերի ենթանորմերի հանրագումարն է: Ավելին, շեշտադրական նորմին համապատասխան շեշտադրումը և նրանից կատարված գիտակցած շեղումը խոսքարվեստի արտահայտիչներից են: Դժվար չէ կռահել, որ գիտական կլինի շեշտադրությունը կանոնարկել լեզվի և խոսքի հակադրամիասնությունից ելելով: Հենց այս ճանապարհով էլ փորձել ենք ներկայացնել շեշտի և շեշտադրության նորմավորման հարցերը՝ ելակետային դարձնելով այն, որ

խոսքն անմիջապես կախված է իրացման հանգամանքներից, հարողորակցական իրավիճակից, իր վրա կրում է պատմական և հասարակական միջավայրի, նաև խոսքակիր անհատի ներգործությունը, և լեզուն այդպիսի իրավիճակային ներգործություններից պաշտպանվում է իր նորմով: Հնարավորության սահմաններում աշխատել ենք միայն պայմանականորեն առանձնացնել շեշտադրական-լեզվական նորմը շեշտադրական-խոսքային նորմից՝ ուղղորդվելով առավելապես հարցի լեզվաքննական ուսումնասիրությամբ:

Շեշտ ունեցող յուրաքանչյուր լեզվի, այդ թվում նաև հայերենին, բնորոշ է շեշտի կանոնավորված գործածությունը՝ շեշտում կամ շեշտադրություն: Հնդեվրոպական երաժշտական ու փոփոխական շեշտից հայերենը պահել է դրա մասնակի արտահայտություններ (հնչերանգային՝ հարցական ու բացականչական կաղապարներում, որոշ ձայնարկություններում, հարցական բառերում): Դեռևս հնագույն՝ նախագրային հայերենում հաստատվել է ուժային ու կայուն շեշտը՝ վերջընթեր վանկում: Ընդ որում շեշտագրկված վերջնավանկը (ձայնավոր կամ սա՝ բաղաձայնով հանդերձ) արտասանական թուլացման պատճառով ժամանակի ընթացքում ընկել է: Վերջնավանկի անկումով պայմանավորված՝ արդեն գրաբարում նախկին վերջընթեր վանկի շեշտը դարձավ վերջնավանկային: Սակայն որոշ, հիմնականում արևելահայ բարբառներում (Ղարաբաղի, Կարճևանի, Գորիսի, Հադրութի և այլն) այն վերջընթեր վանկում է: Գ. Զահուկյանը գրում է. «Շեշտի փոփոխությունը դադարել է ձևաբանական իմաստները տարբերակող խաղալուց՝ հնդեվրոպական բարձրության շեշտի (տոնի) բնույթի փոփոխության հետևանքով, հնդեվրոպական տոնիկական (բարձրության) և ազատ շեշտին հին հայերենում փոխարինել էր ուժային (դինամիկ) և կապված շեշտը: Սակայն հին հայերենի շեշտը կապված վերջնավանկային լինելով հանդերձ՝ չարժական շեշտ էր. հղովման ժամանակ այն կարող է և տեղափոխվել դեպի վերջնավանկը: Շեշտի տեղափոխությունը առաջացնում էր շեշտակորույս վանկի որոշ ձայնավորների և երկբարբառների փոփոխություն կամ սղում»⁷:

⁷ Գ. Զահուկյան, Հին հայերենի հղովման սխտեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 73:

Բանավոր խոսքի շեշտային առանձնահատկությունը դրսևորվում է ձայնի ուժգնությամբ, բարձրության տարբեր աստիճաններով, տոնային տարբեր ելևէջումներով, իսկ գրավոր խոսքում այն սովորաբար չի նշվում, սակայն երբ անհրաժեշտություն է առաջանում, այդ ուժգնությունն արտահայտվում է շեշտանշանով (կամ **շեշտ** գծանշանով): Հայերենի շեշտի նշանը դրվում է շեշտված ձայնավորի կամ վանկարար հնչյունի վրա, երբ անհրաժեշտ է տվյալ բառը հատկապես շեշտել: Այն դեպի ներքև սրացող և դեպի ձախ թեքված (վերևից ներքև ձախ ենք թեքում) գծիկ է (´). սովորաբար դրվում է բառի ուժգնության շեշտի տեղում: Նշանակագրված շեշտով արտասանությունն է՛լ ավելի է աստկացնում տրամաբանական-իմաստային կողմը: Մ. Աբեղյանը գրում է. «Շեշտերի աստիճաններն ըստ իրենց ուժի ցույց տալու նպատակով գործածված են շեշտված վանկերի համար հետևյալ նշանները՝ երկշեշտ (˝)՝ ամենից ուժեղ շեշտի համար, շեշտ (´) և բութ (˘): Վերջինս կողմնակի կամ երկրորդական թույլ շեշտի համար է: Իսկ շեշտված ու երկար վանկի ձայնավորի վրա դրվում է երկար (˘) նշանը»⁸: Այստեղ տեղին է նշել, որ ըստ կետադրության պատմական քննության տվյալների՝ բութը սկզբնապես նշանակել է ձայնի իջեցում, այսինքն՝ եղել է առոգանության նշան և համեմատաբար ուշ է անցել տրոհություն նշանների շարքը: Ժամանակակից գրական հայերենի կետադրական նորմը սահմանում է՝ բութը տրոհության նշան է, և դադարի գրավոր նշանակման պայմանական հինգ աստիճաններից մեկը բութայինն է, իսկ նրա գրավոր արտահայտման ցուցիչն է՝ (˘): Հայերենում մասնակիորեն դրսևորվող երաժշտական շեշտը գրությամբ արտահայտվում է կանոնադրական նշանով, կանոնադրական չլի: Պետք է նկատել, որ այդպիսի շեշտ կրող լեզվախոսքային միավորը շեշտված է:

Բառը սովորաբար ունենում է մեկ շեշտ, սակայն երբեմն (որպես կանոն՝ բազմաբաղադրիչ բառերում) նաև երկրորդական շեշտեր են դրվում, կամ բառի այլ վանկեր են շեշտադրվում: Տարբեր լեզուներում կան նաև **երկգագաթանի վանկեր** ունեցող բառեր. սրանք

⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ե, Եր., 1971, էջ 28:

ունեն երկու շեշտ՝ մեկն առավել ուժգին, քան մյուսը (ինչպես գերմաներենում): Ընդհանուր լեզվաբանության մեջ գործում է նաև **շեշտային համանունությունը**. կան լեզուներ, որոնք ունեն շեշտային համանուններ:

Արդեն նշվել է, որ շեշտի միջոցով առանձնացվում են լեզվական տարբեր միավորներ: Այս հիմունքով որոշ լեզվաբաններ առանձնացնում են **բառային** և **տրամաբանական** շեշտեր, մի քանիսը՝ **բառային, շարությանային, նախադասության, երրորդները՝ բառային, քերականական, տրամաբանական** և այլն: Բոլոր դեպքերում բաժանման այս տիպերն իրենց խորքային էությանմբ նույնանում են:

Շեշտի մասին ամփոփ և ընդհանրացված նկարագրական բնութագրումը տրված է Լ. Խաչատրյանի «Լեզվաբանության ներածության» մեջ. կարճառոտ տարբերակով մեջբերում ենք այն. «Հնչյունային շղթայի օղակները տարբերակվում են ըստ լեզվական միավորների. դրանք են հնչույթներն ու վանկերը, որոնք դիտվում են իբրև լեզվական պարզագույն հատույթային միավորներ, և շեշտն ու հնչերանգը (ինտոնացիան), որոնք դիտվում են լեզվական վերհատույթային միավորներ: Տակտերն ու դարձույթները հատույթային բարդ միավորներ են, որոնք միավորվում են շեշտի ու հնչերանգի միջոցով: ...Ամբողջ բառը, անկախ նրա հնչյունների և վանկերի քանակից, արտասանվում է որպես արտասանական շղթայի ինքնուրույն հատված: Արտասանական տեսակետից բառի առանձնացումն իրականացվում է տարբեր միջոցներով, որոնք կոչվում են բառի սահմանազատիչ հատկանիշներ: Հայերենում այդպիսի հատկանիշ է բառային շեշտը: Շեշտն արտասանական շղթայում հնչյունի, վանկի կամ բառի ընդգծումն է, որ կատարվում է մկանային լարվածության և օդի հոսանքի ուժեղացման միջոցով կամ ձայնի տոնի բարձրացումով: Ըստ առանձնացվող միավորի՝ շեշտը լինում է բառային և տրամաբանական: Բառային շեշտը, ըստ ձայնային հնչարտաբերական հատկանիշի, լինում է միատոն (արտաշնչական) և բազմատոն (երաժշտական)... Այսպես՝ հայերենում և ռուսերենում շեշտված վանկը անշեշտ վանկից տարբերվում է ոչ միայն ուժգնությամբ, այլև տևականությամբ: Բազմատոն շեշտը

բնութագրվում է ծայրի տոնայնության բարձրության փոփոխությամբ, երաժշտականությամբ: Այդպիսի շեշտ ունեն հին հունարենը, հին հնդկերենը, չինարենը: Այդ լեզուներում հանդիպում են այսպես կոչված շեշտային համառնուններ: Ըստ դիրքի շեշտը կարող է լինել ազատ և կապված...»⁹:

ՇԵՇՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բառային շեշտի հիմնական գործառնությունը բառի **հնչյունական ձևավորվածությանը** ծառայելն է, վերջինիս **ամբողջականության ապահովումն** է, նրա **առանձնացումը**⁹՝ հնչերանգային դրսևորմամբ: Բառային շեշտը նաև բառի **սահմանագատիչ** հատկանիշներից մեկն է: Շատ դեպքերում կատարում է բառատարբերակման-բառաձևատարբերակման գործառնություն: Շեշտի՝ բառի վանկերը, բաղադրիչները մեկ ամբողջ հնչաբառի մեջ միաձուլելու մասին է վկայում այն փաստը, որ հաճախ շեշտի տեղափոխության հետևանքով նախորդ բաղադրիչը կարող է ենթարկվել հնչյունափոխության՝ դրանով իսկ կորցնելով իր արտասանական ինքնությունը՝ հնչապատկերը ամբողջ բաղադրյալի մեջ: Ահա թե ինչու ընդհանրապես շեշտի ձևավորող, իմաստառձական գործառնությունը ազդում է նաև բառային շեշտի դիրքի վրա: Այս հանգամանքով է պայմանավորված շեշտի նաև մեկ այլ՝ հնչյունական-ծայնափոխական առանձնահատկության կարևորումը. որոշ լեզուներում շեշտն ունակ է թուլացնելու ծայնավորներն անշեշտ կամ շեշտակորույս վանկերում, որի հետևանքով նրանց ծայնաբանական բնութագիրը փոխվում է: Ուսերենում, օրինակ, **a** և **o** ծայնավորները շեշտված լինելու դեպքում զանազանվում են, իսկ անշեշտ վանկերում՝ ոչ: Այս երևույթը շատ լավ նկատելի է գերմանական լեզուներում, որոնցում անշեշտ ծայնավորները զգալիորեն թուլանում են, հայերենում հնչյունափոխվում են կամ սղվում, իսկ, օրինակ, իսպաներենում ծայնաբանական այդ փոփոխությունը չափազանց թույլ է, աննկատ, որոշ

⁹ **Լ. Խաչատրյան**, Լեզվաբանության ներածություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008, էջ 98-100:

լեզուներում (օրինակ՝ իտալերենում, վրացերենում) այն ընդհանրապես զգալի չէ:

Հնչանախադասության մեջ շեշտը երկակի գործառույթ ունի՝ **միավորիչ** և **առանձնացնող-ընդգծիչ**. մի կողմից միավորում է բառերը ռիթմական որոշակի խմբերի (տակտերի, դարձույթների և շարույթների), մյուս կողմից՝ ընդգծում կամ առանձնացնում է նախադասության անդամները:

Շեշտն **արտահայտչականության** կամ **ոճավորման** գործառույթ էլ է կատարում. խոսքարվեստում, խոսքի մշակույթում յուրաքանչյուր շեշտակիր բառ, յուրաքանչյուր շեշտակիր հնչյուն ու արտահայտություն օժտված է իմաստային, հուզական ու գեղագիտական որոշակի լիցքով. շեշտի միջոցով բառը զգեստավորվում է զգացմունքաարտահայտչական երանգով:

Շեշտ օգնում է նաև վերականգնելու կորսված իրողությունները, այսինքն՝ ունի **վերականգնիչ գործառույթ**: Այս գործառությամբ հայերենյան շեշտի ուսումնասիրությունը համալեզվաբանական, ծագումնաբանական շատ արժեքավոր տվյալներ կարող է վերհանել: Հատկապես բարբառային շեշտադրության շատ օրինաչափություններ կարող են ծառայել նախահայերենի (ընդունված է ասել՝ վաղնջահայերենի) և անգամ հնդեվրոպական մայր լեզվի «վերականգնողական» աշխատանքներին: Որպես օրինակ նշենք հետևյալը: Այսպես՝ հայտնի և ընդունված տեսակետ է՝ հայերենում բայական բառույթը կազմավորվում է միայն մասնիկավորումով, և այս յուրահատկությամբ միշտ ածանցյալ է՝ արմատից գոյացած: Անժխտելի է նաև այն, որ բայական ոչ մի բաղադրություն չի կարող իր արմատից առաջ գոյացած լինել: Ա. Աբրահամյանը, հակառակ անդումն անհեթեթություն համարելով, անդրադառնում է ժամանակակից գիտական լեզվաբանության վիճահարույց հարցերից մեկի նյութին (բայն ու գոյականը տարբե՞ր ծագում ունեն արդյոք, և եթե այո, ապա ո՞րն է առաջ ծագել) և ընդհանուր արմատ ունեցող բայական բառույթների և այլ խոսքի մասերի հարաբերակցության որոշման հիմունքների և միջոցների մասին խոսելիս նրանցից մեկը կապում է շեշտի և շեշտափոխության, վերջինիս պատճառով կատարված հնչյունափոխության հետ: Այսինքն՝ որոշ դեպքերում

շեշտափոխված բայափոխման և շեշտափոխված գոյականի համեմատությամբ կարելի է պատասխանել «բա՞յ, թե՞ գոյական» ծագումնաբանական առաջնայնության հարցին: Լեզվաբանը գրում է. «Շեշտից կախված հնչյունական փոփոխություններն ունենի իրենց որոշակի օրինաչափություններն այն ժամանակ, երբ հայերենը գրի առնվեց... Դրանք հիմնականում ժառանգաբար ընդունվել են մեր լեզվի հետագա շրջանների, այդ թվում և ժամանակակից արևելահայ գրական լեզվի կողմից: Այստեղ կենդանի են հնչյունափոխական շատ օրենքներ: Բայերի կազմությունը որոշելիս որոշ դեր կարող են խաղալ հնչյունական այդ փոփոխությունները: Երբ համեմատում ենք բայի կազմության մեջ մտնող համապատասխան մասնաբաժնի մասնիկավորման որպես անկախ բառույթ գործածվող նույնարմատ բայի հետ և նկատում ենք, որ բայի կազմում իրոք առաջացել է հնչյունական փոփոխություն՝ շեշտի տեղափոխությամբ, իսկ անկախ բառույթը շեշտը կրելով համապատասխան վանկի վրա՝ հնչյունական այդ փոփոխությունը չունի, պարզ է դառնում, որ ոչ բայական բառույթը սկզբնականն է, իսկ բայը կազմությամբ հաջորդում է նրան, քանի որ կատարվել է մասնիկավորում, սրանց զուգակցվել է շեշտափոխությունը, և վերջինիս հետևանքն էլ եղել է համապատասխան հնչյունափոխությունը: Սակայն պետք է ասել, որ սա ընդհանուր, բայց ոչ բացարձակ կանոն է»¹⁰:

Շեշտի գործառնությունների մասին խոսելիս անհրաժեշտ է կարևորել նրա **հաղորդակցական-հնչեղանակային** դերը. լեզվական միջոցների (բառերի, շարահյուսական կառույցների, եղանակավորության արտահայտման ձևերի, վերահատույթային միավորների, էթիկետային կաղապարների և այլն), համապատասխան ընտրությամբ արտահայտել ա՛յն, ինչ հաղորդողը՝ լեզվակիր-խոսքակիրն է ուզում և զգում, և այնպե՛ս արտահայտել, որ դիմացինն էլ դա նույն ձևով ընկալի ու զգա, այսինքն՝ իրագործի հաղորդակցական իր նպատակները: Սա երևի թե մարդու մշակութային գործունեության ամենաբարդ կողմն է, և կարելի է ասել, որ այն ծառայում է նաև վերծանության արվեստին:

¹⁰ Ա. Արախամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 78-79:

ՇԵՇՏԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրական հայերենի շեշտադրության նկարագրությունը և շեշտակրության յուրահատկությունների վերհանումը պետք է ներկայացվի միայն երկու տարբերակների պատմահամեմատական-գուգադրական քննությամբ, և գիտական ու տրամաբանական կլինի, եթե շեշտադրության նորմավորման գործընթացն ուղղորդվի ըստ այդ տվյալների: Ե՛վ արևմտահայերենը, և՛ արևելահայերենը ժառանգել են գրաբարյան շեշտը, շեշտադրությունը, և կանոնարկումն էլ գրեթե նույն ճանապարհով է կատարվում: Թե՛ մեկում, թե՛ մյուսում վերինչոյթային հատկանիշները ոչ միշտ են «մաքուր» ձևով հանդես գալիս. ավելի հաճախ են դրանց տարբեր տիպի համակցությունները: Ընդ որում՝ երկուսում էլ ոճաարտահայտչական և անհատական-վերաբերմունքային տարբերությունները գրության մեջ նշվում են առոգանության նույն նշաններով. ունեն նույն նշույթները: Երկու հայերեններում էլ շեշտը իմաստազատիչ չէ, սակայն սահմանազատիչ գործառույթ ունի: Ե՛վ առաջինում, և՛ երկրորդում բառերն ունեն երկրորդական՝ հավելական շեշտեր, որոնք գործառությամբ նույնանում են. իմաստակիր բաղադրիչների առանձնացմանն են ծառայում: Ինչքան հայտնի է, արևելահայերենի համեմատությամբ արևմտահայերենի շեշտի փորձառական քննություն դեռևս չի կատարվել: Կատարվելիք նման քննությունը պիտի որ բազմաթիվ ու տարատեսակ շեղումներ և տատանումներ վերհանի, քանի որ ժամանակակից արևմտահայերենն ավելի մեծ հավանականություն ունի այլ լեզուների արտասանական-ուղղախոսական ազդեցությունների փորձությանը ենթարկվելու, սակայն արևելահայերենում շեշտադրական շեղումները համեմատաբար ավելի զգալի են, և սա բացատրվում է փոխառությունների կշռույթով, նաև՝ լեզվավերահսկողության թերացումով: Կարծում ենք, որ շեշտափոխության նրբին տարբերությունները ամենից առաջ պետք է բացատրել շեշտակիր միավորի հնչյունական շրջապատի տարբերություններով: Բնականաբար հասկանալի է, որ նշված շրջապատը բաղաձայնական է՝ շեշտակիր ձայնավորի՝ բաղաձայնի կամ բաղաձայնների տարբեր զուգորդումներով, իսկ այն հանգամանքը, որ

բաղաձայնական համակարգը եռաստիճան-երկաստիճան տարբերակային հակադրություն ունի, հնարավոր չէ ուժգնության, նրա տարբեր աստիճանների և կամ տոնայնության ու տևականության տարբեր համակցումների տարբեր հարաբերակցությունների պատճառ չդառնալ: Այսպիսի տարբերությունները, սակայն, առավել չափով փորձառական հնչյունաբանության տվյալներով կարող են հաստատվել: Ըստ լեզվահամեմատական գիտադրյունների՝ արևմտահայերենում շեշտված վանկի տևողությունն ավելի է անշեշտի համեմատությամբ, քան արևելահայերենում: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ տևողության նկատելի փոփոխությունը տոնայնության զգալի փոփոխություն պիտի առաջացնի: Գնահատելի է, որ այսօր արևմտահայերենն արևելահայերենին զուգընթաց ուսումնասիրվում է, բայց խնդրո առարկայի վերաբերյալ նյութերը քիչ են և ոչ ամբողջական: Գուցեն պատճառն այն է, որ շեշտի և շեշտադրության հարցերում եղած արևմտահայերեն-արևելահայերեն տարբերություններն այդքան էլ էական չեն, որակական չեն: Մեր ծեռքի տակ եղած աղբյուրներում այս հարցին, կարելի է ասել, միայն Ա. Սարգսյանն է անդրադարձել. ահա թե ինչու կարևոր ենք համարել ասվածն ամփոփել նրա կողմից կատարված շեշտահամեմատական վերլուծությամբ: Ըստ նրա՝ շեշտը հնչերանգի միավորներից է (ինչպես մեղեդայնությունը, տեմպը, դադարը, տոնի աստիճանը) և տիպաբանական զուգադրության ցուցիչ է արևմտահայ և արևելահայ գրական լեզուների զուգադրական քննության ճանապարհին: Հեղինակը, կետ առ կետ ներկայացնելով շեշտը երկու լեզուներում էլ, գրում է. «Բառային շեշտը երկուսում էլ՝ 1. Սահմանազատիչ դեր ունի և ընկնում է բառի վերջին վանկի վրա (բացառությամբ սպասարկու բառերի և մասնիկների, ինչպես նաև **Ը** ծայնավորի վերջնային դիրքի, երբ շեշտվում է վերջընթեր վանկը): 2. Հնչաշղթայում բառական միավորները և հնչյունական բառերը հիմնականում համընկնում են: 3. Երկուսում էլ բառային շեշտը ուժային է: 4. Բոլոր շեշտակիր վանկերը անշեշտներից ավելի երկար են: 5. Երբեմն, ինչպես վկայում են արևելահայերենի տվյալները, շեշտակիր վանկի տևողությունը կրկնակի անգամ երկար է անշեշտ վանկի

տևողությունից: 6. Հիմնական տոնի փոփոխությունը երկուսում էլ պայմանավորված է տվյալ հաղորդակցական տիպի հնչերանգային կառուցվածքով: 7. Վերջապես բազմավանկ բառերի բառային շեշտը երկուսում էլ ունի այն բնորոշ գիծը, որ շեշտակիր և անշեշտ վանկերը բաշխվում են որոշ ռիթմական հաջորդականությամբ, ընդ որում որոշակի միտում կա յուրաքանչյուր երրորդ վանկը շեշտել: Ըստ արևելահայերենի շեշտադրության՝ բառասկիզբն ու բառավերջն ունեն երկար տևողություն՝ բառամիջի վանկերի տևողության համեմատությամբ: Եթե զուգադրենք երկու գրականների շեշտի՝ կանոնական ձևերից ունեցած շեղումները, ապա կտեսնենք, որ այն ավելի բնորոշ է արևելահայերենին: Այդ պայմանավորված է նաև տվյալ լեզվական համակարգում փոխառությունների որոշակի կշռով և ազդեցությամբ: Կարելի է ասել, որ շեշտակիր վանկի և անշեշտ վանկի միջև առկա տարբերությունը արևմտահայերենում ավելի զգալի է, քան արևելահայերենում: Տոնի փոփոխության երևույթը նույնպես արևմտահայերենում հարաբերաբար մեծ դեր ունի: Երկու գրականների շեշտը իմաստազատիչ դեր չունի. այն կատարում է բառավերջի ազդանշանի (բառի ավարտի) դեր, բացի այդ կատարելով շարահյուսական որոշակի գործառնություն (միավորում է բառերը ռիթմական որոշակի խմբերի և շարույթների): Բազմաբարդ բառերում հավելական շեշտերը կատարում են սովորաբար իմաստակիր բաղադրիչներն ընդգծող դեր (ընդ որում երկար բառերում շեշտվում են հատկապես արմատական մասերը)»¹¹:

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԼԵԶՎԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Շեշտադրությունն արտասանության կամ հնչաբանության, ուղղախոսության նյութն է: Սակայն շեշտի տարագործառնությունների ուսումնասիրությունը երևան է հանում նրա անուրանալի կապը լեզվաբանական-բանասիրական գիտությունների հետ:

¹¹ Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985, էջ 76-77:

Բառագիտական նորմը բառը սահմանելիս նաև շեշտակրությունն է կարևորում: Բառային շեշտի հիմնական գործառույթը բառի հնչյունական ձևավորվածությանը, նրա ամբողջականության ապահովմանը ծառայելն է: Բառային շեշտը նաև բառի սահմանագատիչ, բառաբաժանիչ հատկանիշներից մեկն է: Շեշտի սահմանագատիչ և բառաձևավորող հատկանիշները շեշտադրության և բառագիտություն հարաբերակցության անվիճելի հիմքերն են, իսկ ձևաբանական և շարահյուսական ընդգծողական (թե՛ քերականական իմաստի սաստկացման, թե՛ հնչերանգային առանձնահատկությամբ բառի առանձնացման) հատկանիշը քերականության հետ նրա կապի դրսևորումները մեկն է:

Շեշտադրության ուսումնասիրությունն անմիջականորեն կապվում է **հնչյունափոխության և վանկակազմության** հետ: Վանկակազմությունը լեզվի մեջ գործնական նշանակություն ունի. տողադարձը հիմնվում է նրա վրա: Վանկը արտասանության շարակարգային նվազագույն միավորն է, բայց և առավելագույն հնչաշղթան է: Հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը. այս պայմաններում անգամ անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար, թե վերջահար, միանում են շեշտակիր բառերին և կազմում մեկ հնչաբառ. հնչաբառի անշեշտ վանկերը գրկվում են վերհնչույթային առոգանական հատկանիշներից: Հայերենում ընդունված դինամիկ կամ ուժային շեշտի հարաբերությունը քանակական և երաժշտական բաղադրիչների հետ դեռևս ուսումնասիրված չէ, այնուամենայնիվ որոշ նշանակություն ունի շեշտված վանկի տևողությունը. այս դեպքում կարևոր են վանկի դիրքը (բառասկիզբ, բառամեջ, բառավերջ), ինչպես նաև ծայնավորի բաղաձայնական շրջապատը: Շեշտի հետ են կապվում վանկի կենտրոնի, վանկի սահմանների որոշման հարցերը: Կարևորվում են վանկակազմիչ հնչույթների քանակը, որակը և դրանց վերհնչույթային հատկությունները (տևողություն, տոն, ուժգնություն): Եսպերսընի (Եսպերսենի) բացատրությամբ՝ «փնտրել երկու վանկի սահմանը նման է փնտրելու, թե որն է ծորի միջի այն գիծը, որ բաժանում է իրարից երկու հարևան լեռները»: Սակայն շեշտակիր վանկի միջոցով ուրվագծվում է բաժանման այդ

գիծը: Շեշտի նկատմամբ չշեշտված վանկերը լինում են նախաշեշտ և վերջնաշեշտ: Հայերեն բառերը մեծ մասամբ ունեն նախաշեշտ չշեշտված վանկեր: «Հնչադասությունների մեջ այն վանկերը և վանկերի այնպիսի կապակցությունները, որոնք ունենում են ուժգնության մեկ շեշտ, որ երբեմն կարող է ուղեկցվել մեկ կամ մի քանի թույլ շեշտով, կոչվում են հնչաբառեր,- գրում է Գ. Զահուկյանը: - Հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը. այս պայմաններում անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար, թե վերջահար, միանում են շեշտակիր բառերին և կազմում մեկ հնչաբառ. հմմտ. **մի մա'րդ, գնում եմ**, որոնք մեկական հնչաբառեր են, բայց բաղկացած են երկուական բառերից: Հնչաբառերի դեպքում կցույթը կարող է ներկայանալ և՛ որպես դադար, և՛ որպես նկատելի անցում՝ սահմանային ազդանշան»¹²: Նա շարունակում է. «Քանի որ հայերենում հնչաբառը բնութագրվում է մեկ շեշտով, այսինքն՝ սովորական շեշտի հիմնական դերը (ֆունկցիան) բառի ձևավորումն է, ուստի և բառի մեջ մտնող վանկերից մեկն է ունենում մեկ շեշտ, մյուսները կամ գրկվում են շեշտից, կամ ունենում են շեշտակիր վանկի համեմատությամբ թույլ շեշտ: Այստեղից բխում է, որ տոնային (բարձրության) փոփոխությունները կապվում են շեշտակիր վանկի հետ: Կարելի է ասել, որ հնչաբառի անշեշտ վանկերը գրկվում են վերինչոյթային առոգանական հատկանիշներից ընդհանրապես: Այսպիսով, ինչպես վանկի ներսում գոյություն ունի միակողմանի կախում վանկարար և ոչ վանկարար տարրերի միջև, այնպես էլ բառի կազմում գերադաս դիրք է գրավում շեշտակիր վանկը»: Շեշտի՝ բառի վանկերը, բաղադրիչները մեկ ամբողջ հնչաբառի մեջ միաձուլելու մասին է վկայում այն փաստը, որ հաճախ շեշտի տեղափոխության հետևանքով նախորդ բաղադրիչը կարող է ենթարկվել հնչունափոխության՝ դրանով իսկ կորցնելով իր արտասանական ինքնությունը հնչապատկերը ամբողջ բաղադրյալի մեջ: Ահա թե ինչու ընդհանրապես շեշտի ձևավորող,

¹² Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 90-92:

իմաստառճական գործառնությունը ազդում է նաև բառային շեշտի դիրքի վրա...

Շեշտադրությունը նաև **շարահյուսության** ուսումնասիրության նյութն է. հնչերանգի, առոգանության դրսևորման ձևերից մեկն է, որն իբրև այդպիսին ուսումնասիրվում է շարահյուսության մեջ՝ որպես այդ նշանով դրսևորվող հնչերանգային արտահայտություն. այն հնչերանգային կազմիչ է: Շեշտակրությունն անմիջականորեն առնչվում է շարադասությանը. սրա հիմքում ընկած է հանրորեն գիտակցված ու կանոնարկված բառադասությունը, սակայն նախադասության առանձին անդամների տեղափոխումով նրանց շեշտումը կամ ընդգծումը (առանձնացումը) դառնում է ոճական հնարք, որ ընդունված է կոչել **շրջադասություն**: Տարբերակային ձևերի առկայության պայմաններում շարադասությունը հնարավորություն է ստեղծում ստանալու որոշակի ոճ: Տրամաբանական շեշտը փոխակազմության պատճառներից մեկն է. փոխվում է շարադասությունը, փոխվում է և իմացական-հաղորդակցական արժեքը: Տրամաբանական շեշտը նաև եղանակավորության արտահայտման միջոցներից է: Ի վերջո, նախադասության անդամների ընդգծում-առանձնացումը, նաև կցումը իրագործվում է շեշտի միջոցով:

Շեշտադրությունը հարաբերակցվում է նաև **տրամաբանության, տեքստաբանության** հետ:

Կանոնարկված շեշտադրումը, տարբերակային ձևերի ճիշտ ընտրությունը **ոճագիտության** բնութագրիչներից են: Այսօր էլ ոճագիտությունն ու խոսքի մշակույթը միախառնված են ուսումնասիրվում: Խոսքի կետադրման եղանակը առավելագույնս ծավալվում է գեղարվեստական ոճում: Ռուս նշանավոր ոճագետ Եֆիմովի կարծիքով գրողին շատ հաճախ չի բավարարում կետադրության՝ հանրության կողմից ընդունված կանոնիկ համակարգը, և նա թույլ է տալիս բազմաթիվ շեղումներ՝ պայմանավորված իր խոսքի յուրահատկություններով: Կետադրական նշանների յուրօրինակ կիրարկությունը արտացոլում է գրողի ոճի ինքնատիպությունը, բառակիրառությունների ու դարձվածների կառուցման նախասիրած միջոցները: Արտ. Պապոյանը Վ. Ղափյանի լեզվական անհատա-

կանության մասին խոսելիս սովորական թվացող մի հարցման միջոցով («եղե՞լ է ինչ»), սոսկ շեշտադրական մի շեղման ընդգծումով (տվյալ դեպքում՝ հարցական նշանի) բացում է այդ կապակցության բոլոր շերտերը. « - **եղե՞լ է ինչ...**: Որիշ ոչ մի խոսք: Ընդամենը, քերականական գիտաբառերով ասած, մի ստորոգյալ և մի ետադաս ենթակա, որ թվում է՝ ամենասովորական կիրառությունն է աշխարհաբարի համար: Բայց որքա՛ն խորն է ենթաբնագիրը: Արտահայտությունը, խոստովանենք, իրոք անսովոր տարողունակ է իմաստի և ոճական երանգավորման տեսակետից: Նախ՝ անվիճելի է առկայությունը գրաբարյան շնչի, որով, հարկավ, պետք է պարուրված լինի արքայական ոճը: Ուշադրություն է գրավում նաև խոսքի շեշտադրությունը. հարցումը ընկել է բայի և ոչ հարցական դերանվան վրա, որ իր խոսքիմասային պատկանելությամբ, ըստ ընդունված գործառության, պիտի արտաբերվեր հարցական հնչերանգով և գրավոր խոսքում ստանար հարցական նշան: Բայց չի ստացել, որով և ոճավորվել է արտահայտությունը՝ իմաստավորվելով նորովի»¹³: Խոսքարվեստի, խոսքի մշակույթի ցուցանիշ է ոչ միայն ճիշտ արտասանությունը, այլև բառաշեշտերի տեղին հնչեցումը: Շեշտը լեզվի գեղագիտության տարրերից մեկն է. նաև շեշտն է պահպանում խոսքի բնականությունը, կենդանությունը (Հ. Թումանյանը խոսքի գեղագիտություն ասելով՝ հասկանում էր «խոսքի բնականություն», «կենդանություն»):

Շեշտի ուսումնասիրության արդյունքները կարևոր են **գեղագիտության, տաղաչափության** մեջ: Անխզելի է շեշտադրության կապը բանաստեղծական արվեստի, մասնավորապես տաղաչափության հետ: Կարևոր նշանակություն ունի շեշտը գրական լեզվի հնչման և ընթերցանության համար. դրանք ուժ ու կենդանություն են տալիս լեզվին: Ընդունված է ասել, որ ազգային լեզվի առանձնահատկություններով, հատկապես շեշտադրության և արտասանության բնույթով են պայմանավորված ոտանավորի տեսակները. հատկապես վանկաշեշտական համակարգում ռիթմի կարևոր գործոն է դառնում նաև շեշտերի կանոնավոր դասավորությունը: Հաշվի առնելով

¹³ Արտ. Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 2007, էջ 418:

հայերենի այն առանձնահատկությունը, որ չունի իր բառերի վրա «թափառող շեշտեր» և ոչ էլ «սուղ և երկար ձայնավոր տառեր», Ա. Բահաթրյանը եզրակացնում է, որ հին հայոց քերթողները իրենց տաղաչափական անդամների մեջ ներդաշնակություն որոնելու նպատակով «հարկ էր որ բացառապես դիմէին իրանց բնական առոգանութեանը, և իրանց տաղերի անդամները և տողերը հատուածէին վանգաչափով»: Նա գրում է. «Ամեն ազգ իւր բարբառի կազմութեան համեմատ տաղաչափական արուեստի մէջ մի տեսակ ներդաշնակութիւն է որոնում: Նոքա՝ որոց բարբառի մէջ շեշտերը ոչ եթէ միշտ բառերի վերջում, այլ փոփոխակի երբեմն յետադաս և երբեմն առաջադաս վանգերի վերայ են տարածուած, իրանց տաղաչափական անդամները և տողերը ևս շեշտերով են պայմանաւորում: Նոքա՝ որոց բարբառի մէջ յայտնապէս տարբերվում են սուղ և երկար ձայնավոր տառերը, որ նորանցով էլ կազմվում են նույնանման վանգեր, իրանց տաղաչափական պայմանները ևս որոշվում են սուղ և երկար վանգերով: Բայց ինչ ազգ չունի ոչ բառերի վերայ թափառող շեշտեր, և ոչ սուղ և երկար ձայնավոր տառեր, սոցա տաղերը չափվում են բնական առոգանութեամբ միայն՝ այսինքն՝ վանգաչափով, և ամեն տաղաչափական անդամներ և տողեր տրոհվում են որոշ վանգերի թուով: Այս երեք եղանակներն են ընդհանրապէս, որով կազմակերպվում են զանազան ազգերի տաղաչափութիւնները, և սակաւ կարող ենք հանդիպել բացառութեանց»¹⁴:

Գեղարվեստական ոճն ունի հաղորդակցական լրացուցիչ՝ գեղագիտական, հուզական «ծանրաբեռնվածություն», որը գրողից պահանջում է համապատասխան միջոցների ընտրություն, մշակում: Բանաստեղծներն են, որ որոնում ու գտնում են բառի հնչեցման նոր ուղիներ ու ձևեր՝ ժիթմական շեշտերը հմտորեն զուգակցելով տրամաբանական շեշտերին, սրելով ենթմաստն ու այսպէս ասած «թաքուն» նշանակությունը, շեշտելով համահնչյունությունն ու մեղեդայնությունը, նվագայնության տարրը՝ փորձելով հարություն տալ հինավուրց ու մոռացված երանգներին, նրբիմաստներին: Բանաստեղծներն են, որ հասնում են «խոսքի հնչյունական

¹⁴ Ավ. Բահաթրյան, Հին հայոց տաղաչափական արվեստը, Եր., 1984, էջ 125:

գործիքավորման»՝ գեղագիտորեն հիմնավորելով ու պատճառաբանելով, նպատակադրված ու չափավորության սահմաններում շրջանցելով նաև շեշտադրության բանուկ օրենքներն ու օրինաչափությունները: «Նվագայնության» տարրը նորություն չէ հայոց բանաստեղծական մտածողության համար: Մեր քնարերգության մեջ երաժշտական շեշտերը գալիս են դեռևս վաղ միջնադարի տաղերգուներից և զարգացման բարձր աստիճանի հասնում 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին տասնամյակների չափածոյում, մասնավորապես

Մ. Մեծարենցի, Հ. Թումանյանի ու Ավ. Իսահակյանի, և է՛լ առավել՝ Վ. Տերյանի ստեղծագործություններում, ով երաժշտություններն էլ հայոց լեզվին: Նշանակում է՝ պատկերի կառուցման խոսքային հյուսվածքի, հանգի ու ոտքի, հնչյունական դասավորության կողքին կարևորվում է նաև շեշտի տաղաչափական յուրահատկությունների վերհանումը: Տաղաչափության մեջ կա շեշտերի կանոնավոր դասավորության «քանդում», կան շեշտերի անկանոն տեղաբաշխում և ազատ խաղ, կան շեշտերի կորուստներ (բառական շեշտերի կորուստներ որտեղ ասես հնարավոր է, բայց ոչ երբեք տողավերջում), շեշտասղումներ (հունականան տաղաչափության մեջ՝ **պիռնիքոս**. կա նաև վանկասղում), շեշտահավելումներ: Այստեղ է, որ այդքան կարևորվում են անշեշտ ու շեշտված վանկերի հարաբերակցությունը¹⁵, ռիթմական հյուսվածքի բառական և ռիթմական շեշտերի զուգորդումը, Մ. Աբեղյանի արտահայտությամբ՝ «հնչյուններով չլցված ժամանակամասի»՝ շարահյուսական անհրաժեշտ դադարի (կամ ինչպես ասում են՝ հատածի») ստեղծումը, տողանցի և տողատման, նոր բանաստեղծի ստեղծման նուրբ զգացողությունը: Չպետք է մոռանալ **պրոկլիզիայի** երևույթը (երբ մեկ բառ իրեն հաջորդող բառի օգտին զրկվում է իր բառական շեշտից՝ ռիթմական շեշտը կարգավորելու համար, իսկ բառային շեշտից զրկվածը

¹⁵ Ըստ Արտ. Պապոյանի՝ Ն. Չերնիշևսկին ապացուցեց, որ ռուսերենում միջին հաշվով յուրաքանչյուր երեք վանկին ընկնում է մեկ շեշտ (ըստ նորագույն տվյալների՝ 2,8 վանկին՝ մեկ շեշտ, այսինքն՝ շեշտված ու անշեշտ վանկերի հարաբերակցությունը 2,8 :1 է): (Տե՛ս՝ նշվ. աշխ., էջ 570-571):

տրամաբանական շեշտի կրողը լինել չի կարող, բայց բառային շեշտը կորցրած բառի կողքին տրամաբանական շեշտադրությունն էլ ավելի է զորանում): Այս դեպքում տաղաչափական այս յուրահատկությունները բնականաբար ազդելու են կանոնարկված շեշտադրության վրա:

Շեշտադրությունն անմիջականորեն կապված է **խոսքի մշակույթի** հետ: Մարդը խոսում է իր իսկ ծնված օրից. խոսողությունը մարդու բնատուր հատկանիշներից է: Մարդը բոլոր ժամանակներում աշխատել է մշակել իր խոսքը, այսօր էլ կանոնարկում, կատարելագործում է, սակայն մինչև հիմա վերջնականապես ձևավորված չէ խոսքի մասին գիտությունը: Նշանակում է՝ միջգիտաճյուղային այս հարաբերակցությունը դեռևս կարոտ է լուսաբանման: Խոսքի մշակույթի **ուսումնասիրության առարկան խոսքն է**: Առաջին հերթին այն պահանջում է լեզվական նորմի կատարյալ իմացություն. լեզվական նորմը խոսքի մշակույթի հիմնաբաղադրիչներից մեկն է: Լեզվի ուսումնասիրության առավելագույն միավորը նախադասությունն է՝ իր բաղադրիչ տարրերով հանդերձ՝ լեզվի հնչյունական համակարգով, բառապաշարով և քերականական կառուցվածքով: Սակայն նախադասությունը նաև խոսքի նվազագույն միավորն է, ինչը նշանակում է, որ նախադասությունն իր բաղադրիչ տարրերով դառնում է նաև խոսքի մշակույթի ուսումնասիրության նյութ: Սակայն միևնույն երևույթը լեզվի և խոսքի մշակույթի համար քննության նյութ է դառնում միանգամայն տարբեր հայեցակետերից: Խոսքի մշակույթի խնդիրն է պարզել, թե ինչպիսի զգայական տպավորություններ ու ապրումներ է առաջ բերում տվյալ լեզվական հաղորդումը, թե միտքն ու զգացական-հոգեկան մտապատկերն արտահայտելու մեջ ինչ դեր ունի լեզվի յուրաքանչյուր տարր, խոսքիմշակութային յուրաքանչյուր հնարավորություն, թե ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում մի կողմից՝ լեզվական նյութն ու նրա կառուցվածաքային ձևավորումը, մյուս կողմից՝ այդ նյութով ու տեխնիկական հնարավորություններով արտահայտված միտքն ու զգացումը, այսինքն՝ տվյալ երևույթի մակերսային և խորքային կառուցվածքների փոխհարաբերությունը: Խոսքի մշակույթի քննության նյութ են

դառնում նաև լեզվական այնպիսի երևույթներ, որոնք դրսևորվում են և ճանաչելի են լինում միայն ու միայն խոսքի մեջ: Խոսքի մեջ է, որ լեզվական տարրերը, առնվելով կիրառության լայն ոլորտի մեջ, հանդես են բերում գործածության մեծ ակտիվություն ու իմաստային բազմերանգություն և լեզուն դարձնում արտաքին աշխարհն ու ու մարդու ներքինն արտացոլող ու արտապատկերող զուգահեռ ու հոմանիշ միջոցների համապարփակ մի համակարգ:

Լեզվապատմական ավանդույթի համաձայն՝ հռետորական արվեստի 5 բաժիններից մեկը եղել է արտասանությունը՝ ձայնի մասին գիտությունը (այս գիտությունը ստեղծել են Պյութագորասն ու նրա դպրոցի ներկայացուցիչները): Բանավոր խոսքում ձայնի ուժգնությունն ու ելևէջումները, տոնը, արտասանության տևողությունը և ձայնային այլ երևույթներ ոչ միայն կապված են խոսքի բովանդակության հետ, այլև արտացոլում են խոսողի հուզական աշխարհը, ունկնդրին տոգորում համանման հույզերով ու ապրումներով: Ձայնահնչական և տրամաբանական կողմերի համապատասխանության ապահովումը դառնում է խոսքի մշակույթի հիմնախնդիրներից մեկը, որի լուծման ակունքը ճիշտ ձևավորված լեզվական հմտություններն են: Լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնք ծառայում են մտքի դատողական գործունեության արտահայտմանը, և կան միջոցներ, որոնք ծառայում են զգայական-հուզական և կամային երևույթների արտահայտմանը: Շեշտի յուրահատկությունն այն է, որ, դուրս գալով բառաձևավորման, բառասահմանազատման, նախադասության անդամների ընդգծման շրջանակներից, ծառայում է մտքի և՛ դատողական-տրամաբանական, և՛ հուզաարտահայտչական-կամային դրսևորմանը, որն իր արտահատկությունն է գտնում խոսքի, խոսքի միջոցով՝ խոսքի մշակույթի մեջ: Վերջինիս ենթահամակարգերից մեկը արտասանականն է, նպատակներից մեկը՝ հատույթային և վերհատույթային միավորների ուսումնասիրությունը: Ուստի անվերապահորեն կարող ենք պնդել՝ ուղղախոսական-շեշտադրական ենթանորմը հիմք է դառնում խոսքի մշակութային-արտասանական ենթանորմի ձևավորման համար: Խոսքի մշակույթի խնդիրներից մեկը **ձևավորված**

լեզվական հմտությունը, տվյալ դեպքում՝ շեշտադրականը, հաղորդակցական հմտության, խոսքի մշակույթի բաղադրիչ տարրի վերածելն է. անկաշկանդ ու կենդանի շփումը, հաղորդակցումը պիտի «շնչավորվի» նաև ճիշտ շեշտադրությամբ, հաղորդակցական-ինչերանգային ճիշտ երանգով, հարկ եղած դեպքում նաև շեշտադրական նորմից կատարված տեղին, արդարացված շեղումով: Արդյունքում մաքուր, հասկանալի, տեղին և զարդարուն կամ տրամաբանությանը համապատասխան «զգեստավորված» խոսքն է¹⁶: Սակայն բոլոր դեպքերում չպետք է մոռանալ, որ խոսքի մշակույթը խոսքի արվեստի և վերժանության արվեստի համաձուլվածքն է:

Խոսքի մշակույթի նպատակը հասարակության լայն խավերի մեջ գրական լեզվի նորմի միջոցով գրական խոսքի ընդհանուր օրինաչափությունների հաստատումն է և խոսքի բարձր ճաշակ մշակելը: Իսկ վերջնակետը՝ նպատակների իրացման ճանապարհով հասնել գրական լեզվի նորմավորմանը: Խոսքի մշակույթի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն դրսևորվում է եզակիի միջոցով, բայց, դառնալով եզակիների ընդհանրացված արտահայտությունը, իրավական ուժ է ստանում, կանոն է դառնում միայն լեզվի մեջ՝ լեզվի միջոցով. այդպիսի «եզակի» կարող է դառնալ շեշտադրական յուրաքանչյուր շեղում:

Շեշտադրական նորմն աղերսներ ունի **էթիկայի** (բարոյագիտության) և **էթիկետի** (վարվելակարգային նորմերի) կամ **խոսքային վարքի**, **հաղորդակցական նորմերի** հետ: Հաղորդակցական ցանկացած իրավիճակում գործում են լեզվախոսքային բացահայտ և

¹⁶ Համաձայն Արիստոտելի աշակերտ Թեոֆրաստոսի (թ. ա. 4-3 դ.դ.)՝ խոսքը չորս արժանիք ունի՝ **մաքրություն, հասկանալիություն, տեղիություն** կամ **համապատասխանություն** և **զարդարունություն**: Առանց մաքրության խոսքը դառնում է «բարբարոսական», առանց հասկանալիության՝ «մութ», առանց տեղիության՝ «անճաշակ» և առանց զարդարունության՝ «մերկ»: (Երևի թե այստեղից է ծնունդ առել «զգեստավորված խոսք» արտահայտությունը...): Պետք չէ գերազնահատել ծայնահնչական գործոնի դերը (ինչպես վարվել են կրտսեր սերնդի ստոյիկները (Ստոյիկյան փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչները)՝ խոսքը արժևորելով լտղության վրա թողած տպավորության աստիճանով, մյուս կողմից էլ պետք չէ ժխտել այս գործոնի դերը (ինչպես վարվել են էպիկուրյանները՝ առաջնային համարելով տրամաբանական կողմը):

պարտադիր արգելանքներ. գռեհկաբանությունների, զագրախոսությունների կողքին անվիճարկելի է նաև հնչական որոշ տոնայնությունների, հնչերանգային դրսևորումների, գորգորոցների արգելանքը, որը, բնականաբար, առավելապես կապված է ուժգնության սաստկացման, աղմուկի, բարձրատոնության, շեշտի անհարկի գործածության հետ: Մյուս կողմից՝ խոսքային վարվելակարգը չի արգելում շեշտակրության զանազան արտահայտություններով դրսևորվող չափազանց զգացմունքայնությամբ խոսքը: Խոսքի մշակույթին տիրապետել նշանակում է ոչ միայն լեզվական նորմի, այլև էթիկական ու էթիկետային, բարոյագիտական և վարվելակարգային, մի խոսքով՝ հաղորդակցական նորմերի իմացություն, նշանակում է հաղորդակցական իրավիճակի ճանաչում և ցանկացած իրադրությունում, տարբեր հանգամանքներում համապատասխան լեզվական ու էթիկետային կանոններին հետևելու և գործառնելուն զուգընթաց անհրաժեշտ ներգործության ապահովում՝ ուղղորդված հաղորդակցական նպատակի իրագործմանը:

Հին ժամանակներում շեշտադրությունը կապված է եղել **խազագրության** հետ: Սկզբնապես խազերը նշել են ձայնի ելևէջները (վերապրուկները պահպանվում են երգարվեստում): Ձեռագիր Ավետարաններում շեշտադրության նպատակն էր նշել արարողական ընթերցանության ժամանակ կատարվելիք ձայնային ելևէջները: Խազային նշանները պատահմամբ են համընկել շեշտերի հետ, և սովորաբար դրանք թանաքների գույներով տարբերվել են: Ըստ Մեյեի՝ ձեռագրերից մեկում (260-րդ) բուն շեշտերը սկզբում նշված են եղել սևով, ի հակադրություն խազերի, որոնք կարմրով են նշված եղել: Նոր ժամանակներում այս հարաբերակցության մասին խոսելն անիմաստ է. հնագույն ձեռագրերում արդեն խազերն սկսել են պարզեցվել, քանակապես կրճատվել և վերջիվերջո՝ հանգել են պարզապես կետադրության նշանների:

Շեշտադրությունը նաև երաժշտական-ձայնային չափակարգի, **երգարվեստի** հետ է առնչվում: Ընդհանրապես խոսքի նվագայնության ու ներդաշնակության մեջ կարևոր դեր ունի շեշտը. որպես ձայնատեսակ՝ երաժշտականը նույնպես հատկանշվում է

շեշտակիր ձայնավորի ուժգնությամբ, տևողությամբ, բարձրությամբ և երանգով¹⁷: Ինչ վերաբերում է շեշտագործածության ելևէջումներին, որը մեր ուսումնասիրությունից դուրս է, Թ. Ղարազյուլյանը գրում է. «Արդի հայերենի խոսքի արտահայտչականության հարցում անշուշտ մեծ դեր են կատարում զանազան հուզական ելևէջները (ինտոնացիաները), որոնք խոսքին հաղորդում են տարբեր երանգներ: Հայերենում նշվում են 7 գլխավոր ելևէջներ, ինչպես՝ **հասարակ շեշտ, սուր շեշտ, հարցական շեշտ, բարձրացող շեշտ, իջնող շեշտ, իջնող բարձրացող շեշտ, բարձրացող իջնող շեշտ**»¹⁸:

Շեշտադրության ուսումնասիրությունը կարևոր է նաև հոգեբանական և մանկավարժական գիտությունների համար:

* * *

Այսպիսով՝ մերօրյա լեզվական նորմը սահմանում է. արդի գրական հայերենին (թե՛ արևելահայերենին, թե՛ արևմտահայերենին) հատուկ է ուժգնության շեշտը, որն ունի հաստատուն դիրք և, որպես կանոն, վերջադիր է. դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա. **Ը** ձայնավորը շեշտակիր չէ: Մասամբ բնորոշ են քերականական ու երաժշտական շեշտերը: Մեր լեզվում ևս վերինջությամբ հատկանիշները միշտ չէ որ հանդես են գալիս «մաքուր» ձևով. հաճախակի են դրանց տարբեր տիպի համակցությունները: Օրինաչափական է, որ հատկապես սաստկական շեշտը, բացի ուժգնության

¹⁷ Խոսքարվեստի և երգարվեստի հարաբերակցության հարցը մեր քննության շրջանակից դուրս է: Սուկ մի փաստի անդրադառնանք. հեռուստահաղորդումներից մեկի ընթացքում վաստակավոր երգչուհիներից մեկը նշեց, որ շատ երաժշտագետներ ու երաժշտահաններ երբեմն պահանջում են **ը**-ով վերջավորվող բառերում շեշտակիր վանկի ձայնավորն այնպես ընդգծել, ուժգնացնել, նաև երկարացնել, որ հաջորդող **ը** հոդն ունեցող վանկում այն շեշտվի. ստացվում է, որ սովորական շեշտադրությամբ նախավերջին վանկի շեշտը դառնում է երաժշտական (տևական), իսկ նրան հաջորդող (**ը** հոդն ունեցող)՝ բառինը՝ ուժգնության (տրամաբանական)՝ **ապրե՛լը, վազե՛լը**՝ և այլն: Այսինքն՝ համապատասխան վանկերի միջև դադարը արհեստանորեն երկարացվում է, որի արդյունքում վանկը «բառանում է»... Ավելին, եթե հայերենում երկրորդական շեշտը սովորաբար ընկնում է շեշտված վանկից առաջ, այս դեպքում ընկնում է շեշտված վանկից հետո. տեղի է ունենում կանոնների խաչաձևում:

¹⁸ Թ. Ղարազյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, 1974, Եր., էջ 219-220:

հավելումից, ուղեկցվում է նաև տևողության և տոնի հավելմամբ: Ուժգնության, տևականության և տոնի փոփոխությունները կարող են դիրքային փոփոխության պատճառ դառնալ:

Ներկա ժամանակաշրջանում փորձառական հնչյունաբանության ներկայացուցիչները ուղղախոսության հետ միաժամանակ առավել ուշադրություն են դարձնում հայերենի շեշտադրության հարցերին: Մնում է հուսալ, որ լեզվախոյզ-հետազոտողն ու քննախոյզ-լեզվաբանը ժամանակակից չափիչ և լսողական բարձրակարգ սարքերի՝ սարքավորումների օգնությամբ ի վիճակի են հայերենի շեշտադրության խորքային կառուցվածքում ուրվագծվող երակների միջոցով գիտականորեն «վերահաստատել» կամ «վերականոնարկել» շեշտադրական նորմը: Ներկայումս գործող կանոնը խիստ է բոլոր դեպքերում նման խստությունը ուժեղացնում է նորմի պաշտպանիչ գործառույթը:

ՇԵՇՏԻ, ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐՄԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՇԵՇՏԻ ԵՎ ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՋԱԿԻՏԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շեշտադրության նորմավորման մասին խոսել նշանակում է բազմակողմանիորեն ուսումնասիրել շեշտակրության պատմական ընթացքը մեր լեզվի գոյության տարբեր շրջաններում, նրա տարբեր գոյաձևերում, թերթել հայ լեզվաբանության այն էջերը, որոնց հեղինակներն այս կամ այն հարցի կապակցությամբ անդրադարձել են խնդրո առարկայի քննությանը: Շեշտադրությունը նորմավորել նշանակում է նաև գիտական օբյեկտիվությամբ վերլուծել արդի լեզվավիճակը, և նոր միայն հաստատել կամ վերաձևել կանոնները:

Ըստ պատմահնդեվրոպաբանական ուսումնասիրությունների, ինչպես արդեն նշվել է, հայերենն իր ամենաառաջին շրջանում ժառանգել էր հնդեվրոպական շեշտը կամ երաժշտական շարժական տոնը, որն ավելի ուշ վերածվեց ուժգնության շեշտի՝ վերջընթեր, ապա՝ վերջին վանկի վրա. արդյունքում մեզ ավանդվեց վերջնաշեշտ բառապաշար: Տարբերությունը. տոն ունեցող լեզուներում ծայրը պիտի ունենար բարձրություն և տևողություն, բայց ո՛չ ուժգնություն, իսկ շեշտ ունեցող լեզուներն ունեն նաև ուժգնություն, և, ընդունված է ասել, «շեշտ ունեցող լեզուն ճշում, բղավում է, իսկ տոն ունեցող լեզուն երգում է ավելի բարձր տոնով»:

Լեզվաբանների մի խմբի կարծիքով հնդեվրոպական շեշտի փոփոխության պատճառներից մեկը վերջավորությունների անկումն է. ահա կարծիքներից մեկը՝ «...Ավելի ուշ այս տոնը կորցրեց իր

շարժականությունը, վերածվեց ուժգնության շեշտի և եկավ հաստատվեց վերջընթեր վանկի վրա: Սա մի սովորական երևույթ է շատ ուրիշ լեզուների համար էլ, հաստատուն շեշտի տեղը վերջընթեր վանկն է առհասարակ: Թե շեշտը գտնվում էր նախահայերենի վերջընթեր վանկի վրա, կարելի է ապացուցել: Այդ շեշտը չէր կարող լինել երաժշտական, այլ միայն ուժգնության շեշտ էր և բավական ուժեղ, որպեսզի կարողանար վերջնական կրճատել: Շեշտի այս ուժգնության արդյունքն է նաև հայերենի նույն ընդհանուր ծայնաբանական երևույթը, որով որոշ ծայնավորներ և երկբարբառներ ընկնում կամ փոխվում են, եթե շեշտից առաջ գտնվեն: Բառավերջի անշեշտ ծայնավորի կորուստով հայերեն բառերը դարձան վերջնաշեշտ, ինչպես գտնում ենք արդեն Ե դարում և նրանից էլ առաջ: **Սա մի տիեզերական երևույթ է, որ նկատելի է շատ ուրիշ լեզուների կյանքում էլ»**, - գրում է Հ. Աճառյանը¹⁹ (ընդգծումը մերն է՝ Չ. Ա.):

Սյուս խումբը ենթադրում է, որ որակական նման անցումը պայմանավորված է միջին վանկերի անկմամբ ու վերջին փակ վանկերի ծայնավորների թուլացմամբ: Այս խմբի ներկայացուցիչներից Գ. Զահուկյանը, նշելով, որ հին հայերենի շեշտի բնույթը բազմաթիվ դեպքերում կապված է միջին վանկերի անկման և վերջին փակ վանկերի ծայնավորների թուլացման հետ, հանգամանորեն քննում է հետևյալ երեք հարցերը՝ ա) նախահայերենի շեշտի ազդեցությունը հոլովական վերջավորությունների և հիմքակազմ տարրերի վրա, բ) նախահայերենի շեշտի՝ ո՛ր վանկերի հետ կապված լինելը, գ) հնդեվրոպական շեշտի՝ հայերենում կրած փոփոխության պատճառները, և եզրակացնում է. «Չափազանցվելով շեշտի դերը հայերենի ձևաբանական կառուցվածքի փոփոխության մեջ՝ լեզվաբանների մի մասը հակված է շեշտահաջորդ վանկերի անկում տեսնելու համարյա բոլոր դեպքերում: Այս ծայրահեղությունից զերծ չեն նույնիսկ այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն: Որոշ կանխակալ մոտեցմամբ նրանք կասկածի տակ են առնում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների

¹⁹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 328-332:

միջև եղած այնպիսի զուգահեռները, որոնք ակնհայտ բնույթ են կրում...»²⁰:

Կա «անարժագանք մնացած» մի երրորդ տեսակետ ևս, ըստ որի հայերենյան շեշտը (ներառյալ գրաբարյանը) վերջնականակալին կարող էր դառնալ նաև երաժշտական շեշտի ազդեցությամբ:

Քանի որ շեշտը հիմնականում բանավոր խոսքի հատկանիշ է, ապա չափազանց դժվար է քննել և վեր հանել հին լեզուների շեշտակրության (նաև տոնի ու տևողության) էական առանձնահատկությունները, ցույց տալ ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները, այսպիսի դեպքերում, ինչպես ասում են, «դարերն ու հազարամյակները լուծում են»: Ինչ վերաբերում է գրավոր ձևով ավանդվածներին, ապա մեզ հասած տարբեր լեզուներով գրված շատ բնագրերում սրանք ամենևին չեն նշանակվել, իսկ շեշտադրյալ բնագրերում (վեդայական սանսկրիտով, հին հունարենով, հին բարձր գերմաներենով...) շեշտառությունը հիմնականում համակարգված չէ, կիսատ-պաշտ է. սրանցում ավելի շուտ շեշտի տեղն է նշանակվել, քան տեսակը: Որոշ չափով տեղեկություններ են պարունակում այն լեզուները, որոնց տաղաչափությունը շեշտական է, և տաղաչափական շատ օրինաչափություններ նպաստում են զանազան կետերում շեշտի բնութագրմանը:

Ժամանակային կտրվածքով գրաբարի շեշտը գրեթե չի ուսումնասիրվել արտաբերության բնույթի տեսակետից, և անիմաստ է խոսել գրաբարի շեշտադրական արտաբերության-արտասանության (ընդհանրապես գրաբարի ուղղախոսության) մասին: Գրաբարը շեշտե՞ր է ունեցել, թե՞ ձայնավորների երկար և կարճ (սուղ) արտաբերություն²¹. Մ. Աբեդյանի վկայմամբ, ինչպես Հ. Գաթրոճյանն

²⁰ Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 151:

²¹ «Ձայնավորների երկար և սուղ լինելուն գրաբարի մեջ ապացույց համարում են Կորյունի այս մուք վկայությունը. «Զամենայն ընտրութիւն նշանագրոցն գնրբագոյնսն, գկարճն, գերկայնն, գառանձինն և գկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային» (Ս. Մեսրոպ և աշակերտքն) (Կորիւնի պատմ. վարուց Ս. մեսրոպայ, Վենետ., 1883, եր. 10), սակայն այդ **նրբագոյն, կարճ, երկայն, առանձին, կրկնավոր** բառերը կարող են տառերի արտաքին ձևերին ևս վերաբերել, քան հնչյունների արտաբերությանը: Թրակացու և Երզնկացու քերականությունների մեջ բերված են բուն հայերեն բառեր, որոնց մեջ նշանակված են երկար և սուղ վանկերը,

է ասում, «այս բանը մինչև այժմյան ազգային բանասիրական ծանոթություններին նայելով մեզ համար մի գորոյան հանգույց է դեռևս»: Մ. Աբեղյանը, Էդ. Աղայանը, Հ. Մուրադյանը և այլք գրաբարում հնարավոր են համարել ուժային շեշտը: Ինչպես ասացինք, այդպիսին է համարել նաև Հր. Աճառյանը՝ բայց տոնային որոշ երանգավորումով: Գ. Ջահուկյանն էլ է գերադասություն տալիս ուժայինին, սակայն որոշ դեպքերում հնարավոր է համարում հին հայերենի շեշտի թե՛ երաժշտական բնույթը, թե՛ ձևաբանական գործոնով պայմանավորված շարժականությունը և թե՛ երկուսը միաժամանակ: Հայերենի շեշտը վերջընթեր է եղել. պնդում է Ա. Մեյեն: Այն վերջընթեր է եղել և գրաբարյան շրջանում. այսպես են կարծում Նիկողայոս Մառը և Պեդերսընը:

Ամփստելի է՝ 21-րդ դարասկզբին գրաբարը կարդում ենք այնպե՛ս և այնպիսի՝ շեշտադրությամբ, ինչպե՛ս և ինչպիսի՝ շեշտադրությամբ՝ գրական հայերենը: Ընդունված տեսակետ է՝ հայերենը ժառանգեց գրաբարյան շեշտադրությունն ու շեշտադրական նորմը գրեթե առանց փոփոխության: Սա նշանակում է, որ ժամանակակից հայերենի շեշտադրության նորմավորման գործընթացում անհրաժեշտաբար աչքի տակ պետք է առնել նաև գրաբարյան շեշտառության օրինաչափությունները, որոնք հարցն ընդգրկող գիտադրյուններում գրեթե նույնությամբ կրկնվում են: Ուստի գրաբարյան շեշտադրման կանոնակարգն իր կանոն-բացառություններով միանգամայն բավարար, նաև հարաբերականորեն ամբողջական կլինի ներկայացնել Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկից» քաղված այս մեջբերմամբ. «Գրաբարում բառական շեշտը հաստատում է, ունի իր կայուն տեղը՝ դրվում է բառի վերջին վանկի ծայնավորի վրա: Նկատի ունենալով շեշտվող վանկի որոշակիությունը՝

ինչպես են **հա՛վիկ, ա՛րե՛գանն ե՛րկնա՛յի՞ն, տե՛սան՛ե, բե՛րան՛ով, Կո՞րի՛ն...** Գրաբարի ծայնավորների երկարության և տևության մի ապացույց են համարում և մեր շարականների ու հին երգերի հայկական ասած տաղաչափությունը, որի ներդաշնակությունը հիմնվում է ոչ թե վանկերի թվականության վրա, ինչպես մեր այժմյան տաղաչափությունն է, այլ տողերի միջև եղած ծայնավորների արտաբերության ժամանակի, տևողության, հների բառով, **ամանակի** վրա, ինչպես չափական տաղաչափության մեջ է լինում...» (Մ. Աբեղյան, 7 (Ը), էջ 276-277):

սովորաբար բառական շեշտը գրության մեջ չենք արտահայտում: Գրության մեջ արտահայտվում է սուր շեշտը՝ բուն հրամայականում (**գրեա՛, գրեցե՛ք, տես, տեսե՛ք**), արգելական հրամայականում, դրվելով մի՛ արգելականի վրա (**մի՛ գրեր, մի՛ տեսաներ**), ինչպես նաև անուղղակի հարցում արտահայտող բառերում... Եթե վերջին վանկը գաղտնավանկ է (այսինքն՝ կազմված է **ը** ծայնավորով), շեշտն անցնում է վերջընթեր վանկի վրա, օրինակ՝ **ամա՛ռ(ը)ն, ատա՛մ(ը)ն, հի՛մ(ը)ն, մա՛ս(ը)ն, փո՛ք(ը)ր**: Կցական բարդությամբ կազմված մի շարք բառերում շեշտը կրում է բարդության առաջին բաղադրիչը, այդ պատճառով էլ այդ բառերում շեշտը վերջին վանկի վրա չի լինում, օրինակ՝ **ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, սո՛յնպէս, նո՛յնպէս, ո՛րպէս, ա՛յսչափ, ո՛րչափ, ահա՛ւասիկ, ահա՛ւաղիկ, ահա՛վանիկ, գրե՛թէ, նոյ՛նժամ** և այլն: Գրաբարում կան նաև անշեշտության դեպքեր: Սովորաբար բառական շեշտ չեն կրում՝ **ա**) որոշ սպասարկու բառեր, որոնք հարադրվելով այլ բառերի, չեն արտահայտում նրանց հիմնական իմաստը, այլ դրսևորում են զանազան հարաբերություններ, ուստի բառական շեշտը կրում են այն բառերը, որոնք արտահայտում են բառի հիմնական իմաստը. այդպիսի սպասարկու բառերից կարելի է հիշել **առ, ընդ, ըստ, ի** նախդիրները, **եմ** օժանդակ բայը, նույնպես և՛ **եթէ, եւ, զի, թէ** շաղկապները վերջնահար գործածությամբ, **ք**) մի քանի դերանուններ՝ **որ, իմն, ինչ** և այլն, դարձյալ վերջահար կիրառությամբ (**նիւթ ինչ, ա՛յսպէս իմն** և այլն)»²²:

Ղարից դար փոխանցվող վկայությանը համապատասխան՝ շեշտի և այլ վերադիր նշանների առաջին գործածությունը կապված է **Արիստոֆան Բյուզանդացու** (թ. ա. 257-180թ.թ.) անվան հետ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ Թրակացու թարգմանիչներն ու մեկնիչները, ովքեր բնագրային թարգմանությունների ընթացքում հնարավորինս փորձում էին ելնել հայերենի օրինաչափություններից և հայացնել օտար բնագրերը, կետադրական նշանների գործածության դեպքում հետևում էին բնագրին և դրանք մեխանիկորեն տարածում հայերենի վրա: Հատկապես զգուշություն էին ցուցաբերում անձնա-

²² Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1952, էջ 25-26:

նունների շեշտի ըմբռնման ու տեղադրման հարցերում և սխալներ թույլ չտալու համար որպես օրինակներ օգտագործում էին փոխառյալ անձնանունները²³՝ օտար՝ փոխառյալ շեշտադրությամբ: Հին քերականները շեշտադրման հարցերում հատկապես ուշադրություն էին դարձնում հնչյունների որակին՝ նկատելով, որ որոշ ձայնավորներ ինքնին ավելի բարձր հնչում ունեն և կարող են շեշտակիր լինել (**ա, ե, ի**), իսկ մյուսները բնությամբ չունեն այդ հնչումը (**ը, ո**):

Շեշտի և պարույկի մասին փոքրիկ աշխատություն ունի 15-րդ դարի հեղինակ **Հակոբ Ղրիմեցին**, որտեղ ի մի է հավաքել շեշտի և պարույկի մասին ասվածները՝ առանց որևէ նոր բան ավելացնելու:

17-րդ դարում **Խ. Արզրումեցին**, խոսելով կետադրական նշանների օգտագործման դժվարությունների մասին, այն միտքն է հայտնում, որ եթե **գիտունները ներում են նրանց, ովքեր մոռանում են նշաններ դնել գրի մեջ, ապա ծաղրում, ծիծաղում են նրանց վրա, ովքեր խառնում են դրանք խոսելու ժամանակ** :

18-րդ դարում **Ս. Ջուղայեցին** հնչյունական շղթայում արդեն կարևորում էր շեշտի սահմանազատիչ դերը: **Մ. Սեբաստացին**, խոսելով շեշտի տեղափոխության մասին, կարծում էր, որ **միայն կոչական բառերը չունեն կայուն վերջնավանկային շեշտ, և այն կարող է ընկնել տարբեր վանկերի վրա**:

Ժամանակակից հայերենի շեշտադրության նորմավորման ճանապարհին հայ լեզվաբանները բազմիցս անդրադարձել են հայերենի շեշտի բնույթի, նրա տեղի, տեսակների, ոճական-կիրառական նշանակությունների և այլ հարցերի: Սովորաբար լեզվագիտական տարբեր աղբյուրներում շեշտի համար հիմնականում նույնն է ասվում (շեշտը վերջնավանկային է, կայուն-շարժական), գրեթե նույն տարբերակումն է կատարվում: Լեզվական շեշտ ունի յուրաքանչյուր բառ (չնչին բացառությամբ). շեշտ կրելը ցանկացած բառույթի ձևավորման առանձնահատկություններից է. այն կապ չունի ո՛չ հաղորդման նպատակադրումից, ո՛չ նախադասության մեջ գրաված

²³ Տես՝ **Գ. Ջահուկյան**, Ուղղագրական և քերականական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 95:

դիրքից, ո՛չ հոգեբանական-զգացական վիճակից: «Լեզվական շեշտը այն է, որ ունի բառը ինքնին, անկախ նախադասության մեջ իր ստացած դիրքից և անկախ այն հոգեբանական վիճակից, որով մարդ արտասանում է այդ բառը: Սովորական բացատրության մեջ մենք շեշտ բառը գործ ենք ածում անխտիր ծայնի թե՛ բարձրության և թե՛ ուժգնության համար, առանց ուշադրություն դարձնելու նաև այն հանգամանքի վրա, թե նա պատկանում է բառի՞ն, թե՞ արդյունք է հուզմունքի: Գիտական լեզվի մեջ սակայն, պետք է զանազանել այդ բոլորը իրարից.- տոն ասելով հասկանում ենք ծայնի բարձրացումը, բայց ո՛չ թե ուժգնությունը, իսկ շեշտ ասելով հասկանում ենք ծայնի ուժգնությունը և ո՛չ թե բարձրացումը»²⁴: Տրամաբանական շեշտը համարվում է հնչերանգի բաղադրիչներից մեկը, կատարում է հնչարտաբերական և իմաստային-շարահյուսական գործառույթ՝ միավորելով բառերը տվյալ արտահայտության մեջ: Տրամաբանական շեշտի դեպքում նախադասության որևէ անդամ հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում՝ իմաստային երանգավորում տալով նախադասությանը: Շեշտի փոխադրության միջոցով այլ բառի առանձնացումով նախադասությանը հաղորդվում է իմաստային մի այլ փոփոխակ: Լեզվում գործող օրինաչափություն է՝ **տրամաբանական շեշտն ու բառական շեշտը նույն բառի վրա նույնանում են, բայց մյուս բառերի բառական շեշտը, «չբացասվելով հանդերձ, բավականաչափ թուլանում է»:**

Ըստ ընդհանուր կանոնի՝ հայերենի շեշտի հիմնական գործառությունը բառերի սահմանազատումն է միմյանցից. այն իմաստազատիչ դեր չի կատարում: Որոշ վերաապահությամբ կարող ենք ասել, որ ժամանակակից հայերենում բացառիկ դեպքերում հանդիպում է նմանատիպ գործածություն՝ **բա՛րդ էր և բարո՛ւն, պատե՛րազն էր և պատե՛րազմե՛ր**, այն հատկապես այդպիսին է տարարժեք բայերի դեպքում, որոնք վերաբերականի խոսքիմասային իմաստով էլ են հատկանշվում (**մի՛ տես... և մի տես՛, թող գնա և թո՛ղ՝ գնա..., բեր տեսնենք և բեր, տեսնենք...** և այլն). բանավոր խոսքում նման իմաստազատումը կատարվում է հնչերանգային-

²⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 291:

արտասանական տարբերությամբ, իսկ գրավոր խոսքում՝ կետադրությամբ՝ երբեմն զուգակցվելով գրաձևային փոփոխությամբ (տառափոխություն, բաղադրիչների միացյալ գրություն և այլն): Գրաբարի համար ևս այսօրինակ գործածությունը չի բացառվել. «Դասական գրաբարում քերականական շեշտը որոշ դեր կատարել է: Ուժեղ շեշտը կարող է փոխել անգամ բառի խոսքիմասային արժեքը. **լուր** գոյական է և **լուր** հիմ. եղ. 2-րդ դեմք...»²⁵:

Նպատակահարմար ենք գտել հայերենում հնդեվրոպական շեշտի պատմական զարգացման ընթացքի, շեշտադրության, նրա կանոնարկման խնդիրների վեր հանումը սկսել Ա. Մեյեի (1866-1936 թ.թ.) հայագիտական ուսումնասիրություններից: Ողջ կյանքի ընթացքում նշանավոր հայագետի ուշադրության կենտրոնում է եղել հայ ժողովուրդն իր պատմությամբ, իր լեզվով. նրա հայագիտական հետաքրքրություններն ընդգրկել են հայոց լեզվի ստուգաբանության, համեմատական հնչյունաբանության և քերականության, հայոց լեզվի պատմության և հայ բանասիրության ամենատարբեր հարցերը: Նրա համոզմամբ հայերենը հնդեվրոպական տոնի որևէ հետք չունի, և վերջընթեր կայունացած շեշտի առկայությունը բացատրում է հարավկովկասյան լեզուների ազդեցությամբ: Ըստ հայագետի՝ հնդեվրոպական տոնային կամ երաժշտական շեշտը նախապատմական հայերենում փոխարինվել էր ուժային շեշտով, որը եղել է վերջընթեր վանկի վրա, որի պատճառով վերջին վանկի ձայնավորը թուլացել է և ընկել (այսինքն՝ գրաբարում արդեն հայերենի բառերը մեկ վանկով պակաս էին): Շեշտի և շեշտադրության քննությունը Ա. Մեյեն առավելապես կատարել է Ավետարանագրքերի թարգմանական բնագրերի ուսումնասիրության անհրաժեշտության թելադրանքով:

Ընդգծելով Աստվածաշնչի իսկական քննական հրատարակության անհրաժեշտության, հայ բանասիրության առաջադիմության հարցում առաջին նմուշը եղած Աստվածաշնչի թարգմանության լեզվի քննության կարևորության մասին՝ Ա. Մեյեն խոսում է նաև շեշտադրված հայերեն մի քանի Ավետարանագրքերի մասին.

²⁵ Հայոց լեզվի կառուցվածքը, Եր., 1975, էջ 287:

Էջմիածնի վանքում պահպանված երկաթագիր ձեռագրերի թվում կան մի քանիսը, որոնք թե՛ իրենց ամբողջության մեջ և թե՛ միայն որոշ մասերում կրում են հետևողականորեն դրված շեշտադրության նշաններ: Ըստ նրա՝ լեզվի պատմության այս տեսանկյունից ևս արժեքավորներից մեկը Մոսկվայի Ավետարանի լուսատիպ պատճենումն է, որում բնագիրը ներկայանում է ճիշտ նույն տեսքով, ինչպիսին էր Թ դարում, և որի հետաքրքրական կողմերից մեկն այն էր, որ ուներ շեշտադրության նշաններ. սրանք որոշ չափով տեղեկացնում են հնում բնագիրն ընթերցելու մասին: Նշանավոր հայագետը ձեռագրերի շարքում առանձնացրել է թե՛ այն ձեռագրերը, որոնք մինչև վերջ շեշտադրված են սև թանաքով, թե՛ նրանք, որոնք հատվածաբար են շեշտադրված, թե՛ այն ձեռագրերը, որոնց շեշտերը ծայրից ծայր կարմիր են և հետո են ավելացված (ընդօրինակող գրիչների կողմից) և այլն: Նա ընդգրկել է նաև շեշտադրված բնագրերի նմուշներ, որոնք շեշտակրության, շեշտային տարբերակների շատ հետաքրքիր իրողություններ են վերհանում, և որոնք կարևոր են ոչ միայն շեշտադրության, ուղղախոսության, այլև ընդհանրապես հայոց լեզվի պատմության համար: Նմանատիպ աշխատանքի արդյունքում եզրակացնում է, որ շեշտերի տեղաբաշխումը մի ձեռագրից մյուսը տարբերվում է, որ շեշտերը սկզբնական թարգմանչին չեն պատկանում կամ «գոնե հայերեն Ավետարանի ավանդական բնագրի լրացուցիչ մասը չեն կազմում»: Նա գրում է. «Սակայն, մյուս կողմից՝ նշանները նույնն են տարբեր բնագրերում, և շեշտերի կիրառության գլխավոր սկզբունքները մեկը մյուսից չեն տարբերվում. տարբեր է միայն գործադրումը: Ի միջի այլոց, այս նշաններն ու շեշտերը միայն ավետարանագրքերին հատուկ չեն. դրանք հանդիպում են նաև ամբողջ Աստվածաշնչի ձեռագրերում (բոլորն էլ խիստ զգալիորեն ուշ շրջանի) ու աշխարհիկ բովանդակությամբ ձեռագրերում»²⁶: Խոսելով Արիստոտելի աշխատությունների հայերեն թարգմանության հրատարակության մեջ զետեղված շեշտադրված աշխարհիկ բնագրի մի օրինակի մասին՝ հայագետը շարունակում է. «Երևում է, որ բնագիրը ծայրից ծայր շեշտադրելուց

²⁶ Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 464:

առաջ նախ շեշտադրել են որոշ բառեր, որոնց շեշտադրությունը անմիջապես հայտնի չէր հայ ընթերցողին: Ձեռ. 363-ը (1053թ.), որտեղ հայերեն բառերը շեշտադրված չեն, չհաշված հազվադեպ բացառությունները, հաճախ շեշտեր ունի հունական ծագմամբ հատուկ անունների վրա. այդ բանը կարելի է տեսնել Մարկ., Գ, 18 հատվածում, որը հետևյալ կերպ է ներկայացված այս ձեռագրում. (մյուս ձեռագրերի շեշտերը դրված են էջատակում. հիշատակված բոլոր ձեռագրերում շեշտը նույն տեղում է դրված, ինչ ձեռ. 363-ում, բացառությամբ հակառակ նշման). եւ զանդրէ՛սս եւ զ՛ըփիղի՛պպոս, եւ զ՛ըբարթողոմէ՛ոս, եւ զ՛մատթե՛ոս զմաքսաւոր. եւ զթո՛վմաս. եւ զյակո՛վբոս աղփեայ. ըւ զթաղդե՛ոս. եւ զսի՛մովն կանանացի... Ձեռ. 260-ում այս հատվածի շեշտերը նշված են սև թանաքով, անշուշտ, առաջին արտագրողի կողմից, ըստ այն օրինակի, որն սկզբունքորեն հավանաբար միայն օտար բառերի վրա շեշտեր ունեն, ինչպես ձեռ. 363-ը, այնուհետև կարմրագույն շեշտերի ավելացման ժամանակ (ըստ ամբողջովին շեշտադրված մի ձեռագրի, որն այլ էր, քան բնագրի ընդօրինակման համար որպես նմուշ ծառայած ձեռագիրը), դրանք ավելացվել են ճիշտ նույն տեղերում: Այս շեշտերի նպատակն այն էր, որպեսզի ընթերցողը շեշտեր բառավերջը, որ սովորական է հայերենում»: Հետաքրքիրն այն է, որ հայագետը տողատակում նշում է նաև ձեռագրերի համարներ, որոնցում շեշտը (հատկապես անձնանուններինը) կա՛մ օտար լեզվինն է, կա՛մ հայերենյան է, կամ որոնցում շեշտված չէ (էլի նորից հայերենյան սկզբունքով), անգամ ավելին՝ նշում է նաև շեշտակրության գուգաձևություններ՝ Այսպես՝ **գբարթողոմէ՛ոս** (229-ում, 369-ում) // **գբարթողեմէ՛ոս** (362-ում), բայց՝ **գբարթողովմե՛ոս** (267-ում), կամ՝ **զմատթե՛ոս**-ը 229-ում, 369-ում, 362-ում, 257-ում շեշտ չունի (շեշտված չէ), **զթո՛վմաս**-ը ա-ի վրա երկրորդ շեշտ ունի 229-ում, 260-ում, 257-ում, 362-ում, 369-ում, իսկ **զյակո՛վբոս**-ը շեշտադրական այսպիսի եռաձևությամբ է հանդես գալիս՝ **զյակո՛վբոս** (229-ում, 260-ում, 369-ում) // **զյակո՛վբոս** (257-ում) // **զյակո՛վբոս** (362-ում): **Աղփե՛այ**-ը վերջնական կշեշտ ունի 257-ում՝ **աղփեա՛** (հունարենում նախավերջին վանկում է), **զթաղդե՛ոս**-ը այսպես է շեշտված 229-ում,

260-ում, 257-ում, իսկ 369-ում՝ **զթադ`դէոն** («369-ի տարբերակն առաջանում է անկասկած այն բանից, որ հաճախ դժվար է որոշել, թե կից ձայնավորներից ո՞ր մեկի վրա է ընկնում շեշտը. հավանաբար մի ընթերցող ճիշտ չի կարդացել»): Իսկ **զսի՛նովն** բառում շեշտը նշված է /• ձևով, **կաննացի՛ն** (260-ում). 229-ում, 362-ում շեշտված չէ...

Ա. Մեյեն գրում է նաև շեշտի տեսակների մասին՝ տարբերակելով **սուր շեշտ**, **բութ շեշտ**, նշում շեշտի դեր կատարող **փուշ**-ի, **ուլորակ**-ի և այլ նշանների մասին, գլխավոր երկու շեշտեր է համարում **սուր**-ը և **ուլորակ**-ը, ուշադրություն դարձնում դրանց գործածական և դիրքային տարբերակների վրա. **ուլորակը** միշտ դրվում է առանձնացված վանկի վրա, իսկ **սուր**-ը ոչ բոլոր դեպքերում է, որ դրվում է շեշտված վանկի վրա: Ավելին՝ **ուլորակ**-ի գործածությունն ավելի կանոնական է և հաստատուն, ինչ չի կարելի ասել **սուր շեշտ**-ի համար: Անուղղակիորեն նաև շեշտի սահմանազատիչ դերի մասին է ակնարկում՝ խոսելով **բութ շեշտին** հաջորդող դադարի մասին. «Բացի սուր (') շեշտից, որ նույնական է Շարականի շեշտի հետ, ձեռ. 363-ն ունի երկու այլ շեշտ՝ բութ շեշտ (˘), որ նույնական է բութի հետ, և մի տեսակ (˙), որ նման է Շարականի ուլորակին: Բութ շեշտը հանդիպում է միայն շաղկապների վրա՝ **զի՛, եթե՛**, այլև **ասել** բայի ձևերի, հատկապես **ասէ՛**-ի վրա, ցույց տալու համար, որ ուրիշի խոսքերն են բառացի մեջբերվում: Ամենուրեք բութն արտահայտում է ձայնի դադար, որ սպասել է տալիս խոսքի շարունակությունը: Ինչ վերաբերում է ուլորակին, ապա ձեռ. 363-ում, ինչպես նաև բոլոր մյուսներում, նա դրվում է նախադասության այն բառի վրա, որի վրա տեղի է ունենում հարցմանը բնորոշ ձայնի բարձրացում... Ձեռագրերում երևան են գալիս նաև շեշտերի այլ ձևեր, բայց նրանց իմաստը հստակ չէ: Օրինակ՝ սուր շեշտի փոխարեն երբեմն հանդիպում է (✓) ձևով մի նշան (Շարականի փուշը). վերևում հիշատակված Մատթ., Գ, 18 հատվածում ձեռ. 257-ն **անդրեսա**-ի **ե**-ի վրա ունի փուշ և ոչ թե շեշտ: Երբեմն հանդիպում է նաև (/•) նշանը, որն ընդհանրապես երկու անգամ է դրվում՝ բառի սկզբում և վերջում, կամ էլ երկու նշաններից մեկը դրվում է իմաստով սերտորեն

կապված նախորդող բառի վրա... Գլխավոր երկու շեշտերն են սուրը և ոլորակը: Ոլորակը հանդիպում է միայն հարցական նախադասություններում և միշտ դրվում է մեկ բառի մեկ վանկի վրա, նրա, որի վրա բարձրանում է ծայնը... Սուր շեշտը նվազ կայուն գործածություն ունի. նա ամեն շեշտված վանկի վրա չի դրվում, այլ դրվում է միայն նախադասության մեջ հատուկ կարևորություն ունեցող բառերի շեշտված վանկի վրա: Պատահում է, որ միևնույն նախադասության մեջ շեշտված լինեն մեկից ավելի բառեր. լինում է նաև, որ նախադասությունը ոչ մի շեշտված բառ չի ունենում: Ի միջի այլոց, բնագրերի միջև մեծ տարբերություններ կան սուր շեշտի հարցում, մինչդեռ ոլորակի գործածությունը զգալիորեն նույնն է կանոնավոր կերպով շեշտադրված բոլոր ձեռագրերում և համարյա թե կայուն է այս ձեռագրերի պարունակած հարցական նախադասություններում...»²⁷:

Ամենակարևորը՝ տարբերակում է բառային շեշտն ու նախադասության շեշտը, շեշտի ընկալման հարցում կարևոր է համարում դրանց ուսումնասիրությունը և հետևեցնում, որ նախադասության մեջ բառերը կարող են ընդհանրապես չշեշտվել, բայց և մի նախադասությունը կարող է ունենալ մեկից ավելի շեշտված բառեր. «Հայերեն ավետարանագրքերի շեշտադրության վերջնական ուսումնասիրությունը կարելի է կատարել միայն այն ժամանակ, երբ գոյություն ունեցող ձեռագրերի լրիվ ուսումնասիրության հիման վրա կիրառարակվի Ավետարանի քննական հրատարակությունը: Մինչ այդ՝ այս հարցի մասին մի ակնարկ անօգուտ չի լինի. արդարև, **շեշտադրությունը չարունակվել է բնագրի մի ծայրից մյուսը միևնույն սկզբունքների հիման վրա:** Շնորհիվ այն փաստի, որ շեշտ են կրում միայն ամենաուժեղ շեշտված բառերը, այդ բնագրերի շեշտադրությունը ներկայացնում է հատուկ հետաքրքրություն. իրականում նախադասության շեշտն է նշված այդպիսով, և գիտենք, թե որքան հազվադեպ է, որ լեզվաբանը ստույգ տեղեկություններ ունենա այս հարցի մասին: Դեռևս այսօր հայերենում առանձնահատուկ կերպով զգալի է նախադասության շեշտը, և մինչդեռ բառաշեշտը քիչ է

²⁷ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 465-466:

ուժգին, կարևոր բառը, ուժգնությամբ ընդգծվելով նախադասության մեջ, հատկապես հարցական նախադասության մեջ, որտեղ միաժամանակ առկա է ձայնի բարձրացում շեշտված վանկի վրա, ուշադրություն է գրավում: Ի միջի այլոց, բառաշեշտը անուղղակի կերպով է նշվում, որովհետև նախադասության շեշտակիր բառի սովորաբար շեշտված վանկն է ըստ տեղին կրում սուր կամ ոլորակ շեշտ, և հետևաբար, պետք է ուժգին համարվի, երբ շեշտը սուր է, կամ պետք է դիտվի որպես ուժգին և սուր, երբ շեշտը ոլորակ է: Ուստի պետք է ուսումնասիրել բնագրերի ընձեռած տեղեկությունները՝ 1) բառաշեշտի մասին, 2) նախադասության շեշտի մասին»²⁸: Խոսելով Ավետարանի ձեռագրերում նախադասության շեշտի մասին՝ արժեքավոր տեղեկություններից մի քանիսը ակնառու են դարձնում՝

1. Նախընտրվում է ավելի հաճախ շեշտել **ոչ** ժխտականը, քան իր ուղեկցած բայը, և դա միայն **ոչ**-ին հատուկ չէ, շեշտվում է նաև **մի**-ն (**մի՛ իմասցին, մի՛ երբեք**): Իսկ երբ **ոչ**-ը միանում է ուժեղ շեշտված մի բառի, **ո**-ն սղվում է (**չէ՛ ինչ**). նշանակում է՝ ժխտականը հանդես է գալիս կա՛մ ուժեղ կերպով շեշտված, կա՛մ շեշտից զուրկ՝ կորցնելով իր ձայնավորը: Նախդիրները, որոնք միշտ անշեշտ են, հետևողականորեն միշտ ենթարկվել են այս երկրորդ հնչյունական փոփոխությանը՝ ձայնավորի սղմանը:

2. Շեշտը հատկապես հաճախադեպ է նշված, երբ շեշտված բառին հաջորդում է արտասանության մեջ նրան կցվող անշեշտ բառ (այսպես՝ դերբայ իր օժանդակ բայով՝ **մոլեգնեալ իցե**, ցուցական, որին հաջորդում է չշեշտված էական բայ (**նա՛ է**, նաև **կարող լինեին**)..

3. Գոյականից և նրան հաջորդող բայից կազմված դարձվածներում, որոնք բազմաթիվ են հայերենում, շեշտը կրողը գոյականն է (**ի խա՛չ հանել**)...

4. Երբ երկու բայական ձև, դիմավոր կամ ոչ, հարադրվելով կազմել են մի խումբ, երկրորդ բայն է շեշտվել (**եկայք անցցո՛ւք, մինչ գալ խառնե՛լ, առին գնացի՛ն**). երկու բայերից երկրորդի այս

²⁸ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 466:

շեշտադրությունը մեծ հետևանքներ է ունեցել լեզվի հետագա զարգացման համար. Եզնիկի մոտ՝ **կայր եւ ասստամբեցուցանէր**, Եղիշեի մոտ՝ **կայր եւ պատմէր...** «Այժմ տեսնում ենք, որ այս խմբերում **կայր**-ը համեմատաբար անշեշտ էր, մինչդեռ **ասստամբեցուցանէր**-ի, **պատմէր**-ի վերջավորությունը ուժեղ շեշտված էր, այսինքն՝ այնպիսի մի խմբում, ինչպիսին է **կայ եւ սիրէ**, գլխավոր մի շեշտ կար միայն բառավերջի է-ի վրա. դրանով են բացատրվում բային նախորդող **կայ եւ**-ի վերածումը **կայ ու, կու, կը**-ի և սրանցից բխած **կու, կը**-ի ընդհանրացումը: Ի միջի այլոց, բնական է այն փաստը, որ միավորված երկու բայեր անհավասար կերպով շեշտվեն. այն նկատում ենք նաև ռուսերենում»²⁹:

5. Այս սովորույթը ավելի ընդհանուր սովորույթի մասնավոր դեպքն է միայն. միավորված բազմաթիվ նախադասություններում առանձին ուժգնությամբ շեշտվում է վերջին նախադասության բայը:

6. Ընդհակառակը, երբ երկու գոյական են հարադրվել, առաջինն է կրել շեշտը (**եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն**):

7. Ուժեղ շեշտված է այն նախադասության բայը, որն արտահայտում է նախորդ գործողությունների միջոցով ձեռք բերված արդյունքը (ծեռ. 363-ում՝ կորուսանել, **եւ նոքա լռեցին**). ընդհանուր միակ էական սկզբունքը հետևյալն է. անկախ իրենց գրաված տեղից, շեշտված են նախադասության կարևոր բառերը:

8. Հետաքրքիր է Մեյեի հետևյալ միտքը. «Համեմատական աստիճանը, որ հաճախ ձևով արտահայտված չէ, արտահայտվում է ուրեմն այն առանձնահատուկ ուժգնությամբ, որով արտասանվում էր ածականը: Ջուգահեռությունը հաճախ մեծ դեր է խաղում շեշտադրության մեջ»³⁰:

9. Իր ուսումնասիրությունների արդյունքում նա իրավացիորեն ընդգծում է շեշտի մի կարևոր առանձնահատկություն ևս՝ «**շեշտը բացատրում է կորսված շատ իրողություններ**»:

Բնականաբար, Մեյեի ոչ բոլոր տեսակետներն են ընդունելի եղել և ընդունելի են լեզվաբանական աշխարհում: Նա կասկածի տակ է

²⁹ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 469:

³⁰ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 470:

առել հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների միջև եղած շատ ընդհանրություններ: Իսկ Գ. Ջահուկյանը, օրինակ, ճիշտ չի համարում նրա այն դրույթը, որ հայերենի ձևաբանական կառուցվածքի փոփոխության մեջ մեծ դեր է կատարել շեշտը՝ պատճառ դառնալով շեշտահաջորդ վանկերի անկման և այլն:

Հին հայերենի բառային շեշտի բնույթին է անդրադարձել նաև Հոլգեր Պեդերսընը (Պեդերսոնը) «Հին հայերեն լեզուի շեշտը» ոչ մեծածավալ հոդվածում³¹ (որը գրել է հայերենով): Հակադրվելով Ա. Մեյերին՝ նա պնդում է, որ հնդեվրոպական երաժշտական շեշտը գործառվել է նաև գրաբարյան շրջանում, իսկ հին հայերենում վերջնավանկի ծայնավորի անկման պատճառ կարող է լինել նաև «հոգեկան շեշտը»:

Այժմ առավել հանգամանորեն անդրադառնանք հայ բանասիրության տարբեր աղբյուրներում խնդրո առարկայի վերաբերյալ արտահայտված կարծիքներին՝ մասնավորապես նկարագրական-վերլուծական և համեմատական քննության նյութ դարձնելով հայերենի շեշտին ու շեշտադրությանը, նրա կանոնարկմանն ու առկա տատանումներին, շեղումներին և զարգացման միտումներին, լեզվի տարբեր գոյաձևերում շեշտակրության գործառական յուրահատկություններին վերաբերող ուսումնասիրությունները:

Մարդկային մտքի գործողության ընթացքի «**գլխաւոր երեւեցուցիչն է**» խոսողությունը կամ լեզուն: Ամեն մի լեզու իրենով խոսող հանրության կյանքի արտահայտիչն է, «նյութական, բարոյական և գլխավորապես մտավոր կյանքի հաջող կամ անհաջող վիճակի ծանրաչափը»: Ամեն մի լեզվի պատմություն այն վայրկյանից է սկսում բարձրագույն կարևորություն ստանալ, երբ «այն հյուսող բազմակնճիռ թելերի կապակցությունը» դիտելով, յուրաքանչյուր

³¹ Հ. Պեդերսընի կարծիք-մեկնաբանություններն այս աշխատանքի տարբեր հատվածներում ներկայացված են ըստ Վ. Պետրոսյանի «Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հոլգեր Պեդերսընի» հոդվածի: Պեդերսընը հակադրվում է հնդեվրոպաբանության մեջ ընդունված տեսակետին՝ նշելով, որ երաժշտական շեշտի գործառությունը ներառում է նաև գրաբարյան փուլը, մատնանշում լեզվում երաժշտական շեշտի գոյության 2 պայմանները (առավել մանրամասն տե՛ս՝ Վ. Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 279):

իրողության պատճառներն ու հետևությունները քննելով՝ անցյալի միջոցով ներկան, ներկային միջոցով անցյալը ճանաչելուց բացի կարողանաս դեպի ապագան տանող ճիշտ ճանապարհը ընտրել. այսպիսի նշանաբանով Ա. Այտընյանը քննեց հայոց լեզվի պատմությունը, նկարագրեց քերականությունը, ուղղագրության, առոգանության ու տաղաչափության հարցերի քննությանն անդրադարձավ՝ կարևոր համարելով նաև բառերի **«պարտուպատշաճ» արտաբերությունը**. «Որչափ ալ բառերն ուղղագրութեան օրինացն համեմատ գրուած ըլլան, անոնց ուղիղ արտասանութեանը կամ՝ անսխալ ընթերցման համար՝ դարձյալ ուրիշ մասնավոր կանոնաց պետք կը մնայ, որ քերականութեան մեջ Առոգանութեան մասը կը կացուցանեն: Ուստի **Առոգանութիւն** կը կոչուի՝ բառերն ուղիղ արտաբերելու կանոնը: Ասոր մէկ մասն է նաեւ անսխալ հեգելը, որուն գրութեան կանոնը Տրոհութեան մեջ տեսանք: Առոգանութեան արուեստը միայն ծայնաւոր գրերու վրայ կը յաժի, եւ նշանները միայն ծայնաւորաց վրայ կը դրուին: Առոգանութեան նշանացն անուններն ու ձեւերը ասոնք են: Շեշտ՝, Բութ՝, Երկար՝, Սուղ, Ոլորակ կամ Պարոյկ ՞: Այս նշաններս որոշուած են՝ Ամանակը (վանկերու ծայնին աստիճանը կամ տեւողութեան չափը) ցուցնելու համար: Բայց հիմայ միայն Շեշտը կը դրուի բարձրացած վանկին վրայ՝ եթե հարկ համարուի. բութ երբեք չի դրուիր, եւ հիմայ կետադրութեան անցած է: Իսկ Պարոյկն ու Երկարը իբրև հարցման եւ միջարկութեան նշանները կմնան (ուստի սովորեցան ոմանք անուն տալ՝ հարցական եւ Զարմացական, ըստ Եւրոպացոց)»³²: Նա նշում է նաև, որ ըստ նախնիների, հատկապես հունական քերականության մեջ, առոգանությունը, ծայնավորների բարձրությունն ու ցածրությունը, կարճությունն ու երկարությունը ցույց տալով, իբրև թե երաժշտական մասն են ապահովում. այս է պատճառը, որ առոգանութեան նշանները «երգի խազերէն փոխառեալ նշաններ են»: Հատկապես կարևորելով ծայնավորների՝ դիրքին համապատասխան արտասանելու հանգամանքը (երևի թե պայմանավորված նաև

³² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 360:

շեշտակիր լինելու կամ չլինելու հատկանիշով)՝ լեզվաբանը շարունակում է. «Սակայն ուղիղ առողգանութիւն կը կոչենք դարձեալ ընդհանրապէս բառերուն պարտուպատշաճ արտաբերութիւնը. գործօրինակ կոչականը կոչելով, հարցականը հարցընելով, և այլն. նոյնպէս քանի մը դէպքի մէջ այս ինչ կամ այն ծայնաւորին՝ դիրքն համեմատ բուն և ուղիղ ինչունը...»³³: Նա մեկ առ մեկ բացատրում է առողգանութեան նշանների գործածութեան յուրահատկությունները. այսպէս՝ բութը ցույց է տալիս, որ բառն անշեշտ է, այսինքն՝ բառի վանկերն իրար հավասար սրութեան կամ բարձրութեան աստիճան ունեն, կամ եթէ միավանկ է, մյուս բառերից ավելի բարձրութիւն չունի, և բերում է օրինակներ՝ «Տա՛րա՛պա՛րտ, չա՛րա՛խօ՛ս, իրե՛նք ա՛լ, ո՛վ ո՛ր»՝ եզրակացնելով՝ **«Ամէն հայերեն բառ բութ է ի բնէ, - շատ քիչ բացառութեամբ»**: (Ի միջի այլոց, նույնը պնդում է և Մ. Աբեղյանը): Իհարկէ, լեզվաբանը հետո բացում է ասվածի փակագծերը, առանձնացնում շեշտի խոսքիմասային տարբերակիչ լինելու հատկանիշը, շեշտված բառերի «բթյալ» և «բթյալների» շեշտակիր դառնալու հանգամանքները՝ գրելով՝ «Բառերում շեշտն ու բութը երկու կերպով է. 1. **ի բնէ՝** որ բառին բնական է. ինչպէս մինչև հիմա ըսուածները, եւ 2. **Պրիւ՝** որ բառին առած դիրքէն կախում ունի»: Նա նշում է այն դէպքերը, երբ «ի բնէ բութ» բառը շեշտադրվում է, իսկ «ի բնէ շեշտյալը» «բթյալ» է դառնում, այսինքն՝ շեշտագրկվում է: «1. Խոսքին գլխաւոր կամ երկրորդական բառն ըլլալուն համեմատ, որ բառին ետեւառաջութենէն կամ խօսքին իմաստէն կախում ունի, գործօրինակ վերի օրինակին **երբէ՛ք** բառը. Ի բնէ շեշտ. **Երբէ՛ք** չէին ստեր. Ստած՝ **երբէ՛ք** չունէին: Պրիւ բութ. Զէին ստեր **երբէ՛ք**: Ո՛չ **երբէ՛ք** կը ստէին: Նոյնպէս շեշտեալ է՝ **հաստի՛կ** մ՝ ալ. եւ բութ՝ Մէ՛կ **հաստի՛կ** չմնաց: 2. Բառին նշանակութեան տարբերութենէն. ինչպէս **ալ** շաղկապն եւ **ալ** մակբայը: Շեշտիւ է՝ Ես **ա՛լ** աւելին գիտեմ: Բութ է՝ Ես **ալ** գիտեմ: Նոյնպէս՝ **Ալ** չկրցան տեսնել. եւ Զկրցան **ալ** տեսնել: 3. Կոչականներն ու իրամայականները կրթին՝ երբ նախընթաց շեշտեալ բառ մ՝ ունին՝ որ իրենց վերադիրն է. գործօրինակ, Մա՛նր **ջարդեցէ՛ք**, նե՛րս տա՛ր: - Կոչակա-

³³ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 361:

նը՝ երբ նախընթաց ածական մ'ունի, կամ՝ երբ կրկնուած է, առաջին մասը կը շեշտուի, այսպէս՝ **ՈՐդեակ, զօրականք, Սիմոն** կոչականները՝ **Սիրուն** որդեակ, **Պարսից** զօրականք, **Սիմոն** Սիմոն: Նոյն նախընթաց շեշտեալներն ալ նոյն կանոնով կը բթին դարձեալ՝ երբ իրենցմէ յառաջ շեշտեալ մ' ունենան. ինչպէս՝ **Մանր** մանր ջարդեցէ՛: Այ սիրուն որդեակ, **Ո՛ր** Պարսից զօրականք: **Ո՛վ** Սիմոն Սիմոն»³⁴: Շեշտի մասին խոսելիս գրում է. «Շեշտ ունի այն վանկն որուն սուր կամ բարձր է ձայնը. գորօրինակ. **Անօրէն** են անոնք, **չերթաս** հետ, **սիրելի**: Շեշտյալ կ'ըսուի բառ մ'որուն վերջին վանկը շեշտ ունի. ինչպէս. **երբէք** չէր ստեր: **Չէին լսեր** ամենեւին»³⁵: Ամենակարևորը՝ առանձնացնում է այն բառերը, որոնց շեշտն առաջին վանկի վրա է. դրանք են՝ **գոնէ, գոցէ, հիմայ, արդեօք, դարձեալ, բարբէ**. «եւ յօդուածոյ»՝ **այսօր, այսպէս, ինչպէս, նոյնչափ, թեւ, թեպէտ, գրէթէ, միթէ**: - **Մանաւանդ, անասիկ, վանգի(վանն), վէցերորդ, տասներորդ**: Ավելացնում է. «օրինակներէս՝ երկվանկները **Յարաշեշտ** կը կոչուին, իսկ եռավանկները խորթ ձայնիւ՝ **Նախայարաշեշտ**... Նոյնպէս հրամայականներն ի բնէ շեշտյալ են՝ երբ միմակ մնան. **Աշխատի՛: Հասէք, հասէք և մի՛ դանդաղիք**: Յարաշեշտներու կարգն են սուղ (կարճ կամ կէս) վանկով յանգեալ բառերը. **Աստղ, (անտղդ), դա՛ռն, թա՛նծր, ի՛նքը, զենքէ՛րը, անօթնէ՛րը** եւ այլն»³⁶:

Անուշադրության մատնված չէ նաև կոչականի շեշտի դիրքը. շեշտվում է կոչականների առաջին վանկը՝ «**ՈՐդեակ, հայրիկ, անզգամ, Սիմոն, Մարիամ, Փիլիպպոս**» և այլն: Մտածելու տեղիք է տալիս լեզվաբանի այն դիտողությունը, երբ կոչականների շեշտադրական զուգաձևությունների տարբերակման հետևյալ հիմունքն է նշում՝ «Կոչականներն այսպէս կը շեշտուին խօսքի մէջ, կամ ուրիշ բառի հետ եղած ատեն. իսկ միմակ որ մնան (մանաւանդ յատուկ անունները), գորօրինակ մէկն անունովը կանչելով՝ վերջին վանկը կը շեշտուի, այսպէս. Բովանդակ ուժովն սկսաւ պոռալ.

³⁴ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 363:

³⁵ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 361:

³⁶ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 362:

Տիրա՛ն, Տիրա՛ն... բայց իւր ծայնին արծագանքն էր միայն պատասխանը»³⁷:

Ըստ Ա. Այտընյանի՝ **երկար** նշանը ցույց է տալիս, թե վանկը սովորականից ավելի երկար տևողություն ունի, ինչպիսիք են մանավանդ միջարկությունները (**Վա՛յ ինձ, աւա՛ղ** և այլն), «և իբր ծայնարկութեամբ ու կրիւք բացատրուած շեշտեալները. **Ա՛յսչափ կուրութիւն, Սոկրա՛տ մը մեռցընել**»: Հետաքրքիր է հետևյալը շեշտի համար. «Մեղմ ծայնարկութեանց համար պարզ շեշտ մ'ալ բաւական է երկար նշանին տեղ»: Սուղ նշանը ցույց է տալիս, թե վանկը սովորականից ավելի կարճ տևողություն ունի և սուղ վանկ են՝ «1. Դերանունական յօդերը բաղաձայնէ մը ետքը եւ զօրութեամբ գրուած ը ծայնաւոր ունեցողներէն շատը. ինչպէս՝ **Ձայնըս, փայտըն, ըզգաստ, ըստանալ, տըկար, քընար, քաղցըր** եւայլն, որ բոլորովին ալ կը կորսուին կամ կը պակսին՝ երբ ծայնաւորի հետ կապուած ըլլան. գորօրինակ. **Որդի ստանալ, փայտնալ, որն որ, ընկերս էր**: 2. Նախդիրներն ու քանի մը կարճ բառեր. **Գիշերն ի բուն, հետն ի վեր, ըզմեզ, աս մարդիկ, կը նայիս, անգամ մի ալ...** Հիմայ բոլորովին խափանուած է սուղ նշանին գործածութիւնը: Պարոյկ կամ Ոլորակ՝ հարցման նշան է, եւ հարցական խոսքին մեջ շեշտուած բառին վրայ կը դրուի՝ ուր որ բուն հարցումը կ'իյնայ: ...Հարցական բառին Պարոյկը, ինչպէս նաև երկարը միայն շեշտոյալ վանկին վրայ կ'իյնայ ու ոչ սուղ վանկի կամ բացաձայն գրի վրայ (զորն որ շատ համբակներ չեն խտրեր) այսպէս, **Ա՛յսօր, ի՞նչպէս, քանի՞ անգամ, ա՛յնպէս, այնպիսի՞** ախոյեաններ, **այնպիսիներո՞ւ վկայութեամբ, Ո՛րչափ տխուր...** »³⁸: Հետաքրքիր է այն միտքը, որ բառի զորութեամբ և խոսքի իմաստի պահանջով են գործածվում երկարն ու ոլորակը, վանկինը ներքին յուրահատկություն է: «...Հիմակուան երկարի եւ ոլորակի գործածութիւնը միայն պատահական երկարութիւն մը կը ցուցնէ. այսինքն՝ ինչպէս որ բառին զօրութիւնը կամ խօսքին իմաստը կը պահանջէ: Բայց վանկի մը բուն (քերականական) երկարութիւնն ու տղութիւնը իրեն ներքին յատկութիւնն է եւ իւր

³⁷ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 361:

³⁸ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 364:

բնութեանը մէջն է»³⁹: Ասել է թե լեզվաբանն ուրվագծել է լեզվական և խոսքային շեշտերի տարբերակումը:

Ա. Այտընյանն անդրադարձել է նաև փոխառությունների շեշտադրման հարցերին: Լեզուների քննական պատմության մեջ ընդհանուր կանոնի բացառություն չկա այն պարզ տրամաբանությամբ, որ չկա մի լեզու, որ իր մեջ չունենա օտար «կամ «եկամուտ», բառեր, բայց այդ «օտարություններին», փոխառություններին չափ ու սահման պիտի լինի... Չէ՞ որ բառերի փոխառությանն սկզբնապես հաջորդում է օտարախոսությունը: Եվ, ցավով նշելով, թե՝ «Նախնեաց ատենները, երբ դեռ լեզուն իր սահմանին մէջն էր, **օտարութեանց չափն էր՝ Չափաւորութիւն**, ուր որ վերջին ժամանակներու չափն եղած է՝ **Անչափութիւն**», շարունակում է՝ «Այսչափ սաստիկ եղած է ամէն ատեն արեւելեան ազդեցութեան, կամ՝ եթէ կրնանք ըսել, լեզուին տարրալուծութեանը մէջ՝ այս քիմիական խնամութեան զօրութիւնը»⁴⁰: Իսկ ի պատասխան այն հարցերին, թե ինչ օրինաչափությամբ են շեշտադրվում օտար բառերը, ինչ են նշանակում «հայերեն կանոնով բթյալ» և «հայորեն շեշտյալ» կապակցությունները, նա գրում է. «Օտար անուններն որ չեն հայացած, (այսինքն որ առանց տառադարձութեան կը գրուին), իրենց բնական ազգային շեշտը կը պահեն. ինչպէս. **Փարմա, Պերլին, Միլան, Մանչեսթեր, Սոնթլէոնէ** եւայլն: Բայց սխալ կը համարուի հայածել անուանց վրայ օտար շեշտ. ինչպէս. **Անգղիա, Հռոմայու երկիր** (փխկ. **Անգղիա, Հռոմայ երկիր**): Վասնզի այդպիսիները հայերէն կանոնով բթեալ են կամ հայօրէն շեշտեալ. **Բրաբիոն, Եպիսկոպոս, սաւաճ, ոստրէ** եւայլն»⁴¹:

Գ. Ղափանցյանը, առավելապես հետևելով Բոդուեն դը Կուրտենին, շեշտի և շեշտադրության մասին հետևյալ ընդհանուր դրույթներն է նշում. ցանկացած բառում վանկերն ունեն իրենց առանձնահատկությունը, սակայն նրանցից մեկի վանկարար հնչյունն ավելի ուժգին է արտասանվում, և այդ պատճառով շեշտավոր

³⁹ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 365:

⁴⁰ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 234:

⁴¹ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 362:

վանկն իր վրա է կենտրոնացնում արտասանողական ուշադրությունը. ըստ որում վանկերի տարբերությունը պայմանավորված է նաև շեշտված վանկի մոտ կամ հեռու գտնվելու իրողությամբ: Մյուս կողմից՝ արտաշնչական շեշտն ազդեցական և համաձուլիչ դեր ունի: Նա գրում է. «Յուրաքանչյուր բառի մեջ վանկերն ունեն ուրույն բնույթ, ուրույն առանձնահատկություններ: Երբ մի վանկ ավելի է առանձնանում իր վանկարար հնչյունի ուժգնությամբ (արտաշնչությամբ) կամ դրա տոնի բարձրացմամբ, ապա դա կլինի այն, ինչ կոչում ենք շեշտ: Եվ ստանում ենք արտաշնչական շեշտ կամ երաժշտական՝ տոնիկ շեշտ: ...Լինում է իհարկե և այդ երկուսի միացում-խառնումը, նայած լեզվին: Ռուսաց լեզվում, ինչպես և հայերենում, շեշտն ընդհանրապես արտաշնչական է, այնինչ, օրինակ, հին հնդկերենում կամ հին հունարենում նա եղել է երաժշտական. այդպես է նաև ճապոներենում և չինարենում: Ռոռ լեզուներում, ինչպես օրինակ, լիտվական և սերբ լեզուներում շեշտը կրում է իր հատուկ երկու կողմերը ևս՝ «արտաշնչական-երաժշտական» կամ «երաժշտական-արտաշնչական»՝ լինելով հետևապես խառն շեշտ: Արտաշնչական շեշտը մեծ դեր է խաղում իր ազդեցությամբ մյուս վանկերի ծայնավորների վրա, թեև պետք է և շեշտել, որ շեշտակիր վանկի բաղաձայնները ևս լավ են հնչում: Բոդուն դը Կուրտենեն շեշտի այդ ազդեցական և համաձուլիչ դերն ի նկատի ունենալով, խոսքը վերաբերում է իհարկե արտաշնչական շեշտին, կոչում է այն «ֆոնետիկական ցեմենտ»... Ընդհանրապես նա դիտում է, որ շեշտավոր վանկը, իբրև իշխող արտասանական տեղ (դիրք), իր վրա է կենտրոնացնում արտասանողական ուշադրությունը, որով այլ վանկերի ստուգապես արտասանվելը խանգարվում է և թուլանում: Եվ քանի շեշտված վանկից ավելի հեռուն ենք գնում, այնքան այդ արտասանական անկատարելությունը, անստուգությունը ավելի է մեծանում...»⁴²:

Ինչպես հայերենին վերաբերող ցանկացած հարցի, այնպես էլ քննարկվողի առնչությամբ անկարելի է կրկին ու կրկին չանդրա-

⁴² Տե՛ս՝ **Գ. Ղափանցյան**, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1., Եր., 1939, էջ 73-79:

դառնալ Հր. Աճառյանի և Մ. Աբեղյանի հետազոտական ուսումնասիրություններին:

Կարելի է ասել, որ Ա. Մեյեի հանճարեղ աշակերտը՝ Հր. Աճառյանն է հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիրը: Մասնավորապես շեշտի և շեշտադրության, տարբեր լեզուների տարբեր բնույթի շեշտակրության մասին, մեկ լեզվի՝ մեկ բնույթի շեշտ ունենալու անհնարինության, շեշտի ընկալման առնվազն երկու կամ երեք գործոնների համակցության վերաբերյալ Հր. Աճառյանի մտքերը տեսական և գործնական մեծ նշանակություն ունեցան հետագա ուսումնասիրողների համար: Այս բնագավառում նրա արածը լավագույնս ներկայացրել է Ա. Խաչատրյանը, և նպատակահարմար ենք գտել հարցի քննության վերաբերյալ Հր. Աճառյանի տեսակետները ու կատարված աշխատանքի գնահատականը ներկայացնել հենց վերջինիս խոսքերով. «Աճառյանը տեսականորեն ենթադրել է, որ հայերենում շեշտված վանկը երկար է անշեշտի համեմատությամբ, և հայերենում շեշտը ուժգնության բնույթի է, սակայն ցայտուն արտահայտություն չունի: Նա միանգամայն ճիշտ է բացատրում այս երևույթը, գտնելով, որ առավել ուժգին շեշտ ունեն այն լեզուները, որոնցում շեշտն ընկնում է առաջին վանկի վրա, «որովհետև արտասանության սկզբում շունչը դեռ առատ լինելով, առոգանությունն էլ ուժեղ կլինի: Իսկ երբ շեշտը վերջին վանկի վրա է, շունչն արդեն նախորդ վանկերի վրա վատնած լինելով, վերջին վանկի վրա թույլ կլինի»: Այս դրույթը հաստատվել է փորձառական տվյալներով, մասնավորապես Ռ. Թոխմախյանի կատարած ուսումնասիրությամբ: Փաստորեն այստեղ ևս Աճառյանը կանխագուշակել է այն միտքը, որ չկան մաքուր, մեկ բնույթի շեշտ ունեցող լեզուներ, որ շեշտի ընկալման համար անհրաժեշտ են առնվազն երկու կամ երեք գործոնների համակցություն: Խոսելով հայերենի շեշտի կայունության մասին, Աճառյանը գտնում է, որ տրամաբանական շեշտի դեպքում այն կարող է փոխել իր տեղը և ընկնել բառի ցանկացած վանկի վրա: Այսպիսով, հենվելով լսողական տպավորության վրա և համեմատելով հայերենի շեշտը այլ լեզուների շեշտի հետ, Աճառյանը տրամաբանորեն եկել է միանգամայն ճիշտ եզրակացության,

կանխագուշակելով իրենից մոտ 30-40 տարի հետո փորձառական տվյալներով ստացված արդյունքները»⁴³:

Հր. Աճառյանը շեշտը նույնպես քննում է այլ լեզուների համեմատությամբ, ընդգծում նմանություններն և տարբերությունները և այն համարում է լեզվի պատմական կյանքի արդյունք: Նա եզրակացնում է, որ բառը շեշտվում է ինքնին՝ անկախ ամեն ինչից: Հայերենում նա է առաջինը նշում երկգագաթանի վանկերի մասին, որոնք, բնականաբար երկու շեշտ պիտի ունենային՝ մեկը շատ ուժեղ, մյուսը ուժեղ: Լեզվաբանը գրում է.- «Լեզվական շեշտը այն է, որ ունի բառը ինքնին, անկախ նախադասության մեջ իր ստացած դիրքից և անկախ այն հոգեբանական վիճակից, որով մարդ արտասանում է այդ բառը: Սովորական բացատրության մեջ մենք շեշտ բառը գործ ենք ածում անխտիր ծայնի թե՛ բարձրության և թե՛ ուժգնության համար, առանց ուշադրություն դարձնելու նաև այն հանգամանքի վրա, թե նա պատկանում է բառի^օն, թե արդյունք է հուզմունքի: Գիտական լեզվի մեջ սակայն, պետք է զանազանել այդ բոլորը իրարից.- տոն ասելով հասկանում ենք ծայնի բարձրացումը, բայց ո՛չ թե ուժգնությունը, իսկ շեշտ ասելով հասկանում ենք ծայնի ուժգնությունը և ո՛չ թե բարձրացումը»⁴⁴: Նույն հատորի վերջին մասերում առանձնացնում է շեշտի տարբեր տեսակներ, ընդգծում շեշտի ուժգնության տարբերությունը լեզվից լեզու, բացատրում առաջնավանկային և վերջնավանկային շեշտ ունեցող լեզուների արտասանական տարբերությունը, կարևորում ուժաչափ գործիքի դերը, առանձնացնում է անշեշտ ճապոներենը: «Լեզվական շեշտը, - շարունակում է Հր. Աճառյանը,- անկախ է զգայական ու տրամաբանական պատճառներից և լեզվի պատմական կյանքի արդյունք է: Բառի այսինչ վանկը արտասանվում է ավելի ուժգին, քան մյուս վանկերը: Այստեղ զանազանվում են իրարից միայն ուժեղ շեշտ, միջակ շեշտ և անշեշտ: Բառը բացի իր գլխավոր շեշտից, որ մյուսներից ավելի ուժեղ է համարվում, կարող է ունենալ նաև ավելի տկար մի շեշտ, որ կոչվում է երկրորդական շեշտ... Բայց բառը կարող է ունենալ

⁴³ Լեզվի և ոճի հարցեր, 5, Եր., 1978, էջ 66-67:

⁴⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 291:

նաև երկու երկրորդական շեշտ... Լինդսեյը կարծում է, թե որքան վանկ ունի բառը, այնքան էլ շեշտ ունի՝ մինը մյուսից ավելի տկար... Վունդտը չի ընդունում այս կարծիքը, ասելով, որ ուժաչափ գործիքը միայն կարող է վճռել այս դիտողությունը, իսկ ականջը զգում է միայն 4-րդ և 5-րդ շեշտերը, մյուս երեքն անընդունակ է զգալու: Բացի սրանից շեշտի ուժգնության տարբերությունը զգալի է նաև լեզվից լեզու, օրինակ անգլերենի, գերմաներենի, ռուսերենի շեշտը ավելի ուժեղ է, քան հայերենի և ֆրանսերենի: Շեշտը հասնում է իր մաքսիմումին այն լեզուների մեջ, ուր շեշտից հետո մի քանի վանկեր կան: Ուստի հասնում է իր մինիմումին այն լեզուների մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է: Այսպես՝ վրացերեն և հունգարերեն լեզուների մեջ, ուր շեշտը առաջին վանկումն է, շատ ուժգին է հնչում, իսկ ֆրանսերենի ու հայերենի մեջ, ուր շեշտը վերջնավանկումն է, շատ մեղմ է լսվում: Ճապոներենը շեշտ չունի, և բառի բոլոր վանկերը հավասար են: միայն հարցական շեշտ է ստանում: Պատահում են երբեմն վանկեր, որ ունենան երկու շեշտ, մինը մյուսից ավելի ուժեղ: Ինչպես գերմաներեն... կամ հայերեն **հա (հա՛-հա)**. սրանք կոչվում են երկու գազաթանի վանկեր, բայց սրանք էապես երկու տարբեր վանկեր են»⁴⁵:

Մ. Աբեդյանը ևս նույն հարցերին է անդրադառնում՝ սահմանելով շեշտը (**«բազմավանկ մյուս վանկերի համեմատությամբ մեկի արտաբերումն արտաշնչության ավելի մեծ ուժով կոչվում է բառի շեշտ»**), բնութագրելով այն որպես վանկի հնչյունների, բառի վանկերի, նախադասության բառերի համաձուլիչ վերհատույթային միավոր, նշելով դիրքը (**«բառի շեշտը հայերենում, գրական լեզվի մեջ մի ընդհանուր կանոնով ընկնում է սովորաբար բառերի վերջին վանկի վրա»**) և այլն: Մինևույն ժամանակ արեղյանական ուրույն լեզվազգացողությանը համապատասխան՝ լրացվում-խորացվում է եղածը, կամ էլ բոլորից տարբերվող դրույթներ են առաջ քաշվում: Վանկի մեջ վանկային ուժեղ հնչյունին միանում են մյուս թույլ հնչյունները և կազմում են հնչյունների կապակցության մի միություն: Բազմավանկ բառերի շեշտված վանկին միանում են մյուս

⁴⁵ Հ. Աճառյան, նշվ., աշխ., էջ 316-318:

վանկերը և կազմում մի նույնպիսի, բայց ավելի մեծ միություն: Խոսքի շեշտով խոսքի բառերն են կազմում արտաբերությամբ կապակցված հնչյունների մի ավելի մեծ միություն, վերջին դեպքում առանձնապես ուժեղ է արտաբերվում այն բառը, որի վրա առանձին ուշադրություն է դարձվում, կամ որը հոգեբանական ստորոգյալն է: Խոսքի շեշտն ընկնում է միշտ բառի շեշտված վանկի վրա: Քննախույզ լեզվաբանը առանձնապես կարևորում է հայերենյան շեշտի գործառնությունից մեկը. «մեր շեշտի ընդհանուր դրությունից են ծագում մեր ոտանավորի էական հատկությունները»: Նա գրում է. «Վանկի մեջ վանկային հնչյունի ավելի ուժեղ արտաբերություն, բառի շեշտ և խոսքի շեշտ. այս երեքն էլ արտաշնչության ուժի տարբեր աստիճաններ են միայն, որոնք մեկը մյուսից տարբերվում են ավելի մեծ ուժով: Վանկի մեջ ծայնավորն ավելի ուժեղ է արտաբերվում, քան բաղաձայնները, բազմավանկ բառի շեշտված վանկի ծայնավորն ավելի ուժեղ, քան մյուս վանկերինը, իսկ խոսքի շեշտ կրող վանկի ծայնավորն՝ ամենից ուժեղ... Բայց կա նաև հնչյունների քանակը կամ ամանակը, որն է այն ժամանակի տևողությունը, որ պահանջվում է այս կամ այն հնչյունի արտաբերության համար: Կան լեզուներ, որոնք ունեն երկար ու կարճ ծայնավորներ... Մեր ծայնավորները, նայելով վանկերի կազմությանը, շեշտին և արտասանության եղանակին, երբեմն ավելի երկար են արտասանվում: Մեր Ը ծայնավորը համեմատաբար ավելի կարճ է»⁴⁶:

Մ. Աբեղյանը, տարբերակելով բառի, խոսքի և քերականական շեշտերը, պարզաբանում է նաև յուրաքանչյուրի դերը. բառային շեշտով ուժեղ արտասանությամբ առանձնանում է բառի մի վանկը մյուսներից, խոսքային շեշտով բառի մի վանկն (և այդ վանկի միջոցով մի բառն) է առանձնանում խոսքաշարում, իսկ քերականական շեշտը չունի ընդգծված առանձնացնող հատկություն, ընդհակառակը, այն մի բարդ գաղափար արտահայտելու համար մի գաղափարի տակ է միավորում երկու և ավելի բառեր, որոնցից գլխավորը համեմատաբար ուժեղ է արտասանվում: Որոշակի հակասություն է նկատվում լեզվաբանի քննարկումներում: Կրկնելով Ա. Այտընյա-

⁴⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ. Եր., 1974, էջ 81-82:

նին՝ եզրակացնում է՝ **ամեն հայերեն բառ (բացի մասնավոր բառերից) բութ է ի բնե**: Ասվածը մտածում ենք հասկանալ այսպես՝ բառային շեշտ չկա, այսինքն՝ ամեն բառ շեշտ ունի միայն քերականական գործածությամբ. այս դեպքում բառի սահմանման մեջ կասկածի տակ է դրվում շեշտակրության հատկանիշը: Կամ՝ խոսքային շեշտին վերագրում է առանձնացնող հատկությունը, իսկ քերականական շեշտին՝ միավորող: Կամ էլ՝ գերագնահատվում է վանկի դերը խոսքաշարում:

Ժողովրդական լեզվի շեշտադրությունը քննելիս նա գրեթե ներկայացնում է հայերենի շեշտադրական նորմը. «Մենք սովոր ենք ասել, թե հայոց լեզուն շեշտ չունի, կամ լավ ևս ասել՝ շեշտը միշտ բառի վերջին վանկի վրա ունի, բացի այն դեպքից, երբ որ վերջին վանկի ձայնավորը **ը** հնչյունն է. օրինակ՝ **քաղա՛քը, թա՛նձըր, ա՛ստըր**: Այդպես ենք սովորել մենք ուսումնարանում, այդպես հավատացած ենք գրեթե ամենքս և այդպես կարդում ենք ամենայն մի գրվածք, որ հայերեն լեզվով է, գրաբար լինի թե աշխարհաբար, գրականական լեզվով լինի թե ժողովրդական բարբառով - այդ միևնույն է. մի անգամ որ սովորել ենք, թե հայերեն բառերի վերջին վանկն է շեշտվում, այդպես կարդում ենք ամենայն ինչ: Եվ ոչ միայն այդպես կարդում ենք, այդ վերջաշեշտ շեշտադրությունը այնքան արմատացած է մեզնում, որ երբ որ մեկին ասում են, թե մեր արևելյան գավառների բարբառների շեշտադրությունը բոլորովին նման չէ գրաբարի և մեր գրականական լեզվի շեշտադրությանը, և թե՛ եթե մեկը հայերեն է խոսում, կենդանի հայերեն, որ ուղղակի ժողովրդական (արևելյան ճյուղի) աղբյուրից է բխում, նա յուր խոսակցության մեջ գրոց լեզվի շեշտադրությունից ուրույն շեշտադրությամբ է վարվում, թեկուզ ավելի գրականական լեզվով խոսելիս լինի, քան թե ժողովրդական լեզվով, - լսողը զարմանում է և չի հավատում և սկսում է պնդել, թե հայերենը քո ասած շեշտադրությունը չունի, դա մի եղանակավորություն է կամ տրամաբանական շեշտադրություն, և ոչ քերականական շեշտադրություն»⁴⁷: Հին ու նոր քերականություններում եղած կանոնները հանելով՝ կարելի է ասել,

⁴⁷ Մ. Աբեղյան, հ. Ը, Եր. 1974, էջ 275:

հաստատում է Ա. Այտընյանի ասածները. ծայնավորների երկարու-
 թյան և սղության հին հետքերը մինչև այժմ մնացել են մեր մի քանի
 գավառական բարբառների մեջ, որոնք ծայնավորներից մեկը կամ
 մյուսը բառի մեջ «ծգում են», որով և խոսակցությունն ստանում է մի
 տեսակ երգեցիկ եղանակավորություն, բայց մեր նոր լեզվին հա-
 տուկ է շեշտը, այսինքն՝ ծայնի սուր կամ բարձր լինելը մի վանկի
 մեջ: Շեշտվում է կամ բառի մի որոշ վանկը, օրինակ՝ առաջին կամ
 վերջին, կամ վերջընթեր վանկը, կամ խառն կերպով որևէ վանկը,
 ինչպես ռուսերենում է: Նա գրում է. «Մեր աշխարհաբար գրակա-
 նական լեզվի, ինչպես և մեր արդի ընթերցմամբ գրաբարի շեշտը
 դրվում է սովորաբար վերջին վանկի վրա, բացի մասնավոր դեպ-
 քերից: Սակայն, ճիշտ խոսելով, մեր աշխարհաբար գրական լեզվի
 մասնավանդ գրաբարի բառերն առանձին վերցրած, ոչ մի վանկի
 վրա չունին շեշտ այն մտքով, ինչ մտքով և գորությամբ որ ուրիշ լե-
 զուների մեջ է վերցվում, որովհետև շատ քիչ է պատահում, որ
 մենք առանձին բառի վերջին վանկը գորավոր ու սուր կերպով շեշ-
 տենք: Ամեն հայերեն բառ (բացի մասնավոր բառերից) բութ է ի բնե,
 այսինքն՝ ամեն բառի վանկերն իրար հավասար սրության կամ
 բարձրության աստիճան ունին իրենց բնական հատկությամբ, նույ-
 նիսկ եթե բառը միավանկ է, մյուս բառերից ավելի բարձրություն չու-
 նի, օրինակ՝ **դանակ**, **զարմանալ**, և ոչ թե **դանակ**, **զարմանալ**:
 Սակայն ի բնե բութ բառը շեշտ է առնում դրության նայելով, այ-
 սինքն եթե խոսքի գլխավոր և ոչ երկրորդական բառն է, որ բառի
 ետևառաջությունից կամ խոսքի իմաստից կախում ունի, և եթե կո-
 չական կամ հրամայական բառ է. օրինակ՝ **Ես քեզ եմ ասում**, **Ես եմ**
քեզ ասում, **Ես ասում եմ քեզ**, **Գնացե՛ք**, **ասացե՛ք**, **հայե՛ր**, **ի՞նչ**
անենք: Սակայն կոչականներն ու հրամայականները շեշտը կորց-
 նելով բութ են դառնում դարձյալ, եթե իրենից առաջ ունի մի շեշտ-
 ված բառ, որ իրենց վերադիրն է. օրինակ՝ **գնացե՛ք**, **բայց՝ տո՛ւն**
գնացեք, **եղբայր**, **բայց՝ պատվական եղբայր**, **եղբայր պատվական**:
 Ահա այս է հայոց լեզվի շեշտադրության բոլոր կանոնները, որ մենք
 գտնում ենք մեր հին ու նոր քերականությունների մեջ, որով և հայոց
 լեզուն ունենում է միայն **տրամաբանական** շեշտադրություն, որ

խոսքի միտքն է պահանջում, և ոչ **քերականական** ասած շեշտադրությունը, որ ամեն մի բառի ի բնե հատուկ է: Սակայն այդպիսի տրամաբանական շեշտադրությամբ միայն **գրաբարը**, (արդի ընթերցանությամբ, որովհետև հենրի ճիշտ առոգանությունը չգիտենք), մեր **գրականական լեզուն** (մեծ մասամբ միայն կարդալու ժամանակ և ոչ խոսելու) և **արևմտյան ճյուղի բարբառներն** են վարվում, իսկ **արևելայն ճյուղի բարբառները**, բացի տրամաբանական **շեշտադրությունից ունեն և առանձին քերականական շեշտադրություն**, որ ամեն բառի հատուկ է ի բնե, և որի շեշտերը միշտ վերջին վանկի վրա չեն դրվում, այլ շատ անգամ և վերջինից առաջ եղած վանկերի վրա»⁴⁸:

Ս. Աբրահամյանը ևս չի շրջանցել շեշտի և շեշտադրության հարցերը՝ առավել խորությամբ ու ամբողջականորեն ներկայացնելով շեշտադրության ժամանակակից խնդիրներն ու գիտական լուծումներ տալով դրանց: Շեշտը «հնչական գործոն» է, արտասանությամբ առանձնացված շեշտված վանկը հատկանշվում է ծայնի ուժգնությամբ, բարձրությամբ և երկարացմամբ՝ դրանցով իսկ հակադրվելով անշեշտ վանկին (վանկերին): Ունի միաձուլող հատկություն, հատուկ է բառին, շարույթին և նախադասությանը. լեզվական տվյալ միավորում անշեշտ բաղադրիչները միավորվում են շեշտված միավորի շուրջը՝ բառի մեջ՝ անշեշտ վանկը (վանկերը)՝ շեշտված վանկի, շարույթի մեջ՝ անշեշտ բառը (բառերը)՝ շեշտված բառի, նախադասության մեջ՝ անշեշտ անդամը (անդամները)՝ շեշտված անդամի: Շեշտը համապատասխան միավորի հարցում կազմակերպող, ձևավորող դեր ունի: Իմաստային-ոճական առումով լեզվական շեշտը իմաստային-ոճական դեր չունի, սակայն նույնը շարույթի և նախադասության համար ասելը ճիշտ չէ. «Շարույթի ու նախադասության մեջ,- գրում է լեզվաբանը,- շեշտը կատարում է նաև իմաստային-ոճական դեր: Բառական շեշտը հայերենում այդ դերը չունի: Շեշտի նշված դերի՝ բառի վանկերը, բաղադրիչները մեկ ամբողջ հնչաբառի մեջ միաձուլելու մասին է վկայում այն փաստը, որ հաճախ շեշտի տեղափոխության հետևանքով նախորդ

⁴⁸ Մ. Աբրեյան, նշվ., աշխ., էջ 278-279:

բաղադրիչը կարող է ենթարկվել հնչյունափոխության՝ դրանով իսկ կորցնելով իր արտասանական ինքնությունը հնչապատկերը ամբողջ բաղադրյալի մեջ...»⁴⁹: Մեկ ուրիշ ուսումնասիրության մեջ ուսուցողական հարցեր է առաջ քաշում՝ կարևորելով գրական լեզվի բառերի շեշտադրության կանոնների իմացությունն ու սեփական խոսքի ինքնահսկողությունը. «Բառի ձևային կարևոր հատկանիշ է շեշտը: Շեշտը գրական հայերենի համար այնքան բնութագրական է, որ գրական լեզվի բառերով և գրական լեզվի շարահյուսական կանոններով կառուցված խոսքը կարող է թողնել բարբառային խոսքի տպավորություն հենց միայն այն պատճառով, եթե նրա բառերը գործածվեն բարբառային շեշտադրությամբ»⁵⁰: Այնուհետև նորից մատնանշում է հայերենի շեշտի տեղը, բնույթը, ընդհանուր կանոնի ոչ բացարձակ լինելը, շեշտում այն դեպքերը, երբ գրական հայերենում բառի շեշտը չի դրվում վերջին վանկի վրա:

«Ժամանակակից հայոց լեզվի» առաջին հատորում հեղինակային խումբը ընդհանուր գծերով բնութագրում է շեշտը. շեշտի ընկալումը կապված է լսողական տպավորության հետ. հնչյունական շղթայում կամ նրա մի հատվածում սովորաբար մի որևէ վանկ առանձնանում է մյուսներից և ընկալվում որպես շեշտակիր: Այն պայմանավորված է հնչյունների ֆիզիկական հատկանիշներով՝ ինտենսիվությամբ (ուժգնությամբ), տևողությամբ և հաճախականությամբ (տոնայնությամբ), որոնցից մեկի գերիշխումով առանձնացնում են շեշտի տեսակները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս երեք տիպի շեշտերի առանձնացումը պայմանական է, քանի որ վերոհիշյալ գործոնները երբեք ինքնություն գոյություն չունեն, այլ հանդես են գալիս իրար հետ զուգակցված: Նաև հնչաբառերն են առանձնացվում. «Հայերեն խոսքում, ինչպես ասվել է, սովորաբար առանձնանում են առանձին հատվածներ, որոնք հիմնականում համընկնում են բառերի սահմանների հետ: Դրանք այսպես կոչված, հնչաբառերն են՝ մեկ շեշտ ունեցող ամբողջական միավորները: Հնչաբառում կարող է ընդգրկվել ինչպես մեկ բառ, այնպես էլ

⁴⁹ Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 22:

⁵⁰ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու (Բառ և խոսք), Եր., 1986, էջ 28:

մեկից ավելի բառային միավորներ: Լեզվաբաններից Մ. Աբեղյանը և Հ. Աճառյանը շեշտի ուսումնասիրության ժամանակ, ըստ իմաստային արժեքների, առանձնացնում են բառերի տարբեր խմբեր: Ըստ նրանց՝ նյութական իմաստ ունեցող բառերը խոսքում կրում են ավելի ուժեղ շեշտ, քան երկրորդական կամ ստորադաս բառերը: Այսպես, ամենակարևորը նախադասության մեջ, ըստ Մ. Աբեղյանի, բայն է, որին ստորադասվում է գոյականը, որն էլ իր հերթին գերադաս է ածականի համեմատությամբ... Այսպիսով՝ հայերենի շեշտը թեև ուժային բնույթի է, սակայն նրա դրսևորման համար մեծ նշանակություն ունի նաև տևողության գործոնը: Խոսելով շեշտի մասին՝ սովորաբար նկատի են ունենում շեշտի դիրքը բառի սահմանում, շեշտի հետ կապված հնչյունափոխությունը»⁵¹:

Առանձնացված են որոշ ուշագրավ երևույթներ, որոնցից են՝

- Կենդանի խոսակցական լեզվի բարբառային շեշտը և բարբառային ելեջումները (ինտոնացիաները) որոշ արտացոլում են գտել և արդի գրական հայերենի շեշտադրության մեջ. մեծ տարածում ստացած ոչ վերջադիր շեշտադրությունը, անշուշտ, բարբառային շեշտադրության արտացոլումն է խոսակցական լեզվում. այն օրինակելի չէ, բայց կենդանի է ու սովորական:

- Հարցական մի շարք նախադասություններում ծայնի բարձրացումը օժանդակ բայի վրա է:

- Հայերենի երեք և ավելի վանկանի բառերը, հատկապես բարդերը, արտասանվում են երկու շեշտով, որոնցից գլխավորը սովորաբար դրվում է վերջնավանկի վրա (չհաշվելով գաղտնավանկը), իսկ երկրորդականը՝ նախավանկի կամ առաջին բաղադրիչի վերջին վանկի վրա: Երկրորդական շեշտը կախված է բարդության բաղադրիչների ինքնուրույնության աստիճանից և իմաստից: Չայնաբանորեն այն արտահայտվում է վանկի ուժգնությամբ, իսկ տևողությունը և տոնայնությունը ունեն լրացական արժեք: Ըստ տեղի հայերեն բառային երկրորդական շեշտը ձգտում է պահպանել

⁵¹ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էդյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 120-122:

որոշակի ռիթմահնչերանգային պատկեր, երբ շեշտված վանկերին հաջորդում են երկու անշեշտ վանկեր:

- Արդի գրական հայերենի բառային շեշտը վերջին ժամանակներս առհասարակ ավելի ուժեղ է արտահայտվում. ուժեղացման հիմնական պատճառը պետք է համարել բարբառի, հատկապես մայր բարբառի ավելի ուժեղ շեշտադրության ազդեցությունը: Այս հարցում չի կարելի անտեսել և ռուսերենի շեշտադրության ազդեցությունը:

- Վերջադիր շեշտադրությունը մի շարք դեպքերում խոսքին տալիս է պատշտոնականություն, երբեմն էլ՝ խստության ու կտրուկության երանգ:

Թվարկված «ուշագրավ երևույթներից» ամենաուշագրավը հետևյալն է՝ ոչ վերջադիր շեշտադրությամբ արտասանությունը մի շարք դեպքերում դուրս է գալիս բարբառային արտասանության սահմաններից:

«Հայերնագիտական բառարանում» շեշտը բնորոշվում է որպես վերգծային կամ վերհատույթային միավոր: Այստեղ արդեն վանկային, բառային և ֆրագային շեշտերն են առանձնացվում, խոսվում է և տրամաբանական շեշտի մասին, որը կոչվում է նաև խոսքային՝ ճարտասանական կամ իմաստային շեշտ: Հեղինակն ուշադրություն է դարձնում հարաշեշտ բառերին, նաև այն բացառիկ դեպքերին, երբ «այդ շեշտը կարող է առանձնացնել նույնիսկ բառմաս՝ չհամընկնելով բառական շեշտին»: Նա գրում է. «Հնչյունաբանական վերգծային (վերհատույթային) միավոր. վանկարար հնչյունի առանձնացումն է ձայնի բարձրության փոփոխություններով կամ ձայնի ուժգնությամբ և կամ ձայնի տևողությամբ: Ըստ այդմ էլ գանազանվում են՝ երաժշտական շեշտ, ուժային կամ արտաշնչական շեշտ, քանակային շեշտ: Ինքնին իմաստ չի արտահայտում, բայց կարող է տարբերակել բառային ու քերականական իմաստներ: Երաժշտական շեշտը, որ բնութագրվում է ձայնի բարձրության փոփոխություններով, մասնակի դրսևորում ունի հայերենի հարցական ու բացականչական առոգանություններում (հնչերանգային որոշ կառույցներում): Մեր լեզվի հիմնական շեշտը ուժայինն է, որ

բնութագրվում է վանկարարի ուժգնացումով, ուժգնության մեծացումով: Նայած թե լեզվական ինչ միավոր է շեշտվում, տարբերվում են՝ վանկային շեշտ, բառային կամ բառական շեշտ, ֆրազային շեշտ: Առանձնացնում են նաև տրամաբանական շեշտը, որը կոչվում է նաև խոսքային, ճարտասանական՝ իմաստային շեշտ: Սա արտահայտվում է իմաստակիր միավորի այն վանկում, որը կրում է բառական շեշտ, և համընկնում է նրան, բայց վերջինիս համեմատությամբ ավելի ուժեղ է և իմաստային երանգ է բերում ամբողջ նախադասությանը: ... Բացառիկ դեպքերում այդ շեշտը կարող է առանձնացնել նույնիսկ բառամաս՝ չհամընկնելով բառական շեշտին, օր.՝ «ոչ թե պա՛միդոր, այլ պո՛միդոր»: Ըստ շեշտակիր միավորի ոլորտում գրաված դիրքի զանազանում են՝ կայուն կամ կապված շեշտ և ազատ կամ փոփոխական շեշտ. առաջինը տարբեր ձևերում նույնադիրք է, իսկ երկրորդը՝ այլադիրք: Հայերենի շեշտը կայուն է, այն վերջնականակային է... Որոշ հանգամանքներով պայմանավորված՝ շեշտը կարող է արտահայտվել նախավերջին վանկում. այս դեպքում նա կոչվում է հարաշեշտ»⁵²:

Նույն հարցերը նման մեկնաբանություններով են ներկայացված «Լեզվաբանական բառարանում»: Կամ ծայնի բարձրության փոփոխությամբ, կամ ծայնի ուժգնությամբ և կամ ծայնի տևողությամբ բառի որևէ վանկը (վանկարար հնչյունը) առանձնացվում է: Բառային շեշտը կարող է լինել գլխավոր կան հիմնական, երկրորդական, երրորդական կամ թույլ: Այս բոլորի առկայությունը միևնույն լեզվում պարտադիր չէ, բայց բառը սովորաբար ունենում է գլխավոր կամ հիմնական շեշտ: Որոշ լեզուներում բառական շեշտն ունի իմաստատարներից կամ քերականական նշանակություններ: Հայերենում սովորաբար արտասանական ուժգնությամբ առանձնանում է բառավերջի վանկը (վանկարար հնչյունը), ընդ որում բառային շեշտը ուժգնության է⁵³: Կամ՝ «Արտասանության այն առանձնահատկությունը, որով խոսքի մի տարրը (վանկ, բառ, նախադասություն)

⁵² Հ. Պետրոսյան, Հայերնագիտական բառարան, Եր., 1987, էջ 495:

⁵³ Տե՛ս՝ Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարաբյուլյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 53:

արտաբերության ժամանակ առանձնացվում է իր ուժգնությամբ կամ ձայնի բարձրության փոփոխությամբ: Ըստ այդմ էլ տարբերակվում են՝ ուժգնության շեշտ, որը երբեմն կոչվում է արտաշնչական շեշտ, նաև դինամիկ շեշտ (հանդիպում են արտաբերական, լիահունչ տերմինները) և երաժշտական շեշտ, որ երբեմն կոչվում է տոնիկ շեշտ կամ ուղղակի տոն: Բառային կամ արտասանական շեշտին հակադրվում է խմբային կամ շարահյուսական շեշտը, ինչպես նաև տրամաբանական կամ իմաստային շեշտը: Ոմանք տարբերակում են նաև քանակական կամ ժամանակային շեշտը (պայմանավորված հնչման հատուկ տևողությամբ) և որակական կամ տեմբրային շեշտը: Շեշտը կարող է լինել տաղաչափական կամ ռիթմային, երբ այն ընկնում է տաղաչափական խմբի որոշակի վանկերի վրա: Երաժշտական շեշտը կարող է լինել սուր, բութ և պարույկային»⁵⁴:

Խորհրդային ժամանակաշրջանում բուհ ընդունվողների համար նախատեսված հայոց լեզվի օժանդակ ձեռնարկի հեղինակը՝ Պ. Պողոսյանը ևս առանձնացնում է **բառային** և **տրամաբանական շեշտեր**, սահմանում է բառային շեշտը, ընդգծում, որ այն բառի իմաստի հետ չի կապվում, ուշադրություն է դարձնում շեշտակրության ազգային առանձնահատկություններին (էստոներենում, ֆիններենում, հունգարերենում և չեխերենում շեշտվում է միշտ բառի առաջին վանկը, լեհերենում և վրացերենում՝ միշտ նախավերջին վանկը, գերմաներենում՝ արմատի ձայնավորը, իսկ ռուսերենում այն անկանոն է): Ուղղախոսության մեջ կարևորում է նաև կանոնական շեշտադրությամբ արտասանությունը. բարբառների շեշտադրությունը տարբերվում է գրական լեզվի շեշտադրությունից. մի շարք բարբառներում շեշտվում է նախավերջին վանկը, այդ պատճառով էլ ոմանք բարբառային շեշտով են արտասանում բառերը՝ ապակայունացնելով շեշտադրական նորմը: Նշում է նաև շեշտադրության ընդհանուր կանոնից շեղումների մասին: Միաժամանակ հիմնավորված չէ լեզվաբան-ոճագետի այն տեսակետը, որ միավանկ բառերը

⁵⁴ Նույն տեղում, էջ 242:

չեն շեշտվում, այսինքն՝ բառային շեշտ կարող են ունենալ միայն բազմականկ բառերը⁵⁵:

Բուհական մեկ այլ դասագրքում («Հայոց լեզու») հիմնականում նույն սահմանումով և նույն հատկանիշներով է բնութագրվում շեշտը: Այստեղ ևս, սակայն, անհետևողական է այն կարծիքը, թե շեշտը միայն բազմականկ բառերի յուրահատկությունն է, մանավանդ որ տողեր հետո սահմանվում է, որ «առանձին վերցրած ամեն բառ շեշտ ունի», և որ այն բառի յուրահատկությունն է: Այս հակասությունը մի կողմ թողնելով՝ ընդհանուր ձևով առանձնացրել ենք հարցի շուրջ հայտնված արժեքավոր դիտողությունները: Խոսքի հոսանքի մեջ որևէ բառ կարող է շեշտագուրկ դառնալ՝ հարևան շեշտավոր բառերի հետ կազմելով մի շեշտված միավոր: Ուժեղ շեշտված բառերի մոտ դրանք հարում են առաջիններին և կազմում են մի շեշտված միավոր, մանավանդ եթե իմաստային կապի մեջ են: Այդպիսի շեշտերը կոչվում են շարույթային և տաղաչափության մեջ կազմում են ոտք: Հեղինակային խումբն առանձնակի ուշադրություն է դարձնում ամանակի վրա. բոլոր հնչյունները հնչման ժամանակ միևնույն տևողությունը (ամանակը) չունեն: Միևնույն հնչյունի երկար և կարճ արտասանությունը 2 բնույթի է լինում՝ ա) ի բնե երկար ու կարճ. բ) դիրքի համաձայն երկար ու կարճ: Որոշ լեզուներում հնչյունի երկարությունն ու կարճությունը հնչույթային արժեք ունեն. հայերենում այն այդպիսի արժեք չունի: Որոշ դեպքերում, հատկապես ծայնարկությունների արտաբերման ժամանակ, տարբերակվում են երկար ու կարճ հնչյուններ. բայց դա վերաբերում է հնչերանգին: Չայնավորները երկար են արտաբերվում, երբ շեշտի տակ են ընկնում: Արժեքավոր է և այն դիտողությունը, որ շեշտակրությամբ հնչյունը տևողության, ուժգնության, պարզության, հստակության հատկանիշներից բացի օժտվում է նաև կայունությամբ. «Շեշտը որևէ վանկարարի հնչյունի ուժգին արտաբերությունն է: Շեշտը ծայնավոր հնչյունը օժտում է 3 կարևոր հատկանիշներով՝ **ամանակի տևողությամբ, ուժգնությամբ, որ նրա հնչեղությունն է, և հնչման որոշակի պարզությամբ և հստակությամբ:** Այս երեք հատկանիշների շնորհիվ

⁵⁵ Տե՛ս՝ Պ. Պողոսյան, Հայոց լեզու, Եր., 1969, էջ 30:

շեշտի տակ գտնվող ծայնավորները մնում են անփոփոխ և երկար են դիմանում լեզվի հնչյունների հարափոփոխ գործընթացում»⁵⁶: Այստեղ խոսվում է մի իրողության մասին, որը գրեթե չի նկատվում նախորդների (կարելի է ասել նաև՝ հաջորդների) շեշտաքննական ուսումնասիրություններում. դա այն է, որ շեշտակրությունը նաև **պահպանիչ** հատկություն ունի. շեշտի տակ գտնվող հնչյունները չեն փոխում իրենց որակային հատկանիշները, դիմանում են ժամանակի «հարափոփոխ գործընթացում», հետևաբար և պահպանվում են բառերն իրենց արտաքին ձևով: Հակառակ դեպքում բառի բառակազմական կամ ձևակազմական ծավալումների արդյունքում շեշտի հատկանիշների՝ հատկապես ուժգնության փոփոխության՝ շեշտագրկության դեպքում կարող է հնչյունափոխության պատճառով փոխվել շեշտակիր վանկի արտաքին ձևավորումը՝ բառի մակերեսային կառուցվածքը (բայց և կարող է չփոխվել):

Շեշտի՝ սահմանային ազդանշան լինելու հատկանիշն է ընդգծում Ա. Սարգսյանը: Գրաբարում որպես սահմանային ազդանշան, **ս, դ, ն** հոդերի, հոգնակերտի և դադարի հետ հանդես է եկել նաև շեշտը. «Որպես բառի սահմանային ազդանշան, հայերենում ամենից առաջ հանդես է գալիս շեշտը: Հայերենում շեշտը կապված չարժական է, քանի որ մի կողմից՝ այն դրվում է բառի վերջին վանկի վրա, մյուս կողմից՝ բառակազմական և բառաթեքական փոփոխությունների դեպքում տեղափոխվում է՝ (շարժվում է) դեպի նոր վերջնավանկը: Այնպես որ, շեշտի առկայությունը բառի ավարտման ազդանշանն է: Դասական գրաբարի շեշտի հիմնական գործառնությունը բառերի սահմանազատումն է միմյանցից: Հայերենում շեշտը իմաստազատիչ դեր չունի»⁵⁷, - գրում է Ա. Սարգսյանը: Իհարկե, խոսքը գրաբարի մասին է, բայց ասվածը բնութագրական է նաև ժամանակակից հայերենի համար, ուր շեշտը բառի ավարտի ազդանշան է, չունի իմաստազատիչ գործառնություն, բայց ծառայում է բառաբաժանմանը:

⁵⁶ **Գ. Զահուկյան, Է. Սդայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 123:

⁵⁷ Հայոց լեզվի կառուցվածքը, Եր., 1975, էջ 287:

Շեշտադրության հետ կապված հարցերն ամփոփ ձևով ներկայացված են «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» գրքում. ուժգնության շեշտ՝ կայուն-շարժական բնույթով, տրամաբանական և քերականական տեսակներ, երաժշտական շեշտի մասնակի գործածություն, որով հարցման, հիացումի, զարմանքի բնույթ է տրվում նախադասությանը: Չկրկնված կարելի է համարել արտահայտչականության դրսևորման տարբեր ելևէջներին վերաբերող միտքը. «Արդի հայերենի խոսքի արտահայտչականության հարցում անշուշտ մեծ դեր են կատարում զանազան հուզական ելևէջները (ինտոնացիա), որոնք խոսքին հաղորդում են տարբեր երանգներ: Հայերենում նշվում են 7 գլխավոր ելևէջներ, որոնք խոսքին տալիս են տարբեր երանգներ ու բնույթ, ինչպես՝ հասարակ շեշտ, սուր շեշտ, հարցական շեշտ, բարձրացող շեշտ, իջնող շեշտ, իջնող բարձրացող շեշտ և բարձրացող իջնող շեշտ:»⁵⁸: Բնականաբար ընդգծվում է նաև, որ շեշտի և նրա հետ կապված մյուս հարցերն առհասարակ հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել, մանավանդ որ փորձառական ուսումնասիրության և փորձառական տվյալների բացակայությունը խիստ դժվարացնում է հարցի քննությունը՝ մասնավորապես այդ բնագավառում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում առաջացած փոփոխությունների տեսակետից:

Որոշակիորեն առանձնանում է էդ. Աղայանի տեսակետը. նա, ըստ տեղի, դիրքի բնութագրելով շեշտը, այն դիտում է որպես բառերի **ներունակ հատկանիշ**, այսինքն՝ բառերը ներակայում են շեշտը, և անվանում **հասարակ շեշտ**: Հասարակ շեշտը խոսքում հիմնականում կատարում է բառերի սահմանազատիչ դեր: Ձայնի բարձրացումը համարում է բառային ուժային շեշտի ուղեկցող երևույթ, նշում է, որ բառերը շեշտ ունեն նաև կապակցություններից դուրս, անկախ խոսքային պահանջներից (արտահայտչականություն, հուզականություն, հրաման, հորդոր և այլն):

Ժամանակակից հայերենի շեշտի բնույթի, նրա ծայնաբանական գործոնների՝ ուժգնության, հիմնական տոնի հաճախականության և

⁵⁸ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր., 1973, էջ 476-477:

տնտեսության փոխհարաբերությունների, ըստ ծայնաբանական տվյալների փոխհարաբերությունների՝ բազմազան բառերում երկրորդական շեշտի դրսևորման հավանական շրջանների պարզաբանման մասին են Ռ. Թոխմախյանի «Ժամանակակից հայերենի շեշտի բնույթը» և «Ժամանակակից հայերենի շեշտադրությունը» աշխատությունները, որոնք առանձնահատուկ արժեք են ստանում փորձառական հնչյունաբանության մեթոդներով կատարված շեշտաքննությամբ: Շեշտը կետադրության մյուս նշանների նման խոսքի վերհատույթային միավորներին այս կամ այն չափով համապատասխանող գծանկար է, որի միջոցով հնարավոր է դառնում բանավոր խոսքի շեշտադրումն առավել կամ պակաս չափով վերարտադրել գրության մեջ: Շեշտադրության պատմության ուրվագծման արդյունքում եզրակացնում է՝ բոլորը միաձայն են այն հարցում՝ երբ նախագրաբարյան (կամ վաղնջահայերենի) շեշտի մասին ուղղակի վկայություններ չկան, ապա նրան վերագրվող հատկանշանային բնութագիրը միշտ էլ վարկածային բնույթ ունի:

Հ. Ջաքարյանն իր «Կետադրական բառարանում» շեշտին վերաբերող բառահոդվածում տալիս է շեշտի՝ որպես հնչյունաբանական վերգծային (վերհատույթային) միավորի ընդհանրական բնութագիրը՝ այն համարելով վանկարար հնչյունի առանձնացման միջոց՝ բարձրության, ուժգնության կամ տնտեսության փոփոխությամբ: Նկարագրում է շեշտերի տարբեր տեսակներին բնորոշ հնչերանգային դրսևորումները՝ արտահայտման համապատասխան ցուցիչներով (երաժշտական շեշտը մասնակիորեն դրսևորվում է որպես հարցական հնչերանգ՝ նշանակիչը՝ պարույկ (հարցական նշան), տնտեսության շեշտը՝ որպես բացականչական հնչերանգ՝ նշանակիչը՝ երկար, ուժգնության շեշտը՝ որպես հրամայական և կոչական հնչերանգ (նաև որպես բառային և տրամաբանական շեշտեր)՝ արտահայտիչը՝ շեշտանշան ⁵⁹: Հ. Ջաքարյանը նաև յուրօրինակ մի ուսումնասիրություն է կատարել՝ ուշադրություն դարձնելով շեշտի դրության լեզվական և հասարակական տարբերակների փոխհարաբերության քննությանը, այսինքն՝ շեշտադրու-

⁵⁹ Տե՛ս՝ Հ. Ջաքարյան, Կետադրական բառարան, Եր., 1998, էջ 99:

թյունը քննել է նաև հանրալեզվաբանության տեսակետից: Նա, «Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում» աշխատության մեջ ընտրելով լեզուն (**ժամանակակից գրական հայերենի խոսակցական տարբերակը**), լեզվական հանրությունը (**Երևանի բնակիչները**), լեզվի տարբերակվածությունը պայմանավորող հասարակական հատկանիշներից առավել բնորոշներն ու էականները (**տարիք, հասարակական դրություն, կրթության մակարդակ, ընտանիքի խոսակցական լեզու, սեռ**), աշխատել է պարզել հայերենի հնչյունաբանության (նաև շեշտադրության), բառակազմության, ձևաբանության, շարահյուսության, բառապաշարի զարգացման միտումները և դրանց ակունքները, այդ զարգացումը պայմանավորող լեզվական ու արտալեզվական գործոնները՝ դրանով իսկ նպատակ ունենալով պարզելու հայերենի մի շարք զուգաձևությունների իսկական արժեքն ու տեղը լեզվական համակարգում, նաև որոշելու, թե այդ զուգաձևություններից որը պետք է համարել գրական նորմ, իսկ որը՝ նրա տարբերակը: Հանրալեզվաբանական օրինաչափությունների բացահայտման համար իբրև ելակետ ընդունելով դիտարկմամբ ձեռք բերված տվյալները, դիմելով նաև հարցազրույցների և հարցաթերթիկների մեթոդներին, որոշակի սկզբունքներով ընտրել է շեշտադրության հետ կապված երկու հատկանիշ՝ 1. Վերջնավանկային շեշտի փոխարեն վերջընթեր շեշտի գործածություն. 2. Օժանդակ բայի և ը ձայնավորով վերջնավանկի հարցականով ձևերի գործածություն: Ըստ հասարակական հատկանիշների (տարիքի, կրթության մակարդակի, կրթության լեզվի, սեռի, բարբառային ծագման և այլն)՝ հեղինակն այսպես է ներկայացրել ոչ վերջնավանկային շեշտադրության հանրալեզվաբանական վիճակագրական ընդհանուր պատկերը: «Վերջնավանկի շեշտագուրկ լինելն ուղիղ համեմատական է հարցվողների տարիքի աճմանը, հակադարձ համեմատական՝ կրթության մակարդակի բարձրացմանը և հասարակական կարգավիճակի՝ դեպի մտավորականությունը փոփոխությանը: Արևելյան բարբառային միջավայրը նպաստում է այդ երևույթին, արևմտյանն՝ ընդհակառակն: Հասարակական մյուս հատկանիշների կապը հնչյունական այս

երևույթի հետ շատ թույլ է: Պաշտոնական և ընթերցման իրադրություններում վերջնականակի շեշտազուրկ տարբերակը հանդիպում է շատ հազվադեպ»⁶⁰:

Ֆ. Խլղաթյանը շեշտը բնութագրում է առավելապես ռուս հեղինակներից կատարված մեջբերումներով. կարևորն այն է, որ ընդգծվում է շեշտի բառաձևավորիչ հատկությունն ու սահմանազատիչ էությունը, բառաբաժան հանդիսանալու իրողությունը: «Հնչյունները լեզվական գծային միավորներ են, որ ձայնավորների շուրջ միավորվելով՝ կազմում են վանկեր: Առավել բարդ կազմությունների ձևավորման հարցում կարևոր դեր են խաղում գերհատույթային (ոչ գծային) հնչյունաբանական միավորները, ինչպիսիք են շեշտը և հնչերանգը: Եթե վանկի մեջ ձևավորող դերը պատկանում է ձայնավորին, ապա բառի մեջ՝ շեշտին: Շեշտի ընդհանուր ըմբռնումն այն է, որ դա բառի վանկերից մեկի ընդգծումն է՝ շեշտումը, մյուսների համեմատությամբ: Շեշտը (չնչին բացառություններով) բառի կարևոր հատկանիշներից մեկն է: Ա. Ռեֆորմատսկին, հնչյունաբանական միջոցները բաժանելով 1) հատույթային (հնչույթային) և 2) գերհատույթային տեսակների (առոգաբանական՝ շեշտ, հնչերանգ), կարծում է, թե անհրաժեշտ է տարբերել շեշտի տարբեր տեսակներ: Շեշտի հասկացության տարբեր բաղադրիչների հաշվառումով են տրված հետևյալ սահմանումները. «Շեշտը այս կամ այն հնչյունական միջոցներով՝ ձայնի ուժեղացմամբ, տոնի բարձրացմամբ, տևողության, ինտենսիվության, հնչեղության և այլնի զուգակցմամբ բառի կազմի մեջ որևէ վանկի կամ բառակապակցության առանձնացումն է» (ըստ Օ. Ախմանովայի): Այս և բոլոր դեպքերում շեշտի բնույթի որոշումը հիմնվում է հնչաշարի մյուս մասի նկատմամբ ունեցած հակադրության վրա (տվյալ դեպքում շեշտակիր և ոչ շեշտակիր վանկերի) (ըստ Գորդինայի): Շեշտը կատարում է բաժանարար, սահմանազատիչ և բառաձևավորիչ դեր՝ առանձնացնելով հնչաբառերը և ամբողջացնելով բառերը... Բառի հնչյունական կա-

⁶⁰ Հ. Զաքարյան, ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Եր., 1984, էջ 185:

ռուցվածքն այնպիսին է, որ նրա վանկերից մեկը պիտի շեշտված լինի (Բուլանին)»⁶¹:

Ա. Սուքիասյանը հայերենի հնչյունական համակարգի և քերականության նման պահպանողական է համարում նաև շեշտադրությունը. նրա հեղինակած «Ժամանակակից հայոց լեզու» բուհական դասագրքում (1982թ.) շեշտի նույն բնութագիրն է, նույնն է նաև շեղումների և միտումների մատնանշումով: Ավանդական շեշտադրության և արդի լեզվաբանության տվյալների հիման վրա քննված անելահայ տարբերակի համապատասխան իրողությունները աննշան փոփոխություններով ընդգրկված են նույն դասագրքի՝ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի կողմից կազմված վերախմբագրված տարբերակում (2017թ.)⁶²:

Վերևում ասվածը վերաբերում է նաև Ա. Մխիթարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության համառոտ ուղեցույցին»:

Հնդեվրոպական մայր լեզվի, նախագրաբարյան հայերենի և գրաբարի բառային շեշտերի պատմահամեմատական քննություն է կատարել նաև Վ. Պետրոսյանը՝ բացահայտելով մի կողմից՝ «լեզվաբանի համարում չունեցող» Նիկոլ Աղբալյանի լեզվաբանական հետաքրքրությունները պատմահամեմատական հայերենագիտության շրջանակներում, մյուս կողմից՝ արժեքավորելով Հ. Հյուբշմանի և Ա. Մելեի նշանավոր ժամանակակից՝ հնդեվրոպաբանության դասական Պեդերսոնի հայերենագիտական հետազոտությունները: «Նիկոլ Աղբալյանը հայերենագետ» և «Հայերենագիտության երկու հիմնահարց ըստ Հոլգեր Պեդերսոնի» հոդվածներում առաջինի՝ «Հայոց լեզվի շեշտը» և «Նորից շեշտի մասին»⁶³, երկրորդի՝ «Հին

⁶¹ **Ֆ. Խլդաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, Ա. Եր., 2005, էջ 38-39:

⁶² Տես՝ **Ա. Սուքիասյան, Բ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 35-38:

⁶³ «Ն. Աղբալյանը Մառի տեսության մեջ ամենից արժեքավորը համարում է «բառավերջի ձայնավորի ըթացումը (ը դառնալը)»: Այս դրույթը հնարավոր է դարձնում բացատրել նախագրային հայերենի բառի ինչպես կառուցվածքը, այնպես էլ շեշտադրությունը: Ըստ Աղբալյանի՝ «մեր բառերը հնագույն շրջանում ավելի երկար էին և վերջանում էին ձայնավորով»: ... Այս առնչությամբ Աղբալյանը զարգացնում է մի շատ կարևոր միտք, այն է՝ նախագրային հայերենում «սեռական հոլովը ուղղական է՝ շեշտը փոխած»: -Ո-ով և -ա-ով ավարտվող բառերը «հին ժամանակ արտասանված են եղել «մո՛գու, 'ի՛ւղոյ,

հայերէն լեզուին շեշտը» հոդվածների վերլուծության միջոցով հեղինակը բացահայտում է ոչ միայն հոդվածագիրների լեզվաբանական հայացքները, արժևորում նրանց լեզվաքննական դիտարկումները, լեզվաբանական դատողությունները, այլև դրանք համակցում է գիտական և խորքային վերլուծությամբ՝ համաձայնության կամ անհամաձայնության ինքնատիպ դրսևորումներով: Եզրակացությունը մեկն է. ինչքան խորանում ես նախագրաբարայան հայերենի քննության մեջ, այնքան շատանում են վարկածները, և նվազում են հավանականությունների աստիճանները: Հոլգեր Պեդերսընի՝ հայերենի բառային շեշտի բնույթի հարցի առնչությամբ նշում է. «Որևէ լեզվի նախագրային վիճակի մասին արտահայտած տեսակետը միշտ ունի վարկածային բնույթ, հետևաբար՝ հավանականության որոշակի աստիճան: Վերհաստոյթային իրողությունների դեպքում էապես վարկածային բնույթ ունի նաև հին գրավոր շրջանի վերաբերյալ արտահայտված տեսակետը, եթե այդ շրջանից ուղղակի վկայություններ չկան: Հասկանալի է, որ Պեդերսընի կողմից հին հայերենին երաժշտական շեշտ վերագրելը նույնպես վարկածային բնույթ ունի, բայց տիպաբանական զուգահեռները վկայում են, որ այն հիմնադրել չէ»⁶⁴: Իսկ ինչ վերաբերում է Ն. Աղբալյանի այն ենթադրությանը, թե նախագրային հայերենի բառային շեշտը իրականացրել է իմաստատարբերակիչ գործառույթ, Վ. Պետրոսյանը գրում է. «Այս հատկանիշը բնորոշ է եղել է նախագրային հայերենի բառային շեշտին, թե՞ ոչ, ցանկացած պատասխան կարող է ունենալ հավանականության շատ փոքր աստիճան միայն»⁶⁵:

ծե'փո, քո'րիմայ, կա'լոյ, ծա'ղիկայ»: Սեռականում շեշտը տեղաշարժվում էր աջ և ամփոփված կամ «սուղ» ը-ի վերաշված ձայնավորները «շեշտի հարվածից» կրկին արթնանում էին գրաբարում՝ ընդունելով մոզո'ւ, ծեփո', քրմա'ց, կալո', ծաղկա'ց, ավագակի', ճշմարիտի' տեսքը: Այս տեսությամբ, ըստ էության Ն. Աղբալյանը նախագրային հայերենին վերագրում է շարժական շեշտի հատկանիշ, որովհետև նոր քերականական ձևի՝ հոլովական կազմությունը, համաձայն այդ տեսության, ոչ թե պարզապես ուղեկցվում է շեշտի տեղաշարժով դեպի ավելացած վանկը (կայուն-շարժական շեշտ), այլ իր հիմնական տեղից՝ նախավերջին վանկից, անցնում է վերջինին՝ իրականացնելով իմաստատարբերակիչ գործառույթ» (ըստ Վ. Պետրոսյանի նշվ., աշխ., էջ 265-266):

⁶⁴ Վ. Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 295-296:

⁶⁵ Վ. Պետրոսյան, նշվ., աշխ., էջ 266:

Որոշակի նպատակամղվածությամբ հարցի վերաբերյալ Գ. Զահուկյանի լեզվաքննական դիտարկումներին անդրադառնում ենք ամենավերջում:

Այս դեպքում ևս լեզվաբանի քննական վերլուծության ելակետներն ու հայեցակարգերը տարբերվում են. ավելի խորն են, ավելի ընդգրկուն և ընդհանուր լեզվաբանական մտածողության չափանիշներին համապատասխան: Շեշտադրության ուսումնասիրությունը ևս կատարել է իր իսկ կոչմամբ՝ լեզվաքննության **հարաբերակցական** եղանակով, առաջնորդվել է «նախ տարբերել և ճանաչել առանձին-առանձին, ապա միացնել և ճանաչել ներքին կապը» սկզբունքով: Այսպես ուղղորդվելով՝ նա, բնական խոսքից ելնելով, նախ խնդրո առարկան քննել է արտահայտության պահում, ապա՝ բովանդակության և արդյունքների համադրմամբ ընդհանրացումներ կատարել: Կարող ենք ասել՝ անուղղակիորեն կատարվել է շեշտի լեզվական, ապա խոսքային քննության համակցում: Ահա թե ինչու աշխատել ենք հնարավոր չափով տարբեր էջերից հավաքել և վերաշարադրել նրա տեսակետները: Մյուս կողմից՝ չնայած այն հանգամանքին, որ նա ամերիկյան նկարագրական լեզվաբանության հետևորդներից է (և շատ դեպքերում ծայրահեղության աստիճանի զգալի է այս ազդեցությունը), այնուամենայնիվ, նրա բարձրակարգ լեզվամտածողության հիմքը հայ լեզվաբանության ձեռքբերումներն են, և պատահական չէ՝ ջահուկյանական մոտեցումներն իրար համադրելուց հետո ընդհանուր առմամբ նույն հետևություններին ենք առնչվում (շեշտի ավանդական բնորոշմամբ՝ վերջնականակային և կապված-շարժական, վերհատույթային միավորների առանձնացմամբ, դրանց բացարձակապես «մաքուր» լինելու ժխտմամբ, կետադրական նշանների բաշխմամբ և այլն): Միևնույն ժամանակ ներքոշարադրյալից պարզ կդառնա այն նորը, որը հավելվում է այս հարցի քննությանը:

Ամենից առաջ Գ. Զահուկյանը խոսում է հատկապես ձայնավոր հնչյուններին բնորոշ հատկանիշների մասին: Լեզվաբանը ձայնավորների էական (ռեկանտ) կամ որակական տարբերությունների կողքին կարևորում է վերինհնչյթային կամ առոգանական տարբե-

րություններ, որոնք արդյունք են հնչույթների վիճակարար (վիճակային) հատկությունների տարբերությունների կամ անհատական-վերաբերմունքային դրսևորումների: Ասվածում համոզելու համար նկատի է առնում այն, որ տոնային ելևէջումները, տևողության, ուժգնության տարբեր աստիճանները, բարձրության տարբեր տիպերն արտահայտող բառերը հանդես են գալիս որպես բայերի տարբեր հարաբերությունները որոշող մակբայներ՝ «երկար քայլել», «ուժգին հնչել», «բարձր խոսել»: Այս հատկանիշները, ի տարբերություն այլ լեզուների, հայերենում հնչույթատարբերակիչ, բնականաբար նաև իմաստատարբերակիչ գործառնությո չունեն: Հայերենում վերհնչույթային հատկանիշների տարբերությունները ծառայում են վանկերի տարբեր քանակի կապակցությունների, հնչաշղթայի տարբեր հատվածների, բնույթի ու փոխհարաբերության և արտահայտվող անձի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորմանը: Վերհնչույթային հատկանիշները հայերենում հազվադեպ են հանդես գալիս «մաքուր» ձևով. ավելի հաճախ են դրանց տարբեր տիպի համակցությունները: Գ. Զահուկյանը չի սահմանափակվում միայն ծայնավորների համապատասխան տարբերություններով և նշում է, որ այս հատկանիշներից տևողությունը և ուժգնությունը կարող են տարբերություններ ստեղծել նաև բաղաձայնների դեպքում («Ծան. թերևս բացառություն է կազմում **ռ**-ն, որ **ր**-ին հակադրվում է ոչ միայն արտաբերության տեղով, այլև ուժգնությամբ»⁶⁶), թեև նրանք ամենից ավելի բնորոշում են ծայնավորների ուժի և տևողության տարբերությունները: Հեղինակը քայլ առ քայլ շարադրում է ուժգնության, բարձրության և տևողության փոփոխությունները, նշում դրանց հնչական առանձնահատկությունները և գրային արտահայտման միջոցները: Նրա այն եզրակացությունը, որ ուժգնությունը թեկուզ և աննշմար, ներառում է տոնայնության (բարձրության) և տևողության նրբերանգներ, և հատկապես սաստկական շեշտը, բացի ուժգնության հավելումից, ուղեկցվում է նաև տևողության և տոնի հավելմամբ, տևողության փոփոխությունը սովորաբար

⁶⁶ Տե՛ս: Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ Եր., 1974, էջ 78-79:

օժանդակ դեր է խաղում բարձրության և ուժգնության փոփոխությունների համար, անհրաժեշտ է դարձնում աչքաթող չանել հիշյալ հատկանիշները: Ըստ նրա՝ բարձրությունը, որ հնչույթների արտաբերման առանձնահատկություններից մեկն է, ինքնին տարբեր է հնչույթների տարբեր խմբերի մեջ: Սակայն ձայնավորների արտաբերման դեպքում այն առաջ է բերում զանազան կարգի լրացուցիչ տարբերություններ: Ըստ «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության 79-րդ էջի 13-րդ աղյուսակի՝ տոնի տարբերությունները կազմվում են երկու հակադիր հատկանիշներով՝ բարձրացում և իջեցում (ցածրացում): Լեզվաբանը եզրակացնում է, որ այն բոլոր տարբերությունները, որ կապվում են տևողության և երբեմն էլ ուժի տարբերությունների հետ, նշանակալից դեր են խաղում լեզվի մեջ, ընդ որում սուբյեկտիվ-վերաբերմունքային տարբերությունները սովորաբար գրության մեջ նշվում են առոգանության հատուկ նշաններով (օ՝, երբեմն էլ՝ ՛), իսկ հնչաշղթայի հատվածների փոխհարաբերության տարբերությունները սովորաբար չեն նշվում. դրանք ի հայտ են գալիս տրոհման տարբեր տիպերի նշանակման հետ կապված: Նա գրում է. «Ձայնի բարձրության (տոնի) տարբերությունները սովորաբար ընկալվում են որպես դիրքի («բարձր», «ցածր», «միջին» ու «ուլորուն») և ուղղության («բարձրացող», «իջնող», «հարթ», «հավասար» և «փոփոխական») տարբերություններ: Ուժգնությունը հանդես է գալիս սովորական և սաստկական աստիճաններով. սովորական ուժգնությունը գրության մեջ չի նշանակվում, թեև այն կարող է տարբեր լինել ըստ հնչաշղթայի հատվածների փոխհարաբերության. սաստկականը նշանակվում է հատուկ նշանով՝ շեշտով (՛): Սակայն սաստկական շեշտը, բացի ուժգնության հավելումից, ուղեկցվում է նաև տևողության և տոնի հավելմամբ: Տևողության փոփոխությունը սովորաբար օժանդակ դեր է խաղում բարձրության և ուժգնության փոփոխությունների համար: Ճիշտ է, գրության մեջ կա երկարության հատուկ նշան (֛), բայց այն արտահայտում է հատկապես տոնի հետ կապված փոփոխություն: Լեզվաբանության, հատկապես ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ, ընդունված է տոնի, ուժգնու-

թյան և տևողության տարբերությունները դիտել որպես ինքնուրույն հնչույթներ՝ առոգանույթներ (պրոսոդեմաներ)։ սակայն այստեղ մենք գործ ունենք ոչ թե միավորների, այլ հատկանիշների հետ, հատկանիշներ, որոնք կարող են ստեղծել հնչությային տարբերություններ կամ ծառայել խոսքի ձևավորմանն ու սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը»⁶⁷։

Քանի որ շեշտակիր հնչյունը վանկի կազմիչ է, բնականաբար պիտ խոսվեր և վանկի մասին, վանկերի և այլ միավորների կապակցման մասին։ Վանկի սկիզբը հայերնում ենթակա է որոշ սահմանափակումների, բացի նրանից, որ որոշ կարգի բաղաձայններ բառի սկզբում քիչ են հանդիպում, որոշ բաղաձայնական կապակցություններ կարող են մեկնաբանվել որպես լրացուցիչ վանկեր և ձայնավորով և բանաստեղծություններում ևս հաշվվել որպես լրացուցիչ վանկեր։ Նա ավելացնում է, որ **սկ, շտ, շպ** և այլն տիպի հնչյունակապակցությունների սկզբում լսվում է թույլ **ը**, որ լիովին կորչում է այս վանկերի՝ բաղադրությունների մեջ ձայնավորի հաջորդելու դեպքում, եթե **ը**-ն դիտվում է որպես առանձին վանկի կրող (**ըս- տա- նալ, ըշ-տապ**)։ Հեղինակը նաև արտասանական-ուղղախոսական մի նոր միտում է ընդգծում. **ը**-ն թույլ է հնչում հատկապես նոր սերնդի արտասանության մեջ՝ մանավանդ փոխառյալ բառերում (սպորտ...):

Հնչույթների հատկանիշների և վերհնչությային միավորների վերաբերյալ նկարագրական բացատրություններն ի վերջո պիտի հանգեցնեին վերհնչությային հատկությունների հարաբերությունների վերլուծությանը, ուժգնության, տոնի և բարձրության հարաբերակցության՝ հնչերանգի, ռիթմական խոսքի բնորոշմանը։ Լեզվաբանը գրում է. «Հնչերանգը հանդես է գալիս որպես հնչաշղթայի վերհնչությային հատկությունների որոշ հարաբերություն, որ ուժգնության, տևողության և բարձրության տարբերությունների պարբերականության և կանոնավորության դեպքում դրսևորվում է որպես ռիթմ։ Չափածո խոսքը ռիթմաճանաչ խոսք է։ Հնչերանգը կազմող՝ ուժգնության սովորական շեշտերը տարբեր ուժի են լինում ըստ

⁶⁷ **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 78-80։

միավորների ենթադասության, պարունակող միավորների ընդհանուր շեշտը, որ ընկնում է որևէ բառի վրա (այն լինում է վերջին բառը, իսկ սաստկական շեշտ ունեցող բառ լինելու դեպքում՝ այդ բառը), ավելի ուժեղ է լինում, քան պարունակվողները: Հնչերանգը կազմող տոնային տարբերությունները կազմում են յուրատեսակ ալիք, որ բնութագրվում է որոշ բարձրություններով և իջեցումներով և սովորական առոգանության խոսքի դեպքում ավարտի ժամանակ իջնում է»⁶⁸:

Գ. Զահուկյանը նաև արտասանվածքի վերլուծություն է կատարում, բովանդակային պլանի կողքին կարևորում է նաև արտասանության կամ արտահայտության պլանի հնչական դրսևորումը, առանձնացնում է շարակարգային միավորները՝ նվազագույնը համարելով վանկը, իսկ առավելագույնը՝ հնչաշղթան: Եթե նվազագույն միավորի՝ վանկի բնութագրման ժամանակ հաշվի են առնվում նրանց կազմիչ հնչույթների որակը (բնույթը, կազմը), քանակը, կախումը (միացման տիպը) և կարգը (հաջորդականությունը), նաև շեշտակրությունը, ապա նույն սկզբունքով պիտի առաջնորդվել հնչաշղթայի ուսումնասիրության ժամանակ, այսինքն՝ հաշվի առնել այն կազմող հատվածների բնույթը (կազմը, որակը), քանակը, կախումը և կարգը: Ի վերջո՝ հնչաշղթայի վերլուծությունը հանգեցնում է նվազագույն կազմիչների՝ վանկերի: Որոշակի ուշադրություն է դարձնում հնչաշղթայի միավորների կախումների տիպին: Վանկի ներսում գոյություն ունի միակողմանի կախում վանկարար և ոչ վանկարար տարրերի միջև, հնչաբառի կազմում գերադաս դիրք է գրավում շեշտակիր վանկը (երբեմն և շեշտակիր բառը), հնչադասության մեջ՝ վերհատույթային-առագանական հատկանիշը կրող անդամը: Նա հնչաշղթայում առանձնացնում է հնչաբառեր, հնչատակտեր և հնչադասություններ (ֆրագներ): Սրանք իրարից զանազանում է սկզբնային և վերջնային դադարների տևողության չափով, ելևէջային տարբեր բնութագրերով: Ըստ այս սկզբունքի՝ սկզբնային և վերջնային տևական դադարներով, ավարտային ելևէջումով բնութագրվող հատվածները երկալանային միավորների մեջ

⁶⁸ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 90:

համապատասխանում են նախադասություններին և կարող են կոչվել հնչական նախադասություններ (հնչական ֆրագներ) կամ համառոտակի՝ հնչադասություններ: Հնչաբառերի և հնչադասությունների միջև կարող են հանդես գալ միջին կարգի միավորներ, այսպես կոչված՝ հնչատակտերը (արտասանական տակտերը): Սրանք բառեր կամ բառերի այնպիսի կապակցություններ են, որոնք, ի տարբերություն բառերի, բնութագրվում են սկզբնային և վերջնային որոշակի՝ հնչադասություններից ավելի փոքր դադարներով և ելևէջային որոշակի բնութագրով: Երկալանային միավորներից սրանց համապատասխանում են շարույթները, որոնք կարող են դրսևորվել բառերի և բառակապակցությունների ձևով (Որպես օրինակ բերված հնչադասությունը՝ «Ես երեկ առավոտյան գնացի տուն», բաղկացած է 3 հնչատակտից. 1. **ես** 2. **երեկ առավոտյան** 3. **գնացի տուն**): Բոլոր դեպքերում հնչաշղթայում կարևորվում է ուժգնության շեշտի, նաև երկրորդական կամ թույլ շեշտերի գործառնությունը: Շեշտակրությունը համարում է հնչաբառի հիմքը, գծագրում վերջինիս սահմանները. հնչաբառը երկալանային միավորներից համապատասխանում է բառերի, երբեմն՝ մեկից ավելի բառերի կապակցությունների: Լեզվաբանը գրում է. «Հնչադասությունների մեջ այն վանկերը և վանկերի այնպիսի կապակցությունները, որոնք ունենում են ուժգնության մեկ շեշտ, որ երբեմն կարող է ուղեկցվել (երկար միավորների դեպքում) մեկ կամ մի քանի թույլ շեշտով, կոչվում են հնչաբառեր: Հնչաբառերը երկալանային միավորներից համապատասխանում են բառերին, թեև որոշ դեպքերում մեկ հնչաբառը կարող է պարունակել մեկից ավելի բառեր: Ինչպես հայտնի է, բառերի առանձնացման համար հիմք է ծառայում նրանց ձևաբանական և նրանց գործառնական ինքնությունը, տեղափոխելիությունն ու անխոցելիությունը, մինչդեռ **հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը**. այս պայմաններում անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար (պրոկլիտիկ), թե վերջահար (էնկլիտիկ), միանում են շեշտակիր բառերին և կազմում մի հնչաբառ. հմմտ. մի մա՛րդ, գնո՛ւմ եմ, որոնք մեկական հնչաբառեր են, բայց բաղկացած են երկուական բառերից: Հնչաբառերի դեպքում կցույթը կարող է

ներկայանալ և՛ որպես դադար, և՛ որպես նկատելի անցում՝ սահմանային ազդանշան»⁶⁹: Նա ներկայացնում է նաև հնչաշղթայի շարակարգային միավորների հաջորդականությունը. հնչաշղթան բաժանվում է հնչադասությունների, հնչադասությունները՝ հնչատակտերի, հնչատակտերը՝ հնչաբառերի, հնչաբառերը՝ վանկերի, այլ կերպ ասած՝ վանկերը կազմում են հնչաբառեր, հնչաբառերը՝ հնչատակտեր, հնչատակտերը՝ հնչադասություններ, ընդ որում յուրաքանչյուր ստորակարգ միավոր կարող է, որոշ պայմաններում, ներկայացնել բարձրակարգ միավորները: Որպես օրինակ բերում է վա՛հ-ը, որը և՛ վանկ է, և՛ բառ, և՛ հնչատակտ, և՛ հնչադասություն:

Լեզվաբանը յուրահատուկ ձևով և նորովի է ներկայացնում բառային և տրամաբանական շեշտերի տարբերությունը: Ըստ հաղորդման բովանդակության, հաղորդողի վերաբերմունքի՝ վերհնչությային՝ շեշտի և տոնի փոփոխությունների ենթարկվում են հնչաբառերը հնչատակտերի կազմում, հնչատակտերը՝ հնչադասությունների կազմում: Միանգամայն պարզ է, որ խոսքը տրամաբանական շեշտի մասին է, և այս դեպքում բարձրակարգ միավորների կազմում ստորակարգ միավորների տեղափոխություն կամ շարափոխություն (շրջադասություն) կարող է լինել, բայց ոչ դրանց ձևափոխություն, մակերեսային կառուցվածքի փոփոխություն: Արդեն նշվել է, որ հնչաշղթայի նվազագույն միավորները՝ վանկերը, հանդես են գալիս հնչաբառի կազմում, և որ ուժգնության ու բարձրության փոփոխությունները կապվում են շեշտակիր վանկի հետ. անշեշտ վանկերը չեն բնութագրվում վերհնչությային-առոգանական հատկանիշներով: Նշանակում է, որ հնչաբառերի կազմում առաջիններն են ենթարկվում փոփոխությունների՝ և՛ վերհնչությային, և՛ հնչությային:

Բնականաբար նա չէր կարող չխոսել հնչադասության միավորների կապակցման մասին: Գ. Ջահուկյանը վանկերի և այլ միավորների կապակցման կարգը կոչում է կցույթ, հաջորդականության

⁶⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 90-91:

կարգը՝ շարադասություն, տևողության, տոնի և ուժգնության հարաբերակցությունը՝ հնչերանգ: Հնչաբառերի դեպքում կցույթը կարող է ներկայանալ և՛ որպես դադար, և՛ որպես նկատելի անցում՝ սահմանային ազդանշան:

Բանավոր խոսքի առանձնահատկություններից հետո հեղինակն անդրադառնում է նաև գրավոր խոսքի արտահայտման միջոցներին՝ կետադրությանը: Գ. Ջահուկյանը կետադրական նշանների մասին խոսելիս կարևորում է դրանց, բնականաբար նաև շեշտի, գործառական այս հատկանիշը՝ կետադրական նշանները ավելի հեշտ են ենթարկվում մարդկային գիտակցական միջամտությանը, ինչը կարևոր սկզբունք կարող է դառնալ շեշտադրության նորմավորման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:

Կետադրական նշանները տարբեր բաշխում ունեն: Դրանցից մի մասը դիրքային սահմանափակում ունի: Առանձնացնում է **ը** հնչույթը, որը յուրահատուկ բնույթ ունի, նաև դիրքային սահմանափակություն և սովորաբար չի հանդիպում շեշտակիր դիրքում, գրվում է միայն բառասկզբնային որոշ դիրքերում (ն-ից առաջ), բառավերջում, նաև **ըստ, ընդ** բառերում: Վերջիններիս համար նշում է, որ սրանք ընդհանրապես չեշտագուրկ բառեր են եղել, բայց այժմ որոշակի միտում է ձևավորվում՝ հանդիսավոր խոսքում կարող են շեշտ կրել: Գ. Ջահուկյանը **ը** հնչույթի մի կարևոր առանձնահատկություն էլ է նշում. այն հանդես է գալիս որպես որոշ կարգի հնչույթների կուտակումները սահմանափակող (հենակետային) հնչյուն: Ջարմանալի կլիներ, եթե լեզվաբանը չանդրադառնար բույթի պատմական-գործառական փոփոխությանը. նա դադարի գրավոր նշանակման պայմանական հինգ աստիճաններից մեկը համարում է բութային-ը՝ բութով (') արտահայտվող, միաժամակ նշելով, որ բութն սկզբնապես նշանակել է ծայնի իջեցումը, այսինքն՝ եղել է առոգանական (տոնային) նշան և համեմատաբար ուշ է անցել տրոհության նշանների շարքը⁷⁰:

Հարցի քննության շրջանակներում առանձնացրել ենք առոգանության նշանների վերաբերյալ ասվածը: Առոգանության նշանները

⁷⁰ Տե՛ս՝ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 101, 114, 117, 118:

արտահայտում են տևողության, ուժգնության և բարձրության՝ սովորականից տարբեր աստիճանները՝ ըստ հաղորդակցման կարիքների, հաղորդողի՝ հաղորդակցողի և հաղորդման նկատմամբ ունեցած վերաբերմունքի: Նա նույնպես նշում է ուժգնության, բարձրության, երկարության՝ սովորականից տարբեր դրսևորումների արտահայտիչներն ու նշանակիչները, շեշտում դրանց անխառն չլինելու իրողությունը: Մանրամասնում է շեշտի գործառույթները, տիպերը (կամային և իմացական), ոչ վերջնականակային շեշտադրության դեպքերը՝ քննելով բառակազմական և ձևակազմական հավելումների հետևանքով վանկերի հնչույթային և դիրքային տարբեր փոփոխությունները, ծայնի ուժգնությամբ արտահայտվող կամային և իմացական դրսևորումները, շեշտափոխական հնչույթափոխությունը: Շեշտի բնույթի մասին գրում է. «Շեշտն իր բնույթով (ծայնի ուժգնության մեծացում) արտահայտում է ընդհանրապես կամ կամային որոշակի ուղղվածություն (ի տարբերություն ըղծականի)՝ դեպի խոսակիցը՝ մի բան անելու հրաման, կամ ուշադրության կենտրոնացում, վերջինս ունի երկու դրսևորում՝ ա) տրամաբանական շեշտ, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է այս կամ այն օբյեկտի վրա (գերազանցապես պատասխանական արժեքով) և բ) կոչական, որի դեպքում որևէ անձի ուշադրությունը հրավիրվում է խոսքի (հաղորդման վրա): Այսպիսով շեշտի բնույթը երկու տիպի է՝ կամային և իմացական»⁷¹ :

Գ. Զահուկյանը գրական լեզվի համագործածական կանոնների կողքին անդրադառնում է նաև հաղորդակցական կանոնակարգին, որը պետք է որ տեքստերում կարևորվեր: Ըստ նրա, եթե լեզվական նորմը պարտադիր է նրանով խոսող և գրող լեզվակիրների համար, ապա հաղորդակցական նորմը (կանոնակարգը) բավականին ձկուն է և մշտապես տեղ է թողնում ստեղծագործելու, հեղինակային անհատականության դրսևորման համար: Սա վերաբերում է նաև շեշտին, որը հիմնականում կամային արժեք ունի (բացականչականը՝ զգացական, հարցականը՝ իմացական): Բացականչական առոգանությունն ունեն ծայնարկությունները, շեշտային՝ հրամայական

⁷¹ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 358:

եղանակի բայաձևերն ու կոչականը, պատասխանական բառերը, որոնք արտահայտում պատասխանողի համոզվածության աստիճանը, հարցական առոգանություն՝ հարցական բառերն ու հարցախմբերը: Իրականության մեջ սրանք «մաքուր» ձևով հանդես չեն գալիս, և կամայինը կարող է դրսևորվել զգացականորեն և իմացականորեն, իմացականը կարող է լինել զգացական բնույթի և այլն: Գ. Զահուկյանը գրում է. «Լեզվական կարգերը հանդես են գալիս որպես այս հոգեբանական ընդհանուր կարգերի դրսևորումները՝ առոգանական տարբեր տիպերով, լրացական ու զուգակցային տարբեր իմաստներով, արտահայտության և բովանդակության պլանների տարբեր անցումներով: Հավաստումը (հատկապես ժխտումը) կարող է դրսևորվել հարցական ձևով..., հարցը՝ հավաստական ձևով և այլն: Մասնավորապես պետք է նշել, որ խոսքին աշխուժություն տալու և խոսքի ներգործությունն ուժեղացնելու համար սուբյեկտիվ հաղորդակցական բնույթի նախադասությունները կարող են ներառվել պատմողական խոսքի մեջ: Եվ այս բոլորն այն պատճառով, որ մարդկային խոսքը, բացի անմիջական հաղորդակցման և իմացական կարիքները բավարարելուց ձեռք է բերում գեղագիտական հաճույք պատճառելու և սրա հետ կապված, ուժեղ ներգործելու գործառություն, որ երբեմն իմացականը մղում է երկրորդ պլան»⁷²:

Ժամանակակից հայերենի շեշտադրական նորմն իր ընդհանուր և դասական կանոնաչարքով ներառված է նորմատիվ նոր քերականություններում՝ բուհական դասագրքերում՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», «Հայոց լեզու» և այլն⁷³:

⁷² Գ. Զահուկյան., նշվ. աշխ., էջ 358-359:

⁷³ Տե՛ս՝ 1. Յու. Ավետիսյան, Լ. Ավետիսյան, Լ. Թեյան և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 49: 2. Մ. Միրումյան, Հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիծություն, ձևաբանություն), Եր., 2012, էջ 20:

**ՇԵՇՏԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ,
ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՑԱՅԻՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Որտե՞ղ փնտրել շեշտադրական նորմը ներկայացնող կանոնները, լեզվի պատմության ո՞ր ժամանակահատվածում ի՞նչ կանոնաշարք է գործել և ինչպիսի՞ փոփոխություններ է կրել. պատասխաններ ստանալու համար ուղղակի պետք է թերթել համապատասխան ժամանակահատվածում գործող դպրոցական դասագրքերը (նաև՝ ուղեցույցները). դրանք են լեզվի կանոնարկվածության տեղանշային հիմնական աղբյուրները: Լեզվական ցանկացած օրինաչափություն, ցանկացած շեղում ու ցանկացած միտում կանոն է դառնում, եթե ներառվում է դպրոցական դասագրքերում. նորմատիվ քերականությունն ամենից առաջ դպրոցական դասագիրքն է: Շեշտադրական նորմի և նրա փոփոխությունների ճանապարհը ևս անցնում է դպրոցական նորմատիվ քերականությունների միջով: Բնականաբար հասկանալի է՝ հայագիտական տարբեր աղբյուրներում եղած կարծիքների՝ տեսակետների վերհանումից, լեզվաշինության ընդհանուր պատկերը ներկայացնելուց հետո դասագրքերի միջոցով անհրաժեշտ է պարզել, թե դրանք ինչ չափով են նպաստել մեր լեզվի նորմավորմանը, ուղղորդել նրա զարգացման ընթացքը, ի վերջո՝ կարգավորել մեր խոսքը: Ահա թե ինչու շատ կարևոր է վերհանել դպրոցական դասագրքերում եղածը, ինչը և ստորև ներկայցված է գրեթե ամբողջությամբ: Բայց անհրաժեշտ է շեշտել՝ կանոնաշարքը պետք է փնտրել դպրոցական դասագրքերում, բայց դրանք օրենքի արժեք են ստանում, օրենքների են վերածվում միայն համապատասխան որոշումների հիման վրա: Շեշտի և շեշտադրության վերաբերյալ վերջին որոշումը 1957թ. դեկտեմբերի նիստում տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված որոշումն է, որի նախագիծը կազմել է Ա. Ղարիբյանը: Այն ռուսական և օտարազգի հատուկ անունների շեշտադրության մասին է, և շուրջ երեք քառորդ դար տեղեկատուից տեղեկատու է փոխանցվում՝ «անտարբեր» ժամանակի փոփոխությանն ու ժամանակակից լեզվամտածողությանը:

Համեմատաբար մանրամասնությամբ ներկայացնում ենք Ա. Գրիգորյանի՝ 1956թ. լույս տեսած դպրոցական դասագրքում ներառվածը՝ նկարագրությունից բացի մեկ այլ նպատակ հետապնդելով՝ ուշադրությունը սևեռել շեշտադրական նորմի փոփոխության վրա: Դասագրքում վերջնական կշեշտը դիտվում էր իբրև ուղղախոսական նորմ, իսկ գործող կանոնը խիստ էր, կոպիտ ու պարտադրող. «Հայոց լեզվի շեշտադրությունը կայուն է: Որպես կանոն, մեր լեզվում շեշտվում են բառերի վերջին վանկերը: Հայերենի վերջնական կշեշտը մեր ուղղախոսության կարևորագույն նորմաներից մեկն է, որից կատարվող յուրաքանչյուր շեղում դիտվում է որպես կոպիտ սխալ: Շեշտը կարող է ընկնել միայն վանկարար հնչյունի վրա: Ամեն մի բառ ունենում է մեկ շեշտ»⁷⁴: Այնուհետև նշվում են բացառությունները՝ նախավերջին կամ առաջին վանկի վրա շեշտ ունեցող ավանդական բառերը (**որպեսզի, նոյնպես, նոյնիսկ, մանավանդ, ո՛րևէ, ի՛նչևէ, ո՛րչափ, քանի՜երորդ, ո՛րտեղ, գո՛նե**), այն բառերը, որոնց վերջնական կի ձայնավորն է Ը-ն (**ա՛ստղ, մի՛տքը**): Ըստ որում ուշադրություն է դարձված նաև շեշտադրական գուգաձևությունների վրա. այս բառերի մի մասը կարող է շեշտ ընդունել նաև վերջին վանկի վրա, ինչպես՝ **որչա՛փ, որտե՛ղ** և այլն: Ավելին, ընտրություն կատարելու պայմանն էլ է նշված՝ գուգաձևությունների դեպքում առաջնային համարել ընդհանուր օրենքին ենթարկվողները: Իսկ ռուսերենից և օտար լեզուներից փոխառյալ բառերի արտասանության մասին բաժնում կարդում ենք. «Ռուսերենի կամ ռուսերենի միջոցով այլ լեզուներից վերցված բառերն իրենց ուղիղ ձևով գործածվելիս պահպանում են ռուսական շեշտադրությունը, ըստ այդմ արտասանվում են՝ **անալո՛գիա, Ա՛սիա, բուրժուա՛զիա, Լի՛դա, կոնստիտուցիա, մաթեմա՛տիկա, Պուլ՛շկին, սի՛նթեզ, Օ՛պերա, ֆիլո՛լոգ** և այլն: Երբ ոչ հայերեն բառերը գործ են ածվում թեքված ձևով, պահպանվում է հայերենի շեշտադրությունը, այսինքն՝ շեշտվում է բառի վերջին վանկը»⁷⁵: Հետաքրքիրն այն է,

⁷⁴ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու (Ձեռնարկ 8-10-րդ դասարանների գործնական պարամունքների համար), Եր., 1956, էջ 63:

⁷⁵ Ա. Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 62:

որ նույն հեղինակի՝ 1963թ. լույս տեսած ութամյա դպրոցի 5-7-րդ դասարանների համար նախատեսված դասագրքում օտար փոխառյալ բառերի նշված կանոնի մասին խոսք անգամ չկա (գուցե ժամանակի պարտադրանքով), մինչդեռ ժամանակ գրական և բարբառային շեշտադրության հակադրությունն է ընդգծված օրինակ-գուգաձևություններով (**աշակերտ** և **աշակերտ**, **իրիկուն** և **իրիկուն** և այլն): Այլ գուգաձևությունների կամ գուգահեռությունների մասին ևս խոսք չկա: Դասագրքի հեղինակն առանձնացնում է նաև շեշտի տեսակները, կարևորում նրանց կանոնավոր դասավորության դերը բանաստեղծական խոսքում. հայերենում շեշտը երեք տեսակ է՝ բառային շեշտ, տրամաբանական շեշտ և քերականական շեշտ: Հայոց լեզվի մեջ ըստ դիրքի շեշտը միշտ կայուն է: Բառային շեշտի շնորհիվ բառի մի վանկը մյուսների համեմատությամբ ավելի ուժեղ է արտասանվում: Հայերենի յուրաքանչյուր բառ ունի իր բառային շեշտը, բառը, որքան էլ որ երկար լինի, ունենում է մեկ բառային շեշտ: Արդի հայ գրական լեզվի մեջ շեշտը դրվում է բառի վերջին վանկի վրա: Հայերենի շեշտադրության այս կանոնի շնորհիվ շատ հեշտ է լինում շեշտերի կանոնավոր դասավորություն կատարել բանաստեղծական խոսքի մեջ: Վերջում թվարկվում են արդեն իսկ հայտնի բացառությունները⁷⁶:

Տասնամյակներ շարունակ լեզվական նորմն ուսուցանվել և յուրացվել է Էդ. Աղայանի և Հ. Բարսեղյանի կազմած դասագրքերով: Համահեղինակների՝ միջնակարգ դպրոցի 5-7-րդ դասարանների համար նախատեսված հայոց լեզվի դասագրքում մեզ հետաքրքրող նյութն ստորև շարադրվածի սահմաններում է ներառված: Բառի մեջ որևէ ձայնավորի արտասանության ուժգնությունը, մյուսների համեմատությամբ, կոչվում է շեշտ: Միավանկ բառերի ձայնավորները սովորաբար արտասանվում են բազմավանկ բառերի շեշտված ձայնավորների ուժգնությամբ: Միավանկ բառի ձայնավորը շեշտված է: Նշվում են ընդհանուր կանոնից շեղումները (վերջում ը ունեցող բառերի, և նախորդող վանկի վրա շեշտ ունեցող մեկ

⁷⁶ Տես՝ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար, Երևան, 1963, 260-261:

տասնյան բառեր), նաև անշեշտ բառերը (օժանդակ բայը, մի բառը և այլն): Ավելացվում է, որ «բառերի ճիշտ շեշտադրությունը բանավոր խոսքի կարևոր պայմաններից մեկն է: Նա ոչ միայն տվյալ լեզվին հատուկ և հարազատ արտասանությունն է ապահովում, այլև շատ դեպքերում՝ մտքի ճշտությունը: Սխալ շեշտադրությամբ հաճախ աղավաղվում է մտքի ճշտությունը: Օրինակ՝ **Մի գա, հետո կտեսնենք** և **Մի՛ գա, հետո կտեսնենք...** Ճիշտ շեշտադրությունն առանձնապես կարևոր է չափածո գրվածքների ընթերցանության և արտասանության ժամանակ, որովհետև սխալ շեշտադրությունը խախտում է նրա չափը⁷⁷: Այդ ժամանակից ի վեր նույն հեղինակների՝ տարբեր ժամանակներում վերահրատարակած դասագրքերում գրեթե նույն շարադրանքն է⁷⁸ :

Շեշտադրական նորմն առավել հիմնավոր ու յուրովի ներկայացրին Գ. Զահուկյանը և Ֆ. Խլղաթյանը բարձր դասարանների համար նախատեսված դասագրքում: Հստակորեն սահմանվեց ժամանակակից հայերենի արտասանական-շեշտադրական չափանիշը, որովհետև ընդգծվեց շեշտի ոճական արժեքը, շեշտակրության գործածական յուրահատկությունները՝ ոճական տարբեր շերտերում, մատնանշվեցին շեշտադրական բացառություններն ու մի շարք բարբառների՝ գրական հայերենից տարբեր շեշտադրություն ունենալու իրողությունը: Անուղղակիորեն շեշտադրական գուգաձևություններ առանձնացվեցին: Համահեղինակները գրում են. «Արտասանության մեջ ոճ ձևավորող տարրերի գոյությունը մեծ չափով պայմանավորված է խոսքի հնչերանգով և շեշտով: Մասնավորապես բառային շեշտից են շատ բանով կախված լեզվի արտասանական բնույթն ու ընդհանուր բնութագիրը: Բառերի վերջնավանկային շեշտադրությունը հայերենի արտասանական չափանիշն է, որով էլ պայմանավորվում է հայերեն խոսքի մեղեդայնությունն ու բնական բարեհնչությունը: Սովորական, չեզոք արտասանության դեպքում

⁷⁷ Տես՝ Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, Եր., 1965, էջ 9-10:

⁷⁸ Տես՝ Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, 4, Եր., 2004, էջ 33-34:

ոչ սպասարկու բառերում շեշտը վերջնական կարող է չլինել միայն սակավաթիվ դեպքերում: 1. Երբ վերջին վանկարար հնչյունը ը հոդն է կամ ը գաղտնահնչյունը, շեշտվում է նախավերջին վանկը՝ **քաղա՛քը, գնա՛ցքը, լու՛յսը, մա՛ն(ը)ր, ծա՛ն(ը)ր, կա՛յս(ը)ր, վա՛գ(ը)ր, դու՛ստ(ը)ր, այսի՛նք(ը)ն, երբե՛մ(ը)ն** և այլն: 2. **Մի՞թե, գո՛նե, նույ՛նիսկ** բառերում ընդհանրապես շեշտվում է նախավերջին վանկը: 3. **Գրե՛թե, բացի, նաև, մանավանդ, նամանավանդ** բառերում առաջին վանկի շեշտումը հատուկ է արտասանության ճարտասանական ոճին, իսկ վերջինի շեշտումը՝ չեզոքին: 4. **Իհա՛րկե** բառում միշտ շեշտվում է նախավերջին վանկը: 5. Ճարտասանական արտասանության ժամանակ առաջին վանկը կարող է շեշտվել նաև **այսքան, այդքան, այսչափ, այդչափ, այնչափ, ինչքան, ինչչափ, այսպես, այդպես, նույնպիսի** բառերում, ինչպես նաև մի քանի դասական թվականներում (**հինգերորդ, վեցերորդ**): Այս բառերում չեզոք արտասանության ժամանակ շեշտադրությունը սովորական է՝ վերջնական: 6. Տասից բարձր թվերից կազմված դասական թվականներում ընդհանրապես շեշտվում է ոչ թե **-երորդ** ածանցը, այլ թվական բաղադրիչը (**տասանմեկերորդ, քսաներորդ, հիսունհինգերորդ**): 7. **Ո՞ր, քանի՞** բաղադրիչներ պարունակող բաղադրյալ դերանուններում շեշտվում են այդ բաղադրիչները՝ **ո՞րերորդ, քանի՞երորդ**: 8. Օժանդակ բայը և հարադիր բայերի բայ բաղադրիչները չեն շեշտվում (**Արամը բանվոր է: Նա գրում է: Ես լսել էի: Ցույց տալ, դուրս գալ, վեր ելնել, մա՛ն գալ** և այլն): Երկակի շեշտադրության բոլոր դեպքերում, որպես կանոն վերջնականկային շեշտը չեզոք արտասանությանն է հատուկ, ոչ վերջնականկայինը՝ ճարտասանականին: Հայերենի բարբառների մի մասը շեշտադրությամբ տարբերվում է գրական լեզվից: Այդ բարբառների ներկայացուցիչների խոսքում, որպես արտասանական սխալ, բարբառի ազդեցությամբ ոչ վերջնականկային շեշտ կարող են ունենալ ուրիշ բառեր ևս: Երկակի շեշտադրություն ունեն օտար բառերը, որոնք ուղիղ ձևով գործածվելիս սովորաբար պահպանում են իրենց մայրենի շեշտը (**օ՛պերա, Իտալիա, Անգլիա**), իսկ թեքված և ածանցյալ ձևերում հետևում են հայերենի օրինաչափությանը՝ դառնալով վերջնաշեշտ (**օպերա-**

յում, իտալացի՝ Անգլիայո՛վ): Թեք և ածանցյալ ձևերում օտար բառերի ոչ վերջնականակային շեշտադրությունը արտասանական կանոնների խախտում է»⁷⁹:

Մեր ժամանակներում հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար նախատեսված «Մայրենի» դասագրքում այսպես է տրվում շեշտի վերաբերյալ նյութը, որն, ի դեպ, գիտական է, համակարգված, գրեթե ամբողջական: Նպատակահարմար ենք գտել այն մեջբերել ամբողջությամբ, որովհետև կարելի է ասել՝ սա է մեր լեզվում գործող այսօրյա շեշտադրական նորմը. «Բազմավանկ բառի ձայնավորներից մեկը մյուսներից ուժեղ է արտասանվում: Բառի որևէ ձայնավորի ուժգին արտասանությունը կոչվում է շեշտ: Դա բառային շեշտն է: Հայերենում շեշտվում է, այսինքն շեշտ է կրում բառի միակ ձայնավորը կամ վերջին վանկի ձայնավորը (բացի ը-ից): Օրինակ՝ մա՛րդ, մարդի՛կ, մարդկայի՛ն, մարդկայնորե՛ն: Նոր վանկի ավելացման հետ շեշտը տեղափոխվում է վերջին վանկի ձայնավորի վրա: Եթե բառի վերջին ձայնավորը ը-ն է, (գրվող կամ գաղտնավանկ), շեշտը նախավերջին վանկի ձայնավորի վրա է ընկնում: Օրինակ՝ մա՛րդը, շու՛րջը, ա՛ստ(ը)դ, ծա՛ն(ը)ր: Եզակի դեպքերում շեշտվում է ը-ն, երբ այն բառի միակ ձայնավորն է: Օրինակ՝ թը՛խկ, շը՛խկ, կը՛թ: Եթե բառը և-ով է վերջանում, շեշտը դրվում է նրա վրա, քանի որ իր մեջ ե ունի, օրինակ՝ բա՛րև, Պա՛րզև: Հայերեն մի շարք բառեր կան, որոնց շեշտն ընկնում է նախավերջին կամ նրան նախորդող վանկի վրա: Այդ բառերը կարելի է մի քանի խմբի բաժանել. ա) վերաբերմունք արտահայտող բառեր՝ իհա՛րկե, մա՛նավանդ, գո՛նե, գրե՛թե, մի՛միայն, մի՛գուցե. բ) թվականներ՝ վե՛ցերորդ, տասնե՛րեքերորդ. գ) հարադրավոր բառեր (դրանք կազմված են երկու առանձին բառերից)՝ գլու՛խ տալ, մի՛տք անել, խելքի՛ գալ: դ) անորոշություն և այլ իմաստներ արտահայտող բառեր՝ ո՛րերորդ, ո՛րևէ, քանի՛րորդ, նո՛յնքան. ե) օտար բառեր՝ ռա՛դիո, տե՛խնիկա, մաթեմա՛տիկա: Գրավոր խոսքում այդ շեշտերը սովորաբար չեն դրվում: Սակայն կան բառեր և ձևեր, որոնք հատ-

⁷⁹ Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Ոճաբանություն (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Եր., 2007, էջ 57:

կապես ուժեղ են շեշտվում. դրանց շեշտը գրեթե միշտ դրվում է: Դրանք են՝ **ա)** հրաման արտահայտող բայական ձևերը՝ **գրիր, գրեցե՛ք, կարդա՛, կարդացե՛ք, մի՛ գրիր, մի՛ գրեք, չաղմկել:՝ բ)** հաստատում կամ ժխտում արտահայտող բառերը՝ **այո՛, ո՛չ, չէ՛: գ)** կրկնվող բառերը (շաղկապները)՝ **և՛...և՛, թե՛...թե՛, կամ՛...կամ՛, է՛լ...է՛լ: դ)** Կանչ, զարմանք, ափսոսանք, և նման զգացումներ արտահայտող բառերը՝ **է՛յ, պա՛հ, վա՛հ, այ՛-այ՛-այ՛, դե՛. ե)** այն բառերը, որոնք ցուց են տալիս, թե խոսքն ո՛ւմ է ուղղված. **Ծաղիկներ, բացվե՛ք նրա ճամփեքին... գ)** թե-ից հետո եկող **ե՛րբ, որտե՛ղ, ո՛ր, ո՛վ, ո՛ր, ի՛նչ, ինչպե՛ս, ինչո՛ւ, որքա՛ն** բառերը (օրինակ՝ Զգիտե՛ինք, թե ի՛նչ էր ուզում մեզանից): **է)** Շեշտով են արտասանվում նաև բայերի ժխտական ձևերը՝ **չե՛մ անի, չի՛ գա, չե՛ք ստանա**, սակայն գրավոր խոսքում շեշտի նշանը որպես կանոն չի դրվում: Հայերենում բառեր էլ կան, որոնք շեշտ չեն կրում, անշեշտ են: Դրանցից են՝ **եմ** օժանդակ բայը, **մի** անորոշ մասնիկը (**մի մա՛րդ**), **էլ** (**բոլորն էլ**), **և, ու** շաղկապները»⁸⁰: Նույն դասագրքի էջ 172-ում առանձնացված է «Տրամաբանական շեշտ» թեման: Ամբողջակա՞ն է, լիարժեքորեն արտացոլվա՞ծ է շեշտադրության նորմը՝ դժվար է ասել: Ամենից առաջ փոխառությունների շեշտադրման կանոնը չկա. գուցե կարելի է կարծել, որ այս կետի վերաբերյալ լուծումը հեղինակները կանոնավորում են գործող ընդհանրական կամ «բացարձակ» օրենքի շրջանակներում. մենք ևս այդ կարծիքին ենք. բայց կարծում ենք որ հենց սա էլ որպես կանոն պիտի ընդգրկվի դասագրքում, չէ՞ որ վերջիվերջո շեշտադրման նորմավորման գերխնդիրը հենց սա է, շեշտադրական շեղումները հենց այս կետին են ամենից ավելի վերաբերում, և գիտական չէ սահմանափակվել մի քանի օտար բառերի (**ռա՛դիո, տե՛խնիկա, մաթեմա՛տիկա**) մեջբերումով, այն էլ այնպիսիների, որ այսօր դժվար է ասել՝ դրանք բացարձակորեն մայր լեզվի շեշտադրությա՞մբ են հնչում, թե՞ հայերենացվել են կամ գուցե այդ ճանապարհի՞ն են՝ կանոնական զուգահեռությունների տեսքով: Մյուս կողմից՝ խոսք չկա շեշտադրական զուգահեռությունների մասին:

⁸⁰ Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի, 5 (Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք), Եր., 2015, 168 -170:

Որոշ օրինակներ համոզիչ չեն՝ օրինակ՝ միակ ծայնավոր ունեցող բառերի կողքին բերված է նաև **շրջիսկ** բառը. սա գրության առումով միավանկի տպավորություն է թողնում, իսկ արտասանությամբ երկվանկ է:

Ընդհանրապես շեշտագծանշված բառերն ուղղախոսական, մասամբ ուղղագրական բառարաններում են արտացոլվում: Քանի որ հայերենն ունի գրեթե բացառություն չճանաչող կանոն, բնականաբար ավելորդ է հայերենյան վերջնականի ծայնավորի շեշտման գրային դրսևորումը: Բայց և նույն հայերենն ունի ընդհանուր կանոնից շեղումներ, որոնցից մի քանիսը ամրակայվել են շեշտադրական նորմում՝ կանոն դառնալով, իսկ մյուսները կանոնական չեն, հետևաբար և մերժելին են: Ուստի տեղին կլինի ուղղախոսական բառարաններում համապատասխան շեշտակությամբ ընդգրկել կանոնական շեղումներն ու համագոր (կամ գրեթե համագոր) շեշտադրական զուգաձևությունները: Ի վերջո, նորմավորման գործընթացում պակաս կարևոր չեն **ճիշտ ու սխալ** ընդգծումը, **հանձնարարելի - ոչ հանձնարարելի** տարբերակումը: Կարծում ենք՝ այս ոլորտում նորմատիվ քերականություններում ասելիքը քիչ է: Ուղղագրական բառարաններում դրանք, կարելի է ասել, չեն երևում և, ընդհանուր առմամբ, ըստ բառարանակազմության կանոնակարգի, չափտի երևան էլ՝ բացառությամբ պարտադիր սրաշեշտությամբ հատկանշվող մի շարք բառային միավորների: Իսկ հրապարակի վրա եղած սակավաթիվ ուղղախոսական բառարաններում այսպիսի չափանիշներով գրեթե ընդգրկված չեն: Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի «Դպրոցական ուղղագրական բառարանում» այս նյութին վերաբերող մեկ-երկու նշում կա. 1. «Անձնանունների շեշտված վերջնականի **իա**-ն գրվում է **իա**. օրինակ՝ **Լիա, Մարիա** և այլն». 2. «Հարադիր բարդությունները գրվում են միասին, եթե շեշտը ստանում է միայն վերջին հարադիրը, գրվում են առանձին, եթե շեշտ ստանում է յուրաքանչյուր հարադիրը. օրինակ՝ **ահ ուղո՛ղ > ահուղո՛ղ, մի՛ն ու ճա՛ր > մինու՛ճար, ա՛ռ և տո՛ւր > առևտո՛ւր, ա՛նց ու դա՛րձ > անցուդա՛րձ, փո՛խ առ փո՛խ > փոխառփո՛խ** և այլն»⁸¹: Նույն բառարանի

⁸¹ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, «Դպրոցական ուղղագրական բառարան», Եր., 1959, էջ 7,15:

«Ուղղախոսական բառարանում» ոչ մի շեշտագծանշված բառ չկա, իսկ բուն մասում միայն մի քանի հարադիր բայեր են շեշտված (նաև կցական գրությամբ), ինչպես՝ **ա՛ղ ու հա՛ց // աղուհա՛ց, քա՛ր ու կի՛ր // քարուկի՛ր**, նույնիսկ **այո՛ւ-ն, մի՞թե-ն** գծանշված չեն (**այո, միթե**):

Թվում էր, թե փաստական բավարար նյութ պիտի մատուցի Հ. Բարսեղյանի «Ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանը», սակայն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բարդ հանգուցալուծումների կողքին խնդրո առարկայի շրջանակներում ակնհայտ է հեղինակի ուղղագիծ մոտեցումը (հայերենի շեշտը վերջնավանկային է). խիստ է դիրքորոշումը (կան մի քանի բացառություններ, որոնք պետք է ձանաչել, իսկ մնացածները ընդհանուր օրինաչափությամբ շեշտադրել): Գուցեև ճիշտ է բառարանագիրը՝ կանգնելով լեզվի միօրինականացման և կատարելության տանող ձանապարհին. գուցեև ճիշտ չէ լեզվաբանը, ով մինչև վերջ պնդում էր, որ մենք չենք դադարել բարբառախոս լինելուց: Ինչևէ՝ «Առաջաբանում» գրում է. «Հայոց լեզուն միատեսակ շեշտադրություն ունեցող լեզու է, ուստի և բառարաններում բառերը չեն շեշտվում: Այս բառարանում շեշտ ունեն այդ կանոնից շեղվող մի քանի բառեր միայն (**ո՛րևէ, նո՛յնպես, մա՛նավանդ, գո՛նե, մի՛թե** և այլն): Բացականչական նշան կամ շեշտ է դրվում ծայնարկությունների վրա»⁸²:

Վերհատությային գծանշաններ ունեցող մի քանի տասնյակ բառեր են ընդգրկված Դ. Գյուրջիյանի «Հայերեն բառարան-տեղեկատուում». ընտրվածները հեղինակի հետաքրքրությունների և ուսումնասիրության նյութի՝ բառերի՝ միասին, անջատ կամ գծիկով գրվելու քննության ածանցյալներն են: Բառարանում շեշտ (նաև հարցական և բացականչական) գծանշանն ունեն **զը՛նգ հա զը՛նգ, թը՛խկ հա թը՛խկ, թըր՛խկ հա թըր՛խկ, կե՛ր հա կե՛ր, հա՛յ հա հա՛յ, մի՞թե, ո՞րերորդ, չե՛ մի, չը՛խկ հա չը՛խկ, չըր՛խկ հա չըր՛խկ, է՛լ ավելի, ինչպե՛ս չէ, վե՛ր կաց, տո՛ւր հա տո՛ւր, քանի՞երորդ, քանի՞-քանի՞** բառերը, ինչպես նաև կրկնությամբ կազմված ծայնարկությունները:

⁸² Հ. Բարսեղյան, Ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973, էջ 4:

Փ. Մեյթիխանյանի ուղղագրական բառարանի «Երկգրություններից» դուրս ենք գրել այն բառերն ու տարբերակային ձևերը, որոնք շեշտ են կրում՝ **ազա՛տ-արծա՛կ // ազատարծա՛կ, ա՛հ ու դո՛ղ // ահու-դո՛ղ, ա՛ղ ու հա՛ց // աղուհա՛ց, ա՛յս ու այ՛ն կողմ // այսուայնկողմ, այ-սո՛ր ևեթ // այսորևեթ, այ՛ս կերպ // այսկերպ, անտա՛ռ-արգելո՛ց // անտառարգելո՛ց, ա՛ռ այսօր // առայսօ՛ր, հավու՛ր պատշաճի // հավուրպատշաճի՛, հա՛րց ու պատասխա՛ն // հարցուպատասխա՛ն** և այլն: Դժվար չէ կռահել 15-ի հասնող երկգրությունների առանձնացումը. բառարանագրի խնդիրը դրանց ուղղագրության հարցն է՝ ուղղագրական զուգաձևություններ լինելու կամ բառակապակցություններից կամ բառական (հարադրական) կապակցություններից՝ կցականության՝ մեկ բառույթի վերածվելու անցումային ճանապարհին: Իսկ հայերենի շեշտադրական ընդհանուր օրենքին համաձայն այսպիսի գծանշումը, բառարանից բառարան մեխանիկական փոխանցումը երևի բառարանագրական ավանդույթով պետք է բացատրել. ընդ որում՝ հաջորդող էջերում ոչ մի գծանշված բառ չկա՝ բացառությամբ **մի՞թե**-ի, որը գրության այլ տարբերակ չունի:

Կարծում ենք՝ ժամանակի պահանջ է դարձել ուղղախոսական նոր բառարանի հրատարակումը: Եվ ենթադրելի է նաև, որ ստեղծվելիք բառարանում պիտի որ հստակորեն առանձնացվեն, գծանշանշվեն և գծանշանով (շեշտ, հարցական կամ բացականչական նշան) հիմնավորվեն արտասանական-շեշտադրական կանոնական շեղումները, օրինաչափության միտող անկանոնություններն ու զուգաձևությունները՝ համապատասխան հղումներով, ըստ որում, պետք է հստակորեն սահմանվեն ուղղագրական բառարաններում գծանշվածների ներառման չափանիշները: Լեզվական առումով ճիշտ որակված տարբերակները մեծ մասամբ ներառվում են բառարաններում: Մասնավորապես շատ կարևոր է դպրոցական բառարանների, բառարանիկների (բառ-գրքույկների) կազմումը: Երևի թե՛ պետք է մտածել նաև դպրոցական դասագրքի և դպրոցական բառարանի՝ փոխլրացուցիչներ լինելու իրողության մասին. ոչ մի դասագիրք գործնականորեն չի կարող ներառել լեզվական տվյալ կանոնի գործառական բոլոր դրսևորումները, և գիտական չի լինի օրինականացնել խոսքիմշակութային նորմով սահմանված կամ

հաղորդակցական իրավիճակով թելադրված խոսքային բոլոր իրողությունները. այստեղ պիտի օգնության հասնեն բառարանները: Իսկ եթե դրանցում ընդգրկվեն կանոնական և կանոնականի միտող, օրինաչափության վերածվելու ներունակությամբ հատկանշվող զուգաձևությունները, զուգահեռությունները՝ համապատասխան հղումներով և համապատասխան նմուշներով, այս դեպքում դրանք մի կողմից կծառայեն լեզվի նորմավորման գործընթացին, մյուս կողմից առաջընթաց կարծանագրվի հայ լեզվի և մեր խոսքի տարբերությունների վերացման ճանապարհին: Ահա թե ինչու շատ կարևոր է, որ բառարանագիրները «չմշակեն», խոսքային պատահական, դիպվածային հնչումներով չծանրաբեռնեն բառարանները, ընտրեն լեզվում գործող կանոններին համապատասխան ուղղախոսական-շեշտադրական տարբերակները՝ հետևյալ սկզբունքով՝ բառարաններն իրենց հերթին ծառայում են որպես լեզվական նորմի իմացության աղբյուր՝ միաժամանակ դառնալով խոսքի մշակույթի նորմավորման միջոց:

Բնականաբար, դասագրքերն ու բառարանները ծառայում են նյութի տեսական և գործնական իմացությանը: Լեզվագործածության ընթացքում միայն տեսական նյութի իմացությունը բավարար չէ. նմուշ-օրինակները, տեղեկատուները, ուղեցույցները, բառացանկերն ավելի տեսանելի են դարձնում լեզվակիրառության յուրահատկությունները և կոչված են ուղղորդելու խոսքակիր անհատին: Ուստի զուտ գործնական նպատակներով ստեղծվում են զանազան ուղեցույցներ (Պ. Բեդիրյան, «Հայ լեզուն և մեր խոսքը», 2007թ., Խ. Բադիկյան, «Ծիշտ խոսենք հայերեն», 2012թ. և այլն), համապատասխան ամսագրերում առանձնացվում են էջեր, այսօր համացանցում առանձին կայքեր են տեղադրվում գիտության և կրթության բարձրագույն մարմինների կողմից, հարցուպատասխանական գործընթացը զնալով աշխուժանում է, թեպետև խնդրո առարկայի վերաբերյալ հետաքրքրությունն աննշան է: Վերջերս լույս տեսած «Հայոց լեզվի ուղեցույց»-ի⁸³ հեղինակային խումբը, հաշվի առնելով լեզվական կանոնի հակասական գործընթացը,

⁸³ Յու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան, Հայոց լեզվի ուղեցույց, Եր., 2017:

ավանդապահականության և ավանդախախտության օրենքները, փորձել է քննարկման ներկայացնել կենդանի լեզվում, նաև շեշտադրության հարցում եղած հնարավոր տարբերակները ևս՝ լեզվական միջոցների ընտրության հարցում կանոնը դիտել «նուրբ գործիք»՝ խուսափելով կտրուկ, անվերապահ, կատեգորիկ հանձնարարականներից:

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ցանկացած լեզվի նորմ լեզվական համակարգը կանոնարկող օրինաչափությունների հանրագումարն է՝ նրա անընդհատ զարգացման և կատարելագործման ճանապարհին: Այն բարդ և բազմակառույց, հարաբերականորեն կարծրացած, կոդավորված երևույթ է և արտաքուստ պայմանավորված չէ լեզվակիրների ցանկությամբ ու ճաշակով, թեև ինչ-որ չափով արտացոլում է հասարակության նաև գնահատողական-գեղագիտական վերաբերմունքը լեզվի նկատմամբ: Գնահատման չափանշային ցուցիչներն են՝ «գրական է», «կանոնական է», «ճիշտ է»: Բայց լեզվի կյանքը կիրարկության մեջ է: Շեշտադրական նորմն իր խիստ կանոնաշարքով գերազանցապես խոսքային գործունեությամբ է դրսևորվում: Խոսքի մշակութային նորմը պահանջում է հետևել լեզվական նորմով սահմանված կանոններին՝ պարտադրվածության և խստության տարբեր աստիճաններով, և չի կարող անտարբեր մնալ լեզվական նորմի տատանումների, տեղաշարժերի, խախտումների նկատմամբ: Ըստ լեզվական ավանդույթի՝ առանձնացվում են նորմի երկու տեսակ: Շեշտադրական նորմը ևս լինում է **պարտադիր-առաջնային** և լրացուցիչ կամ **պարտադիր-երկրորդական**՝ բացառությունների տեսքով: Կարծում ենք՝ պետք է ավելացնել երրորդ տեսակը ևս՝ **տարբերակային, թույլատրելի**: Շեշտադրական նորմի պարտադիր, առաջնային և բացառություններն օրինականացնող կանոնները նրա գործառական օրինաչափություններն են: Այսպիսիները չեն թույլատրում տարբերակայնություն, զուգաձևություն, և ցանկացած շեղում որակվում է «ոչ ճիշտ», «սխալ», «անհանձնարելի», «անթույլատրելի» հղումներով: Ոչ պարտադիր, թույլատրելի կանոնները առավելապես խոսքային մակարդակում են կիրարկվում:

այստեղ են եզակի գործածությունից միտումների վերածվում, միտումներից՝ օրինաչափության և կանոն դառնալու իրավունքով տեղ գտնում լեզվական համակարգում: Սրանց հիմքում այն հղումներն են, որոնք դառնում են պայմաններ այս կամ այն տարբերակի ընտրության հարցում՝ կախված հաղորդակցական իրավիճակից, ասույթի և խոսույթի առանձնահատկություններից, դրանց հարմարությունից, տեղիներությունից՝ արդարացված կա՛մ տեսական-ոճական, կա՛մ պատմական-մշակութային, կա՛մ ավանդական նախապայմաններով (գործոններով): Նորմատիվ բառարաններում նորմերի տեսակային սահմանազատումը սովորաբար ամրակայվում է հետևյալ հղումներով՝ «թույլատրելի է», «սխալ է», «անթույլատրելի է», «հնացած է», «նորաբանություն է», «դիպվածային է», «նեղ մասնագիտական է», «միայն նշված կապակցության մեջ» և այլն: Սա նշանակում է, որ այդպիսիները հաղորդակցական-իրավիճակային սահմանափակ գործառնությամբ են հատկանշվում: Կանոնների վերջին տիպը ենթադրում է տարբերակներ՝ ոճականորեն տարբերակվող կամ չեզոք: Լեզվաբանները նշում են, որ նորմի տարբերակվածությունը ոչ միայն լեզվի զարգացման անխուսափելի և պարտադիր պայմաններից է, այլև օգտակար է նրա առաջընթացի կանոնարկվելիք գործընթացում: Բնականաբար անժխտելի է, որ հնի կողքին նորի առկայությունը թույլ է տալիս հարմարվել նորին, աստիճանաբար ընդունել նորը և նորմի փոփոխությունն առավել սահուն, ոչ հիվանդագին՝ «անցնցում» կատարել: Իսկ այն դեպքում, երբ տարբերակները ոչինչ չեն ավելացնում, ոչինչ չեն հավելում իմաստային կամ ոճական և այլ տեսակետներով, սովորաբար որակվում են որպես կրկնօրինակ, կրկնատիպ: Գրական նորմն աշխատում է ազատվել այդպիսի տարբերակներից՝ առավելապես գրական ընտրելով:

Ի տարբերություն մյուս մակարդակներում առկա տարբերակների՝ շեշտադրական տարբերակները, բացի կոչականից և մեկ-երկու դեպքերից, որևէ էական բան չեն հավելում: Նրանց հիմքում մեծ մասամբ ընկած է այլ լեզուների, թեկուզև բարբառի ազդեցությունը, որը խանգարիչ գործոն է լեզվի ներքին զարգացման ճանապարհ

հին: Շեշտադրական տարբերակները մի յուրահատկություն էլ ունեն. գրավոր խոսքում գրեթե չեն արտացոլվում, քանի որ մեր ենթագիտակցության մեջ ամրացված է համընդհանրական կանոնը, եթե կան էլ, ապա ավելի շուտ բացառությունների՝ գրականին համապատասխան կետադրելն է, իսկ բանավոր խոսքը մի քիչ այլ է. ինչպես ասում են, խոսքը թռչում է, և ուշադրություն չես դարձնում շեշտադրմանը. դրանք կարելի է արտասանվածքի, խոսքի վերլուծությամբ նկատել, ինչը մեր լեզվում դեռևս լիովին չկանոնակարգված ոլորտ է: Այսպես մտածելու դեպքում կարելի է հասկանալ, թե ինչու լեզվաբանական տարբեր աղբյուրներում միշտ ընդգծվում է շեշտադրական կանոնի խիստ, միասնական լինելն ու նրան խստորեն հետևելու պահանջը:

Շեշտադրական նորմի չիմացությամբ պայմանավորված շեղումները, խախտումները գնահատվում են ոչ միայն լեզվական և խոսքիմշակութային նորմերի, այլև հաղորդակցական և էթիկական, վարքագծային, վարվելակարգային նորմերի տեսանկյունիից, այսինքն՝ ինչպես են դրանք ազդում փոխհաղորդակցման գործընթացի վրա: Շեշտադրության նորմավորման գործընթացը ևս ընթանում է երկու ծայրահեղությունների հաղթահարման ճանապարհով՝ **մաքրամոլության** և **չնորմավորվածության**: Մաքրամոլությունը պահանջում է խստագույնս հետևել շեշտադրական կանոնին, բացառել ոչ հայերենյանը: Չնորմավորվածությունը պայմանավորված է այն պահանջով, թե արտասանությունը կարիք չունի արտաքին միջամտության, այն պետք է զարգանա բնականոն ընթացքով: Սակայն այս վեճը ոչ թե նորմավորելու կամ չնորմավորելու միջև է, այլ նորմավորման չափանիշների, սկզբունքների, գնահատումների, նորմավորման գործընթացի կարգավորման, ընդգրկման սահմանների մեջ է: Առաջինները պահանջում են նեղացնել այդ սահմանները, դրանք դարձնել անթափանց, անխախտ: Իսկ երկրորդների համար այդ սահմանները կարծես գոյություն չունեն, եթե կան էլ, ապա հաստատուն և որոշակի չեն:

Շեշտադրության նորմավորման դեպքում ևս պետք է արձանագրել կատարված շեղումները և համակարգել: Դրանք

գնահատելիս և արժևորելիս, թույլատրելի և ոչ թույլատրելի, «լավ» ու «վատ» անելիս պետք է անցնել խոսքային մակարդակին, ճիշտը ու սխալը դիտարկել ավելի լայն շրջանակներում՝ չմոռանալով, որ բանավոր խոսքի նորմավորումը դեռևս լինելիության-ձևավորման գործընթացում է: Լեզվական նորմից կատարված շեղումը խոսքային մակարդակում երկու ճանապարհ ունի. եթե հաղորդակցումն իրականացվել է, հաղորդակցական այդ խոչընդոտը չի ընդգծվել, աննկատ է մնացել կամ զգալի չի եղել, ապա այն տվյալ իրավիճակում կարելի է որակել որպես խոսակցական ոճի առանձնահատկություն, իսկ լեզվական նորմի տեսակետից՝ լավագույն դեպքում՝ «թույլատրելի»: Իսկ եթե հաղորդակցումը չի կայացել, փոխըմբռնում չի եղել, նշանակում է՝ լեզվական նորմից կատարված շեղումը «սխալ է» և «անթույլատրելի»: Շեշտադրության դեպքում ևս թույլատրելի են գիտակցաբար կատարված, միտումնավոր շեղում-խախտումները, բայց, նույն հիմունքով, այդպիսիք հնարավոր են միայն լեզվի գերազանց իմացության, լեզվական նորմին կատարելապես տիրապետելու դեպքում: Այս միտքն առավել ցայտունորեն ընդգծված է ռուս լեզվաբանության աղբյուրներում՝ լեզվական նորմի պահպանումը մարդու դաստիարակության անբաժանելի մասն է. երբ նա լիարժեքորեն տիրապետում է լեզվական նորմին, այդ ժամանակ էլ զգում է լեզվական նորմից կատարված շեղման ողջ հմայքը: Շեշտադրական նորմի պահպանումը ևս դաստիարակության խնդիր է, գիտակցական միջամտություն, որի արդյունքում պահանջը մեկն է՝ հետևել խոսքին:

Շեշտադրական ենթանորմի մշակման գործընթացը, ի տարբերություն մյուսների, ակնհայտ մի առանձնահատկություն-բարդություն ունի. կա գերիշխող կանոն՝ երկու-երեք բացառություն-կանոնների կողքին, և եթե փորձում ես ներկայացնել շեշտադրական-արտասանական զուգահեռությունների պատկերը, հնչարտաբերական սխալների, խախտումների ամբողջությունը, մեխանիկական քանակային հաշվում ես կատարում, ականա հարց է առաջանում՝ արժե՞ այսքան և այդպես մտահոգվել: Սակայն երևույթի խորքային քննությունը բոլորովին այլ պատկեր է ներկայացնում. հայերենի

համակարգում չկա երկրորդ մի մանրահամակարգ, որ լեզվական-տեսական առումով այդքան կանոնարկված ու կայունությամբ կարծրացած լինի, իսկ խոսքային-գործառական առումով՝ այդքան անկայուն և անկանոն: Գրեթե բացառություն չճանաչող նորմը խոսքային մակարդակում զանազան տատանումներ է տալիս՝ պատճառաբանված ժողովրդական-խոսակցական, երբեմն բարբառային խոսքի ոչ գրականական-ոչ կանոնական շեշտադրությամբ, ժամանակի ոգուն համապատասխան «լեզվական նորաձևությամբ» բացատրվող օտարախոսությամբ, գրական խոսակցական լեզվի, բանավոր խոսքի արտասանության-առոգանության նվազ մշակվածությամբ ու անհետևողականությամբ, շեշտակրական շեղումներով, տեղաշարժերով պայմանավորված, բայց և ոճական, խոսքիմաշակության իդիոմներով արդարացված, թույլատրված, հանձնարարելի գուգահեռությունների առատությամբ:

Ժամանակակից արևելահայերենի շեշտադրության նորմը փոփոխվել է, փոփոխվում է և փոփոխության է ենթակա զանազան պատճառների ազդեցությամբ. արդյունքում շեշտադրական շեղումներն են, շեշտադրական տեղաշարժերն ու տատանումները՝ շատ հաճախ շեշտադրական գուգահեռությունների տեսքով, որոնցում տարբերակներից մեկը լեզվական նորմով սահմանվածն է, կանոնականն ու ճիշտը, գերադասելին, նախընտրելին, հանձնարարելին, իսկ մյուսը սխալ է, ոչ հանձնարարելի, ոչ թույլատրելի և այլն: Բայց և երկրորդ տարբերակը կարող է գրական խոսակցական լինել, լինել լեզվի ներքին զարգացման որոշակի միտման դրսևորում՝ կանոն դառնալու ներուժությամբ, կարողությամբ հատկանշվող: Այս գործընթացում ևս առավել ծայրահեղությունը լոկ խանգարիչ գործոն կարող է դառնալ: Իրոք, արգելվում է այն, ինչ արդեն հանդիպում է կիրարկության ժամանակ և դիտվում ու նկարագրվում է լեզվաբանի կողմից: Լեզվաշինարարական և նորմավորման աշխատանքներ կատարելիս միշտ պետք է հիշել՝ լեզվական արգելված երևույթները մի կողմից ինչ-որ չափով արտացոլում են լեզվի մեջ կատարված փոփոխությունների պատմությունը, մյուս կողմից՝ ուրվագծում են կատարվելիք փոփոխությունները, ուղղորդում են դե-

պի լեզվի կատարելագործում: Բայց և պետք է առաջնորդվել այն սկզբունքով, ըստ որի բոլոր մերժված կամ արգելված երևույթները չեն, որ լեզվի զարգացման խթանիչներ են և կանոն դառնալու ներուժությամբ են օժտված:

Բնականաբար շեղումների, փոփոխությունների, տատանումների պատճառները վերհանելիս էական են դառնում երևույթի պատմական ճանապարհի քննությունն ու երկրորդ տարբերակների առաջացման, ինչու չէ, նաև «սնուցման» աղբյուրների ուսումնասիրությունը:

Գրական արտասանության նորմերի խախտման պատճառ է դառնում նաև մշտապես, թեև ոչ միշտ նկատելի շարժումը և զարգացումը, որ տանում է դեպի լեզվի նորացում: Եվ դա է պատճառը, որ նույնիսկ մի սերնդի կյանքում այն, ինչ կանոնական է եղել, երբեմն վերածվում է «անճշտության» և դուրս մղվում գործածությունից:

Ժամանակակից արևելահայերենի շեշտադրական նորմի փոփոխության պատճառ են դառնում շեղումները, որոնց հիմնական սկզբնաղբյուր-սնուցիչներն են՝

- բարբառները
- օտար լեզուները
- լեզվական միտումները
- լեզվական ավանդույթի վերածված սովորույթը
- գեղարվեստական գրականությունը և այլն:

Հայերենի շեշտադրական նորմի հիմքում ընկած է շեշտի դիրքային կայունության սկզբունքը: Այդ սկզբունքից շեղումները, ամենայն հավանականությամբ, տոնային կամ երաժշտական շեշտի մնացուկներ են: Դրանք երևի թե վաղ հայերենի զարգացման ինչ-որ շրջանում եղել են գլխավոր որևէ կանոնի դրսևորումներ, սակայն ժամանակի ընթացքում երկրորդական են դարձել (սա վարկածային է, բայց հավանական):

Ա. Ղարիբյանը, խոսելով գրաբարի մասին, առանձնացնում է այն «աղավաղող» երկու տիպեր՝ մեկը՝ կառուցվածքային մթագնում կամ շարահյուսական աղավաղումներ, «մեղանչանք գրաբարի օրի-

նաչափ կառուցվածքի հանդեպ», մյուսը՝ ձևաբանական աղավաղումներ, այսինքն՝ սխալներ և «մեղանչանքներ գրաբարի ձևաբանական օրինաչափությունների հանդեպ», և այդ երկու տիպի աղավաղումների պատճառը համարում է երկուսը՝ **օտարամտածությունը** կամ **օտարաբանությունը**, մյուսը՝ **բարբառամտածությունը** կամ **բարբառաբանությունը**⁸⁴։ Նույնը կարող ենք ասել շեշտադրական աղավաղումների վերաբերյալ։ Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայերենի ուղղախոսության խախտումները մի քանի տիպի են՝ **գրային, բարբառային և օտարաբան**։ Կարելի է ասել, որ այս մի քանի տիպերից գրայինը հիմնականում չի դառնում շեշտադրության փոփոխության պատճառ, քանի որ մեկ այլ կանոն սահմանում է. հայերենում սովորաբար շեշտը չի դրվում (թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերում), քանի որ հստակ ձևավորված կանոն կա. այն վերջին վանկի վրա է (սակայն երբ անհրաժեշտություն է լինում նշել, ապա այդ ուժգնությունն արտահայտվում է շեշտանշանով կամ գծանշանով)։

Մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում շեշտադրական նորմի փոփոխության նախապայման կարող են դառնալ նաև ներքին ու արտաքին տարբեր գործոններ։ Այդպիսիներից են ազ-

⁸⁴ Հետաքրքիր է լեզվաբանի տրամաբանական հետևությունը. լեզուն միևնույն համակարգով չի կարող արտահայտել բոլոր ժամանակների և բոլոր շրջանների փոփոխված գիտակցությունը, ուստի օտարամտածության օգնությամբ հաղորդվում են գիտակցված իրականության այնպիսի երևույթներ, որոնք յուրացրել է ուրիշներից տվյալ հասարակությունը իր զարգացման ճանապարհին։ Լեզվի համար որոշ չափի օտարամտածությունը նույնքան անհրաժեշտ է, որքան բառական փոխառությունը։ Յուրաքանչյուր լեզու լեզվական մտածողության որոշ կայուն համակարգ ունենում է միշտ, սակայն, երբ այդ համակարգն ինքն իրեն սպառում է և անգոր է լինում արտահայտելու փոփոխված գիտակցությունը, օտարամտածության երևույթների յուրացումը դառնում է անհրաժեշտություն։ Նա գրում է. «Օտարամտածություն ասելով հասկանում ենք օտար լեզվի սխտեմով հայերեն կամ մայրենի լեզվով խոսելն ու գրելը։ Մեզ հայտնի է, որ հայ հեղինակները շատ գրքեր են թարգմանել հունարենից, ասորերենից և պարսկերենից, հետևաբար նրանք այդ լեզուները պետք է լավ իմանային... Նշանակում է՝ նրանց լեզվական մտածողությունը խիստ չափով ազդված պիտի լիներ այլ երկրների լեզուներից, որի հետևանքով էլ հայերեն գրելիս գործածել են հունաբան, պարսկաբան և ասորաբան ոճեր... Օտարամտածությունը լեզուների խաչավորման միջոցներից մեկն է, եթե դա չափից շատ չէ։ Չափից շատ լինելու դեպքում օտարամտածությունը մթազնում է լեզուն, գրկում ձկունությունից, բայց քիչ լինելու դեպքում ոչ թե վնասում, այլ օգուտ է տալիս» (Ա. Ղարիբյան, Համառոտություն հայ բարբառագիտության, Եր., 1941, էջ 32-33)։

գային տաղաչափությունն ու երգարվեստի չափակարգը, լեզվական ավանդույթը, ծագումնաբանությունը⁸⁵ և այլն:

Իհարկե, կարող են արգելվել կամ անուշադրության մատնվել օտարաշեշտ արտասանությունը, բարբառաշեշտադրումը, արտաքին ու ներքին այս կամ այն գործոնը, բայց ի՞նչ անել, եթե շեշտադրական տեղաշարժը լեզվի ներքին զարգացման թելադրանքն է: Այսօր կարծիքներ են հնչում, որ վերջընթեր վանկի վրա շեշտի տեղափոխությունը բարբառի ազդեցությամբ բացատրելը միակողմանի է: Նույն ձևով մտածելով՝ երևի թե կարելի է հավելել, որ ժամանակակից հայերենում բազմավանկ երկշեշտակիր բառերի քանակային աճն է դարձել նախապայման նախավերջնավանկային շեշտի գործածական ակտիվության համար, իսկ գործածական հաճախականությունը աստիճանաբար կայունացնում է այն՝ շեշտադրական նորմի փոփոխության մի նոր միտում ձևավորելով: Մյուս կողմից՝ փորձառական հնչյունաբանությամբ հաստատվել է այն իրողությունը, որ հայերենում յուրաքանչյուր երրորդ վանկը շեշտվելու միտում ունի: Ահա միտումների խաչաձևման այս գործընթացում շեշտադրական նորմի փոփոխություն է ուրվագծվում:

ՇԵՇՏԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայերենի շեշտադրության գործընթացը ճիշտ կազմակերպելու և մեր լեզվի էությանը համապատասխանորեն նորմավորելու հարցում շատ կարևոր է ոչ միայն ճիշտ որոշել հայերենի շեշտի բնույթն ու դիրքը, նրա կիրարկության գործում մյուս լրացուցիչների (քանա-

⁸⁵ Ա. Մեյեն այս առումով առավել ուշագրավ է համարում **այնորիկ-ը...**, **այդորիկ-ը...**, որովհետև, ըստ ընդհանուր սկզբունքի, այս շեշտադրությունից հետևում է, որ **այ-ն**, **այ-դ**, **այ-ս** բառերի մեջ պետք է տեսնել ծագումնաբանորեն տարբեր բառերի հարադրություն, և որ **այ-ն**, «անշուշտ, զգացվում էր նախադասության մեջ դեռևս որպես որոշ անկախություն ունեցող տարր», իսկ **այնորիկ** –ի՝ հայերեն ամենահին ծեռագրերից մի քանիսում քննելիս երևում է, որ դա ոչնչով բացառություն չի կազմում բառավերջի վրա դրվող հայկական հին շեշտադրության հիմնական սկզբունքից, որը բացարձակ է թվում (առավել մանրամասնորեն տես՝ Ա. Մեյեն, նշվ. աշխ., էջ 467):

կական և երաժշտական շեշտերի) դերը, շեշտային տեսակների փոխհարաբերությունների և ելևէջավորման բազմազան երանգավորումների հարցերը, բառերի շեշտագրվման և հակառակը՝ անշեշտների շեշտավորման պատճառա-հետևանքային անցումները, այլև մինչաշխարհաբարյան հայերենի և այս առումով գրական լեզվից տարբերվող բարբառների շեշտի և շեշտադրության առանձնահատկությունների վերհանումը:

Շեշտադրության օրինաչափ զարգացումը նույնպես ենթադրում է համակարգի միօրինակություն և համաչափություն: Անգամ ամեն մի լեզու օտար փոխառությունները հարմարեցնում է իր համակարգին, միօրինականացնում է իր շեշտադրական կանոնակարգին՝ համաձայն, իսկ սեփականացված ձևերն այդպիսի միօրինականացմանը է՛լ ավելի ուժեղ են ենթարկվում: Միայն այն ժամանակ, երբ լեզուն դրսից առնված ձևերը չի կարողանում հարմարեցնել իր համակարգին, նա իր մեջ ընդունում է հակահամակարգային նոր օրինաչափություններ: Մյուս կողմից՝ սովորույթի ուժով հասարակական գիտակցությունն ուղղվում է դեպի լեզվական այն օրինաչափությունները, որոնք առավել չափով են ենթարկվում նվազագույն ճիգի և տնտեսման օրենքներին, շահավետ են, միակերպ, պարզ և հեշտ ուսանելի: Բնականաբար հասկանալի է, որ խոսքը ժողովրդական լեզվի մասին է, և որ գրական լեզվում շեշտադրական որոշ բացառություններ մասնակի բարբառահամակարգերի մասնակի վկայություններ են, շեշտադրական շատ տատանումներ ու շեղումներ, շեշտադրական աղավաղումներ բարբառների ազդեցությամբ՝ բարբառախոսությամբ են պայմանավորված: Ճիշտ է՝ «բարբառները մեռնում են», այնուամենայնիվ բարբառախոսների միջոցով բարբառախոսական շատ իրողություններ թափանցում են գրական լեզվի մեջ: Այն, որ հայերենի համընդհանրական կանոնից շեղումների մի խումբ պայմանավորված է ոչ թե այլ լեզուների ազդեցությամբ, այլ բարբառային շեշտադրությամբ, բազմիցս նշված է լեզվագիտական տարբեր աղբյուրներում: Օրինակ՝ «Ի միջի այլոց ասենք, որ մի շարք դեպքերում, երբ փոխառյալ բառը նախադանկ շեշտադրությամբ է արտասանվում, ոչ թե ռուսերենի ազդեցության հետևանք է,

ինչպես ոմանք կարծում են, այլ բարբառի, օրինակ, «Մի՛տինգը վերջացել է»⁸⁶: Կամ՝ «...Բարբառային շեշտը և բարբառային ինտոնացիաները, որոնք լայնորեն օգտագործվում են կենդանի խոսակցական լեզվում, որոշ արտացոլում են գտել և արդի գրական հայերենի շեշտադրության մեջ: Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ վերջադիր շեշտ չեն կրում կոչական բառերը, որոնցում շեշտը բացի վերջին վանկից կարող է ընկնել նաև մյուս վանկերի վրա: Գրական լեզվին հատուկ շեշտադրության կողքին շատ տարածված է հարցական մի շարք նախադասություններում ծայրի բարձրացումը օժանդակ բայի վրա: Մեծ տարածում ստացած ոչ վերջադիր շեշտադրությունը, անշուշտ, բարբառային շեշտադրության արտացոլումն է խոսակցական լեզվում, այն օրինակելի չէ, բայց կենդանի է ու սովորական»⁸⁷: Այստեղից պետք է հետևեցնել՝ շեշտադրության նորմավորման գործընթացում էական պետք է համարել գրական լեզվի և բարբառի ազդեցությամբ խոսակցական լեզվի այս տարբերությունը և՛ վերջադիր շեշտադրությունը մի շարք դեպքերում խոսքին հաղորդում է պաշտոնականություն, խստության ու կտրուկության երանգ, իսկ ոչ վերջադիր շեշտադրությունը խոսքը դարձնում է կենդանի, անմիջական, սովորական, և ոչ վերջադիր շեշտադրությամբ հատկանշվող արևելային բարբառների կենդանի շունչն ու անմիջականության երանգը երբեմն-երբեմն ազդում են գրական լեզվի վրա և շեշտադրական տատանումների, տեղաշարժերի պատճառ դառնում:

Բարբառային շեշտադրության ազդեցությունը գրական լեզվում 2 ձևով է արտահայտվում. առաջին՝ **բառերը հարաշեշտ կամ վերջնահարաշեշտ են դառնում**, և երկրորդ՝ բարբառախոսության ազդեցությամբ գրական **հայերենի բառային շեշտը, հատկապես վերջին ժամանակներս, ավելի ուժեղ է արտահայտվում, շեշտակիր միավորն ավելի ուժգին է հնչում**. գրական հայերենի բառային շեշտի ուժեղացման հիմնական պատճառը պետք է համարել հատկապես

⁸⁶ Հայոց լեզվի գարգացումը սովետական շրջանում, Եր., 1973, էջ 480:

⁸⁷ Վ. Առաքելյան Վ, Ա. Խաչատրյան, Ս. Էդյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 123-124:

մայր բարբառի ավելի ուժեղ շեշտադրության ազդեցությունը: Այս հարցում չի կարելի անտեսել և ռուսերենի դերը:

Ինչպես հին հայերենում, այնպես էլ արդի հայերենի բարբառների մեծ մասում շեշտը դրվում է բառի այն վերջնավանկի վրա, որն ունի լի, այսինքն՝ **ը**-ից տարբեր ծայնավոր: Նյութի քննության առումով առանձնացրել ենք այն բարբառները, որոնք գրական հայերենից (նաև գրաբարից և արևմտյան բարբառներից) տարբերվող շեշտադրություն ունեն. այդպիսիք են արևելյան ճյուղի բարբառները: Այն հարցին, թե ինչպես է եղել, որ արևելյան «գրականական» լեզվի մեջ չի մտել և պահվել ժողովրդական շեշտադրությունը, ինչպես մտել է ժողովրդական քերականությունը, Մ. Աբեղյանն այսպիսի բացատրություն է տալիս. գլխավոր պատճառն այն է, որ **արևելյան գրականական լեզուն գրի է առնվել և մանավանդ կարդացվել է գրաբարի ու արևմտյան բարբառների ազդեցության տակ**: Գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիմքի վրա, որտեղ բառերը մեծ մասամբ հարաշեշտ են, այսինքն՝ շեշտը ընկնում է վերջընթեր վանկի վրա: Ուստի և գրական արևելահայերենի շեշտադրական շեղումները, այս կամ այն միտումը ամենից առաջ պիտի բացատրվեին և պետք է բացատրվեն առավելապես այս բարբառի ազդեցությամբ: Ահա թե ինչու առավել կարևոր է վերջինիս շեշտադրական կանոնաշարքի (նորմի) ուսումնասիրությունը: Երևի թե հենց այս նկատառումով, նաև Արարատյան բարբառի ժողովրդական շեշտադրության գրեթե չուսումնասիրված լինելու պատճառով էլ Մ. Աբեղյանն իր աշխատություններուց մեկում «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը (Արևելյան ճյուղի բարբառների մեջ)» վերնագրի տակ առավել հետևողականորեն է քննել գրական արևելահայերենի հիմք-բարբառի շեշտադրական առանձնահատկությունները՝ չթաքցնելով իր դիրքորոշումը, միաժամանակ շոշափելի դարձնելով այն հարցը, թե, վերջիվերջո, մեր լեզվի ոգուն բարբառային հարաշեշտությո՞ւնն է հարազատ, թե՞ գրաբարյան վերջնավանկային շեշտադրությունը: Խոսելով ժողովրդական լեզվի՝ անուշադրության թողնված շեշտադրության մասին՝ նա գրում է. «...Մենք կամենում ենք մի քանի խոսք ասել մեր ժողովրդական

լեզվի մի կողմի վրա, որ մինչև այժմ գրեթե անուշադիր է թողնված: Այդ անուշադիր մնացած կողմը մեր արևելյան ճյուղի ժողովրդական լեզվի **քերականական շեշտն է**: Սակայն այդպիսի տրամաբանական շեշտադրությամբ միայն գրաբարը, (արդի ընթերցանությամբ, որովհետև հների ճիշտ առոգանությունը չգիտենք), մեր գրականական լեզուն (մեծ մասամբ միայն կարդալու ժամանակ և ոչ խոսելու) և արևմտյան ճյուղի բարբառներն են վարվում, իսկ արևելյան ճյուղի բարբառները, բացի տրամաբանական շեշտադրությունից ունին և առանձին քերականական շեշտադրություն, որ ամեն մի բառի հատուկ է ի բնե, և որի շեշտերը միշտ վերջին վանկի վրա չեն դրվում, այլ շատ անգամ և վերջինից առաջ եղած վանկերի վրա: Եվ մեր կարծիքով, քերականական տարբերությունից հետո, հայոց լեզվի արևելյան և արևմտյան ճյուղերի միջև եղած այս շեշտադրության առոգանության տարբերությունն է»⁸⁸:

Հետաքրքիր են Մ. Աբեղյանի դիտողությունները. **ա.** այո՛, դժվար է բարբառի իսկական արտասանություն ու արտաբերություն պահանջելը, մանավանդ որ բարբառային շատ հնչյուններ գրականական լեզվի մեջ չունեն ընդունված նշանագրեր. այս դեպքում կարևորվում է շեշտը, որ «հնչյուններին հավասար նշանակություն ունի արտաբերության մեջ». **բ.** ինչո՞ւ չենք կարող շեշտադրել յուրաքանչյուր բառը. **գ.** բայց և ինչո՞ւ շեշտադրել, եթե այն «կանոնավոր» դրություն ունի. «...Գեթ շեշտը, որ տեղական հնչյուններին հավասար նշանակություն ունի արտաբերության մեջ, խոմ շատ հեշտությամբ կարելի էր նշանակել ամեն բառի վրա. նույնիսկ ամեն մի բառի վրա նշանակելն էլ ավելորդ է, որովհետև, ինչպես կտեսնենք, մեր ժողովրդական լեզվի շեշտը՝ թեպետև ոչ գրականական լեզվի պես միշտ վերջին վանկի վրա՝ ունի յուր որոշ կանոնավոր դրությունը բառերի վրա, մի անգամ իմանալուց հետո կմնա միայն բացառություն կազմող բառերի շեշտն իմանալ»⁸⁹: Ըստ լեզվաբանի՝ արևելյան բարբառներից առանձին քերականական շեշտադրություն ունեն Արարատյան բարբառն իր բոլոր երկրորդական

⁸⁸ Մ. Աբեղյան, հ. Ը, Եր., 1985, էջ 273- 279:

⁸⁹ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 276:

բարբառներով, Արցախի (Ղարաբաղի) և Սյունյաց, Ագուլեցոց (գուկերի), Գուգարաց և Թիֆլիսի բարբառները: Ըստ որում Ղարաբաղի, Ագուլեցոց, Գուգարաց, Թիֆլիսի բարբառներում շեշտերն ավելի զորավոր են ու սուր, քան Արարատյանում. վերջինում համեմատաբար ավելի փափուկ են ու թեթև:

Արևելյան ճյուղի գրեթե բոլոր բարբառների բառերը քերականորեն շեշտվում են ընդհանուր և պարզ կանոններով, որով և ժողովրդական լեզվի բառերը կանոնավոր կերպով հարաշեշտ են, նախահարաշեշտ և վերջնաշեշտ են, ընդ որում բառերի շեշտադրության ընդհանուր կանոններից դուրս շեշտվելու բացառությունները ևս պարզ ու կանոնավոր են: Արևելյան բարբառները մի ընդհանուր կանոն էլ ունեն. հարաշեշտ բառերում սղվում են վերջընթեր վանկի ձայնավորները: Ձայնավորների սղումը կախված է շեշտի դիրքից. սղվում են շեշտված վանկից **առաջ** կամ հետո **եղող** ձայնավորները: Շեշտից հետո եղած ձայնավորների սղումը այնքան էլ հատուկ չէ արևելյան բարբառներին. միայն ներգոյական հոլովի և ներկա դերբայի **ում** վերջավորության **ու** ձայնավորը, եթե շեշտից հետո է, դառնում է **ը** (**ասըմ են, ասըմ ես ...**):

Այսօր աշխուժացել են այն խոսակցությունները, որ գրական հայերենը պետք է ամրանա Արարատյան (և մյուս բարբառների) վրա, հետևաբար քերականության, «վայելչության» հետ միասին շեշտադրությամբ էլ պիտի հարազատ մնա ժողովրդական լեզվին: Սակայն 21-րդ դարասկզբին ընդունված պնդումից տարբերվող կարծիքներ էլ են սկսել հնչել և հնչում են, որով և երբեք ու դառնում երկդարյա լեզվական ավանդույթը՝ «նոր հայերենը Արարատյան բարբառի հիմքի վրա է ձևավորվել»: Այնուամենայնիվ, գրական արևելահայերենի շեշտադրական շեղումները, այս կամ այն միտումը ամենից առաջ բացատրվում են և թերևս բացատրվելու են առավելապես Արարատյան բարբառի ազդեցությամբ: Ահա թե ինչու առավել կարևոր է վերջինիս շեշտադրական նորմի նկարագրությունը, որն այնպես համակարգված և գիտականորեն ներկայացրել

է Մ. Աբեղյանը: Ըստ նրա՝ Արարատյան բարբառը շեշտվում է հետևյալ կանոններով⁹⁰:

1. Շեշտը սովորաբար դրվում է վերջընթեր վանկի վրա, և բառերի մեծ մասը հարաշեշտ է: Սույն պարզ կանոնը պահվում է բառի թե՛ ուղղական, թե՛ փոփոխված ձևերում, թե՛ անունների և թե՛ բայերի, առհասարակ խոսքի մյուս մասերի համար:

2. Անունների վերջից ավելացած **ն (ը)** որոշյալ և **ս, դ, ն (ը)** դիմորոշ հոդերը, որոնք իրենցից առաջ պահանջում են սուղ **ը** (օրինակ՝ **գիրըս, գիրըդ...**) շեշտադրության նկատմամբ վանկ չեն կազմում. այսպիսի հոդեր ունեցող բառերի շեշտը դրվում է վերջընթեր վանկից առաջ եղած վանկի վրա, որով և բառերը դառնում են **նախահարաշեշտ**, ինչպես հներն են անվանում, օր.՝ **ա՛կանջ-ա՛կանջը** (իսկ ձևափոխման ժամանակ հարաշեշտային են՝ **ա՛կանջ- ա՛կանջի...**): Այս շեշտադրությունը նրանից է առաջանում, որ այդ հոդերի **ը** ձայնավորը շատ սուղ է, այնպես որ երբ ետևից մի ձայնավորով սկսվող բառ է գալիս, բոլորովին կորչում է:

3. **Ը** ձայնավորը, սուղ և խուլ լինելով, շեշտ չի վերցնում, ուստի, եթե վերջընթեր վանկի ձայնավորը **ը** է, շեշտը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա՝ **կըն՛ի՛կ, աղջը-կա՛...երկընքի՛, վըրա՛, նըրա՛, փախցընե՛լ...**

4. Հոգնակի թվում, երբ ավելանում են **ներ, նե՛, նի** հոգնակերտները, շեշտը միշտ վերջին վանկի վրա է լինում՝ **թագավո՛ր, թագավորնե՛ր, թագավորնի՛...**

5. **Այ** երկբարբառով վերջացող բառերի թեք ձևերը և **ի**-ով վերջացող հոգնակի ուղղական հոլովը շեշտ են կրում սովորաբար վերջում. **փե՛սայ, բայց՝ փեսի՛, փեսի՛ց:**

6. **-ություն**-ով (կամ **-ութուն**) վերջավորվող բառերի շեշտը կանոնավոր է, այսինքն՝ **նախավերջին** վանկի վրա է (**լավություն, լավությունի**): Զուկերենում գրաբարի նման նրանք սեռականում **-թյան** են ունենում, և շեշտը միշտ վեր-

⁹⁰ Տե՛ս՝ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 283-287:

ջին վանկի վրա է լինում (թագավորություն, թագավորություն):

7. Մ. Աբեղյանը խոսում է նաև փոխառյալ բառերի շեշտադրության մասին. ժողովրդական լեզվում շատ են թյուրքերենից փոխառված բառերը, որոնց մեծ մասը ընդհանուր կանոնով է շեշտվում, իսկ մի մասը պահում է փոխատու լեզվի վերջնականային շեշտադրությունը. հոլովվելու ժամանակ, սակայն, դարձյալ ընդհանուր կանոնով են շեշտվում:

8. «Եթե մի բառ իրեն առաջից ունի մի գորավոր շեշտով բառ, այսինքն այնպիսի բառ, որի քերականական շեշտի հետ միացած է և տրամաբանական գորացուցիչ շեշտ, այդ բառը նախընթաց բառի գորավոր շեշտի ազդեցության տակ թուլացնում է յուր շեշտը, իսկ Արարատյան բարբառի մեջ գրեթե բոլորովին կորցնում է, այնպես որ բառի շեշտված և անշեշտ վանկերը միատեսակ բութ են արտասանվում. օրինակ՝ **ո՛ւզում եմ – չե՛մ ո՛ւզո՛ւմ, կա՛ցավ – վե՛ր կա՛ցա՛վ, բա՛հի տվե՛ք – լա՛վ բա՛հի՛ տվե՛ք**»⁹¹:

9. Հարցական նշանը կամ պարույկը «գրականական» լեզվի մեջ դրվում է այն վանկի վրա, որը շեշտվում է, ըստ որում, եթե նախադասության մեջ կա հարցական բառ՝ մակբայ կամ դերանուն, նշանն անխտիր այդ հարցական բառի վրա են դնում, չնայելով որ հարցմունքն իսկապես որ բառին որ պատկանում է, այն բառի վրա պետք է դնել:

10. Հայոց լեզվի առանձնահատկություններից մեկն այն է, որ խոսքի մեջ առանձին բառերի իմաստի վրա ուշադրությունը կենտրոնացնելու համար բառի մի վանկի ծայնավորը երկար է արտասանվում, որի վրա դրվում է «երկար» նշանը: Եթե «գրականական» լեզվի մեջ, ինչպես շեշտը, այնպես էլ երկարը դրվում է վերջին վանկի վրա, ապա ժողովրդական լեզվում քերականական շեշտը ո՛ր վանկի վրա է, տրամաբանական երկարը ևս նույն վանկի վրա է դրվում:

⁹¹ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 285:

«Այս երկարը շատ անգամ նույնանում է զարմացական կամ բացականչական արտաբերության հետ»:

11. Բայերի հրամայականի շեշտն ավելի վերջին վանկի վրա է դրված, ինչպես գրական լեզվում, սակայն դարձյալ պատահում են ոչ վերջին վանկի վրա դրված շեշտեր (**փախի, կո՛րի...**):

12. Կոչական բառերի շեշտը սովորաբար առաջին վանկի վրա է դրվում, թեպետև, մտքին նայելով, միջին կամ վերջին վանկի վրա ևս կարող է դրվել: Այդպիսի օրինակներ շատ կան հեքիաթների մեջ. նույնիսկ գրական լեզվի մեջ արդեն սկսել են կոչական բառերի շեշտը ժողովրդականի ձևով առաջին վանկի վրա դնել...

13. Շատ անգամ նախադասության մեջ «մի բառի մտքին առանձին ուժ տալու համար» բառն առանձին կերպով շեշտվում է և մեծ մասամբ նախադասության սկզբում է դրվում. այսպիսի շեշտը կոչվում է «**տրամաբանական զորացուցիչ շեշտ**»:

Բնականաբար ենթադրելի է, որ այս բարբառի շեշտադրությունը ևս անխառն ու մաքուր չէր, ուներ շեղումներ՝ թեկուզ և հենց գրական լեզվի ազդեցության հետևանքով (այսպիսիք նշում է Ալ. Մարգարյանը Գորիսի բարբառի քննության ժամանակ): Մ. Աբեղյանը զուգաձևության մեկ-երկու դեպք է առանձնացնում: Այսպես՝ «Այս **ը**-ն երկու նուրբ բաղաձայնի մեջ երբեմն այնքան սղվում է, որ կորչում է, ուստի և վանկ չի կազմում. այսպիսի դեպքերում շեշտը դարձյալ դրվում է վերջընթեր վանկի վրա. օրինակ՝ **մա՛ծուն, մա՛ծ-նի**: Սակայն պետք է նկատել, որ միևնույն բառի մեջ անգամ, նայելով բարբառի և խոսող մարդու մասնավոր արտաբերությանը, այդ սուղ **ը**-ն երբեմն կորչում է, երբեմն և մտնում է կորած ձայնավորի տեղը միայն շատ սուղ կերպով և կես վանկից ավելի կարճ վանկ է կազմում, ուստի և շեշտը երբեմն դրվում է վերջընթեր վանկի վրա. օրինակ՝ **երկիր** բառի սեռականը **երկրի**- կան արտասանողներ **երկըրի**, որի մեջ **ը**-ն շատ սուղ է, կան արտասանողներ **երկրի**, որի մեջ **ի**-ի տեղ դրված **ը**-ն բոլորովին կորչում է: Այսպես և անխտիր

արտասանում են՝ կոտրել և կոտըրել, բերնի և բերնի՝ մածնի և մածնի՝ քե՛զնից և քեզնի՛ց (քեզա՛նից)»⁹²: Ջուգաձևություններ են առաջանում **-ներ** հոգնակերտն ավելացնելիս. ըստ բարբառում գործող կանոնի՝ այս դեպքում շեշտը դրվում է վերջին վանկի վրա, բայց երբ վերջընթեր վանկի վրա է (**թագավորներ, քաղաքներ**), խորթ ու անսովոր գործածություն է: Նույնպիսի ճուգաձևություններ են՝ **ա՛ջքերս և աջքընե՛րս, ո՛տներս և ոտընե՛րս**:

Մ. Աբեղյանի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ արդի հայերենյան շեշտադրությունը պարտադրված է, բայց երբ նա խոսում է այն մասին, որ մեր գրական լեզուն նոր է, բայց այդ նորությունը միայն քերականության մեջ է և ոչ բառերի, երբ խոսում է գրության և արտասանության միօրինակության մասին, «բարբառային բազմատեսակությունները լռեցնելու» մասին, հակասությունն ակնհայտ է. «Այս բազմատեսակությունը չառաջացնելու համար միակ ելքն այն է, որ աշխարհաբարի մեջ ընդունվի գրաբարի ուղղագրությունը, որ թեպետ շատ բառերում համապատասխան չէ կենդանի արտասանությանը - և չէր էլ կարող լինել, քանի որ գրությունը մեկ է, իսկ կենդանի արտասանությունը բազմատեսակ - բայց յուր պատկառելի հնությանբ և մեր հին ու նոր գրականության մեջ սրբագործված լինելովը հեշտությամբ կարող է լռեցնել բարբառային բազմատեսակությունները, և հավասար կերպով ընդունելի է թե՛ մեզ համար, թե՛ թուրքահայերի համար և թե՛ առհասարակ ամենայն տեղի հայերի համար»⁹³: Այս դեպքում, եթե կենդանի արտասանությանը չհամապատասխանող, բայց «պատկառելիորեն հին» և սրբագործված գրաբարյան ուղղագրությունը հեշտությամբ կարող է լռեցնել բարբառային բազմատեսակությունները և ընդունելի դառնալ «ամենայն տեղի հայերի համար», մի՞թե նույն գրաբարը կորցրել է իր պատկառելի հնությունը», «սրբագործված» լինելը, եթե ժամանակակից հայերենին է ավանդել իր միօրինականացված շեշտադրությունը, և մի՞թե գրեթե բացառություն չճանաչող շեշտադրական օրենքների օրենքը ժառանգած հայերենը չի կարող «լռեցնել»

⁹² Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 284:

⁹³ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 321:

բարբառախոսությամբ (այն էլ մասնակիորեն) պայմանավորված շեշտադրական տարատեսակությունները: Մյուս կողմից, եթե բառերը նոր չեն, այդ է՝ ընդհանուր և ինչպե՛ս նորացավ շեշտադրությունը, է՛րբ ժողովրդական լեզուն «սեղմվեց» ու դարձավ բարբառաճյուղ:

Հր. Աճառյանի կարծիքով Նոր Նախիջևանի բարբառում շեշտն առաջին վանկում իմաստը զորացնելու համար է. **կա՛րմիր, դեղի՛ն – շա՛տ կարմիր, շա՛տ դեղին**: Իսկ **խո՛նարիաբար, մեծա՛պես, սա՛ստկապես, խրո՛խտորեն** և այլ բառեր մասնիկներից առաջ շեշտ են առնում «հետևությամբ ֆրանսերենի»⁹⁴:

Խոսելով Հ. Աճառյանի՝ բարբառների բաղաձայնական և ձայնավորական համակարգերի ուսումնասիրությունների մասին՝ Ա. Մելենգրում է. «Ինչպես շատ լավ ցույց է տվել հեղինակը, բարբառի ձայնավորների համակարգը, ինչպես Ագուլիսինը, որոշվում է շեշտի դիրքով, որը, որպես ընդհանուր կանոն, ընկնում է ոչ թե բառի վերջին վանկի վրա, ինչպես հին հայերենում և արդի արևմտահայերենում, այլ նախավերջին վանկի վրա: Շեշտադրման այս նորագույնացումը, որ պր. Աճառյանը մեծ հավանականությամբ վերագրում է կովկասյան մի ինչ-որ լեզվով խոսող ժողովուրդների ազդեցության, շատ հին է, որովհետև այն նախորդում է շեշտի ազդեցության տակ բառամիջի ձայնավորների անկումներին. այսպես՝ **ա՛րտա՛սուք** հին ձևը բարբառների մեծ մասում դարձել է **ա՛րցո՛ւնք**, որը միջնադարում կիլիկյան հայերենի ձևն է արդեն և պահպանվել է վերջնավանկի վրա շեշտ, իսկ առաջին վանկի վրա երկրորդական շեշտ ունեցող բարբառներում ընդհակառակն. Ղարաբաղի բարբառում նույն բառը **ըռտա՛սունք** է, հին **բա՛ժանե՛լ**-ը, որ արևմուտքում ներկայացված է **բա՛ժնե՛լ** ձևով, Ղարաբաղում **բըժե՛նե՛լ** է, հին **մա՛տա՛նոց**-ը, որ արևմուտքում ներկայացված է **մա՛դնո՛ց**-ով, Ղարաբաղում **մննա՛նոց** է. արևմուտքում **սո՛րվիլ**-ով ներկայացված հին **սո՛վորիլ**-ը **սըվե՛րլ** է. այստեղ շեշտի հետևանքները եղել են նույնը, ինչ մյուս բարբառներում, սակայն առաջացել են այլ դիրքերում:

⁹⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 2005, էջ 329:

Այստեղ միանգամայն լավ է երևում լեզվի տարբեր բարբառների զարգացման թե՛ անկախությունը և թե՛ գուգահեռությունը»⁹⁵:

Ը-ի շեշտառությունը սահմանափակ է. շեշտվում է միայն այն դեպքում, երբ բառի միակ ծայնավորն է (և այդ բառը ծայնարկությունն է)՝ **ինչպես՝ թըխկ, շըխկ, չըխկ, հը**: Սակայն որոշ բարբառներում, օրինակ Լոռիի, այն կարող է շեշտվել: Ըստ Ա. Ղարիբյանի՝ հայերեն լեզվի անշեշտ «ը» ծայնավորը Շամախու բարբառում հաճախ է շեշտվում. ուրիշ ծայնավորներ վերածվում են «ը» ծայնավորի անշեշտ դիրքում, իսկ Շամախու բարբառում դրանք շեշտի տակ են, որի հետևանքով **ը** ծայնավորը շեշտվում է (**Օրինակ՝ մըտք – միտք, սըրտ – սիրտ** և այլն): «Ը»-ն շեշտվում է նաև Ուրմիայի բարբառում»⁹⁶:

Ըստ Մ. Մուրադյանի՝ Շատախի բարբառում որոշ եղանակային ձևերի ժխտական խոնարհման ժամանակ, ինչպես և արգելական հրամայականում շեշտն ընկնում է ոչ թե ժխտական մասնիկի վրա, այլ բայի առաջին վանկի վրա: Օրինակ՝ **չըմ ո՛ւտի, չըս ո՛ւտի, չըմ կէ՛նի, մը զա՛նի** և այլն: Նա առանձնացնում է նաև բարբառային այս օրինաչափությունից կատարվող մի քանի շեղումներ. 1. Եթե ժխտվող բայը միավանկ է, շեշտն ընկնում է ժխտական մասնիկի վրա, օրինակ՝ **մի՛ տու, մի՛ տա...** 2. Եթե ժխտվող բայը միավանկ է, բայց իրենից առաջ ունի **ի** նախդիր, շեշտն ընկնում է վերջինիս վրա, ինչպես օրինակ՝ **չըմ ի՛ կյա, չըս ի՛ տա**⁹⁷:

Շեշտը գրական հայերենի օրինաչափությունից տարբեր է նաև Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրու, Թբիլիսիի, Գորիսի բարբառներում: Խոսելով Գորիսի բարբառի մասին՝ Ալ. Մարգարյանը ոչ միայն նշում է բարբառի շեշտադրական նորմի կանոնները, այլ նաև՝ նրանցից կատարվող շեղումների մասին, շեշտադրական տարբերակների մասին, որոնք առավելապես գրական լեզվի ազդեցությամբ են պայմանավորված: Գորիսի բարբառում ևս շեշտը հիմնականում ընկնում է վերջընթեր վանկի վրա (ինչպես օրինակ՝ **աղվես**,

⁹⁵ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 438:

⁹⁶ Տե՛ս՝ Ա. Ղարիբյան, Համառոտագրություն հայ բարբառագիտության, Եր., 1941, էջ 63-64:

⁹⁷ Տե՛ս՝ Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Եր., 1962, էջ 64-65:

պա՛րակ - բարակ, գըրմա՛նալ - գարմանալ, հըրսա՛նիք - հարսանիք, ցա՛մաք - ցամաք, մա՛րաք - մարագ և այլն): Այնուամենայնիվ, այդ հիմնական կանոնից կան շեղումներ. վերջըներ վանկի փոխարեն շեշտը ոչ սակավ դեպքերում ընկնում է կա՛մ վերջին, կա՛մ նախա-վերջըներ վանկի վրա: Ըստ նրա՝ շեշտը վերջին վանկի վրա է ընկնում՝

ա) «Ը» գաղտնավանկով սկսվող երկվանկ բառերում, ինչպես՝ կըլօխ -գլուխ, մըկրա՛տ – մկրատ և այլն: Այն բառերում, որոնց գաղտնավանկ կազմող ը-ն փոխարինվել է լի ձայնավորով, շեշտը կարող է ընկնել և վերջըներ վանկի վրա, ինչպես օրինակ՝ պըլիթ - պիլիթ-բլիթ, չվա՛ն // չու՛ան և այլն):

բ) Պատճառական բայերում՝ ինչպես՝ ըպրըցընե՛լ - ապրոցուցա-նե՛լ - ապրեցնե՛լ, քընըցընե՛լ - քնեցուցանե՛լ - քնեցնե՛լ...

գ) Իրենց հոգնակին նե՛ // նի - ով կազմող բառերի ուղիղ ձևերում, ինչպես՝ ա՛սեղ - (ասեղն)- ըսըղնե՛ (նի), ճա՛կատ (ճակատ)- ճըկըտ-նե՛(նի), քա՛ղաք (քղղաք) - քըղքընե՛(նի) և այլն:

դ) Որոշ հատկապես կցական բարդություններում, ինչպես՝ առը-տո՛ր / առը՛տոր (առևտուր), մըծահա՛տ (մեծահատ), ըստե՛ղ (այս-տեղ) և այլն: Կան նաև բարդություններ, որոնց բաղադրիչներն առանձին-առանձին շեշտ են ստանում, օրինակ՝ ծո՛ւնըխառը՛ն – ձյունախառն և այլն:

ե) Գրական փոխառյալ, ինչպես նաև կրոնական բնույթի մի խումբ բառերում (ինչպես՝ պամբասա՛նք (նաև՝ պըմբա՛սանք) - բամբասանք, կախտակա՛ն - գաղթական, բաղարա՛ք (նաև՝ բըղա՛րաք), կըթօղըկո՛ն - կաթողիկոս և այլն:

զ) Շեշտը նախավերջըներ վանկի վրա է ընկնում «ն» վերջնա-հանգով բոլոր այն բազմավանկ բառերում, որոնք վերջում ը են ստացել, ինչպես՝ ա՛մեճնը - ամառ, ա՛նդամըն (անդամ), կա՛նթեղնը - կանթեղ, մա՛մուռն – մամուռ և այլն⁹⁸:

Ա. Մեյեն նշում է Թիֆլիսի բարբառի շեշտադրական մի յուրա-հատկության մասին, որ սովորեցնում է Տոմսոնն իր պատմական քերականության մեջ. այն է՝ հրամայականում շեշտն ընկնում է

⁹⁸ Տե՛ս՝ Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 25-27):

բառի ոչ թե վերջին, այլ առաջին վանկի վրա. «այսպես՝ **կարդա**-ն, ըստ նրա, շեշտ ընդունում է **կար**-ի և ոչ թե **դա**-ի վրա, **տեսւէք**-ը՝ **տե**-ի, և ոչ թե **սէք**-ի վրա: Եթե այս դիտողությունն ստույգ է, այն կարևոր է, որովհետև թույլ է տալիս բացատրելու, թե գրաբարում ինչո՞ւ **կարդացի** կատարյալի **ց**-ն, որ պահպանվում է **կարդաց** եզակի երրորդ դեմքում, անհետանում է **կարդա՛** հրամայականում, նույնպես կբացատրվեր, թե ինչո՞ւ **հատուցի**-ն (եզակի երրորդ դեմքում՝ **հատոյց**) հրամայականում դառնում է **հատո՛**, և ինչո՞ւ **արարի**-ն (եզակի երրորդ դեմքում՝ **արար**) հրամայականում դառնում է **արա՛**»⁹⁹: Այս դեպքում՝ 1. հրամայականում առաջին վանկի շեշտավորումը սովորական է արդյոք Թիֆլիսում, և այդ տեսակետից հրամայականը տարբերվո՞ւմ է արդյոք բայի մյուս ձևերից. 2. Նույն շեշտադրությունը վկայվա՞ծ է արդյոք նաև այլ բարբառներում: Բնականաբար, Ա. Մեյեն ցանկանում էր ստանալ այս դիտողության հաստատումը, առաջադրված հարցերի պատասխանը: (Դժվար է ասել՝ արդյոք Մեյեն ստացել է պատասխաններ): Այս մեջբերումը ևս վկայում է, որ շեշտը շատ կարևոր է կորսված իրողությունները բացատրելու համար....

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների շեշտի առանձնահատկությունները բավարար չափով ուսումնասիրված չեն, և վերջիններիս հնչյունական հատկանիշների քննության ժամանակ ծայնավորային համակարգերը բնորոշ հատկանիշներն առանձնացնելիս նյութի անբավարարության պատճառով միայն **48** և **49** կետերն է հատկացնում շեշտադրությանը՝ ուշադրություն դարձնելով այն բանին, թե դրանք ինչպես են հանդես գալիս ընտրված 120 վայրերում. «**48**. Միջին շարքի (խառն) **ը, ը՛, ա՞** ծայնավորների վերջնավանկային շեշտադրություն ոչ բնածայն բառերում. **ժանգ** (~**ժը՛նգ**), **խակ** (~**խը՛գ**), **ծակ** (~**ծը՛գ**), **պսակ** (~**բըսը՛գ**)..., **սիրտ** (~**սը՛րտ**)..., **ասելիս** (~**ասելը՛**)... **49**. Ը-ով չվերջացող բառերի նախավերջնավանկային շեշտակրություն (նախորդ ծայնավորի թուլացմամբ)՝ **անձրև** (~**անձրև**), **բերան**, ...**աղաչանք** (~**աղա՛չանք**, **ղղա՛չանք**), **ամաչել**, **աշխատանք**, **գերեզման**, **զարդանք**, **իմաստուն**, **ճանաչել**, **քառա**-

⁹⁹ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 433:

սուն»¹⁰⁰: 48-րդ հատկանիշի հետ կապված նշում է, որ միջին շարքի (խառն) ծայնավորների (հատկապես ք-ի) շեշտակությունը հիմնականում ներքին պրոցեսի հետևանք է. այդ ծայնավորները շեշտ են կրում այլ շեշտակի ծայնավորներից ծագելու դեպքում: Սրանցից պետք է տարբերել օտար (թյուրքական) ազդեցությամբ պայմանավորված դեպքերը: Հետագայի համար ուղղորդում է այս համակարգում կատարվելիք աշխատանքները. առանձնապես կարևոր պետք է համարել շեշտի հետ կապված թուլացման (ռեդուկցիայի) երևույթի տարբերությունները, պետք է ուշադրություն դարձնել նաև այն շեղումների վրա, որոնք հանդես են գալիս վերջավանկային և վերջընթեր շեշտ ունեցող բարբառներում:

Միանգամայն անվիճելի է՝ մերօրյա հայերենը առավել ևս ենթարկվում է «օտար» (այլ լեզուների) և «հարազատ» (բարբառների) տարատեսակ ազդեցություններին. շեշտադրությունը բացառություն չէ: Այնուամենայնիվ, ավանդական մի ողջ համակարգ կասկածի տակ առնելուց առաջ գուցե անհրաժեշտ է մտածել նաև լեզվական անտարբերության մասին, որը բարբառախոսությունից բացի հավելված է նաև լեզվական «մոդայով» պայմանավորված օտարախոսությամբ, նոր ժամանակներում ձևավորված երևանյան խոսվածքով, որը դարձել է մի կողմից Արարատյան բարբառի, նրան միախառնված այլ բարբառների, մյուս կողմից՝ խոսակցական լեզվի, գրական խոսակցական լեզվի և գրական լեզվի յուրօրինակ խառնուրդ, որը, կարելի է ասել, գրեթե ուսումնասիված չէ...

Պակաս կարևոր չէ **Անհատի** գործոնը. խոսելով գրական լեզվի զարգացման հարցում գրաբարի և ժողովրդական բարբառների իրավունքների մասին՝ Մ. Աբեղյանը գրում է. «Մեծամասնության կարծիքն այս է՝ ... գրականական լեզուն յուր հարստությունը՝ քերականական ճկունությունն ու վայելչությունը պիտի վերցնե առավելապես ժողովրդական լեզվից, իսկ գրաբարից պիտի օգտվի բառերի մթերքի և մասամբ դարձվածների կողմից. գրաբարը նոր գրականական լեզվին պիտի մատակարարե միայն բառեր և

¹⁰⁰ **Գ. Զահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 65:

մասնավոր ոճեր, որոնք պակասում են մեր աշխարհաբարի մեջ»¹⁰¹: Այսօր շեշտադրական շեղումների (կամ՝ «գեղծմունքների») քանակային աճը (առավելապես վերջընթերային վանկի շեշտադրմամբ) շատերը փորձում են հիմնավորել արևելյան բարբառների ազդեցությամբ, Մ. Աբեղյանի կարծիքին համապատասխան, և այսպես մտածողների թիվը գնալով ավելանում է: Մ. Աբեղյանն իր ժամանակի և արդի լեզվաբանության «հիմնաքարն» է, բայց արդյո՞ք նորագույն լեզվաբանությունը պետք է զարգանա միայն «աբեղյանական դրույթները» վերահաստատելու ճանապարհով. ժամանակի գործոնը մեծ դեր է կատարում թե՛ լեզվի, թե՛ լեզվամտածողության կամ մասնավոր ճաշակի առումով: Պետք է մոռանալ, որ Աբեղյանը խոսում է «նորածին» աշխարհաբարի կանոնարկման մասին, բարբառ(ներ)ի «կենդանի տարերքի» մասին, երևի թե իմաստային որոշակի տարբերություն է դնում «գրականական» և «գրական» լեզուների միջև (երևի նկատի է առնում «գրականացող» բարբառը, որը շատ հեռու է «գրական» լինելուց): Մեծ լեզվաբանը մեծ է նաև լեզվի շարունակական ընթացքը կռահելու, լեզվի ներքին ոգուն չդավաճանելու առումով. նա (ինչքան էլ որ հակված լինի) չի պարտադրում, կապանք չի դնում լեզվի վրա. «Այդ ուսումնասիրությունը եթե կարևոր չէ մեր գրականական լեզվի համար – թեպետ գրականական լեզվի համար էլ հենց կարևոր է, եթե ուզում ենք, որ գրականական լեզուն կենդանի ժողովրդական լեզվից բխած լինի և յուր արտաբերությամբ ևս, ինչպես յուր քերականությամբ, հեռու չմնա ժողովրդական լեզվից - այդ ուսումնասիրությունը կարևոր է գեթ բարբառներով գրողների և կարդացողների համար»¹⁰²: Գուցե տեղին է հնչեցնել Ա. Այտընյանի պարզագույն մի հարցը՝ «Եթե մենք զմեզ հին ժամանակներու չենք կրնար փոխադրել, ինչպե՞ս կուզենք որ հին ժամանակներուն խոսվածքը մեր ժամանակները բերենք»...

¹⁰¹ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 273:

¹⁰² Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 275-276:

ՕՏԱՐ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Շեշտադրության նորմավորման գործընթացը լեզվաշինության առանցքային հարցերից մեկն է, իսկ «լեզվաշինական ճիշտ քաղաքականությունը շատ կարևոր նախապայման է լեզվի մաքրության ու հստակության, նրա համակարգի ազգային կերպարանքի պահպանման, սրանով պայմանավորված լեզվի ուսուցումը հեշտացնելու համար»¹⁰³: Օտար բառերի շեշտադրության հարցը հազարամյակների պատմություն ունի, բայց նաև «հազարամյակների բարդություն» ունի: Հարցի կանոնարկման գործընթացի լեզվաշինական աշխատանքները տարբերվում են բարբառային ազդեցությունների կարգավորման հարցից. ինչպես ասում են՝ բարբառը մերն է: Վերջիվերջո այստեղ կանոնարկման դժվարությունը ոչ թե վերջնական կային կամ վերջընթերային կայուն շեշտադրության ընտրությանը, այլ «խաղացող», «թափառող» շեշտերի կարգավորմանն է նպատակաուղղված: Հարցի լուծումը զգուշություն ու հետևողականություն է պահանջում, որովհետև այն հայերենի համակարգի ազգային կերպարանքի պահպանմանն է առնչվում: Օտար բառերի շեշտադրության կանոնարկման հարցում այսօրվա նորմի ետևում մեր լեզվի շեշտադրական նորմով սահմանված այս կանոնի զարգացման պատմական ընթացքը պետք է տեսնել, աչքի առջև ունենալ կանոնների ողջ համախումբը՝ բազմակիորեն դիտարկված և համակարգված: Իհարկե, այս դեպքում ևս լեզվաքննություն կատարելիս ապավինում ենք անցյալի հեղինակություններին՝ մեջբերումներ կատարելով, փորձում ենք գտնել մի շարք օրինակներ՝ այս կամ այն տեսակետը հաստատելու համար, այս կամ այն շեղումը օրինաչափության վերածելու համար, բայց լեզուն մի կարևոր առանձնահատկություն էլ ունի. **լեզուն ցանկացած տեսություն հիմնավորելու համար մի քանի օրինակ միշտ էլ կարող է տալ**: Սյս դեպքում կարևորվում է օրինաչափության ըմբռնումը, միտումը տեսնելու լեզվազգացողությունը:

¹⁰³ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 13:

Հնագույն ժամանակներից մինչ օրս գործում է օտար ազդեցությունների կամ փոխառությունների գործոնը, թեպետև այն մեր լեզվի տարբեր փուլերում, նրա բարբառային տարբեր երակներում, անգամ բառապաշարի տարբեր շերտերում միանգամայն տարբեր է: Սա պատմական օրինաչափություն է հայերենի (նաև բոլոր լեզուների) համար: Լեզվական փոխազդեցություններն անխուսափելի են, և այդ ճանապարհով առաջացած փոփոխություններն էլ լեզվի բնականոն զարգացման դրսևորումներից են: Ինչպես միշտ, զգուշավոր և գիտակցված վերաբերմունք պետք է դրսևորել ուղղախոսական այս ենթահամակարգը հակահամակարգային շեղումներով և բացառություններով չլցնելու, չծանրաբեռնելու առումներով, շեշտադրության ոլորտում նորանոր դժվարություններ չստեղծելու միտումով: Ինչպես բոլոր լեզուներում, այնպես էլ հայերենում փոխառություններն իրենց հետ բերում են այդ բառերի գրության և արտասանության օտարաբանություններ՝ անկախ այն բանից՝ դրանք գրավոր են, թե բանավոր, գրադարձված են, թե տառադարձված: Փոխառու և փոխատու լեզուների ուղղագրական և ուղղախոսական հակադրությունների հետևանքով ստեղծվում են բառերի գրության, արտասանության, այս թվում նաև շեշտադրման զուգահեռ ձևեր, որոնց միօրինականացումը պահանջում է արտաքին միջամտություն, այլ կերպ ասած՝ որոշակի կանոնների սահմանում: Հարցի հետ կապված դժվարությունները բազմաբնույթ են: Ազդող և ազդվող լեզուների արտասանության մեջ դրսևորվող շեշտադրական տարբերություններից բացի գործում են նաև նույն լեզուների պատմականորեն առաջացած տարբերությունները, ընդհանուր լեզվի և բարբառների կամ խոսվածքների միջև եղած հակասությունները և այլն: Դժվարություններից մեկն էլ կապված է փոխառյալ տերմինների հետ. գրքային և մասնագիտական եզրույթները, որոնք հաճախ հայերենին են փոխանցվում օտար շեշտադրությամբ, որոնք ժողովրդի լեզվում լայն տարածում չունեն, քիչ են ենթարկվում հայերենի շեշտադրությանը: Դրանք գործածողները նախապես օտար հնչմամբ և շեշտադրմամբ տարբերակներն են սովորում, իսկ հետագայում հայկական հնչմամբ ու շեշտադրմամբ համարժեքները

թվում են խորթ, ոչ գիտական, աղավաղված: Օտար հնչյունների, բառերի օտար շեշտադրության ու առոգանության փոխառությունները բառափոխառությունների հզոր և երկարատև ազդեցության հետևանքն են, այսինքն՝ շեշտափոխառությունը հաջորդում է բառափոխառությանը:

Հայերենում գործող ընդհանրական կանոն կա՝ փոխառյալ բառերը ենթարկել հայերենի շեշտադրությանը: «Երբ մի բառ մի լեզվից անցնում է մի ուրիշի, որի շեշտադրության օրենքները տարբեր են, փոխառյալ բառը հարմարվում է վերջինիս օրենքներին»¹⁰⁴, - գրում է Հր. Աճառյանը: Ըստ Յու. Ավետիսյանի՝ օտար կամ փոխառյալ բառերի շեշտադրության գործող կանոնը, անշուշտ, գործում է հին և հնագույն փոխառություններում, որոնք այսօր մեծ մասամբ չեն գիտակցվում որպես փոխառություններ: Մինչդեռ փոխառությունների և օտար անունների «մի մեծ խմբի համար, ըստ մեր ձայնագրական և լսողական փորձի, կանոնը գրեթե չի գործում. թեքված ձևերում այդ բառերը հակված են պահպանելու բնագրային՝ փոխատու լեզվի շեշտադրությունը: Հարցմանը մասնակցած և գրական լեզվին բավարար չափով տիրապետող և՛ ավագ, և՛ երիտասարդ սերնդի մեծագույն մասը մոտ տասը մեկի կամ երկուսի հարաբերությամբ պահպանում է բնագրային շեշտադրությունը: Կենդանի խոսքում հայերենի արտասանական նշված կանոնը ըստ էության չի գործում: Հատուկ ջանք պետք է գործադրել հետևյալ բառերը պահանջվող շեշտադրությամբ արտասանելու համար՝ **Ֆրանսիայի՝, Իտալիայի՛վ, ռադիոյի՛, Լերմոնտով՛ի, Պուշկինի՛ց, Պուտինի՛ն, Ղոստոևսկո՛ւ և այլն:** Դժվար է հայերենի շեշտադրության կանոնով արտասանել այդ բառաձևերը խոսքաշարում, մանավանդ, երբ դրանք հաջորդում են միմյանց, ինչպես՝ «Լերմոնտովի՛, Պուշկինի՛, Ղոստոևսկո՛ւ ստեղծագործությունները ռուսական ոգու գեղարվեստական խտացումներն են»¹⁰⁵: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ ուշադրություն սևեռելու, հարցի կարևորությունն ընդգծելու նպատակով է շեշտվում հեղինակ-խմբագիր հակակարծությունը՝

¹⁰⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 327:

¹⁰⁵ Յու. Ավետիսյան, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011, էջ 27:

«Գրքի խմբագիրը՝ Լ. Հովհաննիսյանը, հակված է պաշտպանելու գործող արտասահմանական կանոնը»:

Օտար լեզվաիրողությունների դեմ պայքարելը յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափություններից բխող կանոն է: Սակայն նույն լեզուներում գործող ընդհանուր օրինաչափություն կա. այն դեպքում, երբ որևէ լեզու իր մեջ ընդունում է դրսից առնված ձևեր, սակայն չի կարողանում դրանք հարմարեցնել իր համակարգին, ապա սահմանում է նույն համակարգից տարբերվող նոր կանոններ, նոր օրինաչափություններ՝ փորձելով բացառությունների տեսքով կանոն դարձնել արտալեզվական և ներլեզվական նոր, բայց և անհրաժեշտ իրողությունները, համակարգայինը վերահամակարգայնացնել հակահամակարգային օրինաչափություններով: Բնականաբար հասկանալի է, որ, ասենք, գրաբարից ժառանգված այս կամ այն շեշտադրական «անհարազատ» օրինաչափությունը գրաբարինը չէ, այլ կամ այլ լեզվի ազդեցության հետևանքն է, կամ գրաբարին զուգահեռ գոյություն ունեցող ժողովրդախոսակցական լեզվինն է, նրա ընդերքում ձևավորվող և ձևավորված բարբառինն է:

Օտար բառերի շեշտադրության հարցը հայոց լեզվի պատմական զարգացման բոլոր շրջաններում էլ տեղիք է տվել վիճաբանությունների և իրարամերժ կարծիքների: Լեզվաբանական աշխարհն այս հարցի լուծման առումով տարակարծիք է:

1. Հարազատ մնալ հայերենյան շեշտադրությանը

«Հայերենի փոխառյալ բառերում նույնպես, որպես կանոն, շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, որը բխում է արտասահմանական (շեշտադրության) ազգային-բնախոսական առանձնահատկություններից: Այս տեսակետից շեշտը նույնքան պահպանողական է, որքան մայրենի լեզվի հնչյունական համակարգը և քերականությունը»¹⁰⁶, եզրակացնում է Ա. Սուքիասյանը: Եվ ոչ մի խոսք օտար անձնանունների ուղիղ ձևերի շեշտադրման մասին: Բնականաբար հասկանալի է, որ, որպես բուհական դասագիրք, այն պետք է ներառեր նաև Տերմինաբանական կոմիտեի համապատասխան որոշումները. այս դեպքում այդ կետը չներառելով է դրսևորվել հեղինակի

¹⁰⁶ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 29:

մոտեցումը, և «կարծրացրել» է կանոնն այն հիշեցումով, որ **հայերենի փոխառյալ բառերում շեշտն ընկնում է վերջին վանկի ծայնավորի վրա:**

Հակված ենք կարծելու, որ ուղիղ ձևերում օտար շեշտի պահպանումը անընդունելի է համարում նաև Գ. Ջահուկյանը, քանի որ թեք ձևերի շեշտադրությանը ուշադրություն դարձնելուց հետո ուղիղ ձևերին ընդհանրապես չի անդրադառնում. ինչ-որ տեղ չանդրադառնալը ևս չընդունելու նշան է: Նա գրում է. «Օտարաբան է կոչվում այն արտասանությունը, որի դեպքում հայերենի արտասանական նորմաները խախտվում են ուրիշ լեզուների ազդեցության տակ: Օտարաբան հնչումը հաճախակի տեղի ունի փոխառյալ բառերում, որոնց դեպքում կարող են պահպանվել փոխատու աղբյուրի արտասանական առանձնահատկությունները: Այդպիսիք են շեշտահաջորդ վանկերի ծայնավորների՝ հայերենի համար անսովոր ուժեղ թուլացումը (**դիրեկտոր**, փխկ. **դիրեկտոր**, **տրակտոր**, փխկ. **տրակտոր** և այլն), օտարազգի բառերի թեք հոլովներում փոխատու լեզվի շեշտի պահպանումը (**օպերայից**, փխկ. **օպերայից**, **Պոլշկինի**, փխկ. **Պոլշկինի**՝ և այլն) և այլն»¹⁰⁷:

2. Օտար շեշտադրությունը պահպանել միայն անձնանունների միայն ուղիղ ձևերում

Այս ընդհանուր կանոնի ենթականոն պետք է համարել այն, որ թույլատրվում է այդպիսի շեշտի օգտագործումը բացառիկ դեպքերում, երբ խոսքը վերաբերում է շատ տարածված բառերին կամ հատուկ անուններին: Պ. Բեդիրյանը գրում է. «Ա՛ննա - Աննայի՛... 20-րդ դարի կեսերին որոշակի նկատելի դարձավ, որ եվրոպական ծագումով բավական թիվ կազմող անուններ հայերենի համար ոչ սովորական շեշտադրությամբ են արտասանվում. վերնագրում նշվածից բացի՝ **Սուսա՛ննա**, **Մարի՛ա**, **Լի՛դա**, **Կուդմի՛լա**, **Արկա՛դի**, **Ա՛նգլիա**, **Իտա՛լիա**: Այս շեշտադրության դեմ «պայքարը» բանի տեղ չանցավ: Սակայն այստեղ լեզվական պրակտիկան մի կարևոր ճշտում մտցրեց, որ ուզում են հատկապես ընդգծել. օտար շեշտադրությունն ընդունելի է համարվում հիշված և նման անունների

¹⁰⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 116:

միայն ուղիղ ձևերում, իսկ փոփոխված ձևերով (այսինքն՝ հոլովված) օգտագործելիս հայերենին բնորոշ շեշտադրությունն է պահպում։ **Սուսա՛ննա-Սուսաննայի՛, Մարի՛ա - Մարիայի՛ն, Ա՛նգլիա-Անգլիայի՛, Իտա՛լիա-Իտալիայի՛ց** և այլն»¹⁰⁸։

Օտար հատուկ անունների՝ ուղիղ ձևերում բնագրի շեշտադրությունը պահպանելու, իսկ թեքված ձևերում չպահպանելու՝ հայերենի ընդհանուր կանոնին ենթարկվելու լեզվաիրողությունն է շեշտված «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» գրքում. նրանում, սակայն, անուղղակիորեն այն վերնայելու անհրաժեշտության պահանջ ու միտվածություն կա. լրացում-«ծանոթություններում» ասված է. «Ծան. 1. Վերջին շրջանում նկատվում է արտասանական տեղաշարժ. այդ բառերի թեք ձևերում նույնպես պահպանվում է բնագրի շեշտադրությունը՝ **Եսե՛նինի, Ֆրա՛նսիայից, Ղոստո՛նսկու**։ Դրանք կարելի է համարել արտասանական զուգաձևեր՝ նախապատվությունը տալով հայերենի արտասանական կանոնով տարբերակներին։ Ծան. 2. Թեև տերմինաբանական կոմիտեի որոշումը վերապահում է անում միայն օտար հատուկ անունների համար, սակայն այս կանոնի շրջանակներն ընդլայնվում են՝ տարածվելով նաև օտարամուտ (փոխառյալ) հասարակ անունների վրա՝ **Օ՛պերա, Ֆի՛զիկա, բրաու՛զեր, օ՛պտիկա, կոմե՛դիա, մաթեմա՛տիկա** ևն»¹⁰⁹։

3. Անկախ ձևակազմությունից և բառակազմությունից՝ պահպանել օտար լեզվի շեշտադրությունը

Այս անդամն դեպքում, չգիտես ինչու, լեզվաբաններից մի քանիսը պահանջում էին և պահանջում են բոլոր դեպքերում պահպանել օտար շեշտադրությունը, իսկ մյուսներն առաջարկում էին և առաջարկում են ձևակազմության մեջ հետևել օտար կանոնին, իսկ բառակազմության մեջ՝ ոչ։ Գ. Ղափանցյանը, օրինակ, պահանջում էր, որ փոխառյալ բառերի ոչ միայն ուղիղ, այլև թեք ձևերում պահպանել օտար շեշտադրությունը, այսպես՝ **պրոֆե՛սոր, պրոֆե՛սորի** և

¹⁰⁸ **Պ. Բեդիրյան**, Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Եր., 2007, էջ 16-17։

¹⁰⁹ **Յու. Ավետիսյան** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 50։

այլն, միայն բառակազմության մեջ դրանք «հայորեն» շեշտադրել, ինչպես՝ **լենինյան** և այլն:

4. Թույլատրելի համարել տարբերակային ձևերը՝ մի եզրում՝ հայերենյան շեշտադրությամբ, մյուս եզրում՝ օտար

Տարբերակայնության կամ շեշտադրական գուգահեռությունների այսօրինակ օրինականացումը ուրվագծում է այսպիսի զարգացում. սովորաբար լեզվի բնականոն ընթացքին զուգընթաց ստեղծվում են փոխառյալ բառերի հայերեն համարժեքները՝ հայերենի շեշտադրությամբ, իսկ փոխառյալ բառերն իրենց օտար շեշտադրությամբ կվերածվեն օտարաբանությունների: Այսօր արդեն զուր աշխատանք է խոսել **պարտիա, դիսկուսիա, դիսերտացիա, ռևյուցիա, դիրեկտոր, ֆիլոլոգ, անալիզ** բառերի շեշտադրության մասին, քանի որ սրանք ունեն իրենց հայերեն համարժեքները՝ **հայերենյան շեշտադրությամբ՝ կուսակցություն, բանավեճ, ատենախոսություն, հեղափոխություն, տնօրեն, բանասեր, վերլուծություն**: Մյուս կողմից՝ շատ օգտագործվող, լայն տարածում ստացած և ժողովրդի սեփականություն դարձած փոխառյալ բառերը հայերենացվում են նաև վերջադիր շեշտադրությամբ (**տրակտոր, ավտոբուս, տրոլեյբուս, տերմին (գիտաբառ), պրոֆեսոր, կոմպոզիտոր (երգահան), շախմատ, ռեկտոր, դեկան** և այլն: Սա նաև փոխառյալ հատուկ անունների մեծ մասի ճակատագիրն է: Այս դեպքում գուցե կանոն դարձնել **Թ. Ղարազյուլյանի** տեսակետը. «Օտարազգի նորամուտ բառերի ուղիղ ձևերի, նամանավանդ հատուկ անունների համար, սկզբնապես կարելի է թույլատրելի համարել երկու տարբերակով արտասանություն՝ հայերենի շեշտադրությամբ և օտար շեշտադրությամբ: Ոչ վերջադիր շեշտադրությունը տարածվող և համաժողովրդական ընդգրկում ստացող բառերի համար մեծ մասամբ ժամանակավոր բնույթ է կրում, մինչև կայունանում է հայերենի շեշտը»¹¹⁰: **Թ. Ղարազյուլյանը**, խոսելով օտարազգի անձնանունների արտասանական տարբերակների մասին, ուշադրության արժանի դիտողություն է անում՝ փորձելով հիմնավորել տարբերակների գոյության հարցը. նա գրում է. «Որոշ օտարազգի անձնանուններ,

¹¹⁰ **Թ. Ղարազյուլյան**, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջ 224:

մուտք գործելով հայ իրականության մեջ, տարածվում են, ենթարկվելով հայերենի արտասանական օրինաչափություններին և՛ շեշտադրությամբ, և՛ հնչմամբ: Այսպես, օրինակ, **Համլետ** անունը, որ ինչպես անգլերենում, այնպես էլ ռուսերենում, արտասանվում է նախադիր շեշտով՝ **Համլետ**, որպես հայի անձնանուն գործածվելիս ունի վերջադիր շեշտադրություն: ... Բայց ահա, երբ խոսքը վերաբերում է Շեքսպիրի «Համլետ» ողբերգության հայերեն թարգմանության ընթերցմանը, բեմադրությանը կամ ֆիլմի կրկնօրինակմանը, բնականաբար առաջ է գալիս նաև բնագրի անձնանուններին, ըստ արտասանության, որոշ չափով հարազատ մնալու հարցը: Եվ այդ է պատճառը, որ ասմունքողը կամ դերասանը արտասանում է **Համլետ** և ոչ թե **Համլետ**, **Լաերտ** և ոչ թե **Լաերտ**: Նույն ձևով **Թելման**, **Նելսոն**, **Վիկտոր** անձնանունները որպես հայի անուններ արտասանվում են վերջադիր շեշտով... Բայց երբ խոսքը վերաբերում է օտարազգիների, ապա նույն անունները վերստանում են օտար շեշտադրությունը, ինչպես՝ **Էմեստ**, **Թելման**, **Վիկտոր**, **Կորչնոյ**, **Նելսոն**, **Ռոկֆելլեր** և այլն: Նույն պատճառաբանությամբ **Հենրիկ** անձնանունը շեշտվում է հայերենի շեշտադրությամբ, օրինակ՝ **Հենրիկ Հակոբյան**, **Հենրիկ Հարությունյան** և՛ օտար՝ օրինակ՝ **Հենրիկ Իբսեն**, **Հենրիկ Սենկևիչ** և այլն»¹¹¹:

Մեր կարծիքով ևս ժամանակն է այս կանոն-բացառությունն ազատել կաշկանդիչ շղթաներից. փոխառում ենք բառը և անմիջապես պարտադրում՝ ըստ որոշման՝ ուղիղ ձևում այսպես պետք է արտասանել, թեք ձևում՝ այնպես: Գուցե ճիշտ կլինի կանոնական համարել շեշտադրական զուգահեռությունը. չէ՞ որ միակերպ կանոնով ամրապնդում ենք օտարի շեշտը մեր լեզվում և հետո զարմանում, որ այն իր ետևից «բառեր է տանում»: Մյուս կողմից անժխտելի փաստ է՝ սա միայն հայերենյան իրողություն չէ. ոչ միայն ռուսերենում, այլև շատ լեզուներում փոխառյալ բառերի շեշտադրությունը կայունացած չէ և համընդհանուր բնույթ չի կրում: Ավելին, կարելի է ասել, որ շատ լեզուների համեմատությամբ հայերենում քիչ թվով

¹¹¹ Թ. Ղարազուլյան, նշվ., աշխ., էջ 242-243:

բառեր են առանձնացվում (թե՛ փոխառյալ, թե՛ բնիկ), որ չունեն հաստատուն շեշտադրություն:

5. Չտառադարձվածներում պահպանել օտար շեշտադրությունը, տառադարձվածներում՝ ոչ

Այս տեսակետը ինչ-որ չափով առաջինի օրգանական շարունակությունն է, միայն այն տարբերությամբ, որ առաջին դեպքում պետք է սպասել, մինչև ստեղծվի հայերեն համարժեքը, կամ փոխառյալ բառը հայերենացվի մասնակիորեն՝ շեշտադրությամբ, երկրորդ դեպքում՝ սպասել տառադարձվելուն և հնչադարձվելուն: Ա. Այտընյանի կարծիքով՝ չհայացած օտար անունների, այսինքն չտառադարձված (որ առանց տառադարձության են գրվում) օտար անուններում թույլատրել բնական ազգային շեշտի պահպանումը, բայց սխալ համարել «հայաձև անվանց վրա օտար շեշտը», քանի որ «դրանք հայերեն կանոնով բթյալ են կամ հայերեն շեշտյալ»։ Նա գրում է. «Օտար անուններն, որ չեն հայացած (այսինքն՝ որ առանց տառադարձության կգրվին), իրենց բնական ազգային շեշտը կը պահեն, ինչպես՝ **Փա՛րմա, Պերլի՛ն, Միլա՛ն, Մանչեսթեր, Վյուրթեմպերկ, Մոնթելեո՛նե** և այլն: Բայց սխալ կհամարվի հայաձև անվանց վրա օտար շեշտ, ինչպես՝ **Ա՛նգլիա, Հռո՛մայու երկիր** (փխկ. **Անգղիա՛, Հռոմա՛յ երկիր**): Վասնզի այսպիսիները հայերեն կանոնով բթյալ են կամ հայերեն շեշտյալ՝ **Բրաբիո՛ն, Եպիսկոպո՛ս, սավա՛ն, ոստրե՛** և այլն»¹¹²: Գուցե սա հարցի ճիշտ լուծում է, բայց մեր ժամանակներում այն դժվար իրագործելի է, որովհետև տառադարձման (կամ գրադարձման, նաև հնչադարձման) համակարգը ևս կարիք ունի նորացման, բարեփոխման:

6. Կա վերացական և ընդհանրացված մի տեսակետ ևս. գրավոր խոսքում գծանշել (շեշտադրել) դրանք

Շեշտադրել բոլոր այն դեպքերում, երբ հանընդհանրական կանոնը չի գործում. և՛ բացառությունները, և՛ կանոնական շեղումները: Բայց և այնպես հստակեցված չէ՝ ո՞ր կետին համաձայն շեշտադրել՝ «հայորե՞ն», «օտարորե՞ն», թե՞ «խառը»...

¹¹² Ա. Այտընյան, նշվ., աշխ., էջ 362:

Մեր ժամանակներում այս հարցն առավել ևս սրացել է: Եթե անցյալ դարում փոխատու լեզուն հիմնականում ռուսերենն էր, և շեշտադրական դժվարությունները կապվում էին միայն նրա անկայուն-շարժական շեշտի հետ, ապա այսօր մեր լեզուն կրում է շատ լեզուների ազդեցությունը (անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի, գերմաներենի, չինարենի, հնդկերենի և այլն), որոնցից միայն մեկերկուսի շեշտադրությունն է նման հայերենին (օրինակ ֆրանսերենին): Արդյունքում շեշտադրական այս կանոնը նորից ուշադրության կենտրոնում է, վերանայելու անհրաժեշտություն կա՝ վերահաստատելու կամ փոփոխելու նկատառումներով: Կարծում ենք՝ լեզվի բառապաշարի արագընթաց զարգացումը պահանջում է **բոլոր հնարավոր միջոցների գործադրմամբ պահպանել հայերենի համար սովորական շեշտադրությամբ արտասանությունը:**

Անհրաժեշտաբար ուզում ենք ամբողջությամբ մեջբերել «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում» ներառված նյութը: Հայերենի ուղղագրությանը, ուղղախոսությանը և կետադրությանը վերաբերող որոշումներն իրենց պարզաբանող մեկնաբանություններով ամփոփված են երրորդ գլխում: Այստեղ ասված է. «Երբ 1960-ական թթ. քննվում էր «Ռուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտադրության մասին» որոշման նախագիծը, լեզվաբանական գրականությունից ու բառարաններից կարելի է օրինակներ քաղել՝ հիմնավորելու, որ հայերենում ոչ միայն անձերի օտար հատուկ անունները, այլև շատ հասարակ անուններ պահում են հայերենին խորթ իրենց մայրենի շեշտադրությունը: Այսպես օրինակ՝ Կ. Սեփենսկու «Երաժշտական տերմինների համառոտ բառարանի» (1955թ.) հայերեն թարգմանության մեջ, ինչպես ռուսերենում, պահպանված է երաժշտական տերմինների օտար շեշտադրությունը: Այստեղ հայերենի վերջնավանկների կայուն շեշտի փոխարեն կարող ենք տեսնել շեշտված ցանկացած վանկ, ինչպես՝ **ա՛րիա, բու՛բեն, օ՛պերա, բիլի՛նա, ժալե՛կա, կապե՛լլա, օկտա՛վա, կոնսերվատորիա, չոնգու՛րի, նույնիսկ կրկնաշեշտ մե՛ծավո՛չե, մե՛ծոսոպա՛նո և այլն:** Օտար շեշտադրությունը համարելով հայերենի հնչերանգին խորթ, նրա խոսքի առոգանության ու ռիթմի ազգային բնույ-

թը խաթարող երևույթ՝ տերմինաբանական կոմիտեն իր որոշումը սահմանափակել է հատուկ անձնանունների վերաբերյալ՝ այն էլ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևում, այսպես՝ **Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Չիկոբա՛վա, բայց՝ Լերմոնտովի՛, Մայակովսկու՛, Չիկոբավայի՛**»¹¹³։ Իսկ «Ռուսական և հատուկ անձնանունների շեշտադրության մասին» որոշումը սա է (Նախագիծը կազմել է Ա. Ղարիբյանը։ Հաստատվել է տերմ. կոմիտեի 1957թ. դեկտեմբերի նիստում)։ «Ռուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտը հայերենում նույնությամբ պահպանել միայն ուղղական ձևում. օրինակ՝ **Պոլկին, Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Չիկոբա՛վա, Ծերեթեյի** և այլն։ Մյուս բոլոր դեպքերում առաջնորդվել գրական հայերենի շեշտադրության կանոններով. օրինակ՝ **պուլկինյան, Պուլկինի՛, Լերմոնտովի՛, Մայակովսկու՛** և այլն»¹¹⁴։

Միանգամայն պարզ է. որ խոսքը միայն անձնանունների մասին է, պարզ է նաև, որ մնացած բոլոր դեպքերում պետք է առաջնորդվել գրական հայերենի շեշտադրության համընդհանրական կանոնով, և սա հարազատ է մե՛զ ու մե՛ր լեզվի համար։ Այնուամենայնիվ, մի քանի տողանոց որոշման մեջ շատ թեական կետեր կան։ Նախ՝ ինչո՞ւ են առանձնացվել միայն օտար անձնանունները, ինչո՞ւ չեն նշվում հատուկ տեղանուններ կամ հատուկ այլ անվանումներ այն դեպքում, երբ որոշումն արտացոլող լեզվաբանական տարբերադրություններում թվարկվում են նաև ոչ քիչ թվով աշխարհագրական հատկանուններ (**Անգլիա, Անտարկտիդա, Իտալիա** և այլն)։ Կամ՝ «այն էլ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևում» արտահայտությունը (այն էլ **այն էլ-ի** հավելադրմամբ) չի՞ նշանակում նաև հնարավոր չհամարել։ Փորձել ենք **ուղիղ ձև** (պարզաբանող մեկնաբանության մեջ) և **ուղղական ձև** (որոշման մեջ) բառակապակցությունների միջև նրբիմաստային տարբերություններ չփնտրել, չմտածել նաև, որ ուղիղ և թեք ձևերի հակադրությունը որոշ չափով արհեստածին է, բայց և

¹¹³ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 185։

¹¹⁴ Նույն տեղում, էջ 195։

տարակուսելի է, որ որոշման մեկնաբանության մեջ անձերի օտար հատուկ անունների կողքին հայերենին խորթ իրենց մայրենի շեշտադրությունը պահող հասարակ անունների մասին ևս խոսվում է, սակայն, որոշման մեջ արտացոլված չէ հասարակ անունների օտարաշեշտությունը այն դեպքում, երբ մասնագիտական գրականության մեջ շեշտադրական նորմը ներկայացնելիս այդպիսի շատ բառեր են օրինակ դառնում: Կարելի՞ է մտածել, որ որոշումը թերի է, կիսատ է, գուցե «պարտադրված» է: Մյուս կողմից հարց է առաջանում՝ հիմնավորվա՞ծ է մի շարք օտար՝ թեկուզև տարածված անձնանունների պատճառով որոշում կայացնելը, ու եթե կայացնել՝ ինչո՞ւ ստվերում թողնել մնացածները: Արդյոք նորմավորման որոշ սկզբունքներ չեն անտեսվում:

Շեշտադրության ամփոփ նկարագիրը տրված է «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» գրքում, ուր ասվում է, որ այս հարցը որոշ ժամանակ ինքնահոսի մատնվեց, այնուհետև գերապատվությունը տրվեց օտար շեշտադրությանը, մինչև որ իրականության թելադրանքով պարտադրվեց որոշ վերապահումներով հետևել հայերենի շեշտադրության կանոններին: «Օտար բառերի շեշտադրության հարցը տեղիք է տվել վիճաբանությունների և իրարամերժ կարծիքների երևան գալուն: Տերմինաբանական կոմիտեն քննության առավ այս հարցը և հիմք ընդունելով հայերենի շեշտադրական կանոնները միաձայն որոշումով մերժեց փոխառյալ բառերի նախավանկ շեշտի պահպանումը հայերենում և թույլատրելի համարեց այդպիսի շեշտի օգտագործումը բացառիկ դեպքերում, այն էլ միայն ուղիղ ձևերում, երբ խոսքը վերաբերում է շատ տարածված բառերին կամ հատուկ անուններին, ինչպես՝ Պո՛ւլկին, Լե՛րմոնտով, Թե՛քական ձևերում փոխառյալ բառերը անհրաժեշտորեն վերստանում են հայերենի վերջադիր շեշտը, ինչպես՝ Պոլշկինի՛, Լերմոնտովի՛, Թեպալովիկայի՛, օպերայի՛, ինչպես և՝ Թեպալովիկանե՛ր, օպերանե՛ր և այլն: Մի շարք բառեր, հատկապես ռուսերենից փոխառյալ իա-ով վերջավորվող, ուղիղ ձևերում սովորաբար պահպանում են ռուսերենի շեշտը. օրինակ՝ պա՛րտիա, դիսկոնիա, դիսերտա՛ցիա, ռեյուո՛ցիա, Ֆրա՛նսիա

և այլն: Ներկայումս օտար բառերի շեշտադրության համար բնորոշ է այն, որ հայերենի վերջադիր շեշտադրությունը ընդհանրացել է փոխառյալ բառերում ևս: Այս բանը կասկած չի հարուցում լայն տարածում ստացած և ժողովրդի սեփականությունը դարձած բառերում, ինչպես, օրինակ՝ **տրակտոր, կոմպրեսոր, կորպուս, դիրեկտոր, ֆակտոր, ֆիլոլոգ, անալիզ, ավտոբուս, տրոլլեյբուս, սինթեզ, պլենում, տերմին, սեկտոր, թերմոն, պրոֆեսոր, ագիտատոր, անգինա, միտինգ, ռեզոնատոր, կոմպոզիտոր, շախմատ, ռակետա, կաբել** և այլն, որոնցում բառային շեշտը դրվում է վերջին վանկի վրա...»¹¹⁵: Այնուհետև եզրակացվում է. «Պետք է ուրախությամբ նշել, որ վերջին ժամանակներս շնորհիվ մեր հեղինակավոր լեզվաբանների հսկողության, օտար բառերի շեշտադրությունը զգալիորեն կանոնավորվել է հատկապես ռադիոյի, հեռուստատեսության հաղորդումների և թատրոնի բնագավառում: Մի շարք օտար բառերի շեշտադրության հարցում դեռևս միօրինակությունը բացակայում է: Օրինակ՝ **օպերա, կուլտուրա, ռեպլիկա** և այլն շեշտվում են և՛ ռուսական, և՛ հայերեն շեշտադրությամբ: Պետք է ասել, որ այս հարցում հայերենի վիճակը բացառիկ չէ: Ուրիշ լեզուներում էլ, ինչպես նաև ռուսերենում, մի շարք փոխառյալ բառերի շեշտադրությունը կայունացած և համընդհանուր բնույթ չի կրում»¹¹⁶:

Օտար բառերի շեշտադրության մասին հայտնված իրարամերժ կարծիքներում ոչ հայերենապաստ կանոնարկումը շատ հաճախ քողարկվում է որոշակի «մեղմացուցիչ» սահմանափակումների ընդգծումով: Այսպես՝ «օտար բառերի շեշտադրությունը պահպանել միայն ուղիղ ձևերում, այն էլ զգալի սահմանափակմամբ», ըստ տերմինաբանական կոմիտեի որոշման՝ «այն էլ միայն բացառիկ դեպքերում», «ըստ անհրաժեշտության», «քանի դեռ...» և այլն: Իսկ որո՞նք են այդ սահմանափակումները, բացառիկ դեպքերը: Սրանք կարծես «լեզվական քմահաճույքի» դրսևորումներ են. երևի լեզվակիրը պետք է որոշի՝ օտար անվան գործածությունն իր համար

¹¹⁵ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր., 1973, էջ 480:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 481:

բացառի՞կ դեպք է, թե՞ ոչ, անհրաժե՞շտ է, ուղի՞ղ ձև է, թե՞ թեք, հայրեն շեշտելու համար բավարար չափով գործածվե՞լ է... Բայց ո՞վ է խոսելու ընթացքում մտածում ձևափոխության կամ շեշտադրելու, շեշտի և շեշտի տեղը գտնելու մասին. **յուրաքանչյուրը խոսում է այնպես, ինչպես լսել է ու սովորել, ինչպես սովորեցրել են**: Փորձել ենք նյութին վերաբերող լեզվաբանական տարբեր աղբյուրներում փնտրել-գտնել այսպես կոչված «բացառիկ դեպքերը», «սահմանափակման դրսևորումները»: Տերմինաբանական կոմիտեի որոշման մեջ հստակորեն ընդգծվում է՝ թույլատրելի համարել այդպիսի շեշտի օգտագործումը բացառիկ դեպքերում, այն էլ միայն ուղիղ ձևերում, **երբ խոսքը վերաբերում է շատ տարածված բառերին կամ հատուկ անուններին...** Նշանակում է՝ բացառիկ դեպք է շատ տարածված լինելը: Մյուս կողմից՝ օտարաշեշտության պահպանման բացառիկ դեպքերից մեկն էլ օտար անձնանունների՝ համաժողովրդական ընգրկում չստանալն է, չտարածվելը: Իսկ եթե ավելացնենք նաև, որ լեզվական տրամաբանության պահանջով լայն տարածում ստանալը և ժողովրդի սեփականությունն դառնալը նպաստող գործոն է վերջադիր շեշտադրության ճանապարհին, ապա լեզվական փակուղի է առաջանում:

Ըստ Թ. Ղարազյուլյանի՝ օտարազգի բառերի շեշտադրության մեջ ակնհայտ է այն փաստը, որ հայերենի վերջադիր շեշտադրությունը մեծ թվով փոխառյալ բառերում ընդհանրացել է, դարձել հաստատուն: Եվ դա կասկած չի հարուցում լայն տարածում ստացած և ժողովրդի սեփականությունը դարձած բառերում, օտարազգի հատուկ անուններում: Սակայն կանոնը հակառակ ուղղությամբ է գործում, **երբ խոսքը նեղ մասնագիտական գիտաբառերին է վերաբերում**. Ճիշտ է՝ այս սահմանափակումը հեղինակը փորձում է «հայերենացնել» մեկ ուրիշ սահմանափակմամբ՝ «երբ ստանում է լայն կիրառություն, կորցնում է իր ոչ հայկական հնչումը», բայց չէ՞ որ նեղ մասնագիտական բառերի մեծ մասը համաժողովրդական (լայնամասշտաբ) գործածությամբ չեն հատկանշվում: Նա գրում է. «Օտարազգի այն բառերը, որոնք ներմուծվելով հայերենի մեջ գործածվում են համեմատաբար նեղ միջավայրում, որպես նորաբանու-

թյուն, ուղիղ ձևերում նախապես պահպանում են օտար շեշտադրությունը: Դա հատկապես վերաբերում է գիտատեխնիկական նեղ մասնագիտական տերմիններին և հատուկ անուններին: Բայց հենց որ բառը ստանում է լայն կիրառություն, կորցնում է իր ոչ հայկական հնչումը և սկսում է ենթարկվել լեզվի օրենքներին»¹¹⁷:

Միայն ուղիղ ձևերում օտար բառերի շեշտադրության պահպանման բացառիկ դեպքերից մեկի մասին էլ է նշում Թ. Ղարազյուլյանը. «Օտարազգի և ռուսական միջավայրին վերաբերող պիեսների բեմադրության և ֆիլմերի կրկնօրինակության ժամանակ օտար կամ ռուսական անձնանունները մի շարք դեպքերում հայերենի ձևով արտասանելը կհնչեր տվյալ իրադրության համար ոչ տեղին: Այդ պատճառով ճիշտ են վարվում բեմադրողները՝ պահպանելով օտարազգի անձնանունների օտարաբան հնչումը»¹¹⁸:

Շատ դեպքերում շեշտադրական սահմանափակումը կարող է պատճառաբանված լինել տառադարձված լինել-չլինելու իրողությամբ: Հիշենք Ա. Այտընյանի տեսակետը. **քանի դեռ բառը չի տառադարձվել, հնչեցնել փոխատու լեզվի շեշտադրությամբ**, իսկ եթե տառադարձվում է, ապա՝ փոխառու լեզվի շեշտադրությամբ: Նմանօրինակ մի սահմանափակում թաքնված է նաև Տերմինաբանական կոմիտեի «ռուսերեն և օտար ծագում ունեցող բառերի տառադարձությանը վերաբերող որոշումներից» մեկում՝ 8-րդ կետում, չնայած որ շեշտակրության տեղի մասին ոչ մի խոսք չկա: Ասվածը չշեշտված վանկերի թուլացող և ը-ին մոտեցող ձայնավորների տառադարձման մասին է. «Անգլերեն բառերի չշեշտված վանկերի թուլացող և ը-ին մոտեցող ձայնավորները տառադարձել ինչպես շեշտի տակ գտնված դիրքում՝ ոչ ը-ով. օրինակ՝ **Բայրոն** և ոչ **Բայրոն**, **Բեկոն**, **Լիպման**, **միստեր**, **Օլստեր** և այլն: Ծանոթություն: Թույլատրելի համարել **Մանչեստր** բառի ավանդական ոչ **ե**-ով գրությունը»¹¹⁹: Սա նշանակում է, որ տառադարձությունը կապ ունի

¹¹⁷ Թ. Ղարազյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1975, էջ 223-224:

¹¹⁸ Թ. Ղարազյուլյան, Նշվ., աշխ., էջ 244:

¹¹⁹ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 180:

շեշտադրման հետ, եթե հիշված բառերը տառադարձվեին անշեշտ դիրքում **ը**-ի մոտեցող ձայնավորով, այսինքն՝ հայերենում՝ **ը**-ով, ուրեմն [**Մանչեստրը**]- ի նման դրանք պետք է արտասանվեին [**Բայրըն**], [**Բեկըն**], [**Լիպմըն**] [**միստըր**], [**Օլստըր**] և գրվեին առանց **ը**-ի՝ այսպիսի շեշտադրությամբ՝ Բա՛յրն, Բե՛կն, Լի՛պմն, մի՛ստր, Օլ՛ստր և այլն. բայց եթե տառադարձվել են շեշտի տակ ընկած ձայնավորով, ուրեն՝ Բայրո՛ն, Բեկո՛ն, Լիպմա՛ն, միստե՛ր, Օլստե՛ր, իսկ Մանչեստր-ն ունի երկակի շեշտադրությունը՝ Մա՛նչեստր և Մանչե՛ստր... Մնում է ավելացնել՝ եթե որոշում կա, որ օտարազգի բառերը և օտարներին տրվող անունները գրել և տառադարձել ըստ հայերենում դրանց համար ընդունված գրության և տառադարձության ընդհանուր կանոնների, ապա ինչու չհավելել՝ տառադարձել հայերենի շեշտադրությամբ:

Որոշ դեպքերում օտարաշեշտության պահպանման նպաստող գործոն կարող է դառնալ օտար բառի բառակազմական կենսունակությունը, հատկապես եթե նորակազմությունը բազմավանկ է, և եթե «օտարը» առաջնաբաղադրիչ է: Ռադիո բառը մասնագիտական գրականության մեջ ընդհանրացած և հաստատուն դարձած հայերենի վերջադիր շեշտադրությամբ փոխառյալ բառերի շարքում է նշվում (**ռադիո**՝ ի հակադրություն սկզբնապես փոխառվածի՝ **ռա՛դիո**): Ինչո՞վ բացատրել հայացված ձևից նորից բնական ազգային ձևին վերանցումը, **ռա՛դիո**→**ռադիո՛**→**ռա՛դիո** շեշտադրական տատանումը: Կարծում ենք՝ բացատրությունը մեկն է՝ **ռադիո** բառի գործածությունը համեմատաբար նվազել է, բայց նույն բառ-բաղադրիչով շատ նորակազմություններ կան (Ա. և Ք. Սուքիասյանների բառարանում դրանց թիվը հասնում է 170-ի). դրանք երկար են և հայերենում գործող մեկ այլ միտման համաձայն՝ բնականաբար երկու շեշտի կարիք ունեն, որը և, մեր կարծիքով, ընկնում է բառի առաջին վանկի վրա՝ **ռա՛դիո**, ահա թե ինչու այս բառը նորից ուշադրության կենտրոնում է և նմանության օրենքով ու սովորույթի ուժով վերականգնել է շեշտադրման երկակիությունը:

Մի շարք դեպքերում փոխառյալ բառերի ոչ վերջադիր շեշտադրությունը ոչ թե օտար լեզվի ազդեցությունն է, այլ բարբառի:

Ըստ որոշ աղբյուրների, օրինակ, **Մոսկվա** բառում բնական շեշտը վերջին վանկի վրա է, բայց չգիտես ինչու հնչում է նաև **Մոսկվա** տարբերակը:

Հ. Բարսեղյանը «Հայերենի ուղղախոսության հարցերը տերմինաբանական կոմիտեի վերջին որոշումներում» հոդվածում գրում է. «Հիսունական թվականներին ռուսերենից թարգմանված «Երաժշտական տերմինների համառոտ բառարանի» հրատարակիչներն, օրինակ, երաժշտական փոխառյալ տերմիններում օտար, ասել է թե՛ փոխատու լեզվին հարազատ մնալու ծայրահեղ ձգտումից բացի, անհրաժեշտ են համարել հայ երաժշտագետներին ու երաժշտասերներին սովորեցնել նաև այդ տերմինների ճիշտ, այսինքն օտար (դժվար է ասել, թե որ լեզվով) արտասանությունը: Այդ հրատարակիչների կարծիքով երաժշտական, և ինչո՞ւ միայն երաժշտական, տերմիններ գործածող յուրաքանչյուր հայախոս մարդ ճիշտ առողջանություն ունենալու համար պետք է իմանա, որ լեհական **կրակոպյալ** բառում հայերենի պես շեշտում ենք վերջին վանկի ձայնավորը, իսկ **պոլկա** և **մազուրկա** բառերում՝ նախավերջին վանկի ձայնավորը: Այդ հայախոսը նաև պետք է իմանա, որ **բոլերո՛**, **պոլոնեզ՛**, **պոպուրի՛**, **ունիսո՛ն**, **օպերե՛տ** բառերում նույնպես պիտի շեշտել վերջին վանկի ձայնավորը, իսկ **կապելլա**, **լի՛րա**, **ա՛րիա**, **պրեյուդիա**, **պավանա**, **չոնգուրի** բառերում՝ նախավերջին վանկի ձայնավորը, մինչդեռ **ռե՛քվիեմ**, **պրեստի՛սսիմո**, **պիանի՛սսիմո**, **գլոկենշախիլ** և այլ բառերում՝ վերջից երրորդ վանկի ձայնավորը: Բայց սա դեռ բոլորը չէ: Այդ երաժշտասեր մարդը միաժամանակ պետք է իմանա, որ **մե՛ցցո-սոպրանո**, **մե՛ցցո-ֆորտե** և այլ տերմինները ոչ միայն ունեն վերջընթեր վանկի շեշտադրություն, այլև կրկնաշեշտ են: Կարիք կա՞ արդյոք օտար տերմինների ճիշտ կամ մայրենի շեշտադրությամբ հարազատ մնալու անմեղ ձգտմամբ հայերենի պարզ ու միօրինակ շեշտադրությունը լցնել այս շեշտային շիլափլավով»¹²⁰: (Պետք է ասել, որ արդեն Կ. Մելիք-Վրթանեսյանի և Մ. Տոնոյանի համահեղինակությամբ

¹²⁰ Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 1976, էջ 74:

1989թ. լույս տեսած «Երաժշտական բացատրական բառարանում» և ոչ մի փոխառված բառ չեշտված չէ):

Այս նույն հարցը կարելի է հնչեցնել նաև այսօր՝ «Կարի՞ք կա...»: Եթե հայերենն իր հազարամյա պատմության ճանապարհին հասել է գրեթե բացառություններ չունեցող այսպիսի միօրինականացման, ապա արժե մտածել՝ օտարալեզու բառերի պատճառով քանդել այս ժառանգությունը: Եվ սա հատկապես մեր օրերում, երբ ռուսերենյան «շեշտային շիլափլավին» գումարվել են օտարաշեշտ այլ տեսակներ. հակված ենք անգլերեն բառերն էլ անգլերենին հարազատ՝ հայերենին խորթ շեշտադրությամբ հնչեցնելու, պարսկերեն բառերը՝ պարսկերենի, վրացերեն բառերը՝ վրացերենի շեշտադրությամբ, իսկ չինարենին հարազատ մնալու դեպքում արդեն պետք է մտածել նաև՝ ինչպե՞ս «երաժշտականացնել» հայերենյան շեշտը, ճապոներենի դեպքում՝ ինչպե՞ս շեշտագրկել, անշեշտ դարձնել հայերենը: Ավելին՝ հետաքրքիր է՝ փոխառելիս ինչպես զատել միայն ուժգնության հատկանիշը¹²¹:

Մեկ ուրիշ խնդիր էլ կա. ընդհանուր լեզվաբանության մեջ գործող օրինաչափություն է՝ առաջնավանկային շեշտը ամենաուժգինն է հնչում, շեշտակիր երկրորդ վանկը համեմատաբար պակաս ուժգնությամբ է շեշտվում, երրորդը՝ էլ ավելի պակաս, իսկ վերջնականակային շեշտը թույլ է հնչում. արդյո՞ք հատկապես օտար բառերն արտաբերելիս վանկերի աճման աստիճանականությանը հակադարձում ենք բառային շեշտի ուժգնության աստիճանական թուլացմամբ, արդյո՞ք օտար բառերը հնչեցնում ենք օտարների պես:

Պետք չէ անտեսել նաև պատմահամեմատական շեշտաքննության արդյունքը. ցանկացած լեզվի համար առավելություն է

¹²¹ Մեյի կատարած համեմատությունը (սուր շեշտի և ոլորակի) մեզ թույլ է տալիս համեմատություն անցկացնել արդիհայերենյան շեշտի և հարցական նշանի միջև. կետադրական կանոնը սահմանում է. հարցական նշանը դրվում է այնտեղ, որտեղ դրվում է շեշտը: Բայց երբ ընդգծում ենք, որ օտար բառերը թեքված ձևերում էլ են սկսել նման դիրք գրավել, արդյոք արտասանությունը ճիշտ է հնչում. փորձենք արտասանել՝ **Պո՞ւշկինի, Լերմո՞նտովի, Ա՞նգլիայի**, անգամ ուղիղ ձևերում էլ նման արտասանությունը դժվարանում է՝ **Պո՞ւշկին, Լերմո՞նտով, Ա՞նգլիա**. այս դեպքում այս կանոնը անկանոնության միտում է դրսևորում:

վերջընթեր շեշտ ունենալը: Ու եթե անտեսում ենք մեր լեզվի այս առավելությունը և եթե այդպես շահագրգռված ենք այս բացառությունը շեշտադրական նորմում «կարծրացնելու», ինչո՞ւ ուղղագրական կանոնով չամրապնդել այն՝ շեշտադրել գրավոր խոսքում (ոչ սուր շեշտով. ուրեմն և շեշտի տեսակ պիտի ընտրել), այսինքն՝ հայերեն շատ բնագրերի նման բնիկ բառերը չշեշտել, իսկ փոխառյալները շեշտել:

Ինչ վերաբերում է նորմավորման՝ վիճակագրական չափանիշին, հարցումների արդյունքների արժևորմանը, ապա դրանք իրատեսական են միայն ժամանակաշրջանի բնութագրմամբ, պայմանավորված են լեզվակիրների կրթական մակարդակով (որքանով է տվյալ սերունդը տիրապետում իր լեզվի կանոնակարգին), պետական հոգածության դրսևորման աստիճանով (որքանով են լեզվաշինությունն ու լեզվաքաղաքականությունը պետական վերահսկողության ենթարկվում):

Մյուս կողմից՝ ազգային ոգուն ու կերպարանքին անդավաճան մնալու, լեզվապահպանության, նաև նորմավորման սկզբունքներից մեկին (**հաշվի առնել այլ լեզուների փորձը**) հետևելու մղումներով համակված՝ պակաս հետաքրքիր չէ նաև տեղեկանալ՝ հայկական հատկանունները, հատկապես աշխարհասփյուռ հայերի անուններն այլ լեզուներում պահպանո՞ւմ են վերջնականակային շեշտը, օտար նորմատիվ քերականություններում ներառվա՞ծ են հայերենյան հնչումով ու շեշտադրությամբ: (Համենայն դեպս մեր ձեռքի տակ եղած ռուսական աղբյուրներում հանդիպել ենք շեշտադրման դժվարությունների ընդգծման, հանդուրժողականության դրսևորման (ժամանակային սահմանափակումով) իրողությունների, բայց ոչ երբեք՝ շեղում-բացառության, **որ կանոն է դարձնում օտարի շեշտադրությունը**):

Եթե հայերենի շեշտադրական նորմով սահմանված համընդհանրական կանոնը «երերա» օտար լեզուների ազդեցությամբ, ինչպես մեր Մեծերն են ասում, մեր ձեռքով, բայց ոչ մեր լեզվի բնական կանչով, կբացվի փոփոխությունների մի դուռ, որը փակել չի լինի: Նման դեպքերում, ինչպես նորից Մ. Աբեղյանն է ասում, բնական

սահման պիտի լինի փոփոխության համար. այն է՝ հայերենում շեշտը կայուն-շարժական է և վերջնականկային, իսկ մի քանի մասնակի շեղումների (փոփոխությունների) հետևանքի մասին «մեծ վախեր» պետք չէ ունենալ...

Միևնույն ժամանակ նորմավորման մեկ այլ սկզբունքի համաձայն՝ **շեշտադրման նորմավորման հարցում ևս պետք է ավանդույթից հեռանալ միայն անհրաժեշտության դեպքում և սահմանել հեշտությամբ հետևելի ընդհանուր կանոններ:**

Հետաքրքիր իրողություն է՝ ճկուն հայերենը երկու հազարամյակ շարունակ օտար բառերի շեշտադրումը չի համապատասխանեցնում իր համակարգին. իսկ տեղեկատուից տեղեկատու է փոխանցվում նույն որոշումը՝ կրկին ու կրկին արձանագրելով՝ «Տերմինաբանական կոմիտեն անհրաժեշտ չհամարեց փոխառյալ օտար բառերի համար սահմանել նոր, հայերենի շեշտադրության ընդհանուր կանոնից տարբերվող կանոններ»: Բայց և այնպես սահմանեց մի կանոն (արհեստականորեն կամ պարտադրված կանոն), որը անկանոնությունների համար լայն ճանապարհ է բացել:

Այս «փոքր» հարցում «լեզուն հոգածության կարիք ունի», գիտակցական միջամտության կարիք ունի. լեզվի ներքին զարգացումը պահանջում է լեզվական ճշտում մտցնել՝ նախագծի կազմման թիվը փոխելուց սկսելով և ավարտելով անցյալ դարի կեսերին բնորոշ պարտադրանքը թեկուզ և քսանմեկերորդդարյա ազգային պարտադրանքով փոխարինելով՝ այն ամրապնդելով ուսուցմամբ և կրթությամբ: Փոխառու հայերենին հարազատ մնալու դիրքերից ելնելով՝ կարելի է փորձել միասնական կանոնով ուժեղացնել այն՝ «պայմանավորվելով» կամ թեկուզև նորից «պարտադրանքով» համընդհանուր օրինաչափությամբ շեշտելով նաև այստեսակ փոխառությունների ուղիղ ձևերը: Այս կանոնը ամրակայել լեզվական նորմում, բայց մյուս կողմից մտածել խոսքի նորմավորման, խոսքի մշակույթի նորմավորման գործընթացների մասին, որի արդյունքում գուցե և ճշտվի շեշտադրական նորմը:

Տրամաբանությունը պահանջում է՝ որոշումը վերանայելու և շեշտադրական այս կանոնը հստակեցնելու անհրաժեշտություն կա:

Լեզվական նորմի պաշտպանիչ հատկանիշը հուշում է՝ միօրինականացման սկզբունքին հետևելով փոխառյալ օտար բառերի համար սահմանել նոր, բայց հայերենի շեշտադրության ընդհանուր կանոնից չտարբերվող կանոն. **օտարազգի հատուկ անձնանունները շեշտադրելիս բոլոր դեպքերում առաջնորդվել գրական հայերենի շեշտադրության կանոններով:**

ԵՐԿՐՈՐՈՂԱԿԱՆ ՇԵՇՏ

Հայ լեզվաբանության մեջ ուշադրություն են դարձրել նաև բառերի **երկրորդական** շեշտի վրա: Որպես կանոն՝ հայերենում բառն ունի մեկ հիմնական շեշտ, սակայն ներկայումս բավականաչափ ակնառու է դարձել այն երևույթը, որ որոշ բառեր ունեն նաև երկրորդ շեշտը: Երկրորդական է կոչվում գլխավոր կամ հիմնական շեշտ ունեցող բազմավանկ բառի այլ վանկարար հնչյունի շեշտը: Իր բնույթով այն թույլ է և ուղեկցում է գլխավոր շեշտին: Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տաղաչափությունում»՝ գրում է, որ երկրորդական շեշտերն այնքան թույլ են ու տատանողական, որ սովորաբար զգալի չեն լինում:

Ա. Մեյեն անգամ գրաբարյան փուլի համար է ենթադրել բազմավանկ բառի երկու շեշտով դրվածք, որոնցից գլխավորը դրվել է վերջին (նախագրային՝ վերջընթեր), իսկ երկրորդականը՝ առաջին վանկի վրա՝ **հա՛ւատա՛մ**. ըստ այդմ միջին վանկերի **ա**-երը սղվել են թույլ դիրքի պատճառով: Ըստ Ն. Աղբալյանի՝ այդ դրվածքը հայերենի բառն ունեցել է նաև նախագրային փուլում (հմմտ. «Երկրորդական շեշտը գործած է և նախագրական շրջանում»)՝¹²²: Այդպես է եղել աշխարհաբարում, այդպես է և ժամանակակից հայերենում:

Ըստ ուժգնության, հնչեղության (սրության) աստիճանի և գործառական կարևորության զանազանում են՝ **գլխավոր շեշտ** կամ **հիմնական շեշտ** և **երկրորդական շեշտ** կամ **թույլ շեշտ**: Այն անվանվում է նաև **հավելական** շեշտ: Ինչո՞վ բացատրել երկշեշտությունը. լեզվագիտական աղբյուրներում այս հարցը գրեթե չի շոշափվել:

¹²² Տե՛ս՝ Վ. Պետրոսյան, նշվ., աշխ., էջ 266-267:

Ակնհայտ է, որ ըստ փորձառական հնչյունաբանության տվյալների, հայերենում յուրաքանչյուր երրորդ վանկը շեշտվում է (Ռ. Թոխմախյան և այլք). ուստի և տրամաբանական է, որ զանազան պատճառներով բառավերջից սկսած յուրաքանչյուր երրորդը կարող է երկրորդական շեշտ կրել: Ռ. Թոխմախյանն այս դեպքում դրանք անվանում է հնչյունական երկրորդական շեշտեր, որոնք նպաստում են հայերենի ռիթմական-հնչերանգային տոնայնության դրսևորմանը: Սակայն գիտական չի լինի փորձառական այս դիտողությամբ միայն բացատրել երկրորդական շեշտերի գոյությունը, քանի որ դրանք շատ դեպքերում դիրքային կապվածություն չունեն: Ենթատեքստային դիտողություններից ելնելով՝ կարող ենք մի քանի պատճառներ նշել: Ամենից առաջ բառը հավելյալ շեշտ կարող է կրել ֆիզիկական-ֆիզիոլոգիական այն պարզ պատճառաբանվածությամբ, որ «մարդու շունչը չի հերիքում» միանգամից հնչեցնելու 5 և ավելի վանկերից կազմված բազմաբարդ բառերը, և «շնչատության» հետևանքով վերջիններիս հնչույթային ձևավորվածությունը կարող է ընդմիջարկվել դադարով, ընդ որում երկրորդական շեշտն անզգալի է դարձնում այդպիսի դադարը: Հավելյալ շեշտակրության պատճառ կարող է դառնալ եռանդուն խոսվածքը. այս մասին նշում է Մ. Աբեղյանը: Այսպիսի շեշտակրությունը որոշ դեպքերում բացատրվում է բարբառախոսությամբ կամ օտարախոսությամբ: Այն կապվում է նաև բառաքերականական ընդգծման, տրամաբանական շեշտի հետ՝ պայմանավորված գործառական զանազան դրսևորումներով: Բազմաբարդ բառերում հավելական շեշտերը կատարում են սովորաբար իմաստակիր բաղադրիչներն ընդգծող դեր (ընդ որում երկար բառերում շեշտվում են հատկապես արմատական մասերը): Ավելին, Մ. Աբեղյանը նշում է, որ բացի այս երկրորդական շեշտերից, մեր լեզվի մեջ կան նաև ուրիշ երկրորդական շեշտեր: Կարելի է ասել, որ «երկրորդական շեշտերի» և «ուրիշ երկրորդական շեշտերի» կամ երրորդականների վերաբերյալ ճիշտ դիտումներ և վերջնական փորձառական չափումներ, մանրակրկիտ հետազոտություններ դեռևս չկան: Նման դիտարկումներն ընդհանրապես դժվարանում են այն պատճառով, որ

Ժամանակակից հայերենի վերջնականկային շեշտը համեմատաբար թույլ է, բնականաբար էլ ավելի թույլ պիտի լինի երկրորդական շեշտը: Մյուս կողմից, Աբեղյանի խոսքերով՝ «պակասում է նաև նուրբ դիտողությունը». այս երկրորդական շեշտերն այնքան թույլ և տատանվող են, որ սովորաբար զգալի չեն. մեր շեշտադրությունը ճշտությամբ ըմբռնելու համար նուրբ դիտողություն է հարկավոր: Մ. Աբեղյանը գրում է. «Բազմավանկ բառերը, որոնք երկուսից ավելի վանկեր ունին, բացի վերջին վանկի զորեղ շեշտից, ունին նաև առաջին վանկի վրա կողմնակի թույլ շեշտ. օրինակ՝ հետևյալ բառերը եռանդուն խոսվածքի ժամանակ արտասանում ենք ոչ թե **հարսանի՛ք, դադարե՛լ, պատըռտե՛լ, կոտորըտե՛լ**, այլ՝ **հա՛րսանի՛ք, դա՛դարե՛լ, պա՛տըռտե՛լ, կո՛տորտե՛լ**: Բարբառների տարբեր շեշտադրությունների ազդեցությամբ, սակայն, այս երկրորդական շեշտերն այնքան թույլ և տատանվող են, որ սովորաբար զգալի չեն լինում, մանավանդ որ մեր գրական լեզվի շեշտերի ընդհանրապես թույլ լինելու պատճառով՝ մեր շեշտադրությունը ճշտությամբ ըմբռնելու համար նուրբ դիտողություն է հարկավոր... Չնայած արևելյան բարբառների այս ուրույն շեշտադրությանը՝ արևելյան գրական լեզվի մեջ, ուրեմն և ոտանավորի մեջ, ընդունված է մեր հին լեզվի (գրաբարի) շեշտադրությունը, որ և հատուկ է արևմտյան բարբառներին և արևմտյան գրական լեզվին: Սակայն հաճախ, նույնիսկ գրական լեզվով կենդանի խոսակցության ժամանակ, մանավանդ երբ հասարակ լեզվով են խոսում, իշխում է ոչ թե գրական, այլ արևելյան բարբառներին հատուկ շեշտադրությունը, երբեմն էլ այս երկուսի՝ գրական և բարբառային շեշտադրությունների խառնուրդ է առաջ գալիս, որով ավելի ևս դժվարանում է երկրորդական շեշտերի դիտողությունը կենդանի լեզվի մեջ»¹²³:

Երկրորդական շեշտերի տեսակների մասին հայ լեզվաբանության մեջ գրեթե ոչինչ ասված չէ: Եղած սակավաթիվ նյութերի հիման վրա կարող ենք ասել, որ տարբերակել են **հնչյունային** և **հնչյութային երկրորդական շեշտեր** (Ռ. Թոխմախյան), **տրամաբանական երկրորդական շեշտեր**, **իմաստի զորացման կամ զորացու-**

¹²³ Մ. Աբեղյան, Երկեր, Ե, Եր., 1971, էջ 20-21:

ցիչ երկրորդական շեշտեր: «Ժամանակակից հայոց լեզվի» առաջին հատորում կարդում ենք. «Հիրավի, հինգ և ավելի վանկեր ունեցող բառերում կարելի է նկատել երկրորդական շեշտի դրսևորումներ: Երկրորդական շեշտը կախված է բարդության բաղադրիչների ինքնուրույնության աստիճանից և իմաստից: Չայնաբանորեն այն արտահայտվում է վանկի ուժգնությամբ, իսկ տևողությունը և տոնայնությունը ունեն լրացական արժեք: Ըստ տեղի հայերեն բառային, երկրորդական շեշտը ձգտում է պահպանել որոշակի ռիթմահնչերանգային պատկեր, երբ շեշտված վանկերին հաջորդում են երկու անշեշտ վանկեր: Օրինակ՝ **էլեկտրահաղորդականություն** բառում երկրորդական շեշտված վանկերն են **տրա-ն և դա-ն**»¹²⁴:

Երկրորդական շեշտերը հիմնականում առնչվում են բազմավանկ բառերի և բառաբարդությունների հետ: «...Այն, որ դասական հայերենում ևս, միջին հայերենի նման, երկար բարդություններն ու հարադրությունները երկու շեշտ են ունեցել, կարելի է հավանական համարել, ընդունելով, որ թույլ կամ երկրորդական շեշտը հատկացվել է բառասկզբի վանկին, հիմնական շեշտը, ընդհանուր կանոնի համաձայն, բառավերջի ձայնավորին»¹²⁵, - գրում է Ա. Սարգսյանը: Միջին հայերեն համար ևս նշվում է, որ գլխավոր շեշտը բազմավանկ բառերում արտահայտվում է լիահունչ վերջնավանկում, երկրորդականը՝ սկզբնավանկում, որոշ տարբերակներում՝ գլխավորը վերջընթեր է:

Ի տարբերություն հիմնական շեշտի, որը բառազատիչ, նաև միավորիչ դեր է կատարում ռիթմական որոշակի խմբերում և շարույթներում, բազմաբարդ բառերում երկրորդական շեշտը սովորաբար ընդգծում է դրանց իմաստակիր բաղադրիչները, հատկապես արմատական մասերը: Երկրորդական շեշտեր ունեցող վանկերը ըստ հաղորդակցության պահանջի կարող են ավելի ուժեղ շեշտվել բառի մեջ մտնող մյուս վանկերից (օրինակ՝ «ոչ թե **մեքենաշինություն**, այլ **սարքաշինություն**», «ոչ թե **անընթեատ**, այլ **անընդ-**

¹²⁴ **Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 123-124:

¹²⁵ Հայոց լեզվի կառուցվածքը, Եր., 1975, էջ 28:

հատ»...)). սա ավելի շուտ տրամաբանական շեշտի կիրառություն է, մտքի կենտրոնացման միջոց և մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է:

Ժամանակակից հայերենում բազմավանկ բառերի շատությունը, բառաբարդմամբ նոր բառերի ստեղծումը, բառակազմական եղանակներից կցականության աշխուժացումը մտածել են տալիս, որ մեր լեզվում գոյություն ունի ուժեղ և թույլ շեշտերի որոշակի համամասնություն: Նկատված օրինաչափություն է՝ հայերենի երեք և ավելի վանկերից, **համ(ա)-, հակ(ա)-, վեր(ա)-, գեր-** և այլ նախածանցներով կազմված բառերը, հատկապես բարդերը, մեծ մասամբ արտասանվում են երկու շեշտով, որոնցից գլխավորը դրվում է վերջնավանկի վրա (չհաշված գաղտնավանկը) կամ այլ վանկի վրա, եթե օտար բառ է, իսկ երկրորդականը՝ կամ նախավանկի, կամ բառի առաջին բաղադրիչի վերջին վանկի վրա: Այդ կրկնակ շեշտերը տարբերվում են իրենց ուժգնությամբ. մեկն ավելի ուժեղ է, մյուսը համեմատաբար թույլ է: Օրինակ՝ **վերամիավորում, վերերկրյա, անդրկովկասյան, անդրովկիանոսյան, ուլտրամանուշակագույն** (ո՛ւլտրամանուշակագույն), **հետպատերազմյան, նախագծային, հանադարձական, արտադրատեսակներ, միջգործարանային, մերձնուկվյան, ջերմաէլեկտրակայան, ջերմաէլեկտրակենտրոն, հակակառավարական, գերհոգնածություն, մակընթացություն, հեծանվավաճք, հուշակրծքանշան, շինվերանորոգում, ռադիոակտիվ, օտարերկրյա, ենթահամակարգային, հանապետական, վերագործարկում** և այլն: Համեմատության գերադրական աստիճանի **ամենա-** ցուցիչն ունեցող բառերում համեմատությունն ընդգծելու նպատակով հաճախ ուժեղ կերպով շեշտվում է առաջին ձայնավորը՝ **ամենաուշադիր, ամենաառաջավոր, ամենաթույլ** և այլն: Այս դեպքում առաջին վանկը կարող է ավելի ուժեղ շեշտվել, քան վերջինը: Այսպիսի շեշտադրությունը ունի արտահայտչական, ոճական նշանակություն: Կրկնակի շեշտ ունեն կցական բարդությունները (այսպիսի դեպքերում բաղադրիչները պահպանում են իրենց շեշտը)՝ **ընկոյզկտորիչ, սիրտանոթային, թոլլալկոհոլային, մանրապրանքային, բարձ-**

րարտադրողական, քառորդեզրափակիչ և այլն: «Ընդհանրապես երկրորդական շեշտերի առանձնացման համար պետք է կարծել, որ գոյություն ունեն հնչյունաբանական և հնչույթաբանական գործոններ: Պայմանականորեն կարելի է ընդունել հնչյունական և հնչույթաբանական երկրորդական շեշտեր: Վերջիններս հիմնականում ընկնում են բազմավանկ բառերի նախածանցների վրա և չեն փոխում իրենց տեղը բառերի ձևափոխության ժամանակ, ինչպես՝ **ա՛նհամաձայնություն, ա՛նհամաձայնությունից**, իսկ հնչյունական երկրորդական շեշտերը նպաստում են հայերենի ռիթմա-ինտոնացիոն դրսևորմանը, փոխվում են և բազմավանկ բառերում ունեն որոշակի դասավորություն, ինչպես՝ **ջերմա՛հաղորդականություն, ջերմահա՛ղորդականությունից**: Այս ենթադրությունը սակայն կարիք ունի ավելի խոր ու մանրակրկիտ հետազոտության...»¹²⁶:

Երկշեշտ են կրկնավոր և բաղիյուսական բարդությունները, ինչպես՝ **ծա՛ռ ու թո՛ւփ, բո՛ւք ու բորա՛ն, ծի՛լ ու ծաղի՛կ, թե՛ ու թիկո՛ւնք, լո՛ւռ ու մո՛ւնջ** և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ միավանկ բաղադրիչներ ունեցող և մի բառային միություն կազմող հարադրական բայերի մեջ շեշտվում է միշտ նախադաս հարադիրը, ինչպես՝ **ցո՛ւյց տալ, թա՛փ տալ, մա՛ն գալ, ե՛փ գալ** և այլն: Իսկ եթե բայական բաղադրիչը երկվանկ է (և ավելի), ապա հարադրական բառերն ունեն երկու շեշտ, մեկը՝ գլխավոր կամ «գորեղ» շեշտ, որ ընկնում է սկզբում կամ հարադիր բառի վերջին վանկի վրա, մյուսը երկրորդական կամ թույլ շեշտ, որ ընկնում է վերջին վանկի վրա, օրինակ՝ **լա՛ց լինե՛լ, ե՛տ դառնա՛լ, բա՛ց անե՛լ, ակա՛նջ դնե՛լ** և այլն: Որոշ լեզվաբաններ երկրորդական շեշտեր են տեսնում բայի ժխտական ձևերում՝ **չի՛ տալի՛ս, չես գնա՛, մի՛ խոսի՛ր, մի՛ բարձրացրո՛ւ** և այլն, հարադրական և համադրական շատ ձևերում՝ **մի՛գուցե՛, ո՛չ երբե՛ք** և այլն:

Այսպիսով՝ հայերենում բազմաբարդ բառերը, կախված բաղադրիչների ինքնուրույնության աստիճանից և իմաստից, գլխավոր

¹²⁶ Գիտական հոդվածների ժողովածու, Ռ. Թոխմախյան, Հնչյունաբանական դիտարկումներ, Եր., 2017, էջ 179:

շեշտին ուղեկցող երկրորդական շեշտ կարող են ունենալ: Ձայնաբանական առումով՝ այն տվյալ վանկը ուժգնությամբ տարբերում է մյուսներից, բայց թույլ է գլխավորի համեմատությամբ: Քանի որ ուժգնությունը երբեք անխառն չի լինում, նշանակում է երկրորդական շեշտը ևս տևողության և տոնայնության լրացական արժեքներ ունի: Մեր լեզվում գոյություն ունի ուժեղ և թույլ շեշտերի որոշակի համամասնություն. երկրորդական շեշտը ծգտում է պահպանել որոշակի ռիթմահնչերանգային պատկեր, երբ շեշտված վանկերին հաջորդում են երկու անշեշտ վանկեր: Երկրորդական շեշտերը կարևորվում են նաև ընդգծելու, համեմատելու կամ հակադրելու նպատակներով, արտահայտչականության, ռժավորման միջոց են դառնում:

ԱՆՇԵՇՏ ԲԱՐԵՐ

Շեշտադրության նորմավորման գործընթացում շատ կարևոր է առանձնացնել նաև բառերի այն շարքը, որը չի շեշտվում: Խոսքային շղթայում, անշուշտ, կան և անշեշտ բառեր: Դրանք են կապերը, մի հոդը, որոշ բառ-մասնիկներ, միավանկ սպասարկու բառեր, որոշ դերանուններ, բաղադրության, վերլուծական ձևերի բաղադրիչներ (նախահար, վերջահար տարրեր) և այլն: Ըստ լեզվաբանների՝ սպասարկու բառերից բացի կան և շատ բառեր, որոնք որոշ կապակցություններում կորցրել են կամ կորցնում են իրենց նյութական նշանակությունը (**բառ-մասնիկներ, բառ-գործիքներ, բառիկներ**), կամ էլ շատ թույլ իմաստային կիրառությամբ են հանդես գալիս: Սրանից էլ ենթադրելի է, որ որոշակի տարբերություն պետք է նկատել անշեշտ և շեշտակորույս բառերի միջև: Գլխավոր (շեշտված և իմաստակիր) բառի հետ միասին այս բառերը դառնում են արտասանական մեկ միավոր, մեկ շեշտ կրող կազմություններ՝ ձևավորելով «հնչաբառ», «բառ-միասնություն» կամ «հնչերանգային հարադրություն», որը մեկ հասկացություն է արտահայտում, արտասանության մեջ հնչվում և ընկալվում է իբրև մեկ բառ: Արդեն նշել ենք, որ Գ. Ջահուկյանը հնչաշղթայում առանձնացնում է հնչաբառե-

րը, որոնք երկալանային միավորներից համապատասխանում են բառերին, թեև որոշ դեպքերում մեկ հնչաբառը կարող է պարունակել մեկից ավելի բառեր: Ինչպես հայտնի է, բառերի առանձնացման համար հիմք է ծառայում նրանց ձևաբանական և գործառական ինքնուրույնությունը, տեղափոխելիությունն ու անխոցելիությունը, մինչդեռ **հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը**. այս պայմաններում անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար թե վերջահար, միանում են շեշտակիր բառերին և կազմում մի հնչաբառ: Այսինքն՝ լինում են **նախահար անշեշտ բառեր և վերջահար անշեշտ բառեր**՝ կախված այն բանից, թե հնչաբառում կամ հնչաշղթայում շեշտված բառի համեմատադրությամբ ինչ դիրքում են գտնվում: Դրանք կոչվում են նաև **նախահարույթներ (նախակլիտիկ(ա)ներ)** և **վերջնահարույթներ (ետկլիտիկ(ա)ներ)**: Բացառված չէ, որ խոսքի զարգացման ընթացքում այս անշեշտ բառերը (հատկապես նախընթերները) կարող են շեշտը տեղափոխել իրենց վրա: Սովորաբար նկատված է, որ չշեշտված բառերը մեծ մասամբ միավանկ են և շեշտագուրկ են դառնում՝ «ազդվելով» իրենցից անմիջապես առաջ կամ հետո ընկնող բառի շեշտից: Բացի միավանկ սպասարկու բառերից, որոնք արտասանական ամբողջություն են կազմում նախորդ կամ հաջորդ բառի հետ (**ըստ էության, առ այսօր, այնպես որ, ամեն ինչ**), շատ բառեր կորցնում են իրենց նյութական նշանակությունը կամ շատ թույլ իմաստային կիրառությամբ են հանդես գալիս և համեմատաբար թույլ են շեշտված (օրինակ՝ հարադրական բարդություններում՝ բայերը, որոնք թույլ են շեշտվում կամ գրեթե չեն շեշտվում): Խոսելով այն բառերի մասին, որոնք միշտ լիիմաստ չեն և նախադասության մեջ հաճախ բառգործիքների են վերածվում նաև շեշտակորույս լինելու պատճառով, Ա. Մեյեն այսպիսի դիտողություն է անում. «Երբեք օրինական չէ նման բառերը որպես վկայություն ընդունել հնչյունական կանոնավոր զարգացման համար. դրանք արտասանվում են որոշ անփութությամբ, հաճախ պարզապես նշվում են, համեմայն դեպս հապավվում են հարակից բառերի հետ իրենց միացման պատճառով և,

հետևաբար հնչյունական ինքնությունը զարգացում են ունենում»¹²⁷: Բնականաբար, մեզ հետաքրքրողն այստեղ այդ բառերի «որոշ անփութությամբ արտասանվելն է», նաև՝ «հարակից բառերի հետ միացման իրողությունը» (որի արդյունքը դրանց հապավվումն է):

Հր. Աճառյանը, նշելով, որ խոսքի շղթայում որոշ բառեր, հատկապես օժանդակ բառերը, սովորաբար զրկվում են բառական շեշտից և արտասանությամբ ծուլվում են այն բառին, որի հետ նրանք միասին կազմում են մեկ ձևաբանական կամ շարահյուսական միավոր և իրենց առանձին շեշտը չեն ունենում, գրում է. «Նախադասության մեջ ամեն մի բառ նույն կարևորությունը չունի. կան բառեր, որոնք երկրորդական արժեք ունեն և ծառայում են մյուսների այսինչ կամ այնինչ դերը որոշելու, այսպես են հոդը, նախդիրները, անորոշ դերանունները, օժանդակ բայերը և այլն: Այս կարգի բառերը արտասանվում են շատ թույլ տոնով կամ տոնն իսպառ կորցնում են: Սա հոգեբանական մի շատ հասարակ երևույթ է: Տոնի կորուստով նրանք հարադրվում և միանում են այն բառին, որի իմաստի լրացման են ծառայում: Այս կարգի բառերը կոչվում են վերջահար, եթե կցվում են գլխավոր բառին՝ վերջից, և կամ նախահար, եթե կցվում են նրան սկզբից: Արևմտյան հայերենով **հաղ մը, մարդ մը** ձևերի մեջ **մը** վերջահար է, իսկ գրաբար **ի տան, ի տանէ...** նախահար են: Վերջահար և նախահար բառիկները գլխավոր բառի հետ միասին մի գաղափար են կազմում, արտասանության մեջ նրանք երևում են իբրև մի բառ և լեզուների մեջ ընդունված ուղղագրական քմահաճույքն է միայն, որ ստիպում է գրել այդ բառերը մերթ միասին, մերթ անջատ... Հայերեն **մը** անորոշ հոդը, իբրև վերջահար, ժԹ դարի սկզբում միասին էր գրվում (այսպես՝ **տղամը, ցամը, քիչմը**), իսկ այժմ գրվում է **տղայ մը, ցավ մը, քիչ մը**»¹²⁸:

Նույն հարցի կապակցությամբ գրեթե նույնն է ընդգծում Մ. Աբեղյանը. «Միննույն կանոնով խոսքի մեջ ավելի ուժեղ են շեշտվում այն բառերը, որոնք ավելի կարևոր են, ինչպես հարադրյալ բայերի մեջ հարադիրը՝ **ման գալ, բաց անել, քոն լինել**: Այսպես և նյութա-

¹²⁷ Ա. Մեյն, նշվ., աշխ., էջ 44:

¹²⁸ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 304-305:

կան նշանակություն ունեցող բառերը (գոյական, ածական, մակբայ, բայ) համեմատաբար ավելի ուժեղ շեշտ ունին, քան ձևական նշանակություն ունեցող, հարաբերություններ ցույց տվող բառերը, ինչպես են՝ շաղկապները, ետադրությունն ու նախադրությունները և օժանդակ կամ էական կոչված բայը (**են**, **լինիմ**) իբրև խոսքի հանգույց: Այս ձևական նշանակություն ունեցող բառերից միավանկները սովորաբար այնպես են ազդվում իրենցից անմիջապես առաջ կամ հետո ընկնող շեշտից, որ առանց առանձին շեշտի, իբրև նախահար կամ վերջահար բառեր, միանում են իրենց նախորդ և հաջորդ բառի հետ և միասին կազմում են մի բառական ամբողջություն»¹²⁹: Պետք է նկատել, որ հարցին վերաբերող տարբեր աղբյուրներում ավելի շատ **մի** –ի շուրջ են ծավալվել տարակարծությունները: Պատճառը նրա բազմագործառնությամբ լինելն է: Ի տարբերություն Հր. Աճառյանի՝ Մ. Աբեղյանը մերժում էր **մի-ի**՝ որպես հոդի գործածությունը, բնականաբար նաև նրա անշեշտ լինելու իրողությունը: Նա սա համարում էր ուրիշ լեզուների քերականներին կուրորեն հետևելու արդյունք: Ըստ նրա՝ **մի**-ն քանակական ածական է՝ անկախ այն բանից՝ շեշտ է կրում, թե ոչ: Լեզվաբանը գրում է. «**Մի** թվականը, երբ առանց շեշտվելու դրվում է անհոդ անվան վրա, աշխարհաբարի քերականները, հետևելով ուրիշ լեզուների քերականներին, դնում են հաճախ իբրև անորոշ հոդ, որ իբր թե այլևս թվական չլիներ և թվի գաղափար ցույց չտար, այլ միայն անձի կամ իրի ընդհանուր, տարտամ գաղափար, ինչպես մի անորոշ ածական: Սակայն այս սխալ է. մի բառն ամեն դեպքում ևս թվական է, լինի շեշտված, թե անշեշտ, և մասնավորում է անվան թիվը, որոշելով առարկայի մեկ լինելը: **Մի** թվականն իր այս գործածությամբ բնավ չի տարբերվում մյուս քանակական ածականներից, որոնք նույնպես կարող են և՛ շեշտված գործածվել, և՛ անշեշտ...»¹³⁰: Մեջբերումից պարզ է, որ խոսքը աշխարհաբարի քերականների տեսակետի մերժումն էր. իր ժամանակի համար, աշխարհաբարի համար երևի թե Մ. Աբեղյանը հիմք ուներ այսպես մտածելու, սակայն արդի հայերե-

¹²⁹ Մ. Աբեղյան, հ. Ե, Եր., 1971, էջ 27:

¹³⁰ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 526-527:

նում մի-ի հողառական գործածությունն օրինաչափության է վերածվել:

Ըստ Ֆ. Խլղաթյանի՝ «Ինչպես այլ լեզուներում, հայերենում էլ կան անշեշտ բառեր ու մասնիկներ, որոնք առդրվելով այլ շեշտակիր բառերի, նրանց հետ կազմում են մեկ հնչաբառ: Դրանք այսպես կոչված հարույթներ են (клатку) և բաժանվում են երկու խմբի՝ նախահարույթներ (проклатку) և վերջնահարույթներ (эклатку)»¹³¹:

Նույնը նշում է նաև Լ. Խաչատրյանը՝ դրանք անվանելով **նախահար անշեշտ բառեր** (որոնք մեծ մասամբ միավանկ են, կորցնում են շեշտը և հնչերանգով հարում են հաջորդ (լիմաստ) բառին) և **վերջնահար անշեշտ բառեր** (որոնք շարադասորեն հարում են լիմաստ բառերին, նրանց հետ կազմում են հնչերանգային հարադրություն): Սրանք նյութական բովանդակություն ունեցող միավորների հետ կազմում են սերտ միասնություն, որ կոչվում է բառ-միասնություն կամ հնչաբառ¹³²:

Հայերենի անշեշտ (չշեշտվող) բառերից են՝

1. Նախադրությունները՝ **ի , ըստ, ընդ, առ, առանց** և այլն. սրանք արտասանությամբ միանում են հաջորդ բառին՝ **ի գիտություն, ի լո՛ր (ամենքի) , ըստ պահանջի՛, ըստ ամենայնի՛, ըստ հրամանի՛, ըստ օրենքի՛, առ այժմ, ի գե՛ն, ցնոր հանդիպում, ըստ երևույթի՛ն, ընդ որո՛ւմ, ըստ այ՛դմ, ի ցա՛վ սրտի, մինչև տո՛ւմ, առանց այ՛ն էլ, ինչպես մա՛րդ**: Պետք է նշել, որ այսօր **ըստ, ընդ** շեշտազուրկ բառերը հանդիսավոր խոսքում նաև շեշտված են հնչում:

2. Ետադրությունները՝ **պես, չափ, տեղ, հետ, դեմ, մոտ, մեջ...** (**ծխի՛ պես, ընկերո՛ջ հետ, դռա՛ն մոտ...**): Սրանց գործածական մի յուրահատկության մասին Մ. Աբեղյանը գրում է. «Հաճախ, սակայն, այս բառերը, քանի որ սկզբնապես գոյական են, դեռ պահում են իրենց գոյական նշանակությունը և իբրև գերադաս բառ կրում են քերականական

¹³¹ Տե՛ս՝ Ֆ. Խլղաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Ա, Եր., 2005, էջ 40:

¹³² Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008, էջ 101:

շեշտը. այսպես՝ արտասանում ենք՝ վտակի-պե՛ս, սրտիս-մե՛ջ, մանավանդ դերանունների հետ, ինչպես՝ **իմ-մե՛ջ, նրա-մե՛ջ, քեզ-պե՛ս, նրա-հե՛տ, ինձ-մո՛տ**»¹³³: Սրանք ինչ-որ տեղ կարելի է զուգաձևություններ համարել (**ի՛նձ պե՛ս // ի՛նձ պե՛ս, ի՛մ մե՛ջ // ի՛մ մե՛ջ, նրա՛ մե՛ջ // նրա մե՛ջ, քե՛զ պե՛ս // քե՛զ պե՛ս, նրա՛ հե՛տ // նրա հե՛տ, ի՛նձ մո՛տ // ի՛նձ մո՛տ...**), որոնցում, սակայն, աստիճանաբար երկրորդները նահանջում են:

3. Մի շարք հարադրական կազմություններում իբրև վեջնաբաղադրիչ հանդես եկող **որ, թե** թարմատարները. շեշտադրության ընդհանուր կանոնի համաձայն՝ շեշտը կրում են առաջին բաղադրիչները (**կարժե՛ս թե, միայ՛ն թե, ինչպե՛ս թե, ե՛րբ որ, հե՛նց որ, քանի՛ որ (քա՛նի որ), մինչև՛ որ, այնպե՛ս որ**):

4. **Էլ (և), և, իսկ** բառերը՝ **մինչև՛ իսկ, թեկու՛զ և, նա՛ էլ, ընկե՛րն իսկ**: Միավանկ բառի հաջորդելիս ետադաս էլ-ն ավելի ուժեղ է շեշտվում, և «այն ժամանակ նախադաս միավանկ բառն ինչպես մի նախահար միանում է նրան, ինչպես՝ **դա-է՛լ, ես-է՛լ, քիչ-է՛լ...**»¹³⁴: Կարելի է ասել՝ տարբերակային ձևեր են՝ **ե՛ս էլ և ես է՛լ, դա՛ էլ և դա է՛լ, քի՛չ էլ և քիչ է՛լ** և այլն:

5. **Եմ** օժանդակ բայը. այն հաստատական խոնարհման դեպքում արտասանվում է խոնարհվող բայի հետ միաձույլ, որի վրա էլ դրվում է շեշտը, ինչպես՝ **գրե՛լ է, կարդո՛ւմ է, գնալո՛ւ է, վերադառնալո՛ւ է** և այլն: Ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը գործածվում է նախադաս և շեշտվում է՝ **չի՛ գրում, չի՛ կարդում, չի՛ գնալու**: Եթե այսպիսի ձևակազմությունների երկրորդ բաղադրիչները բազմավանկ բառեր են, բառածևր մի շեշտով չի ամփոփվում. երկար բառը առնում է իր շեշտը. **մի՛ մեծամտանա՛ր, չե՛մ բարկանո՛ւմ, չե՛մ դատապարտի՛** և այլն: «Եմ օժանդակ բայը շատ քիչ անգամ է ունենում իր վրա գլխավոր շեշտը և այժմյան խոսքի մեջ չի կարող ընկնել խոսքի սկզբում: Երբ

¹³³ Մ. Աբեղյան, հ. Ե, Եր., 1971, էջ 27:

¹³⁴ Մ. Աբեղյան, նշվ., աշխ., էջ 27:

այս բայը շեշտված է, առանձին ուշադրության է առնվում ոչ այնքան բայի բովանդակությունը, որքան բայի ժամանակը, ինչպես՝ **Չարալեզու էր, է՛ և կլինի՛...**¹³⁵: Պ. Բեդիրյանը գրում է. «Ուզում ե՞ս...» Այս և նման կառույցներում օժանդակ բայը (**եմ, ես, է..., էի, էիր, էր...**) հարցական երանգով արտասանելը սխալ է: Մեր լեզվի օրենքն այս հարցում շատ պարզ է. օժանդակ կամ (էական) բայը ետադաս կիրառությամբ հարցական (նաև բացականչական) երանգ չի ընդունում: Ավելին, այդ բայի ներկան, նույն դիրքում, անգամ թո՛ւյլ չեշտ չի ունենում (իսկ եթե չի շեշտվում, հարցական ու բացականչական երանգ էլ չի կարող ունենալ): Ուստի ճիշտ են՝ **ուզո՞ւմ ես, գնո՞ւմ եք, գրուցո՞ւմ էիք, բարեկա՞մ էինք, ուրա՞խ էիր և այլն**: Դրությունը փոխվում է, երբ այդ բայի ժխտական ձևերն են գործածվում, նախադաս թե ետադաս: Այս դեպքում դրանք և՛ շեշտված կարող են լինել, և՛ բնականաբար հարցական կամ բացականչական երանգներով. **չե՞ս ուզում, չե՞ք գնում, չեի՞ք գրուցում, ուրախ չեի՞ր...**¹³⁶ :

6. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր կազմող **լինել** բայը. **քնա՛ծ է լինում, գրելի՛ս կլինեմ**:

7. Բաղադրյալ ստորոգյալի հանգույցը. այն հաստատական խոնարհման դեպքում արտասանվում է ստորոգելիի հետ միաձույլ, որի վրա էլ դրվում է շեշտը (**լա՛վ է, բարի՛ է**): Ժխտական հանգույցը, որ գործածվում է ետադաս, շեշտվում է, սակայն ավելի թույլ, քան ժխտական օժանդակ բայը (երևի պատճառը դիրքն է). **խելացի չէ՛, տխուր չէ՛, ցուրտ չէ՛**:

8. Սովորաբար շեշտ չի կրում **մի** անորոշ դերանունը՝ **մի ժամանակ, մի քիչ, մի կերպ, մի օր**:

9. Շեշտագուրկ է **մի** անորոշ հոդը (**մի մարդ, մի գիրք և այլն**). արևմտահայերենում՝ վերջադաս գործածությամբ և **մը** ձևով. **մեծ տո՛ւն մը, ամբողջ կյա՛նք մը, տղա՛ր մը** և այլն:

¹³⁵ Մ. Աբեղյան, հ. Զ. Եր., 1974, էջ 440:

¹³⁶ Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Եր., 2007, էջ 17:

10. Մի հորդորական մասնիկը (**մի գնանք, մի բեր տեսնենք**):

11. **Թող** բառը, երբ ետադաս է՝ **գա՛ թող, մոռանա՛ թող...** այս գործածությունները հնաբանության են վերածվում: Նույն ձևով տարարժեք **տես-ը, բեր-ը, ասա-ն** և այլն (**բեր մոռանանք, ասա չիիշի, տես եկավ** և այլն):

12. Արգելական հրամայական բայաձևերում հարույթի դերում փաստորեն բայաձևն է. այս դեպքում շեշտվում է հենց **մի** մասնիկը (**մի՛ տես, մի՛ խոսիր, մի՛ մոտենա**):

13. **Պիտի** եղանակիչը (**պիտի գա՛, պետք է հեռանա՛** և այլն): Ի տարբերություն **պիտի-ի՝ պետք է-ն** համեմատաբար շեշտվող երանգ ունի:

14. Կրկնվող **մերթ-երը, ոչ մի-ները**. «Կրկնվող **մերթ-երը, ոչ մի-ները** չեն ստանում, որովհետև շաղկապ չեն»¹³⁷:

15. Հարադիր բայերի բայ բաղադրիչը (կարող են նաև թույլ շեշտ կրել). **ցո՛ւյց տալ, վե՛ր կենալ, դո՛ւրս ելնել, նե՛րս գալ, վրա՛ տալ, գլո՛խ բերել**:

16. Շեշտագուրկ են նաև կոչականները, եթե հարադրվում են **այ** և **ո՛վ** բառերի հետ, (**այ՛ առվակ, ո՛վ մարդ** և այլն):

Վերևում թվարկվածներից կարող ենք առանձնացնել նախահարույթներն ու վերջնահարույթները: Նախահարույթների դերում հանդես են գալիս՝ **ա)** գրաբարյան նախդիրները **ք)** **մի** հորդորական մասնիկը (ի տարբերություն սրա, արգելական հրամայական բայաձևերում շեշտվում է հենց **մի** մասնիկը): Այս դեպքում հարույթի դերում փաստորեն բայաձևն է. **գ)** **մի** անորոշ դերանունը և այլն: Վերջնահարույթների դերում հանդես են գալիս՝ **ա)** բաղադրյալ բայական ժամանակաձևերի օժանդակ բայերը **ք)** բաղադրյալ ստորոգյալի հանգույցը **գ)** երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմության բաղադրիչ **լինել** օժանդակ բայը **դ)** **թե, որ, իսկ** հա-

¹³⁷ Տես՝ **Բեդիրյան Պ., Գյուրջինյան Ղ.**, Հայոց լեզվից 50 նորոգված հարցարաններ, Եր., 2006, էջ 138:

րադրյալ բառերը **ե)** հարադիր բայերի բայ բաղադրիչը **զ)** միավանկ ետադիր կապերը կապի խնդիրների հետ գործածվելիս:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ ԿԱՄ ՇԵՇՏԱԳԾԱՆՇԿԱԾ ԲԱՌԵՐ

Ըստ հաղորդակցման կարիքների, հաղորդողի՝ հաղորդակցվողի և հաղորդման նկատմամբ ունեցած վերաբերմունքի՝ առոգանության նշաններն արտահայտում են տևողության, ուժգնության և բարձրության՝ սովորականից տարբեր աստիճանները: Ուժգնությունը հանդես է գալիս սովորական և սաստկական աստիճաններով: Սովորական ուժգնությունը գրության մեջ չի նշանակվում, թեև այն կարող է տարբեր լինել ըստ հնչաշղթայի հատվածների փոխհարաբերության, սաստկականը նշանակվում է հատուկ նշանով՝ շեշտով ('): Էդ. Աղայանն այն անվանում է **վերհատույթային** (սուպերսեզմենտային) **միավոր** կամ **տարր**, իսկ Գ. Ջահուկյանը նույնն անվանում է **մակինչույթային** տերմինով, որի միավորներն են առոգանությները և կցույթը:

Գծանշված շեշտն ընդունված է կոչել **սաստկական**, երբեմն՝ **սուր շեշտ** կամ **քերականական, տրամաբանական**: Միանգամայն պարզ է, որ խոսքը լեզվական այն միավորների մասին է, որոնք գրավոր խոսքում գծանշված են, սրաշեշտ են, իսկ բանավոր խոսքում առանձնանում են է՛լ ավելի ուժգին հնչողությամբ: Այս դեպքում սաստկական շեշտը դիրքային առումով գծվում է այնտեղ, որտեղ բառային շեշտն է, բայց նշույթավորված միավորը հասարակ շեշտ կրող զուգահեռից արդեն տարբերվում է ուժգնության՝ սովորականից տարբեր աստիճաններով՝ հավելված տևականության աճով և բարձրության զանազան դրսևորումներով:

Արտահայտության պլանում այսպիսի իրողությունը Գ. Ջահուկյանը անվանում է պարտադիր սրաշեշտություն և նշում, որ նախադասության եղանակային տիպերից պարտադիր սրաշեշտություն ունեն հարցական և շեշտական տիպերը: Նա, անցնելով բովանդակային պլանին, բացահայտում է շեշտային տիպի հետևյալ իմաստային արժեքները. «Շեշտն իր բնույթով (ծայնի ուժգնության

մեծացում) արտահայտում է ընդհանրապես կամ կամային որոշակի ուղղվածություն (ի տարբերություն ըղծականի) դեպի խոսակիցը՝ մի բան անելու հրաման, կամ ուշադրության կենտրոնացում. վերջինս ունի երկու դրսևորում՝ ա) տրամաբանական շեշտ, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է այս կամ այն օբյեկտի վրա (գերազանցապես պատասխանական արժեքով) և բ) կոչական, որի դեպքում որևէ անձի ուշադրությունը հրավիրվում է խոսքի (հաղորդման) վրա: Այսպիսով, շեշտի բնույթը երկու տիպի է»¹³⁸:

Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում իրար են հակադրվում սովորական և սաստկական շեշտ կրող բառերը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս հակադրությունը միայն նախադասության, հնչադասության մեջ է արտահայտվում: Փորձել ենք արտահայտության պլանում սրաշեշտությամբ հատկանշվող կամ սաստկական շեշտ կրող բառերի բովանդակային 2 շերտ առանձնացնել՝ սաստկական-քերականական շեշտ կրող և սաստկական-տրամաբանական շեշտ կրող:

Ա. Լեզվագիտական տարբեր աղբյուրներում անշեշտ բառերի մանրահամակարգին հակադրվում է առանց շեշտի չգործածվող բառերի շարքը: Սրանք այն բառերն են, որոնց համար լեզվական նորմը միակերպ և ընդհանրական սահմանում ունի. առանց շեշտի չեն գործածվում կամ միշտ շեշտ են կրում, այսինքն՝ գրավոր խոսքում դրանք միշտ նշույթավորված են: Շեշտը դրվում է որոշ բառերի, բառ-մասնիկների վրա՝ քերականական իմաստ արտահայտելու կամ այդ իմաստն ավելի սաստկացնելու համար: Այս դեպքում այն նաև ձևաբանական-շարահյուսական տարբերակման միջոց է ծառայում:

Բ. Մյուս կողմից՝ պարտադիր սրաշեշտությամբ հատկանշվող բառերի կողքին կարելի է առանձնացնել նրանք, որոնք շեշտ են կրում տվյալ հնչաշղթայում, տվյալ նախադասության մեջ և ունեն իրենց անշեշտ տարբերակները. սրանք որևէ նախապայմանով ուժգնացված շեշտակիր բառեր են: Այս դեպքում շեշտը դառնում է տրամաբանական մտքի եղանակավորիչ, և նրա արտահայտիչը

¹³⁸ **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 358:

կարող է դառնալ հաղորդակցական նվազագույն միավորի ցանկացած բաղադրիչը, լեզվական առումով՝ նախադասության ցանկացած միավորը, ձևությամբ: Այս բառերը կարելի է անվանել ընդգծողական սրաշեշտությամբ հատկանշվող բառեր: Լեզվական նորմը սահմանում է նաև՝ տրամաբանական շեշտը պատճառ է դառնում փոխակազմության, այսինքն՝ շարահասության փոփոխության: Գ. Ջահուկյանը, խոսելով փոխակազմության երկու դրսևորումների մասին (օբյեկտիվ և սուբյեկտիվ-վերաբերողական), նշում է, որ սուբյեկտիվ-վերաբերողական փոխակազմությունը տեղի է ունենում տրամաբանական շեշտի և կամաբերական (եղանակային) բառմասնիկների օգնությամբ: Եթե կամաբերական բառ մասնիկներն արտահայտում են զիջման, սաստկական, սահմանափակման վերաբերմունքը միավորների կազմի փոփոխության նկատմամբ, ապա տրամաբանական շեշտով արտահայտվում է ընդգծողական վերաբերմունքը միավորների կազմի փոփոխության նկատմամբ¹³⁹: Այս դեպքում բառային շեշտը բառիմաստային-քերականական ընդգծումից բացի ձեռք է բերում ոճական, խոսքիմշակութային արժեքներ:

Հատկանշական է, որ մի նախադասության մեջ կարող են հանդես գալ սրաշեշտ մի քանի բառեր, օրինակ՝ «Օ՛, հա՛յր իմ, սակայն ո՞վ է ո՛ւմ խաչում»: «Օ՛ , չգա՛ն, Հիսու՛ս, թե դեռ պիտի գաս, Քե՛զ էլ կտանեն խաչելու» (Հ. Շիրազ):

Շեշտագծանշված բառային այս շերտերը ունեն նմանություններ և տարբերություններ: Երկու դեպքում էլ ուժգնության շեշտը սաստկական է, երկուսն էլ լեզվագործածողի վերաբերմունքի դրսևորիչներ են, հուզարտահայտչական, կամային ներգործության և ընդգծման արտահայտիչներ են: Գրավոր խոսքում նշույթավորված են, իսկ բանավոր խոսքում աչքի են ընկնում ավելի ուժգին հնչողությամբ: Բայց և ունեն տարբերություններ: ա) Առաջիններն առանց շեշտի չեն գործածվում, այսինքն՝ չունեն իրենց անշեշտ զուգահեռները. բոլորվին այլ խնդիր է, որ նրանց շեշտը իրենց հետ անմիջապես առնչվող միավորը կարող է կրել (օրինակ՝ կոչականի լրացում

¹³⁹ Տե՛ս՝ Գ. Ջահուկյան, նշվ., աշխ., էջ 45-46:

ունենալու դեպքում՝ լրացումը, բանաստեղծական խոսքում մի՛ արգելականի անշեշտ դրսևորումը՝ հրամայականության մեղմացման ոճական նկատառումով և այլն): Իսկ մյուս խմբի դեպքում նախադասության տվյալ միավորը կարող է սուր շեշտ կրել, կարող է չկրել՝ կախված սուբյեկտի անհատական վերաբերմունքից: Բ) Առաջինները քանակային սահմանափակում ունեն, երկրորդները՝ ոչ. հնչաշղթայի ցանկացած միավոր կարող է այդպիսի շեշտ կրել, անգամ այն միավորները, որոնք շատ մասնագետների կողմից առանձնացված են իբրև անշեշտ, շեշտվելու հատկությունից զուրկ բառեր, բառ-մասնիկներ, ձևույթներ և այլն: Գ) Քերականական շեշտը կարող է ձևաբանական ցուցիչ լինել, օրինակ՝ արգելական հրամայականի մի՛ն, հրամայական եղանակի բոլոր բայաձևերը, խոսքիմասային տարբերակման միջոց (ծայնարկությունների դեպքում), շարահյուսական միավորի առանձնացման ցուցիչ, ինչպես կոչականինը, պատասխանական որոշ բառերի (այո՛, ո՛չ), այսինքն՝ շեշտն այստեղ քերականական իմաստի հետ է կապվում: Իսկ տրամաբանական շեշտակրությունը կապված է նախադասության այս կամ այն անդամի առանձնացման, կարևորման և ընդգծման, ուշադրության հրավիրման նպատակի հետ: Ի դեպ, պետք է նշել, որ հայ լեզվաբանության մեջ նախադասության անդամների ընդգծման հարցին այս կամ այն խնդրի առնչությամբ անդրադարձել են, սակայն այն առանձնակի ուսումնասիրության նյութ չի դարձել:

Քերականական շեշտ են առնում հրամայական եղանակի բայերը, արգելականի մի՛ բառ-մասնիկը՝ խոնարհվող բայի հասարակ շեշտի թուլացմամբ կամ վերացմամբ, ո՛չ-ը, չէ՛-ն և այլն: Բնականաբար անհրաժեշտ է խոսել ծայնարկությունների մասին: Զայնարկությունները կենդանի-ստեղծագործվող բառերի թվին են պատկանում: Իբրև ծայնարկություններ կարող են գործածվել նաև այլ կարգի բառեր՝ համապատասխան բացականչական կամ շեշտային առոգանությամբ: Զայնարկությունները գործածվում են բացականչական կամ բացականչականին փոխարինող շեշտային առոգանությամբ, որը, ի դեպ, գործառական-իմաստային էական փոփոխություն չի առաջացնում: Սրանցում շեշտը (կամ բացականչական

նշանը) նաև ձևաբանական արժեք ունի՝ ծայնարկության ձևավորիչներից է: Իհարկե, ոմանք ծայնարկություններից առանձնացնում են բնածայնությունները, նշելով, որ սրանք նախադասության կապակցությունից դուրս են և «խոսքի մեջ էլ մի տեսակ գաղափարի խորհրդանշանային (սիմվոլիկ) արժեքով են հանդես գալիս»¹⁴⁰, սակայն սա լեզվի նորմավորման գործընթացի այլ դաշտ է: Թե՛ ծայնարկությունները, թե՛ բնածայնությունները հետաքրքրության նյութ են դարձել որպես վերհատույթային միավորների նշանակիրներ՝ պարտադիր սրաշեշտությամբ: Հնչերանգայնությունը միշտ անբաժան է ծայնարկությունից: Որոշ լեզվաբաններ նմանություն եզր են նշում դերանունների և ծանարկությունների միջև. սրանք երկուսն էլ իրադրական խոսքի մաս են, այդ պատճառով էլ բազմիմաստ են. միևնույն ծայնարկությունը խոսքային տարբեր իրադրություններում, մանավանդ համապատասխան հնչերանգայնությամբ, տարբեր նշանակություններ կարող է ունենալ: Պետք է ասել, որ այսօր որոշակի միտում կա բացականչական և շեշտային, այսինքն՝ հնչերանգային-առոգանական տարբերակներից առավել նախընտրելի համարել շեշտված տարբերակը (**ջա՛ն** // **ջա՛ն**, **վա՛յ** // **վա՛յ**, **ա՛յ խ** // **ա՛յ խ** և այլն...):

Մասնագիտական գրականության մեջ, որպես պարտադիր սրաշեշտությամբ հատկանշվող բառեր, առանձնացված են՝

1. **հրամայական եղանակի բայերը (տե՛ս, մոտեցի՛ր, վերցրո՛ւ և այլն).**
2. **մի՛ արգելականը (մենագործառական է. այսպիսին է միայն հրամայական եղանակի դրական խոնարհման ձևերի կողքին).**
3. **այո՛, հա՛, ո՛չ, չե՛ պատասխանական բառերը.**
4. **կոչականը.**
5. **հարցական դերանունները՝** նաև հարցական երանգին փոխարինող շեշտական կամ բացականչա-

¹⁴⁰ Տե՛ս՝ Պ. Պողոսյան, Խոսքի, մշակույթի և ոճաբանության հիմունքներ, հ. 1, Եր., 1990, էջ 333-334:

կան փոխարինումներով (գործառական-իմաստային որոշ փոփոխությամբ)։

6. **մի՞թե (մի՛թե)-ն, չէ՞ որ-ը.**

7. կրկնադիր շաղկապները՝ **և՛... և՛, կա՛մ...կա՛մ** և այլն.

8. ձայնարկությունները (**ա՛յ // ա՛յ , հե՛յ // հե՛յ, ա՛խ // ա՛խ, վա՛յ // վա՛յ, օ՛ // օ՛** և այլն)։

9. հարցական դերանունները կամ հարցական բառերը՝ անուղղակի մեջբերվող խոսքում կամ ընդհանրապես նախադասության երկրորդական մասում, եթե շաղկապողի դեր է կատարում **թե-ն**։ Ս. Աբրահամյանի, Պ. Բեդիրյանի կողմից բազմիցս ընդգծված, բայց տարիներ շարունակ անուշադրության մատնված այս կետադրումը հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար նախատեսված դասագրքում այսօր ներառված է կանոնի տեսքով. «**զ) թե-ից հետո եկող երբ, որտեղ, ո՛ր, ո՛վ, ո՛ր, ի՛նչ, ինչպե՛ս, ինչո՛ւ, որքա՛ն** բառերը (օրինակ՝ **Չգիտեմք, թե ի՛նչ էր ուզում մեզանից)**»¹⁴¹։

¹⁴¹ **Ղ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Պալստյան**, Մայրենի, 5 (Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք), Եր., 2015, 168 -170։

Լեզվի զարգացման ցանկացած շրջանում լեզվական նորմի փոփոխությունը կամ կատարված ու կատարվող տեղաշարժերի ընթացքը նկատելի է դառնում պատմահամեմատական քննությամբ, երբ հետաքրքրող ժամանակաշրջանում գործող նորմն իր կանոնաշարքով և նկատված շեղում-դիտողություններով կամ շեղում-միտումներով համեմատության մեջ է դրվում պատմական այլ ժամանակաշրջաններում գործող նորմի հետ: Համեմատությունը հիմնականում կատարվում է նորմատիվ քերականությունների, բառարանների միջոցով: Նույնը վերաբերում է և շեշտադրական նորմին: Սակայն խորհրդային շրջանից սկսած բոլոր դեպքերում առանցքային է համարվել հայերենյան շեշտի համընդհանրական բնույթը. տեղաշարժերի, զուգաձևությունների մասին, կարելի է ասել, գրեթե խոսք չկա: Նորմատիվ բառարաններն էլ այս առումով ոչինչ չեն հավելում: Սա նշանակում է, որ շեշտադրական նորմի փոփոխության մասին լեզվական նյութ գրեթե չկա:

Լեզվական նորմի փոփոխության պատմական ընթացքի վերհանման հարցում գեղարվեստական գրականությունը ևս չի կարող ուղղորդիչ նշանակություն ունենալ, քանի որ հատկապես խորհրդային գրականությունը առավել հետևողական էր, առավել պարտավորված շեշտագծանշման հարցում, իսկ նկատված անկանոն շեշտադրումները, շեշտադրական շեղումները ամենից առաջ բացատրվում էին ոճական նկատառումներով կամ դիտվում էին պարզապես վրիպակներ, անուշադրության հետևանքով բացթողումներ, սրբագրական աշխատանքի թերացումներ և այլն: Լեզվական նորմի փոփոխության գիտական ճանապարհներից մեկը հայտնի լեզվաբանների աշխատությունների լեզվի համեմատական

քննությունն է՝ ժամանակակետային տարբեր ընդգրկումներով: Սա նշանակում է, որ կանոնի և նրա գործառության սահմանների ճշտումը ներկայացվում է ոչ միայն որևէ լեզվաբանի տեսական հայացքների, տեսակետների կամ արված դիտողությունների հիմքի վրա, այլև նրա անհատական խոսքում տեղ գտած գծանշված բառերի գործնական կիրառություններով: Այսպես՝ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության»՝ 1965թ. լույս տեսած վերամշակված տարբերակից քաղել ենք նմանատիպ գործածություններ, որոնք որոշ չափով կարող են «խոսել» նորմի փոփոխության մասին: Այսպես՝ «Նայելով, թե լեզուն ինչ դրության մեջ է և իր **ո՛ր** մասով և **ո՛րքան** է բարձրանում դեպի քիմքի այս կամ այն կողմը» (էջ 72): «...Նայելով թե այդ բաղաձայնի արտաբերությանը մասնակցող գործարաններից **ո՛րին** ավելի մեծ նշանակություն են տալիս...» (էջ 81): «Կամ թե հաստատվում է, որ վախկոտ հատկությունն է՛, կա նապաստակի մեջ» (էջ 360): «... պատասխանում են... **ո՛րտեղ, ո՛րտեղից, ո՛րտեղով, ո՛րքան տեղ...**, **երբվա՞նից, ո՛րքան ժամանակ...**, **ի՞նչպես** հարցերին» (էջ 380): «Չափ ու քանակի պարագան պատասխանում է ՝ **ո՛րքան, ո՛րչափ, ի՞նչքան, ի՞նչչափ, քանի՞, քանի՞ անգամ** հարցերին» (էջ 380): «Ցույց է տալիս ... մեկդի դնել մի բան մի բանի միջից, **ուր որ է՛** իրոք...» (էջ 482): «Երբ անունն իր վերադրով միասին առնվում է իբրև խոսքի մի մաս և պատասխանում է **ի՞նչպիսի, ո՛րքան, ո՛րչափ, ո՛րքան, ո՛րտեղ, ո՛րքան ժամանակ, ո՛րքան ժամանակվա, ո՛րքան ժամանակից** և այլն, **քանիսի՞, ո՛րքանի, քանիսո՞վ, քանո՞վ, ո՛րքանով, ո՛րքանը, ո՛րչափը, քանի՞ց** և այլն հարցերին. որոնք ցույց են տալիս չափ ու քանակ, գին ու արժեք, ժամանակ և կամ առարկայի հատկանիշ» (էջ 515): «**Սիրելիք**, օգնության հասեք» (էջ 681) և այլն: Կարծում ենք՝ բերված անհամապատասխանությունները հենց այդ ժամանակի կնիքն են կրում: Իհարկե, շեշտադրական նման գործածությունները իրավական ուժ չեն ունեցել, որոշումներով կնքված չեն եղել, բայց անվանի հայագետի աշխատությունից մեջբերված գծանշված բառերի միջոցով կարող ենք պնդել, որ այդ ժամանակ հարցական դերանունների առաջադիր շեշտադրությունը անկանոն չի համարվել, կամ թույլատրելի է եղել

օժանդակ բայի շեշտադրումը և այլն: Իհարկե, կարող ենք նաև ասել, որ շեշտադրության նորմավորման հարցերն այն ժամանակ առանձնակի ուշադրության չեն արժանացել, իսկ գրական հայերենը կրել է աշխարհաբարի ազդեցությունը:

Շեշտադրական նորմի փոփոխության պատկերն առավել ցայտուն կերևա, եթե ուշադրություն դարձնենք շեղումների բնույթի վրա: Առանձնացրել ենք շեղումների 3 խումբ՝

ա) շեղումներ, որոնք կանոնական են և կանոն-բացառության տեսքով ամրակայված են նորմատիվ քերականություններում.

բ) շեշտադրական տեղաշարժեր և զուգաձևություններ, որոնք գրական լեզվի շրջանակներում են, բայց ամրակայված չեն.

գ) շեշտադրական շեղումներ, որոնք գրական չեն, հետևաբար սխալ են:

ՇԵՏԱՂՐԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Լեզուների պատմահամեմատական քննությունը ցույց է տալիս, որ ոչ մի լեզվում չկան «մաքուր» կանոններ. կան կատարյալի ձգտող, բայց ոչ կատարյալ կանոններ: Յուրաքանչյուր կանոն ունի իր բացառություն-կանոնը: Արդեն ասվել է՝ բացառություն-շեղումների վրա երկու տեսանկյունից պիտի նայել. մի դեպքում դրանք պետք է դիտել իբրև կանոնի կողքին մի ուրիշ երկրորդական կամ երկրորդական դարձած կանոնի արդյունք, որի ուսումնասիրությունը, անշուշտ, լեզվի պատմական ուղու շատ «փակ» էջեր կարող է բացել: Մյուս կողմից՝ դրանք պետք է համարել լեզվի ներքին զարգացման կամ արտաքին այլ ազդեցություններով պայմանավորված միտումների արձագանքներ, որոնք դեռևս ամբողջապես բացատրված չեն, բայց և որոնք բացատրություն են պահանջում և ունակ են կայուն օրինաչափության վերածվելու:

Շեշտադրական նորմը ևս սահմանում է կանոն կամ կանոններ, բայց և կանոն է դարձնում նրա բացառությունը: Ավելին՝ հետաքրքիր է Ա. Պապոյանի ձևակերպումը՝ **բացառությունն էլ կարող է ունենալ իր բացառությունը**. և բերում է **ը** ձայնավորի օրինակը.

ը-ն ժամանակակից հայերենում չի շեշտվում, սակայն, որպես բացառություն, ունի իր բացառությունը. մեկ-երկու դեպքում շեշտվում է (այս մասին տես ստորև): Ոչ կանոնական շեշտադրությունը ինչ-որ ազդեցություն թողնո՞ւմ է խոսքաշարի ձևավորման վրա: Բնականաբար, այո՛. բացի հնչերանգային ձևավորվածության տարբերության պատճառ դառնալուց՝ վերջադիր չլինելու դեպքում շեշտը դադարում է սահմանազատիչ ազդանշան լինելուց: Ըստ Ա.Սարգսյանի՝ դասական գրաբարում որպես սահմանային ազդանշան, **ս, դ, ն** հոդերի, հոգնակերտի և դադարի հետ հանդես է գալիս նաև շեշտը. «Դասական գրաբարի շեշտի հիմնական գործառությունը բառերի սահմանազատումն է միմյանցից: Դա ընդհանուր կանոն է, և միայն **ն, ր, դ** ձայնորդներով, **ք** հոգնակերտով, **ս, դ** հոդերով սահմանափակ կապակցություններ են, որ ընդհանուր կանոնից շեղվում են (ինչպես բազմաթիվ լեզուներում, գրաբարում ևս բառային սահմանները միշտ չէ, որ հաստատուն և սխտեմատիկ արտահայտություն ունեն): Նույն երևույթը առկա է նաև որոշ կցական և հարադրավոր բարդություններում»¹⁴²: Դասական գրաբարի համար ասվածը օրինաչափական է նաև ժամանակակից հայերենի համար. բոլոր այն դեպքերում, երբ շեշտը վերջնականային չէ, այն **սահմանազատիչ** կամ **բառաբաժան** դեր կատարել չի կարող¹⁴³:

Շեշտադրված հայերեն մի քանի ավետարանագրքերի մասին խոսելիս Ա. Մեյեն ուշադրության կենտրոնում է պահում նաև շեշտադրական շեղումները: Նա գրում է. «Այնուհանդերձ բուն հայերենի մի քանի բառեր կարծեք շեշտն ընդունում են այլ վանկերի վրա: Բայց բոլոր դեպքերում մենք գործ ունենք ծագումնաբանորեն որոշակի բառերի հարադրության հետ, որոնցից կամ առաջինն էր միայն շեշտված, կամ առաջինը երկրորդից ավելի ուժեղ էր շեշտված: Դա բոլորովին ակնհայտ է **ո՛չինչ**-ի մեջ, որը միանգամայն կա-

¹⁴² Հայոց լեզվի կառուցվածքը, էջ 286-287:

¹⁴³ Ըստ «Լեզվաբանական բառարանի»՝ «բառաբաժանը այն սահմանը (խոսքի շղթայում) և սահմանը ազդարարող նշանն է, որով վերջանում է մեկ բառը և սկսվում է մյուսը»:

րող է գրվել մեկ բառով... Դա հասկանալի է նաև այնպիսի բառերում, ինչպիսին են՝ **ա՛յսպէս, ... նո՛յնպէս ...** Ակնհայտ է նաև **ահա՛ւասիկ**-ի համար, քանի որ **ահա**-ն գոյություն ունի առանձին: Ավելի ուշագրավ են **ա՛յնորիկ**-ը, ... **ա՛յդորիկ**-ը»¹⁴⁴:

Շեշտադրության նորմավորումը և նորմի յուրացումը ճանապարհ է բացում նաև հնարավոր շեղումների, աղավաղումների, «եղծմունքների» համար: Նորօրյա հայերենում մի շարք բառեր չեն ենթարկվում ընդհանուր շեշտադրման, շատ բառեր էլ հենց այդպիսի հարաշեշտությամբ է ժառանգել: Լեզվաբանական տարբեր աղբյուրներում շեշտադրական նորմն ամբողջացնելիս ներառվում են նաև կանոնական դիտված այդպիսի շեղումները: Հ. Աճառյանը գրում է. «Երբ բառը բարդ է, և նրա առաջին մասը մի ցուցական կամ հարցական (**որ, ինչ**) և կամ **սոյն, նոյն, ո՛չ, ահա** մակբայը, շեշտն անցնում է առաջին մասի վրա... Ինչպես էլ լինի, շեշտադրության այս ձևը ո՛չ թե զուտ լեզվական է, այլ տրամաբանական, այնպես որ վերի ձևերը ըմբռնված են իբրև երկու առանձին բառ, այսպես՝ **յայն ժամ, ո՞ր պէս, նոյն պէս**. - (**ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ** ձևերի հնագույնն է **ահա՛ աւասիկ, ահա՛ աւադիկ, ահա՛ աւանիկ**, որոնք նույնպես գործածական էին հին հայերենում): Սրա պարզ ապացույցն այն է, որ միևնույն բառերը կարելի է շեշտել նաև ըստ սովորականին՝ վերջնականակում, ինչպես՝ **այսպէ՛ս, այսպիսի՛, որպիսի՛, ,յայնժամ, ահաւասի՛կ** և այլն: Այսօր բառը հնչվում է **ա՛յսօր** կամ **այսօ՛ր**: **Ոչինչ** բառը արևելահայոց մեջ հնչում է **ո՛չինչ**, արևմտահայոց մեջ՝ **ոչի՛նչ**»¹⁴⁵: Նույն տեղում գրում է. «Արդի գրական հայերենում առաջին վանկի վրա շեշտված բառեր են նաև **ա՛րդեն, գո՛ցե, թե՛ն, թե՛պետ, թե՛պետև, սա՛կայն, գո՛նե, գրե՛թե, հի՛մա, ա՛րդյոք, դա՛րձյալ, նա՛ն, մա՛նավանդ, նա՛մանավանդ, նո՛յնպես, դասական թվականների մեջ՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, տասներորդ**: Կոչականների մեջ, օրինակ, շեշտվում են՝ **ո՛րոյակ, հա՛յրիկ, մա՛յրիկ, քո՛յրիկ ...**, **Պե՛տրոս, Պո՛ղոս, Ղա՛զար, Սե՛րոբ,**

¹⁴⁴ **Ա. Մեյե**, Նշվ. աշխ., էջ 467:

¹⁴⁵ **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 335-336:

Գրիգոր, Հռիփսիկ»¹⁴⁶: Թ. Ղարազյուլյանն ուղղախոսության հարցերի քննության առնչությամբ շեշտադրական շեղումների մի քանի խմբեր է առանձնացնում. «Վերջընթեր վանկի վրա է շեշտը ցուցական դերանուններով կազմված մի շարք բառերի. օրինակ՝ **սոյնապես, նոյնապես** և այլն: Կամ՝ **որ, քանի, նույն** բաղադրիչներ պարունակող բառերը (**ո՛րտեղ, ո՛րերորդ, քանի՛երորդ, նո՛յնապես, նո՛յնքան**) կամ՝ մի խումբ բառերում, որոնք գերազանցապես կցական բարդություններ են, բառային շեշտը վերջին վանկի վրա չի դրվում, ինչպես՝ **նո՛յնիսկ, նո՛յնապես, նո՛յնչափ, մի՛գուցե, այ՛սպես, որա՛յնսգի, ո՛րևէ, ի՛նչևէ, ե՛րբևէ, ով՛հիցե, երբևհիցե, ի՛նչևհիցե, նա՛մանավանդ, ո՛րտեղ, ի՛նչպես, ո՛րպիսի, ի՛նչպիսի, ո՛րքան, դա՛րձյալ, գո՛նե, իհա՛րկե, մի՛միայն, ահա՛վասիկ, մա՛նավամդ, նա՛խքան, հի՛մա, իսկո՛յնեթ, թեկո՛ւզև, թեպե՛տև** և այլն: Սակայն հայերենի վերջադիր շեշտի ազդեցությամբ այս բառերից շատերը ներկայումս արտասանվում են նաև վերջադիր շեշտով: Օրինակ՝ **նա՛խքան... և նախքա՛ն... Նույնը** կարելի է ասել **նաև, օրի՛նակ, բացի, գուցե, ուստի, գոնե, գրեթե, երբևէ, ինչևէ, դարձյալ, նույնիսկ, նույնապես, այսչափ, առհասարակ, հատկապես, մանավանդ, նամանավանդ, հիմա, ահավասիկ** բառերի մասին»¹⁴⁷:

Այս երևույթը, երբ շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա, կոչվում է հարաշեշտություն, իսկ նման բառերը՝ հարաշեշտ: Հայերենագիտական բառարանում նշվում է նույնը՝ հավելված «Տատանումներ ևս կան» նախադասությամբ¹⁴⁸:

Թեպետև հայերենում բառասկիզբը ուժեղ դիրք է, և այդ դիրքում գտնվող վանկերը բառամիջի և բառավերջի վանկերի համեմատությամբ ունեն ուժգնության ավելի բարձր արժեքներ, սակայն այդ արժեքը չեզոքանում է հայերենի համընդհանրական կանոնի ազդեցությամբ. շեշտակիր վերջնավանկը իրեն նախորդող վանկերի համեմատությամբ գրեթե միշտ ունի ավելի մեծ ուժգնություն: Եվ

¹⁴⁶ Հ. Աճառյան, Եզվ., աշխ., էջ 336:

¹⁴⁷ Տե՛ս՝ Թ. Ղարազյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջ 221:

¹⁴⁸ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 496:

շեշտադրական նորմը սահմանում է՝ **Ժամանակակից հայերենում շեշտն ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա**: Սակայն «գրեթե բացառություն չճանաչող» այս կանոնն ունի բացառությունները. դրանք օրինաչափական են և երկրորդական-հավելվածային կանոնների տեսքով ամրակայված են շեշտադրական նորմում:

1. Դրանցից մեկի և ամենակարևորի մասին արդեն խոսվել է՝ օտար անձնանունների, տեղանունների և մի շարք հասարակական անունների՝ օտար լեզվի շեշտադրմանը համապատասխան շեշտադրելու հնարավորությունն է՝ միայն ուղիղ ձևերում... **Պոլշկին, Հենրիխ Հայնե, Իսպանիա (Իսպանիա), Անգլիա (Անգլիա), ռադիո, տեխնիկա, օլիմպիադա, քիմիա, մաթեմատիկա...**

2. Մի շարք համադրական կազմություններում (կցական բարդություններում) շեշտը վերջնավանկային չէ (կա՛մ առաջին վանկի վրա է, կա՛մ վերջընթեր), ըստ երևույթին դրանք նախկինում հարադրական բարդություններ էին, պահպանել են իրենց շեշտը, այսինքն՝ երկրորդ բաղադրիչը չի շեշտվում և հարել է շեշտակիր առաջին բաղադրիչին. **մա՛նավանդ, նա՛մանավանդ, գրե՛թե, գո՛նե, մի՛միայն, մի՛գուցե, գո՛ցե, որպե՛սզի, իհա՛րկե, մի՛թե, նա՛ն, ո՛չինչ, ահա՛վասիկ...** Հարաշեշտ են նաև **թե՛ն, թե՛պետ, թե՛պետև, սա՛կայն, հի՛մա, ա՛րդյոք, դա՛րձյալ, ա՛յսօր** բառերը, որոնք, սակայն, շեշտադրական տատանումներ ունեն:

3. Երբ բարդ բառի առաջին մասը ցուցական կամ հարցահարաբերական դերանուն է՝ **ո՛րևէ, ո՛րևիցե, ե՛րբևէ, ե՛րբևիցե, ո՛վևէ, ո՛վևիցե, ո՛մևէ, ի՛նչևէ, ի՛նչևիցե, նո՛յնպես, նո՛յնչափ, նո՛յնքան, նո՛յնիսկ**: Սակայն այս կարգի բառերում նկատվում է շեշտի՝ վերջին վանկի տեղափոխման միտում՝ **նոյնի՛սկ, նոյնպե՛ս, նոյնչա՛փ, նոյնքա՛ն** և այլն: Վ. Պետրոսյանը համադրական այս բարդություններում ժամանակագրական առումով տևողությունն է շեշտում, ուշադրություն դարձնում հնչերանգային տոնայնությանը, բառային իմաստին և ամենակարևորը՝ դրանց արժեքին. նախագրաբարյան շրջանից մեր օրերն են հասցրել ոչ վերջնավանկային շեշտադրության սկզբունքը՝ կարելի է ասել՝ նախագրաբարյան շրջանի «շեշտադրական նորմի» մի կարևոր յուրահատկություն-կանոնը: Նա

գրում է. «Ավելին, ըստ ամենայնի՝ գրաբարում ևս վերոհիշյալ ոչ վերջնավանկային շեշտադրության դեպքերը հնաբանություններ են, որոնք փոխանցվել են նախագրաբարյան շրջանից: Եթե վերջնավանկում **ը** ունեցողների՝ առաջին վանկի վրա շեշտ կրելը հիմնավորում է համարվում **ը**-ի թույլ ձայնավոր լինելու հանգամանքը, որի պատճառով նշված դիրքում այն գրության մեջ չի էլ արտահայտվել, ապա մյուսների դեպքում առաջին կամ նախավերջին վանկերի շեշտառությունը պայմանավորված է դրանց տոնային հնչերանգով, իսկ վերջինս էլ՝ բառային իմաստով. դրանք կամ եղանակավորող բառեր են (հմմտ. **գոնէ, գուցէ, թեպէտ, թէեւ, մանաւանդ, միթէ**), կամ մակբայներ են (հմմտ. **դարձեալ, իսկոյն, յանկարծ**), կամ էլ՝ դերանուն (հմմտ. **նոյնապէս**), որոնք բոլորն էլ գնահատողական վերաբերմունքի կրողներ են. այն է՝ խոսքի եղանակավորիչներ: Իսկ այդպիսի բառերում շեշտը, խոսողի վերաբերմունքից կախված, կարող էր ընկնել ցանկացած վանկի վրա: Հետևաբար այդ սակավաթիվ բառերը նախագրաբարյան փուլից մեր օրերն են հասցրել հին հայերենի բառային շեշտի կարևոր յուրահատկություններից մեկը՝ ոչ վերջնավանկային շեշտադրության սկզբունքը»¹⁴⁹:

Մեր ժամանակներում նման ձևով են շեշտադրվում նաև **կերպ, տեսակ** բառերը **այս**-ին, **այդ**-ին (**այն**-ը սակավ գործածական է) հարադրվելիս՝ **թե՛ միասին, թե՛ անջատ** գրության դեպքում. **այս կերպ** և **այ՛սկերպ**, **այդ կերպ** և **այդկերպ**, **այս տեսակ** և **այստեսակ**, **այդ տեսակ** և **այդտեսակ**: Արդի հայերենում **Թ**. Ղարազյուլյանի վերը թվարկած բառերից **սույնպես**-ը գործածությունից դուրս է եկել, իսկ անկանոն շեշտադրություն չունեն, օրինակ, **բացի, ուստի, առհասարակ, հատկապես, որտեղ, ինչպես, որպիսի, ինչպիսի** բառերը, մյուսներն այսօր էլ շեշտադրական տարբերակներ ունեն: **Թեկուզև, թեպե՛տև** բառերն էլ շեշտի դիրքի տարբերություններ ունեն նաև՝

¹⁴⁹ **Վ. Պետրոսյան**, նշվ., աշխ., էջ 281: Լեզվաբանը Հովգեր Պեդերսոնի «Հին հայերենի ցուցական դերանունները» գրքից, Վիեննա, 1907, էջ 44/. մեջքերում է նաև հետևյալ միտքը. այս բառերի մեծ մասը «պարզ առընթերադրությոնք չեն, բայց այնպիսի բառեր են, որոնք իրենց նշանակութեամբն ատակ են սաստկութեան եւ հակադրութեան շեշտն առնելու» (նույն տեղում, էջ 281):

թեկուզև, թեպետև, այսինքն՝ բացառություն լինելու դեպքում էլ գուգաձևություններ են:

4. Բառավերջում փակ վանկի չգրվող **ը** ծայնավոր ունեցող բառերում առաջին (լի) վանկի ծայնավորն է շեշտվում, ինչպես օրինակ՝ **անգղ, աստղ, կոճղ, գանփռ, կարծր, թանծր, վագր, սանր, արկղ, դուստր, մանր, փոճր, ծանր, բարծր, կայսր, տե՛տր, մեղր, դա՛ռն(ը), խա՛ռն(ը), սա՛ռն(ը)** և այլն: Նույն կանոնն է գործում նաև սրանք իբրև վերջնաբաղարիչ ունեցող բառերի դեպքում (**վեհանձն, առատածե՛ռն, լիաբո՛ռն, արքայադո՛ստր** և այլն):

5. Եռավանկ այն բառերում, որոնց վերջին վանկը լի չէ, շեշտվում է նախորդ՝ վերջընթեր վանկի ծայնավորը՝ **ուրե՛մն, երբե՛մն** և այլն:

6. Հարաշեշտ են այն բառերը, որոնք ծայնավորված են **ը** որոշյալ հոդով. այս դեպքում շեշտն ընկնում է վերջընթեր վանկի վրա (**աշակե՛րտը, գի՛րքը, դիմո՛րդը...**): Ը-ի դիրքում ն տարբերակն ունենալու դեպքում նույն օրինաչափությունը պիտի գործի (**աշակե՛րտն (ուրախ է), գի՛րքն (Արամինն է), դիմո՛րդն (ուշացավ)** և այլն: Սակայն այստեղ խաչաձևվում է մեկ այլ արտասանական պահանջի հետ: Ըստ Պ. Բերդիրյանի՝ «Ճայնավորով սկսվող բառերից առաջ պետք է ոչ թե Ը, այլ Ն (հոդը) գործածել. «Արամն ասաց», «Մայրն ընդունում է», «Տանն է եղել», «Սարգիսն ուզել է»: Ըստ որում այդ Ն-ից առաջ «ը» չպետք է լսվի. Ն-ն պետք է հաջորդող ծայնավորին միանա (մոտավորապես այս կերպ պետք է հնչեն՝ «արամնասաց», «մայրնընդունումե», «սարգիսնուզելե» և այլն)»¹⁵⁰: Նշանակում է՝ բառային և շարությանային շեշտերը չեն համընկնում: Ն որոշյալ հոդն ունենալու դեպքում բառերը ենթարկվում են համընդհանուր շեշտադրության (**մեղո՛ւն, պատանի՛ն, երեխա՛ն** և այլն):

7. Եթե բառավերջի վերջին բաղաձայնից հետո բառն ունի **ս, դ,** հոդերը, ապա շեշտվում է նախավերջին վանկի ծայնավորը՝ **երկի՛րս, քաղա՛քս, գի՛րքը** և այլն:

8. Եթե **ը**-ն բառի միակ վանկարար հնչյունն է. **տը՛զզ, ճը՛ռռ, հը՛ր, բը՛զզ, չը՛խկ** և այլն: Այս շեղման մասին Ա. Պապոյանը գրում է.

¹⁵⁰ Պ. Բերդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 2007, էջ 18:

«Բացառություն է կազմում **ը** ծայնավորը, որ շեշտ առհասարակ չի ստանում: Սակայն այս բացառությունն էլ ունի իր բացառությունները, որոնք վերաբերում են երկու կարգի բառերի. առաջին կարգը կազմում են բնածայնական կոչված բառերը, որոնց միակ ծայնավորը հենց **ը-ն** է (**շրըխկ, չրըխկ, բըռռ, դըռ, դըռ, գըռ** և այլն), երկրորդ կարգը, չհաշված **ըստ, ընդ** նախդիրները, որոնք սովորաբար շեշտ չեն առնում (կապերն ընդհանրապես շեշտակիր չեն), միակի է. այն հայոց մեջ գործածված Եգիպտոսի պարսկաարաբական անվանումն է՝ **Մսըր**»¹⁵¹: Այսօր նմանատիպ **Քըրք** անձնանունն էլ կա: Հետաքրքիր է մամուլում շրջանառվող **դրդզ** բառը (Ղրղզստանի քաղաքացի). այն արտահայտության պլանում չունի ծայնավոր հնչյուն, արտասանությամբ երկվանկ է՝ **[դըրդզ]**. առավել հակասականն այն է, որ լսողական տպավորությամբ երկու վանկերն էլ հավասար ուժգնությամբ են հնչում՝ որոշակի առանձնացմամբ: Հետաքրքիր է խոսակցականից գրական լեզու թափանցած **ըհը-ն**՝ երկակի շեշտադրությամբ՝ **ըհը // ըհը**. շեշտադրական համանունություն է. **ըհը**՝ ձևով ունի «այո» իմաստը իսկ **ըհը**՝ ձևով՝ «ահա» իմաստը («Կգա՞ս տանենք Հայաստան»: -« Ըհը» (Վ. Պետրոսյան): «Ըհը, տեսա՞ր, հոգիդ թեթևացավ, իսկը խմելու ժամանակն է», «-Ըհը, մի հատ հավեսով կեր,- գոլորշի արծակող տոլման մի կերպ Գրիգի առջև խցկեց Հասմիկը: -Ըհը,- լի բերանով դժվարությամբ արտաբերեց Գրիգորը» (Գ. Խանջյան)):

9. Մի քանի բառերում էլ շեշտը միշտ հարցական ելևէջման հետ է հանդես գալիս՝ շատ դեպքերում փոխարինելով նրան, օրինակ՝ **մի՞թե (միթե), ո՞րերորդ (ո՞րերորդ), քանի՞երորդ (քանիերորդ)** և այլն: **Արդյոք**-ը առավելապես առանց հարցական երանգի է գործածվում, սակայն սխալ չէ և նրա հարցական հնչումը՝ **արդյո՞ք**. սխալը է, երբ հարցական նշանը վերջընթեր վանկի վրա է դրվում: **Գուցե** և **երևի** բառերը հարցական երանգով չեն գործածվում...

10. Շեշտադրության անկանոնություն է նկատվում **-երորդ** ածանցով կազմված մի շարք դասական թվականներում, շեշտվում է ոչ թե ածանցը, այլ նրան նախորդող վանկը (թվականական արմա-

¹⁵¹ Ա. Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 2007, էջ 258:

տը), ինչպես՝ **հի՛նգերորդ, յո՛թերորդ** և այլն, և սրանցով կազմված այնպիսի բառերում, որոնցում սրանք վերջնաբաղադրիչներ են. **տասնմեկերորդ, տասներկուերորդ, տասնվեցերորդ, հարյուրքսանյոթերորդ** և այլն: Գոյականաբար գործածվելիս թեք ձևերում դադարում են հարաշեշտ լինելուց: Օրինակ՝ **տասնմեկերորդի՛ց, տասներեքերորդո՛վ**: Բացառություն են կազմում **երկրորդ, երրորդ, չորրորդ** թվականները, որոնցում շեշտվում է **-րորդ** ածանցը: Ըստ Թ. Ղարազյուլյանի՝ **երկրորդ, երրորդ, չորրորդ** թվականներում վերջին վանկի շեշտումը հաստատուն է: Նույնը նաև **Ֆ. Խլդաթյանն** է նշում. **-րորդ** վերջնաբաղադրիչով թվականների շեշտը նորմատիվ է՝ **երրորդ, չորրորդ**:

11. Վերջընթեր շեշտ են ընդունում բայի բաղադրյալ ժամանակածները. սովորական շարադասությամբ դրական խոնարհման ժամանակ շեշտակիր են ձևաբայերը (կախյալ դերբայները). օժանդակ բայերն անգամ թույլ շեշտ չեն ընդունում և հարում են շեշտակիրներին, ինչպես՝ **բերում են**, իսկ ժխտական խոնարհման ժամանակ շեշտվում է ժխտական օժանդակ բայը, ինչպես՝ **չեն սիրում**: Նաև՝ արգելական հրամայականները (**մի՛ գա, մի՛ կեր** և այլն): Թ. Ղարազյուլյանը գրում է. «Ներկայումս բանավոր խոսքում շատ տարածված է հարցական մի շարք նախադասություններում ձայնի բարձրացումը օժանդակ բայի վրա, եթե նախադասության մեջ հարցական բառ չկա, օրինակ՝ **Հիմա ե՞ք գնում: Դուրսը անձրև է՞: Հիմա իջնում ե՞ք: Կարծում եք՝ հեշտ է՞ նրա հետ աշխատելը**: Այսպիսի շեշտադրությունը, որ բնորոշ է խոսակցական լեզվին, անշուշտ կանոնական չէ: Հանձնարարելի է հետևյալ հնչումը՝ **Կարծում եք՝ հե՞շտ է: Հիմա՞ եք գնում** և այլն, որը ավելի շատ դրսևորվում է բարձր ոճում, բարձրաձայն ընթերցման ժամանակ և այլն»¹⁵²:

Կարծում ենք՝ ժամանակակից հայերենում մի նոր միտում է ձևավորվում. միասնաբար արտասանվելու դեպքում օժանդակ բայը վանկ է կազմում դերբայի վերջին հնչյունի հետ և հարում է շեշտակրության՝ **«բե-րու-մէ՛», «կար-դա-ցե-լէ՛»**. հետաքրքիրն այն է, որ ապակատար դերբայի դեպքում, որ վերջավորվում է ձայնավորով,

¹⁵² Թ. Ղարազյուլյան, ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974:

կիսահունչ յ- է լսվում, որ վանկ է կազմում օժանդակ բայի հետ, որը և շեշտվում է՝ **գրելու-է**:

11. Շեշտադրության հետ կապված հետաքրքրություն են ներկայացնում ծայնավորական գուգորդումներ ունեցող բառերը. եթե երկու ուժեղ ծայնավորներ կողք կողքի են, ապա շեշտվում են երկուսն էլ, բնականաբար մեկը՝ ուժեղ, մյուսը՝ թույլ: Արդյունքում շեշտադրական տարբերակներ են ձևավորվում, որոնցում նախընտրելի պիտի համարվեն վերջնականային շեշտադրություն ունեցողները՝ **միայն** և **միայն**, **հեքիաթ** և **հեքիաթ**, **կրիա**՝ և **կրիա**, **Մարիամ** և **Մարիամ**: Ոչ վաղ անցյալում սրանցում նախընտրելի էին յ-ով արտասանությունները, որի ազդեցությամբ հաջորդող ծայնավորը շեշտված էր հնչում. այսօր, մեր կարծիքով, ճիշտ են հնչում առանց յ-ի կամ կիսահունչ յ-ով տարբերակները, որը, սակայն, իր հերթին հանգեցնում է շեշտադրական տեղաշարժի:

12. Շեշտը վերջընթեր է նաև հարադրական կազմությամբ մի շարք բառերում, որոնց վերջին բաղադրիչը **թե**, որ բառերն են. շեշտ են կրում առաջին բաղադրիչի վրա: Օրինակ՝ **ասես թե**, **միայն թե**, **կարծես թե**, **ինչպես թե**, **ո՛չ թե**, **ե՛րբ որ**, **հենց որ**, **մինչև՛ որ**, **քանի՛ որ** և այլն:

13. Ըստ շեշտադրական կանոնի՝ հարադրական բայերի շեշտը դրվում է հարադրի՝ ոչ բայական բաղադրիչի վրա, իսկ բայական մասը կամ շեշտ չի ստանում, կամ թույլ է շեշտվում՝ **ցոյց տալ**, **վեր կենալ**, **ման գալ**, **մայր մտնել**, **պա՛ր գալ**, **գլխի՛ ընկնել**, **թա՛փ տալ**, **լա՛ց լինել**, **խելքի՛ գալ**, **ջա՛նք անել**, **դու՛րս ընկնել** և այլն: Որոշ աղբյուրներում կանոնը մասնավորեցվում է՝ տարբերակելով կամ չշեշտվող բաղադրիչ, կամ թույլ շեշտվող բաղադրիչ ունեցող հարադրական բայեր: Օրինակ՝ Մ. Աբեղյանը նշում է, որ միավանկ բաղադրիչներ ունեցող հարադրյալ բայերի մեջ, որոնք կազմում են մի բառական միություն, շեշտվում է միշտ նախադաս հարադիրը, ինչպես՝ **ցոյց տալ**, **թափ տալ**, **ման գալ**, **եփ գալ** և այլն, իսկ այն հարադրավոր բայերը, որոնք «երկուսից ավելի վանկերից են կազմվում, ունեն երկու շեշտ, մեկը՝ գլխավոր կամ գորեղ շեշտ, որ ընկնում է սկզբում կամ հարադիր բառի վերջին վանկի վրա, մյուսը

երկրորդական կամ թույլ շեշտ, որ ընկնում է վերջին վանկի վրա, օրինակ՝ **լաճ լինե՛լ, մա՛ն ածե՛լ, ե՛տ դառնա՛լ, բա՛ց անե՛լ, ջա՛նք անե՛լ, ա՛ջք ածե՛լ, իմա՛ց անե՛լ, ակա՛նջ դնե՛լ, քո՛ւն լինե՛լ, փո՛խ առնե՛լ, չի՛ տալի՛ս, մի՛գուցե՛, ո՛չ երբեք»**¹⁵³։ Վերլուծական անորոշի կաղապարում և համապատասխան հարացուցային շարքերում շեշտվում է նյութական իմաստ արտահայտող դերբայ բաղադրիչը (**գրե՛լ տալ, գրա՛ծ լինե՛լ**)։ Ա. Մարգարյանը **անորոշ դերբայ + տալ** բայերի համար գրում է. «Միավանկ բայ բաղադրիչ ունեցող հարադրավոր բայերի պես պատճառական հարադիր բայերը մի ուժեղ շեշտ են առնում, որ, իբրև կանոն, ընկնում է անորոշի վրա, հմմտ. **սիրտ տալ, դու՛րս գալ, շա՛ղ տալ, շու՛ռ տալ, գլու՛խ տալ, գլու՛խ գալ և բերե՛լ տալ, գրե՛լ տալ, սիրե՛լ տալ, պատրաստե՛լ տալ, դատարկե՛լ տալ, մաքրե՛լ տալ** և այլն։ Պատճառական հարադիր բայերի **տալ** բաղադրիչի շեշտվելու դեպքում օժանդակ բայը հետո է դրվում։ Նման կիրառությունները, սակայն, ժամանակակից հայերենի համար խորթ պիտի համարել, ինչպես՝ **Եվ կյանքը սիրել տալիս ես մարդուն»**¹⁵⁴։ Կարելի է ասել՝ նման կազմություններում ոչ շեշտակիր բաղադրիչները բառ-մասնիկների են վերածվում։ Ընդհանրապես հարադրական բայերի համար Ա. Աբրահամյանը գրում է. «Բայական հարադրությունների քանակը հազարների է հասնում։ Դրանք կազմվում են բայական և ոչ բայական բաղադրիչներից, որոնք շարահյուսորեն կապված են իրար հետ։ Բաղադրիչների իմաստային ինքնուրույնության կորստի հետևանքով ավելի է սերտանում նրանց կապը, որը և նպաստում է բառական մեկ միավոր գիտակցվելուն։ Այդ հատկանիշներին զուգակցվել է բաղադրիչներից մեկի (բայական բաղադրիչի) բառական շեշտի թուլացումը, քանի որ նոր ձևավորվող բառույթի գլխավոր շեշտի դերը իր վրա է վերցրել ոչ բայական բաղադրիչը»¹⁵⁵։ Ըստ. Ալ. Մարգարյանի՝ հարադրով ու բայով արտահայտված ձևերի բառային ամփոփ միավոր լինելու մի այլ կարևոր ապացույցն էլ նրանց մի ընդհանուր բառային

¹⁵³ Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., էջ 20:

¹⁵⁴ Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 421- 422:

¹⁵⁵ Ա. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 94:

շեշտ ունենալն է: Նա եզրակացնում է. «...Հարադրավոր բայերը մեկ կամ՝ մեկ գլխավոր (գործող) ու մեկ երկրորդական (թույլ) շեշտ են առնում հենց «մեկ բառական միություն», բայական մեկ ամբողջական միավոր լինելու շնորհիվ»¹⁵⁶: Հարադրավոր բայերի հարադրի շեշտը գրավոր խոսքում հաճախ նշվում է:

Հարադրական բայերի շեշտադրության հարցը դժվար է, եթե մենք դրանք ընկալում ենք իբր բառույթներ. բառույթներ չընկալելու դեպքում ևս շեշտադրության հարցը դժվար է. շեշտվում են իբրև առանձին-առանձին բառույթներ: Իսկ ո՞րն է դժվարությունը: Բայական հարադրության և բայական բառակապակցության տարբերակումը, ոչ բայական բաղադրիչի լրացական իմաստի (պարագայական, խնդրառական) մթագնման աստիճանը, բայական հարադրության ճանաչումը: Այս խնդիրը իմաստային գործոնի և լեզվական ավանդույթի հաշվառմամբ պետք է լուծել, իսկ շեշտակրությունը՝ միայն ըստ շեշտադրական նորմով սահմանված կանոնի: Այս մասին Ս. Աբրահամյանը գրում է. «Եթե այդպես է, ապա ինչպիսի՞ կապակցությունները պետք է ընդունել ամբողջական բառույթներ, բայական հարադրություններ: Որպես այդպիսիք պետք է ընդունել այն բաղադրությունները, որոնք լեզվի մեջ իմաստային միասնության տեսակետից ձեռք են բերել որոշակի ավանդականություն, հիմնավորվել են պատմականորեն, և պարագայական կամ նման լրացուցիչ իմաստն այստեղ անջատ չի գիտակցվում, այն լուծված է բայիմաստի մեջ: Նշանակում է՝ հարադրությունը ճանաչելիս անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել իմաստային-ֆունկցիոնալ և պատմական-ավանդական գործոնները: Նման դեպքերում այս գործոններով է բացատրվում նաև բառական շեշտի գործածությունը: Ժամանակավոր կապակցությունների մեջ կապակցության անդամները հանդես են գալիս անկախ բառական շեշտերով, իսկ հարադրության մեջ կա ընդհանուր իշխող շեշտ (որը դրվում է ոչ բայական բաղադրիչի վրա, իսկ բայական բաղադրիչի շեշտը շատ թույլ է լինում, գրեթե չի զգացվում)»¹⁵⁷:

¹⁵⁶ Մ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 75:

¹⁵⁷ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերնում, էջ 185:

14. Եթե հարադրական բայերի շեշտառությունը միակերպ է, ապա նույնը չի կարելի ասել կրկնավոր, բաղիյուսական, համադասական հարաբերությամբ բաղադրությունների դեպքում. դրանք մասնագիտական գրականության մեջ տրվում են շեշտադրական տարբերակներով՝ **տու՛ն ու տե՛ղ // տո՛ւն ու տե՛ղ, սա՛ր ու ծո՛ր // սա՛ր ու ծո՛ր**: Անհրաժեշտ է հստակորեն սահմանել նաև այս բառերի շեշտադրության կանոնները: Մեր կարծիքով նմանատիպ սահմանման հիմքում կարելի է դնել Ս. Աբրահամյանի բնորոշումը: Նա «Ժամանակակից գրական հայերենում» հարադրական բարդ բառերը բաժանում է 2 տեսակի՝ **բուն հարադրական բառեր և կիսահարադրական բառեր**: Բուն հարադրական բառերի բնորոշ հատկանիշը նրանց բաղադրիչների անջատ լինելն է, որ արտահայտվում է բանավոր խոսքում թույլ դադարով, իսկ գրավոր խոսքում՝ անջատ գրությամբ: Բաղադրիչները սովորաբար ունենում են առանձին շեշտ՝ **զլխավոր և երկրորդական (սի՛րտ տալ, վե՛ր կենալ, մա՛ն գալ, վա՛ր ու ցա՛նք, լուռ ու մու՛նջ, կետ առ կետ, թոպե՛ առ թոպե՛)**. ամենակարևորը՝ համադասական հարադրություններում զլխավոր շեշտը դրվում է վերջին բաղադրիչի (օր.՝ **տու՛ն ու տե՛ղ**), ստորադասական կապակցություններում՝ առաջին բաղադրիչի (օր.՝ **վե՛ր կենալ**) վրա¹⁵⁸: Ս. Աբրահամյանի նշած կիսահարադրական բարդ բառերը գծիկով գրվող բառերն են (**մեծ-մեծ, գիշեր-ցերեկ, գնալ-գալ, ծել-ծաղկել, երկու-երեք**). «Կիսահարադրական բարդ բառերը կազմված են քերականորեն համարժեք երկու միավորներից, որոնց համագործությամբ ու կիսանկախությամբ էլ պայմանավորվում է յուրաքանչյուր բաղադրիչի շեշտ ունենալը: Այդ երկու շեշտերից երկրորդ բաղադրիչի շեշտն ավելի ուժեղ է, որը և կարելի է համարել զլխավոր: Կիսահարադրական բարդ բառերը լինում են երկու տեսակ՝ նույնարմատ (կրկնավոր) և տարարմատ (զուգադրական)»¹⁵⁹: Որպես բուն հարադրական բայերի օրինակ բերում է **գու՛նդ - գու՛նդ, մեծ-մեծ, կարճ-կարճ, երկու-երկու, արա՛գ-արա՛գ, ինչ-ինչ, քանի՛քանի՛, վա՛յ-վա՛յ, պե՛ս-պե՛ս, մո՛տ-մո՛տ** և այլ բառեր, իսկ որպես

¹⁵⁸ Տե՛ս՝ Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 92:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 97:

զուգադրական կիսահարադրական՝ տու՛ն-թանգարա՛ն, համե՛րգ-դասախոսությո՛ւն, հասարակական-քաղաքական, հա՛յ-ռուսական, չի՛ն-տիբեթական, հյուսի՛ս-ատլանտյա՛ն, ծլե՛լ-ծաղկե՛լ, զուգվե՛լ-զարդարվե՛լ, նստե՛լ-վերկենա՛լ // նստե՛լ-վե՛րկենա՛լ, ծալե՛լ-ծալծե՛լ, դողա՛լ-դողդողա՛լ և այլն:

Կրկնավոր բառերի յուրօրինակ շեշտադրություն կա Մուրվայյանի «Հայոց լեզվի բառային կազմը» աշխատության մեջ: Ջանազան մասնիկներով կամ կապերով միացած բառակրկնություններում առանձնացված են **հա**-ով կապակցվածները, որոնցում շեշտը **հա**-ի վրա է: Օրինակ՝ **փըշտ-հա՛-փըշտ, կըչ-հա՛-կըչ, գնա հա՛ գնա, տուր հա՛ տուր, բեր հա՛ բեր, գրիր հա՛ գրիր, քաշիր հա՛ քաշիր**¹⁶⁰: Դ. Գյուրջինյանի բառարանում **հա**-երը շեշտված չեն, շեշտված են նրանից աջ ու ձախ ընկած բաղադրիչները¹⁶¹:

Հետաքրքիր է **մեջք մեջքի, ուս ուսի, օր օրի, թև թևի**և նման տիպի հարադրությունների կետադրությունը: «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» բուհական դասագրքում նմանատիպ հարադրություններից ընդգրկված է **օր օրի**-ն՝ այսպիսի շեշտադրությամբ՝ **օր՝ օրի**, այսինքն շեշտվում է առաջին բաղադրիչը¹⁶²: Լեզվաբանական գրականության մեջ կա նաև **օր՝ օրի՛** տարբերակը. մյուս կողմից, եթե ընդունենք, որ որպես բառային մեկ միավոր սրանք մեկ շեշտ պետք է ունենան, նշանակում է՝ կա նաև երրորդ տարբերակը. **օ՛ր օրի // օ՛ր օրի՛ // օր օրի՛**: Նույնը կարելի է ասել զուգաբայերի մասին՝ **ասել-խոսել, գնալ-բերել, առնել-տանել, վազել-հասնել**: Նույն գրքում նույն տեղում **ասել-խոսել**-ը, ըստ հեղինակային խմբի, արտասանվում է այսպիսի շեշտադրությամբ՝ **ասել-խոսել**: Սրան հակադիր է Ա. Մարգարյանի կարծիքը: Ջուգադրական բայերում, իբրև կանոն, բաղադրիչներից յուրաքանչյուրը պահում է իր բառային շեշտը, որ, սովորաբար առաջինում ուժեղ, երկրորդում թույլ է արտահայտվում, ուստի և այն զուգադրական բայերը, որոնք կազմված են զուտ համադրական բայերի հարադրությամբ (**վերցնե՛լ-**

¹⁶⁰ Տե՛ս՝ Ա. Մուրվայյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 152:

¹⁶¹ Տե՛ս՝ Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան տեղեկատու. Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Եր., 2001:

¹⁶² Տե՛ս՝ Յու. Ավետիսյան և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 50:

փախչել, թողնել-գնալ, պառկել-քնել, ուտել-խմել, ընկնել-մեռնել, ետ դառնալ փախչել և այլն), արտասանական որևէ դժվարություն չեն հարուցում: Արտասանական դժվարություն չեն հարուցում նաև այն զուգադրական բայերը, որոնց բաղադրիչներից մեկն արտահայտված է համադրական, իսկ մյուսը՝ առաջադաս կամ ետադաս հարադրավոր բայով, թեև դա, ինչպես նշվել է, հատկանշվում է մեծ մասամբ երկակի՝ ուժեղ (դրվում է հարադրի վրա) և թույլ (դրվում է բայական բաղադրիչի վրա) շեշտով. հմմտ. **առնել դուրս գնալ, տանել ետ բերել, ծեծել դուրս անել** և այլն: «Երբ հարադրավոր բայը հանդես է գալիս իբրև բարդության առաջին բաղադրիչ, ուժեղ շեշտը հարադրից անցնում է բայական մասի վրա, հմմտ. **վեր կենալ և վեր կենալ գնալ, քաշ տալ և քաշ տալ բերել**, այլև՝ **գլուխ առնել կորչել, թև առնել թռչել** և այլն: Իսկ զուտ հարադրավոր բայերից կազմված զուգադրական բայերում քանի որ շեշտային կուտակումներ են առաջ գալիս, (հմմտ. **վեր կենալ ետ քաշել, պոկ տալ դեմ ծգել, վաճ տալ իմաց անել** և այլն), ապա արտասանական դժվարություններ են ստեղծվում հարադրավոր բայերի հարադրության համար, և լեզուն էլ, բնականաբար, խուսափում է այդպիսի կազմություններից»¹⁶³:

Երկշեշտ են և բաղիյուսական բարդությունները, ինչպես՝ **ծառ ու թուփ, բուք ու բորան, ծիլ ու ծաղիկ, թև ու թիկունք, լուռ ու մոնջ** և այլն: Բաղիյուսական բարդություններում իմաստային տեսակետից մեկ բաղադրիչը կարող է սաստկություն տալ մյուսին, կամ երկու բաղադրիչների իմաստը վերառված ձևով կարող է արտահայտվել ընդհանուր հավաքական իմաստի մեջ: Ըստ լեզվական կանոնի՝ այս բարդություններում բաղադրիչներն իրար նկատմամբ համազոր են, համադասական հարաբերության մեջ են և անկախաբար շեշտակիր են. պատճառներից մեկն էլ, չնայած շաղկապական տարրի առկայությանը (**ու**, մասամբ նաև՝ **և**), միջբաղադրիչային դադարն է, որը հիշեցնում է միջբառային դադարը: Այս դեպքում կարելի է կանոն դարձնել՝ **բաղիյուսական բարդության յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր շեշտը**. սովորաբար երկուսն էլ

¹⁶³ Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 321:

բառական շեշտ են ստանում, թեև դրանցից մեկը կարող է իր ուժգնությամբ գերիշխել մյուսին: Միասնական շեշտադրությամբ սրանք կորցնում են այդ դադարը, համադրվում մի ամբողջության մեջ՝ վերածվելով կցական բարդության (ա՛ն ու ծա՛խ // առուծա՛խ, ա՛ն ու հա՛ց // աղուհա՛ց, լա՛ց ու կո՛ծ // լացուկո՛ծ, հա՛տ ու կե՛նտ // հատուկե՛նտ, ա՛ի ու դո՛ղ // աիուդո՛ղ, ամի՛ն ու կե՛ն // ամիսուկե՛ն, բո՛ւք ու բորա՛ն /բուքուբորա՛ն, դե՛ղ ու դարմա՛ն // դեղուդարմա՛ն, դե՛ն ու դե՛ն // դեսուդե՛ն, թա՛ց ու չո՛ր // թացուչո՛ր, թե՛ն ու թիկո՛նք // թուլթիկո՛նք, թի՛զ ու կե՛ն // թիզուկե՛ն, լո՛ւռ ու մո՛նջ // լուռումո՛նջ, թո՛ւք ու մո՛ր //թուքումո՛ր, խա՛ղ ու պա՛ր // խաղուպա՛ր, խե՛ղճ ու կրա՛կ // խեղճուկրա՛կ, ծո՛ւռ ու մո՛ւռ // ծուռումո՛ւռ, կա՛րգ ու կանո՛ն // կարգուկանո՛ն): «Իբրև մի ամբողջություն կամ համադրական բառ գործածվող ձևերը, որ ճիշտ կլինեն հենց բաղիյուսական կցական բարդություններ կոչել, համադրական բառային միավոր են: Նրանք, ավելի վերառնված, մի նոր լայն նշանակություն են արտահայտում, մի ամբողջական բառույթ են ըմբռնվում, մի ընդհանուր բառային շեշտ են առնում (հմմտ. առևտու՛ր // ա՛ն և տո՛ւր, կերուխո՛ւմ // կե՛ր ու խո՛ւմ, եռուզե՛ռ / ե՛ռ ու զե՛ռ, ջարդուբո՛ւրդ // ջա՛րդ ու բո՛ւրդ), մի ամբողջական՝ համադրական բառին հատուկ քերականական կարգեր ու իրողություններ դրսևորում: Այն բաղիյուսական բարդությունները, որոնց բաղադրիչները և՛ միացած, և՛անջատ են գործածվում, մի դեպքում՝ առաջին, իսկ մյուս դեպքում երրորդ խմբի հարադրությունների հետ են կապվում: Դրանով նրանք անցումային վիճակ են ներկայացնում և, բնականաբար, ունենում իրենց ինչպես համադրական, այնպես էլ կցական ձևերը (հմմտ. կա՛րգ ու կանո՛ն – կարգուկանո՛ն, ծա՛կ ու ծո՛ւկ – ծակուծո՛ւկ, լո՛ւռ ու մո՛նջ – լուռումո՛նջ, տա՛րի՛ ու կե՛ն – տարիուկե՛ն), որոնք և ընդհանուր առմամբ նույն իմաստն են արտահայտում: Եվ, այնուամենայնիվ, դրանք միմյանց նկատմամբ նաև ինչ-որ տարբերություններ են երևան հանում: Համադրական (կցական) ձևերում բաղադրիչներն իմաստային ավելի սերտ կապով են կապվում իրար հետ, բարդության ընդհանուր նշանակությունը ավելի է զորանում, և շեշտվում վերջին բաղադրիչը (ա՛ն ու հա՛ց - աղուհա՛ց, կո՛շտ ու կոպի՛տ – կոշտուկո՛-

պի՛տ, խեղճ ու կրա՛կ – խեղճուկրա՛կ, տո՛ւն ու տեղ – տունուտեղ), իսկ հարադրական ձևերում բաղադրիչների իմաստային կապն ավելի թույլ է լինում, նրանցից յուրաքանչյուրն իր համապատասխան շեշտն է ունենում և ընդգծվում իր իմաստով: Այդ հատկանիշները, սակայն, առավել ցայտունորեն են արտահայտվում երրորդ խմբի՝ այն բաղիյուսական բարդությունների մեջ, որոնց բաղադրիչները բացառապես առանձին են գործածվում, ինչպես օրինակ՝ դա՛տ ու դատաստա՛ն, թա՛նկ ու էժա՛ն, գո՛ղ ու ավազա՛կ, փա՛ռք ու պատի՛վ, ջա՛նք ու եռա՛նդ, աղմո՛կ ու աղաղա՛կ, մա՛յր ու աղջի՛կ, կռի՛վ ու վե՛ճ, ահե՛լ ու ջահե՛լ, ա՛յս ու ա՛յնտեղ, սև՛ ու սպիտա՛կ և այլն»¹⁶⁴: Ա. Ղարիբյանի հեղինակած դպրոցական դասագրքում (1964թ.) հարադիր բարդ բառերի մասին (խոսքը բաղիյուսական բարդություններին է վերաբերում) կարդում ենք՝ «Հարադիր բարդ բառերը երբեմն միանում են շաղկապով կամ կապով. այդ դեպքում նրանցից յուրաքանչյուրը արտասանության մեջ շեշտ է ստանում: Օրինակ՝ ջա՛րդ ու փշու՛ր (ջարդուփշո՛ւր), ցի՛ր ու ցա՛ն (ցիրուցա՛ն), ա՛հ ու դո՛ղ (ահուդո՛ղ), տո՛ւն ու տեղ (տունուտեղ), ծա՛ռ ու ճյուղ (ծառուճյուղ), տա՛կն ու վրա՛ (տակնուվրա՛), ա՛ռ և տո՛ւր (առևտու՛ր), դե՛ն ու դե՛ն (դեսուդե՛ն), մի՛ն ու ճա՛ր (մինուճա՛ր), մի՛ առ մի՛ (միառմի՛), տո՛ւն առ տո՛ւն (տունառտո՛ւն) և այլն): Ծանոթություն: Եթե հարադիրներից մեկն է շեշտ ստանում, այդ դեպքում նրանք գրվում են միասին և կոչվում են կցական բարդություն»¹⁶⁵:

15. Կոչականը կամ ուղղականն իբրև կոչական (կոչական ուղղականը) ցույց է տալիս այն անձը, կամ իբրև անձ մտածված ամեն ինչ, որի անունը տալով ծայնում, կանչում ենք՝ առանձնացնելու կամ նրա ուշադրությունը հրավիրելու միջոցով մի բան ասելու կամ հարցնելու համար: Կան լեզուներ, որոնցում կոչականն ունի իր հատուկ հոլովական ձևը: Հայոց լեզուն իր պատմական զարգացման ընթացքում ունեցել է կոչականի ձև, սակայն գրաբարում արդեն խոսում էին միայն նրա վերապրուկային մնացորդների մասին: Ժամա-

¹⁶⁴ Ա. Մարգարյան, Հայերենի բաղիյուսական բարդությունները, Եր., 1986, էջ 70-71:

¹⁶⁵ Ա. Ղարիբյան, Հայոց լեզու (Դասագիրք 5-7-րդ դասարանների համար), Եր., 1964, էջ 62:

նակակից հայերենի հիշվական համակարգում ևս կոչական հիշվ առանձնացված չէ¹⁶⁶։ Այն ուղղական հիշվի մի մասնավոր գործա- ծությունն է։ Լեզվական նորմը սահմանում է՝ **նախադասության մեջ ուղղական հիշվով գործածվում են նաև կոչական բառերը**։ Լեզվա- կան մեկ այլ կանոն էլ լրացնում է՝ **կոչականը շեշտվում է**։ Կոչական բառերի ոչ կայուն շեշտադրության մասին նշել են Ա. Այտընյանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը և շատ ուրիշներ։ Ըստ Աբեղյանի՝ կոչա-

¹⁶⁶ Ըստ Մ. Աբեղյանի՝ կոչական հիշվը թեպետև բառի առանձին ձևով չի որոշվում և միայն դրությամբ և կիրառությամբ է որոշվում, բայց և շարահյուսական հարաբերության արտահայտիչ է, ինչպես սեռականը և հայցական հիշվները։ Նա գրում է. «Արևելյան աշխարհաբարը ձևականորեն միայն հինգ հիշվ է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական. բայց ըստ նշանակության առանձին հիշվ պետք է համարել նաև կոչական, հայցական և սեռական հիշվները, թեպես և կոչականը ձևով չի տարբերվում ուղղականից, սեռականը՝ տրականից, իսկ հայցականն՝ ուղղականից և տրականից... **Կոչական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ, ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ**։ Այս պատճառով և ներքևում այդ հիշվներն առանձին-առանձին են վերցված» (ՄԱ, ՀԼՏ, էջ 399. ընդգծումը մերն է)։ Հետաքրքիրն այն է, որ ժամանակակից հայերենի վիճահարույց հարցերից մեկը հիշվների քանակի հարցն է։ Ճիշտ է՝ վերոբերյալ խոսքը աշխարհա- բարի համար է, սակայն հակասությունն ակնհայտ է. այն լեզվաբանը, ով լեզվաբա- նական աշխարհը բաժանել է երկու հակամարտող թևերի՝ հինգհիշվականների և յոթհիշվականների, «իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ», անհրաժեշտ է համարում կոչական, սեռական, հայցական հիշվների ընդունումը։ Համենայն դեպս, հստակ չէ Մ. Աբեղյանի դիրքորոշումը. այս ոչ հստակությունն էլ է ժառագել արդի հայերենը՝ անընդհատ շրջանառվող այն պնդումով, թե «հայերենն ունի 5 հիշվ, սակայն շարահյուսական ուսումնասիրություններում նպատակահարմար է առաջնորդվել 7 հիշվով»։ Կարելի է ասել՝ կոչականի՝ առանձին հիշվ համարելու տեսակետը շատ ավելի արդարացված է, քան սեռականի և հայցականի։ Կոչականն իմաստային յուրահատկություն ունի, ձևային առանձնահատկությունը այն է, որ շեշ- տակիր է, իսկ շարահյուսական առումով նախադասության անդամ չի դառնում։ Մ. Աբեղյանը կոչականն ու ուղղականը նույնացնում է «անկախության» հատկանիշով, և գրում է (իհարկե, տողատակում՝ իբրև «Ծանոթություն»)։ «Ուղղականն ու կոչականն իրենց բնավորությամբ կազմում են մի կարգի հիշվներ և կոչվում են անկախ հիշվ, որովհետև ցույց են տալիս կամ մի առարկա առանց հարաբերության, խոսքի կապակցությունից դուրս, կամ, եթե որոշ հարաբերություն են ցույց տալիս՝ դառնալով ենթակա, ստորոգյալ և վերադիր, այդ հարաբերությունը լինում է ներունակությամբ և ոչ կախումով։ Մյուս հիշվները՝ հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական՝ կոչվում են կախման հիշվ, որովհետև ցույց են տալիս մի առարկա, որ կախման հարաբերության մեջ է մի ուրիշ առարկայի նկատմամբ» (ՄԱ, ՀԼՏ, էջ 399)։

կանի կանոնական շեշտադրումը առաջին վանկի վրա է. «այդ դեպքում կոչականը մենակ մի առանձին խոսք է կազմում», իսկ նրա տարբերակներն արդեն եղանակավորության տարբեր դրսևորումներով են պայմանավորված: Կոչական անունների շեշտը, նայած առոգանության, կարող է ընկնել և՛ առաջին, և՛ վերջին վանկերի վրա, երբեմն՝ միջին վանկի վրա, ինչպես **հայրիկ, Կարապետ** կամ՝ **հայրի՛կ, Կարապե՛տ, Կարա՛պետ**: Նա գրում է. «Շեշտը, որ սովորաբար դրվում է կոչական անվան առաջին վանկի վրա, նայելով, թե ո՞ր վանկի վրա է դրված՝ առանձին եղանակավորություն է տալիս խոսվածքին. ինչպես՝ **Կարապետ, արի մեզ մոտ, Կարա՛պետ, արի մեզ մոտ, Կարապե՛տ, զաս մեզ մոտ**: Եթե կոչականն իրենից առաջ մի վերադիր ունի, շեշտը նրա վրա է դրվում, ինչպես՝ **Սիրելի՛ Կարապետ**, կամ **սիրելի՛ Կարապետ**»¹⁶⁷: Լեզվաբանը ընդգծում է նաև «շեշտով կոչական ուղղականի» և «անվանական ուղղականի» տարբերություններից մեկը. գրության ժամանակ կոչականի վրա սովորաբար շեշտ է դրվում՝ «սովորաբար առաջին վանկի վրա»:

Իհարկե, կարող ենք ասել, որ Մ. Աբեղյանի խոսքը աշխարհաբարին է վերաբերում, սակայն ժամանակակից հայերենում ևս կոչական բառերի շեշտի տեղը վերջնականորեն լուծված չէ: Լեզվագիտական աղբյուրների մեծ մասում կոչականի հարաշեշտությունը խախտում չի համարվում, լեզվական արգելանք չէ. ոմանք հնարավոր են համարում կոչական բառերի ոչ օրինաչափ շեշտադրումը. իհարկե տարաշեշտության այս երևույթը հիմնականում բացատրվում է խոսակցական լեզվի ազդեցությամբ: Ավելին՝ շատ դեպքերում հիմնավորվում են դրանք՝ տրամաբանական ելևէջումով, խոսքի եղանակավորությամբ, հանդիսավոր, պաշտոնական, մտերմական ոճային գործառություններով, ասույթի, խոսույթի բովանդակությամբ կամ նպատակայնությամբ և այլն: Թ. Ղարազյուլյանը գրում է. «Գրական արտասանության տեսակետից մի շարք դեպքերում թերևս սխալ չպետք է համարել կոչականների ոչ վերջադիր շեշտադրությունը, երբ կոչական բառերում և անձնանուններում շեշտը վերջին վանկի փոխարեն դրվում է մյուս վանկերի վրա,

¹⁶⁷ Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 410:

մեծ մասամբ՝ վերջընթեր, ինչպես՝ Անահիտ, շատ են ուշանում: **Ռուբիկ, Կարդա դասդ: Արամիկ, շարունակիր** և այլն: Այս հիմունքով շեշտը կարող է դրվել և **ը**-ի վրա, օրինակ՝ **Հ(ը)րայր, Տ(ը)րդատ** և այլն: Այսպիսի հնչումը, ինչպես ցույց են տալիս և բերված օրինակները, հատուկ է խոսակցական լեզվին»¹⁶⁸: Իսկ **Պ**. Պողոսյանը կոչականի ձևավորման մեջ կարևորում է տրամաբանական ելևէջումը, բերում է հետաքրքիր մի օրինակ՝ **Աշո՛ո՞տ**, սակայն ուշադրություն չի դարձնում հարաշեշտության երևույթին, որն, իսկապես, կարող էր և պայմանավորված լինել նշված ելևէջումներով: Նա գրում է. «Տրամաբանական ելևէջումը յուրահատուկ դեր ունի կոչականը ձևավորելու մեջ: Կոչական բառն արտասանելիս ձայնի մի տեսակ ելևէջում է լինում, երբ մեկին դիմում ենք մի բան հայցորդելու կամ հարցնելու համար, մի այլ ձևով ենք այն արտաբերում հանդիմանելիս (**Աշո՛ո՞տ**), արգելելիս (**Աշո՛տ**) և այլն: Այդպես էլ կոչական ելևէջները կարող են լինել մեղմական-խնդրական (**Միքայել, բալի՛կս**, մի՛ գնա), զայրացական (**Մայր, հանգցրո՛ւ** կրակը), կտրական (**Ընկեր հրամանատար**, թույլ տվեք...), հանդիսավոր (**Պրուէտարներ, միացե՛ք**) և այլն»¹⁶⁹: Բանավոր խոսքում այդ ելևէջումները հնչերանգային այլևայլ երանգներով կարող են արտահայտվել, իսկ գրավոր խոսքում արտահայտության պլանի միաձևության պայմաններում ինչպե՞ս կռահել բովանդակային պլանի նրբիմաստային տարբերակումները: Խոսակցական և գեղարվեստական ոճերում այս հակասությունը հեշտությամբ լուծվում է շեշտի տեղաշարժի միջոցով: Խոսակցական լեզվում նման կանոն կա. հատուկ անունով (հազվադեպ՝ հասարակ անունով) արտահայտված կոչականի սկզբնավանկը կամ վերջընթեր վանկը շեշտվում է (**Գրի՛գոր, Գայանե, Կարա՛պետ (Կա՛րապետ), Կի՛րակոս, Ա՛րմենակ, Երիտասարդ** և այլն):

Ժամանակակից գրական հայերենի շեշտադրական նորմում կոչականների ոչ վերջադիր շեշտադրությունն ամրակայող կանոն չկա: Ինչքան էլ մեջբերված դիտողությունների, լսողական տպավոր-

¹⁶⁸ **Թ. Ղարազյուլյան**, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջ 220-221:

¹⁶⁹ **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. 1, Եր., 1990, էջ 135:

րությունների համադրման արդյունքում նշվի կոչականի շեշտադրության անկայունության իրողությունը, միևնույնն է՝ այն շեշտադրվում է համընդհանրական կանոնով՝ շեշտը դրվում է կոչականի վերջին վանկի վրա: Մյուս կողմից՝ չպետք է անտեսվեն տատանումները, բայց սա խոսքին է վերաբերում, խոսքի մշակույթի կանոնաշարքին է վերաբերում, իսկ նորմավորման չափանիշներից մեկի համաձայն՝ եթե խոսքային դրսևորումները ընդհանրանում են, դառնում հաճախական, պետք է մտածել լեզվի՝ տվյալ դեպքում շեշտադրության նորմավորման գործընթացում կոչականի շեշտադրմանը առանձնակի ուշադրություն դարձնելու մասին:

ՇԵՇՏԱՂՈՎԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԵՎ ԶՈՒԳԱՉԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվի նորմավորման գործընթացը կարևորվում է այն ժամանակ, երբ փոփոխություն է առաջանում, տեղաշարժեր են արձանագրվում, այն դեպքում, երբ երկու և ավելի հաճախական գործածություն ունեցող տարբերակներից մեկի ընտրության անհրաժեշտություն կա: Սովորաբար նախընտրելի են լեզվական նորմով հանձնարարված տարբերակները: Պատմական ավանդույթի, բարբառախոսության, օտար լեզուներից կատարված և կատարվող փոխառությունների, բառակազմական-համադրական (կցական) եղանակի աշխուժացման, լեզվի ներքին զարգացմամբ պայմանավորված որոշակի միտում(ներ)ի, իսկ մյուս կողմից՝ շեշտադրական նորմով սահմանված համընդհանրական կանոնի, համաբանության օրենքի և միասնականացման պահանջի խաչաձևման կիզակետում շեշտադրական տարբերակների ձևավորումն անխուսափելի է: Այդպիսիք կարող են առաջանալ նաև խոսքի, մտքի, տրամաբանության և ոճական, տաղաչափական այլևայլ նպատակներից բխող օբյեկտիվ ու սուբյեկտիվ շեղումների հետևանքով: Ըստ ընդունված կարծիքի՝ հայերենում կարող է շեշտվել անգամ բառի ցանկացած վանկը, եթե իր կարևորությամբ առանձնանում է այլ վանկերից: Այսպիսի դեպքերում բառային և տրամաբանական շեշտերի համընկնումը պարտադիր չէ. (օրինակ՝ **արևշատություն**, «**դ(ը)ժբախտու-**

թյուն և ոչ թե անբախտություն», «ոչ թե սարքաշինություն, այլ ճանապարհաշինություն», «ոչ թե կապտավուն, այլ դեղնավուն»...): Որպես կանոն՝ այսպես շեշտվածների նկատմամբ ուղղագիծ մոտեցում պետք չէ դրսևորել. եթե կանոնին համապատասխան չի շեշտվում, շեղում է, բայց հիմնավորված է այդ շեղումը՝ խոսքային իրադրության թելադրանքով, ուրեմն տվյալ դեպքում հաղորդակցական իրավիճակային տվյալ պահին տվյալ հնչաշղթայում այն «ճիշտ է»: Շեշտադրական զուգաձևությունը խոսքային փաստ է, իրողություն. այն նույնպես խոսքում է ձևավորվում, դառնում նրա անսահման դրսևորումներից մեկը: Խոսքը լեզվից ավելի լայն է, և նրանից մի ինչ-որ ավելի բան է պարունակում, որ լեզվաբանները կոչում են «խոսքային մնացորդ» կամ «հավելուրդ»: Եթե խոսքը միշտ, պարտադրաբար և ճշտիվ համապատասխաներ լեզվին՝ ճակատագրայնորեն հանդես գալով որպես լեզվի այս կամ այն կադապարի արտահայտություն, որպես կողի կող, ապա դժվար չէ եզրակացնել, որ այդ դեպքում լեզուն միշտ կմնար նույնը և չէր փոփոխվի: Բայց բոլոր լեզուների համար ընդհանուր և բացառություններ չճանաչող մի օրենք է գործում՝ լեզուն պատմականորեն փոփոխվող երևույթ է:

Շեշտադրական զուգաձևությունների առկայությունը շեշտադրական նորմի գործառության տրամաբանական հետևանքն է, տեղաշարժերի նախանշանը, որ կարող է նաև փոփոխման պատճառ դառնալ: Միաժամանակ չպետք է մոռանալ՝ շեշտադրական նորմը քերականականի նման շատ դանդաղ է փոխվում:

Հ. Զաքարյանը, խոսելով զուգաձևության ըմբռնման իմաստի մասին, գրում է. «...Պետք է մտածել ոչ միայն «սանձերը ձգելու», այլև չափից ավելի չձգելու մասին: Մանավանդ որ կետադրությունն իր կիրառությունն ունի նաև մանկավարժության բնագավառում, ուր ինքնըստինքյան «սանձերը ձգելու» միտում կա: Կետադրական կանոնները կարծրացնելու միտում կա մանավանդ դպրոցական ավարտական և բուհական ընդունելության քննությունների առնչությամբ»¹⁷⁰: Շեշտագործածական կանոնները ևս շատ դեպքերում, ինչպես հեղինակն է ասում, «ներկայիս կրթական ետընթացի պայ-

¹⁷⁰ Հ. Զաքարյան, Կետադրական բառարան, Եր., 1998, էջ 4:

մաններում» երբեմն թաքնված են դասագրքերի «անկյուններում» և ոչ միշտ են մատչելի շարքային լեզվագործածողին: Նույն տողերի տակ «թաքնված» (ենթատեքստային) առաջարկ-պահանջ կա՝ **Ճիշտ որոշում կայացնելու, գուգաձևություններում ճիշտ կորմնորոշվելու համար անհրաժեշտ է «կրթական առաջընթացի պայմաններ» ստեղծել:**

Լեզվաբանական տարբեր աղբյուրներում շեշտադրական գուգաձևությունների տարբեր խմբեր են առանձնացվել:

Այդպիսի բառերի շարք իր ժամանակին առանձացրել է Մ. Աբեղյանը. բառեր, որոնցում շեշտը կարող է դրվել թե՛ առաջին և թե՛ վերջին վանկերի վրա, ինչպես՝ **ա՛յսքան, ա՛յդքան, ա՛յնքան, ա՛յնչափ, ո՛րչափ, ի՛նչպես, ո՛րտեղ, ա՛յսպես, ա՛յսպիսի, նո՛յնպիսի, դա՛րձյալ, կա՛մ՝ այսքա՛ն, այդքա՛ն, այնքա՛ն, այսպիսի՛ և այլն**, դասական թվականներ, որոնք երբեմն շեշտվում են այսպես՝ **երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ**, երբեմն՝ սովորական շեշտադրությամբ՝ **երկրո՛րդ, երրո՛րդ, չորրո՛րդ** և այլն: Պետք է նկատել, որ Մ. Աբեղյանի նշած **երկրորդ, երրորդ, չորրորդ** թվականներն այսօր չունեն շեշտադրական տարբերակներ. նրանք շեշտադրվում են ըստ հայերենի օրինաչափության: Թ. Ղարազյուլյանը վերջին վանկի վրա շեշտ չկրող (և սկզբնապես հաստատուն առաջադիր շեշտ ունեցող) բառերի շարքը թվարկելիս (**սո՛ւյնպես, նո՛ւյնպես, ո՛րտեղ, ո՛րերորդ, քանի՛երորդ, նո՛ւյնպես, նո՛ւյնքան, նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, նո՛ւյնչափ, մի՛գուցե, ա՛յսպես, որպե՛սզի, ո՛րևէ, ի՛նչևէ, ե՛րբևէ, ով՛ևիցե, երբևիցե, ի՛նչևիցե, նա՛մանավանդ, ո՛րտեղ, ի՛նչպես, ո՛րպիսի, ի՛նչպիսի, ո՛րքան, դա՛րձյալ, գո՛նե, իհա՛րկե, մի՛միայն, ահա՛վասիկ, մա՛նավամդ, նախքա՛ն, հի՛մա, իսկո՛ւյնևեթ, թեկո՛ւզև, թեպե՛տև և այլն**) ավելացնում է, որ հայերենի վերջադիր շեշտի ազդեցությամբ այս բառերից շատերը ներկայումս արտասանվում են նաև վերջադիր շեշտով (**նախքա՛ն, նաև՛, օրինա՛կ, բացի՛, գուցե՛, ուստի՛, գոնե՛, գրեթե՛, երբևէ՛, ինչևէ՛, դարձյա՛լ, նույնիս՛կ, նույնպե՛ս, այսչա՛փ, առհասարա՛կ, հատկապե՛ս, մանավա՛նդ, նամանավա՛նդ, հիմա՛, ահավասի՛կ**). «Թվարկելիս միշտ շեշտվում է այս բառերի վերջին վանկը: Շեշտի տեղը հաստատուն չէ նաև մի շարք հարցական բառերում:

Օրինակ՝ Ռ՞րտեղ է ձեր գլխարկը և որտե՞ղ է ձեր գլխարկը: Ի՞նչ-
 պես կարողացաք անել այդ բանը և Ինչպե՞ս կարողացաք անել այդ
 բանը, կամ՝ Ի՞նչ իմանաս՝ տխրությունը ո՞րտեղից է գալիս և ի՞նչ
 իմանաս, տխրությունը որտեղի՞ց է գալիս և այլն»¹⁷¹: Ֆ. Խլղաթյա-
 նը գրում է. «Մ. Աբեղյանը կարծում է, թե այսքան, այդքան, այսպես,
 այդպես, ինչպես, ինչպիսի և նման մի քանի բառերում շեշտը կարող
 է դրվել թե՛ առաջին, թե՛ վերջին վանկերի վրա... Այս կարծիքը կա-
 րելի է ճշմարիտ համարել գործառական և արտասանական տար-
 բեր ունենալով գործածվելու դեպքի համար, մինչդեռ նույն շարքում
 հիշատակված **երկրորդ, ո՞րերորդ** բառերի երկակի կետադրության
 մասին պնդումը հիմնավոր չէ»¹⁷²: Հայերնագիտական բառարանում
 ևս նշվում է տատանումների, շատ բառերում շեշտի՝ վերջին վանկի
 տեղափոխման որոշակի միտման մասին (**նաև՛, գոնե՛, գուցե՛, մա-
 նավա՛նդ, նամանավա՛նդ** և այլն):

Մի շարք բառերի շեշտադրությանն է ուշադրություն դարձնում
 Պ. Բեդիրյանը, նշելով, որ այդտեղ նույնպես մեղանշումները հաճա-
 խադես են.

«**ի՛նչևէ** (ի՛նչէվէ)

ի՛նչևիցե (ի՛նչէվիցե)

ի՛նչ որ է (ոչ թե «ի՛նչ ո՞ր է»)

ոչ ոք (ոչ թե «ոչ ո՞ք»)

որտե՛ղ որ է (ոչ թե «որտեղ ո՞ր է»)

թե՛ն (ոչ թե «թե՛ն»)

նո՛յնիսկ (ոչ թե «նույնի՛սկ»)

գո՛ւցե (ոչ թե «գուցե՛»/ «մի՛գուցե»)

փո՛քր-ի՛նչ (ոչ թե «փոքրի՛նչ»)

քանի գնո՛ւմ (ոչ թե «քանի՛ գնում»)

ո՛ւր որ է (ոչ թե «ուր ո՞ր է»)¹⁷³:

Լեզվաբանական տարբեր աղբյուրներում հեղինակավոր շատ
 լեզվաբանների դիտարկումներն ու մեկնաբանությունները հաշվի
 առնելով և ելնելով նաև ներկա լեզվավիճակի օբյեկտիվ քննությու-
 նից՝ առանձնացրել ենք շեշտադրական տատանումների, տեղա-
 շարժերի ենթարկված բառերի հետևյալ խմբերը՝

- Տատանումներ են նկատվում փոխառյալ շատ բառերի շեշ-
 տադրության հարցում: Օտար շեշտադրությամբ փոխառված շատ
 անձնանուններ, տեղանուններ, հասարակ անուններ այսօր արտա-

¹⁷¹ **Թ. Ղարազուլյան**, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Եր., 1974, էջ 221:

¹⁷² **Ֆ. Խլղաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. Ա, Եր., 2005, էջ 41:

¹⁷³ **Պ. Բեդիրյան**, նշվ., աշխ., էջ 16:

սանական երկակիություն ունեն՝ **Պո՛ւշկին** և **Պուշկի՛ն**, **Պո՛ւշկինի** և **Պուշկինի՛**, **Ա՛նգլիա** և **Անգլիա՛**, **մաթեմատիկա** և **մաթեմատիկա՛**... Շեշտադրական զուգաձևություններ են կազմում նաև տառադարձված և ոչ տառադարձված տարբերակները: (Նման զուգաձևություններում նախընտրելին և ոչ նախընտրելին, ճիշտն ու սխալը, հանձնարարելի և ոչ հանձնարարելին, հայերենացվածն ու օտարը, տառադարձվածն ու չտառադարձվածը տարբերակելու՝ դրանցում կողմնորոշվելու մասին արդեն խոսվել է): Ինչ վերաբերում է Տերմինաբանական կոմիտեի «Ռուսերեն և օտար ծագում ունեցող բառերի տառադարձությանը վերաբերող որոշումը» («Անգլերեն բառերի չշեշտված վանկերի թուլացող և ը-ին մոտեցող ձայնավորները տառադարձել ինչպես շեշտի տակ գտնված դիրքում՝ ոչ ը-ով») անտեսելու պատճառով առաջացած արտասանական-շեշտադրական զուգաձևություններին, ապա սխալ են որոշմանը հակառակ արտասանվող-շեշտադրվողները, այսինքն՝ ոչ թե **Բայր(ը)ն**, **Բեկ(ը)ն**, **Լիպմ(ը)ն**, **միստ(ը)ր**, **Օլստ(ը)ր** և այլն, այլ՝ **Բայրո՛ն**, **Բեկո՛ն**, **Լիպմա՛ն**, **միստե՛ր**, **Օլստե՛ր**, իսկ **Մանչեստր**-ն ունի երկակի շեշտադրությունը՝ **Մանչեստր** և **Մանչեստր**, բայց ոչ երկակի արտասանություն, քանի որ նույն որոշմամբ թույլատրելի համարվեց **Մանչեստր** բառի ավանդական ոչ **ե**-ով գրությունը:

Բնականաբար սխալ են նաև ռուսերենի ազդեցությամբ բացատրվող **որ-ով** կամ **–տոր-ով** վերջացող օտար բառերում **ո-ի՝ «ը»** արտասանությունը և սխալ շեշտադրությունը: Պ. Բեդիրյանը ռուսերենի, տվյալ դեպքում ոչ բարերար ազդեցությամբ է բացատրում նման արտասանությունն ու սխալ շեշտադրությունը և այսպես է ընդգծում ճիշտն ու սխալը.

ադմինիստրատոր (ոչ թե «ադմինիստրատըր»)

գեներատոր (ոչ թե «գեներատըր»)

դիրեկտոր (ոչ թե «ծիրեկտըր», բայց նախընտրելի է **տնօրեն-ը**)

դոկտոր (ոչ թե «դոկտըր»)

կոմպոզիտոր (ոչ թե կոմպոզիտըր կամ կամպազիտըր»)

կոմպրեսոր (ոչ թե «կոմպրե՛սըր կամ կամպրե՛սըր»)

կոնստրուկտոր (ոչ թե կոնստրո՛կտըր կամ կանստրո՛կտըր»)

պրոֆեսոր (ոչ թե պրոֆեսոր կամ պրաֆեսոր»)

ռեկտոր (ոչ թե ռեկտոր»)

Վիկտոր (ոչ թե Վիկտոր»),

տրակտոր (ոչ թե «տրակտոր»)

տրանզիստոր (ոչ թե տրանզիստոր»)¹⁷⁴: Պետք է ասել, որ այս բառերից մի քանիսը արդեն չունեն շեշտադրական զուգաձևություններ ոչ թե այն պատճառով, որ ընտրվել է ճիշտ (կամ գերադասելի) տարբերակը (կարող է և հակառակը պատահել), այլ այն պատճառով, որ արդեն ունեն իրենց հայերեն համարժեքները. լեզուն ինքնամաքրվելու հատկություն ունի: **Ադմինիստրացիա** բառն այսօր օտարաբանություն է. ըստ Ա. Հայրապետյանի «Օտար բառերի ամօժեմն բառարանի»՝ բառի (խսկց.) հղումն ունեցող հայերեն համարժեքները՝ «ղեկավար մարմիններ», «գերատեսչություն», «վարչակազմ», այսօր գրական տարբերակներ են: **Պրեկտոր** բառն արդեն հնաբանություն է, **կոմպոզիտոր**-ը բառը, թեև ունի «**երաժշտահան**» հայերեն համարժեքը, շարունակում է զուգահեռաբար գործածվել: **Կոմպրեսոր**-ի հայերեն համարժեքները՝ **ճնշակ, սեղմիչ** («1. (տեխ.) ճնշակ, Խտուցիչ մեքենա» 2. (բժշկ.) ճնշակ, սեղմիչ») հավասարազոր չեն: Նույնը պետք է ասել **կոնստրուկտոր** բառի մասին. ունի «հորինվածքի գյուտարար-հեղինակ» և «հորինվածք» իմաստները: Հայերեն համարժեքներ չունեն **դոկտոր, պրոֆեսոր, ռեկտոր** բառերը, նաև **տրանզիստոր**-ը («տեխ.) էլեկտրական ազդանշանների ուժեղացմանը ծառայող կիսահաղորդչային սարք»):

• Երկակի արտասանություն ունեն ավանդաբար մեզ հասած մի շարք բառեր: Ուշադրություն կենտրոնում պետք է պահել կցական բարդությունները. ըստ շեշտադրական նորմի՝ սրանցում շեշտը վերջնավանկային չէ (դրանք նախկինում հարադրական բարդություններ էին, պահպանել են իրենց շեշտը, այսինքն՝ երկրորդ բաղադրիչը չի շեշտվում և հարել է շեշտակիր առաջին բաղադրիչին), ինչպես՝ **միթե, միգուցե, նոյնիսկ, նոյնպես, նոյնչափ, նոյնքան, երբևէ, երբևիցե, ո՛վևէ, ո՛վևիցե, ո՛ւմևէ, ո՛րևէ, ո՛րևիցե**,

¹⁷⁴ Պ. Բեդիրյան, նշվ., աշխ., էջ 13:

իհա՛րկե, որպե՛նզի: Սակայն այս կարգի բառերում նկատվում է շեշտի՝ վերջին վանկի տեղափոխման միտում՝ **նույնի՛սկ, նունպե՛ս, նույնչա՛փ, նույնքա՛ն** և այլն: Մի քանի բառերում էլ շեշտը միշտ հարցական ելևէջման հետ է հանդես գալիս, ինչպես օրինակ՝ **մի՞թե, ո՞րերորդ, քանի՞երորդ** և այլն: Սխալ է, երբ **միթե՞** է հնչվում և գրվում: **Արդյոք**-ը առավելապես առանց հարցական երանգի է գործածվում, սակայն սխալ չէ և նրա հարցական հնչումը՝ **արդյո՞ք**. սխալը է, երբ հարցական նշանը վերջընթեր վանկի վրա է դրվում: **Գուցե** և **երևի** բառերը հարցական երանգով չեն գործածվում: Այսօրվա հայերենում նմանատիպ զուգաձևությունները գործառական մեծ հաճախականություն ունեն.

այսպես // այսպե՛ս
այդպես // այդպե՛ս
այնպես // այնպե՛ս
այնպիսի // այնպիսի՛
այդպիսի // այդպիսի՛
ո՛րքան // որքա՛ն
ո՛րչափ // որչա՛փ
ի՛նչքան // ինչքա՛ն
այնպիսի՛// այնպիսի

այդպիսի՛//այդպիսի
որքա՛ն // ո՛րքան
որչա՛փ // ո՛րչափ
ինչքա՛ն // ի՛նչքան:
նաև՛ // նա՛և
գոնե՛ // գո՛նե
գուցե՛// գո՛ցե
մանավա՛նդ // մա՛նավանդ
նամանավա՛նդ//նա՛մանավանդ

• Շեշտադրական զուգաձևություններ են կազմում **-երորդ** վերջնաբաղադրիչն ունեցող դասական թվականները: Արդեն ասվել է՝ մասնագիտական գրականության մեջ դրանց երկակի արտասանություն է վերագրվում: **Երկրորդ, երրորդ, չորրորդ** թվականներում վերջին վանկի շեշտումը հաստատուն է: Մնացածներում շեշտվում է ոչ թե **-երորդ** ածանցը, այլ թվական արմատը (եթե բարդ է՝ երկրորդ) կամ դերանվանական արմատը: Օրինակ՝ **հի՛նգերորդ, վե՛ցերորդ, տա՛ններորդ, քսանո՛թերորդ, քառասունյո՛թերորդ**, ինչպես և՝ **քանի՛երորդ, ո՛րերորդ** և այլն: Վերջին երկու բառում շեշտը հաստատուն է: Այս բառերի թեք ձևերն ունեն վերջադիր շեշտադրություն, ինչպես՝ **հինգերորդի՛ց, վեցերորդի՛ց** և այլն: Մ. Աբեղյանը անդում էր, թե **երկրորդ, ո՞րերորդ** բառերը երկակի կետադրություն ունեն: Հ. Աճառյանը հարաշեշտ բառերի շարքում թվարկում է նաև

առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթ(ն)երորդ, ութերորդ, թվականները: Մի խումբ լեզվաբաններ հարաշեշտ են համարում դասական թվականները՝ սկսած տասնմեկերորդից՝ տասնմեկերորդ, տասներկուերորդ... Այսինքն –րորդ վերջնաբաղադրիչն ունեցող երկրորդ, երրորդ, չորրորդ, նաև առաջին թվականների վերջնավանկային շեշտը նորմատիվ է դիտվում: Նման գուգաձևություններում (հինգերորդ - հինգերորդ, վեցերորդ - վեցերորդ, տասներորդ-տասներորդ, երեսուներեքերորդ - երեսուներեքերորդ, քսաներորդ - քսաներորդ...) լեզվաբանների մի խումբ «նախընտրելի», «սովորական» է համարում հարաշեշտային տարբերակները, մյուս խումբը՝ վերջնավանկային: Մենք հակված ենք պնդելու, որ դասական թվականները հարաշեշտություն են դրսևորում հինգերորդ-ից սկսած, իսկ ձևավորված գուգահեռություններում երկու տարբերակներն էլ կանոնական են, հավասարազոր:

- Եթե հարադրական բայերի մանրահամակարգում շեշտադրական գուգաձևություններ գրեթե չկան (լինելու դեպքում էլ սխալ են), ապա նույնը չի կարելի ասել կրկնավոր, բաղիյուսական, համադասական հարաբերությամբ բաղադրությունների դեպքում. դրանք մասնագիտական գրականության մեջ տրվում են շեշտադրական տարբերակներով՝ տոււն ու տեղ // տուն ու տեղ, սար ու ծո՛ր // սա՛ր ու ծո՛ր: Ըստ ընդունված պնդման՝ համադասական հարադրություններում գլխավոր շեշտը դրվում է վերջին բաղադրիչի (օր.՝ տոււն ու տեղ), ստորադասական կապակցություններում՝ առաջին բաղադրիչի (օր.՝ վե՛ր կենալ) վրա: Ս. Աբրահամյանի նշած կիսահարադրական բարդ բառերը գծիկով գրվող բառերն են (մեծ-մեծ, գիշեր-ցերեկ, գնալ-գալ, ծել-ծաղկել, երկու-երեք). կազմված են քերականորեն համարժեք երկու միավորներից, որոնց համագործությամբ ու կիսանկախությամբ էլ պայմանավորվում է յուրաքանչյուր բաղադրիչի շեշտ ունենալը: Այդ երկու շեշտերից երկրորդ բաղադրիչի շեշտն ավելի ուժեղ է, որը և կարելի է համարել գլխավոր: Նշանակում է՝ սրանք ճիշտ են հետևյալ շեշտադրությամբ՝ գու՛նդ - գու՛նդ, մեծ-մեծ, կա՛րճ-կա՛րճ, երկո՛ւ-երկո՛ւ, արա՛գ-արա՛գ,

ի՛նչ-ի՛նչ, քանի՛-քանի՛, վայ՛-վայ՛, պե՛ս-պե՛ս, մո՛տ-մո՛տ, տո՛ւն-թան՛-
գարա՛ն, համե՛րգ-դասախոսություն, հասարակական-քաղաքա-
կա՛ն, հայ՛-ռուսական, չի՛ն-տիբեթական, հյուսի՛ս-ատլանտյան,
ծլե՛լ-ծաղկե՛լ, զուգվե՛լ-զարդարվե՛լ, նստե՛լ-վերկենա՛լ // նստե՛լ-վե՛ր
կենա՛լ, ծալե՛լ-ծալծլե՛լ, դողա՛լ-դողդողա՛լ և այլն: Սրանցում միայն
վերջին բաղադրիչի շեշտադրումը օրինաչափական չէ. ուրեմն՝
գո՛ւնդ-գո՛ւնդ և ոչ թե **գու՛նդ-գու՛նդ** և այլն:

- Բառակրկնություններում երկակի շեշտադրություն ունեն
նաև **հա-ով** կապակցվածները, որոնցում մի դեպքում շեշտը **հա՛-ի**
վրա է, իսկ կրկնվող բաղադրիչները շեշտակիր չեն, մյուս դեպքում
այն շեշտակիր չէ, իսկ կրկնվողները շեշտակիր են: Արդյունքում
զուգաձևություններ են՝ **թըղխկ հա՛ թըղխկ // թըղխկ հա թըղխկ**,
փըշտ-հա՛-փըշտ // փըշտ-հա-փըշտ, **գնա հա՛ գնա // գնա՛ հա գնա՛**,
տուր հա՛ տուր // տո՛ւր հա տո՛ւր, **բեր հա՛ բեր // բե՛ր հա բե՛ր**, **գրիր
հա՛ գրիր // գրի՛ր հա գրի՛ր**, **քաշիր հա՛ քաշիր** և այլն: Կարծում ենք՝
երկու տարբերակները համագոր են: Թվում է, թե հնարավոր է և
երրորդ տարբերակը, երբ բոլոր բաղադրիչները կշեշտվեն, եզակի
դեպքերում հանդիպում են նման գործածություններ, բայց սրանք
սխալ են:

- Շեշտադրական տաատանումներ ունեն **մեջք մեջքի, ուս
ուսի, օր օրի, թև թևի, ձեռքից ձեռք, մեկ առ մեկ, մեջ ընդ մեջ, օր
օրի վրա** և նման կաղապարներով կազմված բարդությունները:
Պատճառներից մեկը կարող է համարվել այն, որ սրանք ոչ վաղ
անցյալում ուղղագրական զուգաձևություններ էին կազմում: Ըստ
տարբեր աղբյուրների՝ սրանք անգամ եռաձևություններ են կազ-
մում՝ **օ՛ր օրի // օ՛ր օրի // օր օրի**... Կրկնահարդիր բայերը ենթարկ-
վում են ընդհանուր օրինաչափությանը՝ **վե՛ր-վե՛ր թռչե՛լ, ո՛ւս ո՛ւսի
տալ, թև՛ թևի՛ տալ, ձեռքից՛ ձեռք անցնե՛լ**:

- Երկակի կետադրություն ունեն զուգաբայերը՝ **ասե՛լ-խոսե՛լ
// ասել-խոսել, գնա՛լ-բերե՛լ // գնալ-բերել, առնե՛լ- տանե՛լ // առնել-
տանել, վազե՛լ-հասնե՛լ // վազել-հասնել, ուտե՛լ-խմե՛լ // ուտել-
խմել, ընկնե՛լ-մեռնե՛լ // ընկնել-մեռնել** և այլն: Հետաքրքիր է, որ
սրանք թվարկելիս նախընտրելի են երկրորդ տարբերակները, իսկ

խոսքային շղթայում՝ առաջինները: Երկու տարբերակներն էլ համազոր են: Օրինաչափական է, որ երբ հարադրավոր բայը հանդես է գալիս իբրև բարդության առաջին բաղադրիչ, ուժեղ շեշտը հարադրից անցնում է բայական մասի վրա: Սակայն արտասանության ժամանակ շատ դեպքերում այն պահպանում է իր շեշտը, և արդյունքում զուգաձևություններ են. **վեր կենալ գնալ և վեր կենալ գնալ, քաշ տալ և քաշ տալ բերել և քաշ տալ բերել, գլուխն առնել կորչել և գլուխն առնել կորչել, թև առնել թռչել և թև առնել թռչել, ետ դառնալ փախչել և ետ դառնալ փախչել** և այլն: Ենթադրելի է, որ կա նաև երրորդ տարբերակը՝ **վեր կենալ գնալ, գլուխն առնել կորչել, ետ դառնալ փախչել...** Այսպիսի եռաձևություններում նախընտրելի պետք է համարել կանոնական ձևով շեշտվածները՝ **վեր կենալ գնալ, քաշ տալ բերել** և այլն:

• Բաղիյուսական բարդություններում, ինչպես արդեն նշվել է, բաղադրիչները համազոր, համադասական հարաբերության մեջ են և անկախաբար շեշտակիր են (թեև դրանցից մեկը կարող է իր ուժգնությամբ գերիշխել մյուսին): Միասնական շեշտադրությամբ սրանք կորցնում են դադարը՝ համադրվում մի ամբողջության մեջ՝ վերածվելով կցական բարդության: Օրինաչափական են հետևալ շեշտադրությամբ՝ **ա՛ռ ու ծախ > առուծախ, ա՛ղ ու հա՛ց > աղուհաց, լա՛ց ու կո՛ծ > լացուկո՛ծ, հա՛տ ու կե՛նտ > հատուկենտ, ա՛հ ու դո՛ղ > ահուդո՛ղ, թա՛ց ու չո՛ր > թացուչո՛ր, թև՛ ու թիկո՛նք > թևութիկո՛նք, լո՛ւռ ու մո՛նջ > լուռումո՛նջ, թո՛ւք ու մո՛ր > թութումո՛ր, կա՛րգ ու կանո՛ն > կարգուկանո՛ն, ա՛ռևտո՛ր > առևտո՛ր, կե՛րուխո՛ւմ > կերուխո՛ւմ, ա՛ղ ու հա՛ց > աղուհաց, կո՛շտ ու կոպի՛տ > կոշտուկոպի՛տ** և այլն: Տարաձևություններ են առաջանում, եթե անջատ գրությամբ շեշտվում է միայն վերջին բաղադրիչը, իսկ կցական գրության մեջ՝ **և՛ առաջինը, և՛ վերջինը**, կամ միայն առաջինը՝ **ա՛ղ ու հա՛ց / ա՛ղ ու հաց / աղ ու հա՛ց / ա՛ղուհաց / աղուհա՛ց** և այլն: Ճիշտ են համարվում առաջին և վերջին տարբերակները, որոնք համազոր զուգաձևություններ են կազմում թե՛ շեշտադրական տեսակետից, թե՛ ուղղագրական. թե՛ արտասանական (անջատ և միասին). երկրորդ, երրորդ, չորրորդ տարբերակները հանձնարարելի չեն:

- Շեշտադրական տատանումներ ունեն **–ցի**-ով ածանցված բառերը՝ **երևանցի** և **երևանցի, մերդրածորցի** և **մեղդածորցի** և այլն: Սա կարելի է բացատրել ոչ միայն խոսակցական լեզվի շեշտադրության ազդեցությամբ, այլև օտար շեշտադրությամբ օտար տեղանուններից տեղաբնակ նշանակող գոյականների կազմությամբ՝ **բե՛լզիացի, անձլիացի, ֆրանսի՛ացի**: Կանոնական են հայերենաձև շեշտվածները:

- Շեշտադրական զուգաձևություններ են կազմում նաև երկու և ավելի գրությո՜վ արտահայտված երկարացվող հնչյունը, որը ձայնարկություն է. ըստ կանոնի՝ շեշտվում են բոլորը. սակայն այսօր գեղարվեստական խոսքում կան նաև միաշեշտության ձևեր՝ **օ՛օ // օօ՛, ա՛ա // աա՛**: Օրինակ՝ «Աա~, հասկացա, հյուսիսի մասին եք գրելու», «Օօ~, գեղեցկուհիս դարձյալ զարդարել է սեղանը», «-էէ~, ծռվեց Դերսուն» (Գ. Խանջյան):

- **Ը** –ն, որ հանդես գալիս որպես որոշ կարգի հնչյւթների կուտակումները սահմանափակող կամ «հենակետային» հնչույթ և սովորաբար չի հանդիպում շեշտակիր դիրքում, **ըստ, ընդ** բառմասնիկներում հանդիսավոր խոսքում սկսել է շեշտվել. արդյունքում զուգաձևություններ են՝ **ըստ... // ը՛ստ..., ընդ... // ը՛նդ...** :

- Ժամանակակից հայերենում հստակ չէ նաև կոչականների շեշտադրումը: Լեզվագիտական տարբեր աղբյուրներում մի խումբ լեզվաբաններ սխալ և մերժելի են համարում կոչականների ոչ վերջադիր (ոչ օրինաչափ) շեշտադրումը, մյուս խումբը՝ հնարավոր և թույլատրելի, երրորդները ուշադրություն չեն դարձնում: Կոչականի շեշտադրության երկակիության վերաբերյալ դիտողություններից ելնելով՝ կարող ենք ասել՝ լեզվական նորմով հանձնարարելիի կողքին շեշտադրական զուգաձևություններ (եռաձևություններ) են կազմում առաջնավանկային, միջնավանկային շեշտադրությամբ տարբերակները՝ **հայրի՛կ և հա՛յրիկ, Կա՛րապետ, Կարա՛պետ և Կարապե՛տ, Անահի՛տ և Անա՛հիտ, Արամի՛կ և Արա՛միկ, Ռուբի՛կ և Ռո՛ւբիկ, Հրայր՛ և Հ(ը)րայր, Տրդա՛տ և Տ(ը)րդատ, քա՛ղաքացի, քաղաքա՛ցի և քաղաքացի՛, երի՛տասարդ, երիտա՛սարդ և երիտասա՛րդ, օրի՛որդ և օրիորդ՝** և այլն: Բնականաբար՝ ճիշտը լեզվական նորմով սահ-

մանվածն է, բայց վերջիվերջո, թեպետև ավանդաբար կոչականը նախադասության անդամ չի համարվում, բայց և այնպես նախադասության միավոր է, խոսքի բաղադրիչ, ուստի և տրամաբանական է, որ կարևորվի խոսքի շեշտը և ոչ թե բառայինը: Սրանք ինչ-որ տեղ կարելի է նաև շեշտադրական համանուններ համարել, եթե նկատի առնենք իմաստային տարբերություններն ու տրամաբանական ելևէջումները:

Եթե կոչականներն ունեն **այ** և **ով** բառ-մասնիները, ապա շեշտն անցնում է դրանց վրա. **ո՛վ արքա / ով արքա՛ / ո՛վ արքա՛, ա՛յ ընկեր / այ ընկեր՛ / ա՛յ ընկեր՛** տարբերակներից ճիշտ են առաջինները:

Ուզում ենք խոսել կոչականի շեշտադրման մի առանձնահատկության մասին ևս: Եթե պաշտոնական գրավոր կամ բանավոր խոսքի մեջ աշխարհականներին դիմելիս կոչականն ու լրացումը շեշտվում են ըստ ընդունված կանոնի (**պատվարժա՛ն նախագահ, մեծարգո՛ պարոն** (կամ **տիար**), **վսեմաշո՛ք տիար Նախագահ** և այլն), ապա շեշտի գործածությունը որոշ յուրահատկություն ունի հոգևորականներին դիմելիս: Ըստ Պ. Բեդիրյանի՝ վաղուց ի վեր ընդունված է, որ երբ խոսքն աբեղային, վարդապետին կամ ծայրագույն վարդապետին է ուղղվում, ոչ թե **սո՛ւրբ հայր** ասենք, այլ **հայր սու՛րբ** (շեշտն էլ երկրորդ բառի վրա): Պետք է ասել՝ դժվարանում ենք եկեղեցական լեզվի համար այս օրինաչափությունը արձանագրող որևէ աղբյուր մատնանշել: Բայց և հենվելով արտաքին լսողական տպավորությունների վրա և հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկեղեցական լեզվի և հայոց գրական լեզվի միջև որոշակի ընդգծված տարբերություններ կան (հենց թեկուզ բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության հարցում, ինչպես՝ **Մայր աթոռ, Մայր տաճար, Ամենայն հայոց կաթողիկոս, Վեհափա՛ռ տեր** (գրական հայերեն) և **Մայր Աթոռ, Մայր Տաճար, Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վեհափառ Տե՛ր** (եկեղեցական հայերեն), կարող ենք այս մեջբերմամբ արձանագրել շեշտադրական այս տարբերությունը ևս, որը չի կարող զուգաձևությունների համար ձանապարհ չբացել: Պ. Բեդիրյանը գրում է. «Քահանային կամ ավագ քահանա-

յին (ոչ թե «Բարև՝ ձեզ», այլ)՝ «Օրհնեցե՛ք, Տեր հայր» (պատասխանը՝ «Աստված օրհնեցե՛ք»): Պաշտոնապես նրանց դիմելիս՝ «արժանապատիվ Տեր հայր»... Աբեղային, վարդապետին, ծայրագույն վարդապետին՝ «Աստված օգնական, Հայր սուրբ» (պատասխանը՝ «Աստված պահապան»)... Եպիսկոպոսին, արքեպիսկոպոսին, պատրիարքին՝ «Աստված օգնական, Սրբազան կամ Սրբազան հայր» (պատասխանը՝ «Աստված պահապան»): Եպիսկոպոսին պաշտոնապես դիմելիս՝ «գերաշնորհ Սրբազան», արքեպիսկոպոսին՝ «բարձրաշնորհ Սրբազան», պատրիարքին՝ «ամենապատիվ Պատրիարք Սրբազան»: Կաթողիկոսին՝ «Աստված օգնական, Վեհափառ տեր» (պատասխանը՝ Աստված պահապան»)»¹⁷⁵: Մնում է եզրակացնել, որ եկեղեցական լեզվում ճիշտ են **Հայր սուրբ / Հայր սուրբ, Տեր հայր / Տեր հայր, Աստված օգնական / Աստված օգնական, Աստված պահապան / Աստված պահապան, Վեհափառ տեր / Վեհափառ տեր** զուգահեռ ձևերից երկրորդները, գրական հայերենում կանոնական են առաջինները:

- Կան նաև մի խումբ բառեր և կապակցություններ, որոնցում շեշտի դրությունը հստակ է: Օրինակ՝ մեծ հաճախականություն ունեցող և **այլև** կապակցությունը (և՛ **այլև**, թե՞ և **այլև**, կամ թե՛ և **այլ(ը)ն**): Կամ՝ **բայց** և **այնպես**-ը: Կամ՝ սովորաբար անձնական դերանունների բացառական և գործիական հոլովական զուգաձևություններում նախընտրելի են համարում առանց ա-ի ձևերը. երկրորդները առավել բնական են խոսակցական լեզվին: Բայց պետք է ասել, որ հասարակական գիտակցությամբ առավել պաշտոնական թվացող ա-ով տարբերակների շեշտադրական զուգաձևություններում երևի թե գործածական նախընտրությունը պայմանավորված է շեշտադրությամբ. **քեզանից, քեզանով** բառաձևերն ավելի հեշտ են հնչում-արտաբերվում, քան **քեզանից-ը, քեզանով-ը**:

- Շեշտադրական զուգաձևություններ են առաջանում, երբ խոսքային որոշ իրադրություններում, հատկապես գեղարվեստական խոսքում շեշտվում են անշեշտ բառերը (կապերը, օժան-

¹⁷⁵ Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 156:

դակ բայը...), կամ հակառակը՝ երբ պարտադիր սրաշեշտված բառերն առանց շեշտի են գործածվում: Այսպես՝ կապական կառույցներում ևս շեշտադրական տատանումներ կան: Շեշտադրական նորմը սահմանում է՝ կապը շեշտակիր չէ, շեշտվում է կապվող բառը, և հետևյալ զուգաձևություններում՝ **ի՛նձ պես // ինձ պես, ի՛մ մեջ // իմ մեջ, նրա՛ մեջ // նրա մեջ, քե՛զ պես // քեզ պես, նրա՛ հետ // նրա հետ, ի՛նձ մոտ // ինձ մոտ** և այլն, երկրորդները կանոնական չեն, հանձնարարելի չեն և աստիճանաբար նահանջում էին: Սակայն մեր օրերում նմանատիպ արտասանության աշխուժացման որոշակի միտում է ձևավորվում... Դեռևս անցյալ դարի կեսերից կանոնականացվելու են ձգտում հատկապես գեղարվեստական ոճից ներթափանցած մի քանի նախադիր, բայց և շեշտակիր կապերի (առանց, դեպի, բացի, հանուն) գործածություններ. ինչպես օրինակ՝ Ես տեսնում եմ խուփ աչքերով Իմ աշխարհը և իմ դարը: Այո՛, առա՛նց քարտեզների, առա՛նց գրքի, առա՛նց թերթի (ՊՍ, 1, 98): Առա՛նց շեշտի, առա՛նց հանգի, Առա՛նց ինչ-որ մակդիրների փնտռություն (ՊՍ, 1, 99). նորից արդյունքում զուգաձևություններ են:

- Վերջընթեր շեշտ են առնում բայի բաղադրյալ ժամանակաձևերը (քանի որ սովորական շարադասությամբ օժանդակ բայը շեշտակիր չէ), իսկ հարցական նախադասություններում շեշտակիր վանկն է հարցական երանգի կրողը դառնում. շեշտադրական նորմը սահմանում է. **հարցական հնչերանգի դեպքում ձայնի հարցական նշանը դրվում է շեշտակիր վանկի վրա**: Իսկ արգելական հրամայականում սուր շեշտ է կրում **մի**-ն, այսինքն՝ բայի սկզբնամասն է շեշտվում: Սակայն մի տարածված երևույթ է ընդգծում Թ. Ղարազուլյանը, որին վերևում արդեն անդրադարձել ենք. ներկայումս բանավոր խոսքում շատ տարածված է հարցական մի շարք նախադասություններում ձայնի բարձրացումը օժանդակ բայի վրա, եթե նախադասության մեջ հարցական բառ չկա, օրինակ՝ **Հիմա ե՞ք գնում: Դուրսը անձրև է՞: Հիմա իջնում ե՞ք: Կարծում եք՝ հեշտ է՞ նրա հետ աշխատելը**: Այսպիսի շեշտադրությունը, որ բնորոշ է խոսակցական լեզվին, անշուշտ կանոնական չէ: Հանձնարարելի է հետևյալ հնչումը՝ **Կարծում եք՝ հե՞շտ է: Հիմա՞ եք գնում** և

այլն, որը ավելի շատ դրսևորվում է բարձր ոճում, բարձրաձայն ընթերցման ժամանակ և այլն:

- Մերօրյա գրական հայերենում գերադրական աստիճանի արտահայտության մի նոր միջոց է ձևավորվում՝ դրական աստիճանի ածականի սրաշեշտությունը: Գերադրականության արտահայտման այսպիսի ձև բարբառագիտության մեջ նշված է: Հետաքրքիր է Ա. Մեյեի հետևյալ միտքը. «Համեմատական աստիճանը, որ հաճախ ձևով արտահայտված չէ, արտահայտվում է ուրեմն այն առանձնահատուկ ուժգնությամբ, որով արտասանվում էր ածականը: Ջուգահեռությունը հաճախ մեծ դեր է խաղում շեշտադրության մեջ»¹⁷⁶: Այս դեպքում շեշտված և չշեշտված ածականները ստեղծում են շեշտադրական զուգահեռներ (**գեղեցիկ** և **գեղեցիկ**, **լավ** և **լավ**, **բարձր** և **բարձր** և այլն), որոնց հիմքում քերականական տարբերություն է՝ դրական աստիճանի և գերադրականի միջև... Ոչ վաղ անցյալում գործող դասագրքերից մեկում նշված էր նմանատիպ արտահայտության ձև՝ բացականչական նշանով և այն կրող ծայնավորի կրկնությամբ (**լավ ավ**): Մեր օրերում որոշակի յուրահատկություն են դրսևորում նաև **ավելի**-ով բաղադրված ածականները՝ **ավելի գեղեցիկ** և **ավելի գեղեցիկ**. սրանք կարելի է համարել և՛ շեշտադրական զուգահեռություն (**ավելի**- բաղադրական աստիճանի ցուցիչ, **ավելի**- գերադրական աստիճանի ցուցիչ), և՛ տարարժեքայնության դրսևորում (**ավելի**- համեմատության աստիճանի ցուցիչ, **ավելի** -սաստկական մակբայ), և՛ շեշտադրական համանունություն: Անուշադրության չպետք է մատնել և **ամեն(ա)**-ով բաղադրված գերադրականության դրսևորմանը. կանոնական շեշտադրումից առավել հաճախ հնչում են այս ցուցիչի շեշտադրական տարբերակային ձևերը՝ սաստկացման ուժգնության տարբեր աստիճաններով, ինչպես օրինակ՝ **ամենագեղեցիկ**-ի, **ամենալավ**-ի կողքին՝ **ամենագեղեցիկ**, **ամենալավ** կամ **ամենագեղեցիկ**, **ամենալավ** և այլն:

- Կետադրական բազմաձևություններ են առաջանում նաև անուղղակիորեն մեջբերվող ուրիշի խոսքում, որոնց երկրորդական մասում կա հարցական դերանուն կամ հարցական բառ, և կապակ-

¹⁷⁶ Ա. Մեյե, նշվ. աշխ., էջ 470:

ցումն իրացվում է **թե** շաղկապով (սա կարող է նաև գեղջվել): Այսպես՝ հնարավոր տարբերակ-փոփոխականեր են՝ **Չգիտեմ, թե ե՞րբ** կգաս (**Չգիտեմ՝ ե՞րբ** կգաս): / **Չգիտեմ, թե ե՞րբ** կգաս (**Չգիտեմ՝ ե՞րբ** կգաս): / **Չգիտեմ, թե երբ** կգաս (**Չգիտեմ՝ երբ** կգաս): Լեզվական նորմով սահմանվածն առաջինն է՝ շեշտվածը:

Շետադրական նորմի ապակայունացման, հետևաբար և շեշտադրական զուգաձևությունների առաջացման պատճառ կարող են դառնալ նաև ներլեզվական կյանքը, հնչյունական և բառային շրջապատը, բառերի դասավորությունը և այլն: Ոչ բոլոր դեպքերում է ոչ վերջադիր շեշտադրությունը բարբառային կամ օտար ազդեցություններով բացատրվում: Այս մասին Հ. Ջաքարյանն իր «Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում» աշխատության մեջ նշում է. «Բանավոր անկաշկանդ խոսքում հաճախ բառի վերջին վանկը շեշտագուրկ է լինում, և ուժգնության շեշտը փաստորեն «բաժին» է մնում վերջընթեր վանկին: Այս երևույթը մեծ մասամբ հատում է որոշ դիրքերի (հնչյունական դարձվածի, երբեմն նույնիսկ արտասանական տակտի ավարտից առաջ, հարցական հնչերանգին նախորդելիս և այլն), երբ տեղի է ունենում տեղի անկում: Օրինակ՝ «Սա անձրևանոց է՞, թե՞ արևանոց» նախադասության մեջ **անձրևանոց** բառում շեշտակիր է դարձել վերջընթեր վանկը, քանի որ վերջին վանկը նախորդելով հարցական հնչերանգին, այդ դիրքին հատուկ տոնի անկման հետևանքով շեշտագուրկ է եղել: Նույնն է կատարվել **արևանոց** բառի հետ, որը եզրափակում է հնչյունական դարձվածը: Վերջընթեր վանկի շեշտն առավել բնորոշ է հատկապես մեկ բառից կազմված մի շարք պատասխան նախադասությունների (սպասի, չեղավ, գիտեմ, երևի, ո՛չինչ, նայած, բա՛րև, մի րո՛պե, հե՛րիք է, կո՛ւզեմ, ա՛պրես, չո՛ւնեմ, տե՛սնում եմ, հասկա՛ցա, նո՛րից, հի՛մա, տե՛սնենք, է՛լի, գնա՛ցինք և այլն)»¹⁷⁷: «Անձրևանոց է՞, թե՞ արևանոց» տիպի կառույցին արդեն անդրադարձել ենք, իսկ ինչ վերաբերում է ներքևում տրվածներին, ապա դրանք (բացառությամբ կանոնական տատանում ունեցող մի քանի բառերի) իրոք որ բնորոշ են խոսակցական լեզվին և գրական լեզվի

¹⁷⁷ Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Եր., 1984, էջ 184:

համար հանձնարարելի չեն: Ելնելով հանրալեզվագիտական տվյալներից՝ Հ. Ջարքայանը նմանատիպ շեշտադրական շեղումները համարում է չվերահսկվող (անկաշկանդ), ոչ պաշտոնական խոսքին բնորոշ. դրանք խոսքին կենդանություն ու անմիջականություն են հաղորդում, և ենթադրում է, որ դրանք պետք է որ կանոնական դառնան: Նա գրում է. «Անկաշկանդ խոսքում հանդիպում են հետևյալ հնչերանգով նախադասություններ. **Սա ի՞նչ է, տետը՞ր, թե՞ գիրք: Գալիս ե՞ս գնանք կինո: Ո՞րը տամ, փոքրը՞, թե՞ մեծը:** Այս օրինակներում ըստ կանոնի պետք է ունենայինք **տե՞տր, գալի՞ս ես, փո՞քրը** ձևերը, որոնք, սակայն, ավելի հատուկ են ինքնավերահսկվող, պաշտոնական խոսքին... Խոսքի պաշտոնականության աճման հետ չնայած հնչյունական այս հատկանիշների խոսակցական տարբերակները հետևողականորեն «դուրս են շարտվում դռնից», սակայն «ներս են մտնում պատուհանից», երբ հարկ է լինում խոսքին հաղորդել կենդանություն ու անմիջականություն: Սա նշանակում է, որ ինքնավերահսկվող ու անկաշկանդ խոսքի տարբերությունների հաղթահարման ընթացքը ոչ թե պետք է հանգեցնի հնչյունական այդ հատկանիշների խոսակցական տարբերակների իսպառ վերացմանը, այլ ընդհակառակը՝ դրանք պետք է որ ձեռք բերեն ոճական-գործառական արժեք և ստանան գրական նորմավորում»¹⁷⁸: Իհարկե, այստեղ կարելի է չհամաձայնվել հեղինակի հետ, որովհետև նման մոտեցումը տանում է ծայրահեղության՝ անմիջականության և կենդանի շնչով արդարացնել շեղումների, սխալների գործածությունը՝ դրանով հաստատելով «սխալը», «անկանոնը», «ոչ հայերենյանը»: Իհարկե, լեզվական-շեշտադրական կանոնը ևս «շղթայում է» խոսքը, խոսքային ցանկացած դրսևորում պետք է գնահատել ոչ միայն լեզվական, այլև խոսքային-ոճական, խոսքի մշակութային և հաղորդակցական նորմերի տեսանկյուններից, այնուամենայնիվ, **պետք է խուսափել խոսակցական ամեն մի իրողություն գրականացնելու անօգտակար սովորույթից:**

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 185-186:

16. Շեշտադրական զուգաձևությունների, շեղումների մասին այսքան խոսելուց հետո չենք կարող անտարբերությամբ անցնել գեղարվեստական դաշտի կողքով: Այստեղ է, որ ռիթմն ու հանգը իրենց ետևից են տանում, երբ, մի կողմ թողնելով սխալը, պատահականը, եզակին, զգում են կատարված շեղման «գեղեցկությունը», ընկալում, հասկանում ու գնահատում են այն: Բայց սա միայն այն դեպքում, եթե և՛ գրողը, և՛ ընթերցողը տիրապետում են լեզվական նորմին, ի գործ են շեղվածը՝ անկանոնը դնել գրականի, ընդունվածի, օրինականի կողքին: Ստորև բերում ենք նախադասություններ՝ հեղինակային շեշտադրությամբ՝ և՛ կանոնական, և՛ անկանոն. Իմ հոգսը ես չեմ, քեզ համար եղիր, Որ հետո, հետո զոջումդ վիատ Քո փակվող վերքը անվերջ չպեղի, դու իմ խնձ տղա (Ս.Կապուտիկյան, «Չյուն է գալիս», էջ 100): Թե ես պիտի մի մատ անգամ Իջնեմ իմ բերդ-հայությունից, Թե ես պիտի մի նյարդ անգամ Ձիջեմ իմ խորք-էությունից, Թե իմ մասունք գիր ու խոսքից Մի տա՛ն անգամ պիտի զոհեմ, Դրա դիմաց աշխարհին էլ տան՝ Իմ պետքը չէ՛, ախ, պետք չէ՛ ինձ (Ա.տ., էջ 11): Եթե մեկը մեզ փորձի նկարել, - Պիտի նկարի մի...հսկա գլուխ Եվ ուրիշ ոչինչ: Ոչ ո՛տք, Որ ունենք, սակայն չենք քայլում, Ոչ ձեռք, Որ ունենք, բայց՝ փափուկ, փայլուն, Ոչ ականջ, Սովոր աղմուկին կյանքի, Ոչ ռունգեր, Առած հոտը վտանգի (Գ. Էմին, 2, էջ 122): Միթե զո՛ւր է. Որ նա Արարա՛տ է, Իսկ Ես... Ես ... յա՛ն եմ...(Ա.տ., 176): Սիրում է ինձ փոքրի՛կ մի կին, ... Եվ տանջվո՛ւմ է ու դառնանո՛ւմ, Որ իրենով Ես չե՛մ գերվում ու հմայվում, Որ իրեն-ո՞վ՝ Ես ժպտո՛ւմ եմ, բայց... հեռանում... (Ա.տ., էջ 250): Նրանք պարզապես թատրոն են խաղում՝ հենց որ , քանի դեռ նայում ենք նրանց (Պ. Սևակ, 1, էջ 13): Ուր գոյության համար չկա միջին ուղի, Ուր միմիայն պետք է ընտրել կամ այս՝ կամ այն (Ա.տ., 16): Առանց խնայելու դարը մեզ կատաղի (Ա.տ., 16): Բայց մինչև անգամ թե այդպես լինե՛ր՝ Կշահեհինք մենք, Դարձյալ-վերստին-կրկին-նորից մենք, Բայց ո՛չ մայրերը: Բայց մեղք չեն նրանք (Ա.տ., 488): Թե հո ես անում՝ լավ արա, Բերան չես բանում, ավարա (Պ. Սևակ, 2, 59): Իսկ մանկան ե՛րգը... թափ առավ գնաց: Գնաց-բարձրացավ, Եկավ-ցածրացավ... Եվ հետո

կրկին պոկվեց ու գնաց (Ա.տ., 19): ... Երկինք խոյացած զանգա-
կատնում Կախել են մի նոր-անլեզվա՛կ մի զանգ (Ա.տ., 19): Միս-
տըր, աղա՛, սըր, Տիկնայք մեծարգո, պարոնայք ազնիվ, Քար ու
կշեռքին ի՞նչը կհասնի (Ա.տ., էջ 66): Հայ մանչուկների խմբերի
նման՝ Կը՛վ-կը՛վ հա՛ կը՛վ-կը՛վ՝ Անվերջ կվվեցին (Ա.տ., 74): Հիմա՛
Քառասունմեկերորդ անգամ, Շեկ բուրվառի հետ Սև վառքդ խնկեց
(Ա.տ., 88): Թը՛ի հա թը՛ի, Ջը՛նգ հա զը՛նգ, Ճը՛ռ հա ճը՛նչ - Հաս-
նում ենք վանք... (Ա.տ., 97) Ե՛վըս մի փարչ չափից ավել, Ե՛վըս մի
գավ թունդից ըմպում՝ Ու սիրտն ի սեր անկախության Գլխի դեմ է
ապստամբում (Ա.տ., 112): Եվ աղաչում էր, որ դու չլքես, Դառնաս
օրվա հա՛ց և ո՛չ թե նշխար... (Ա.տ., էջ 154): Ա՛խ, ինչո՞ւ անվերջ
չհանեց հոգիդ, որ ուրիշ հագուստ նա տեսներ հագիդ... Որ դոսից
նոյնպես լինեիր լուսեղ... (Ա.տ., 154): ...Որերորդ անգամ մոխիր էր
թողնում Մեր արտ ու այգուց, մեր տաճարներից (Ա.տ., էջ 179): Եվ
ես չեմ, ոչ էլ դուք եք ղողանջում. Սիսն ու Մասի՛սն են ղողանջում
անվերջ-անդադար-անդու՛լ (Ա.տ., 249): Որտեղի՞ց հապա Նրա
արյունը օտարիս սրտում՝ Իմ սրտում, որ քեզ Սիրում է այսպես՝
Աստվածաշնչյան այնտեսակ սիրով... (Ա.տ., 363): Գիտե՞ս, Ես
ինչ-որ չափով նոյնպես արքա եմ (Ա.տ., 363): Եկա՛ր... և իսկույն,
իմ Սուլամի՛թա, Հագարամյակներն իմ ու քո միջև ասես ջնջվեցին
(Ա.տ., 368): Եվ ինձ վրա են լույսդ ու ստվերդդ՝ Այժըմ և ընդմի՛շտ
(Ա.տ., 372): Թե Կոլումբոսը Հայ լիներ ինձ պես, Քե՛զ, Ամերիկա,
Դժվա՛ր թե գտներ... (Գ.Էմին, 2, 308): Եվ սակայն, Ների՛ր, Նիա-
գա՛րա, ինձ... (Ա.տ., 307): Եթե հնա՛ր է, Տե՛ր, Տեր Գագա՛րին, Տեր
Շեպարդ, Տեր Արմատրոնգ, Հեռացրե՛ք բաբելոնն այս ինձանից
(Ա.տ., 298): Հելլո՛, Մա՛րտին Ռո՛բինսո... Ալե՛լույա, Ալե՛լույա (Ա.տ.,
298-299): Հայրենիքը լոկ հողն ու ջուրը չէ, Ոչ էլ, Իսպա՛նիա, քո
ճա՛ռն ու Հի՛մնը... (Ա.տ., 287): Մի՞թե վերջի՛նն ես, Քսա՛ներորդ դար,
Եվ, ատոմահար, Չափտի՛ հասնես Քսանմեկերորդին, Քո հաջո՛րդ
դարին (Ա.տ., 187): Ա՛վե, Մարի՛ա... (Ա.տ., 184): Եվ ո՞ւր է, Երկիր
իմ, Քո հուրը (Ե. Չարենց 61): Քե՛զ եմ երգում, քաղցր քույր, Խելա-
գա՛ր Սոմա՛ (Ա.տ., 63): Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում Խառնելու
հզոր, բոսոր ձեր սրտին Մի սիրտ - ավելի՛ ըմբոստ ու արի, Քան իմ

սիրտը թեժ- սիրտը Նաիրի (Ն.տ., 80): Ականջներդ լայն բացեք, Ուրիշ հանձարներ չկան Աշխարհում- նրացից բացի՝ (Ն.տ., 99): Մի Չունկ-Ֆու կարող է ասել.- Բարի՛ լույս, բանվոր Պողոս (Ն.տ., 100): Ոչ ո՛ք, ոչ ո՛ք չտեսավ: Միայն մի վայրկյան էր վառ (Ն.տ.) : Օ, այն չէ՛ր, այն չէ՛ր Երկիրը հրի (Ն.տ., 232): Լենին, այո՛, - Լենին: -Բայց ո՛չ միտինգային... Լենին- այսօր ասել է գագաթ (Ն.տ., 455): Ես սիրում եմ քեզ, Հայնրիխ Հայնե (Ն.տ., 592): Կգա՞ս տանենք Հայաստան»: - «Ըհը՛» (Վ. Պետրոսյան): «Ը՛հը, տեսա՞ր, հոգիդ թեթևացավ, իսկը խմելու ժամանակն է (Գ. Խանջյան): - Ը՛հը, մի հատ հավետով կեր,- գոլորշի արձակող տոլման մի կերպ Գրիգի առջև խցկեց Հասմիկը: -Ըհը՛,- լի բերանով դժվարությամբ արտաբերեց Գրիգորը Ն.տ.): Իմ Աստված, Իմ Խա՛չ, Իմ Երկի՛նք, գետի՛ն, Աշխարհը ծնվում, մեռնում է դարձյալ (Թադևոս Տոնոյան, 30): Ներում եմ մեղքդ, բայց եղի՛ր իմաց, Իմ եկեղեցու անարատ որմին Քո խոսքն ու գործը գրվում են հիմա (Ն.տ., 33) և այլն:

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Նորմավորման խնդիրներից մեկը լեզվաշինությունն է, որը մեր երկրում պետական հոգածության ենթակա և պետական գործընթաց է: Նորմավորումը գիտակցական միջամտություն է. մասնագետ-լեզվաբանները, ինչպես և լեզվաբանական հաստատություններն ու խորհուրդները լեզվի գործող կանոններում այս կամ այն վերափոխությունը կատարելու խնդիր են դնում երկրի Կառավարության առաջ՝ նախագծերի ձևով, և դրանց օրինականացմամբ, համապատասխան որոշումների համաձայն համընդհանրական, միասնական կանոնի սահմանմամբ և պարտադրականության ուժով ապահովվում է լեզվի առաջընթացը:

Ուղղախոսությունը՝ հայերենյան և հայերենացված շեշտադրությամբ, լեզվի գեղագիտության՝ խոսքարվեստի, խոսքի մշակույթի ցուցիչ է, բանավոր խոսքի ձևավորման կարևոր բաղադրիչներից մեկը: Շեշտադրության նորմավորման գործընթացը նույնպես լեզվաշինություն է՝ հոգածության և գիտակցական միջամտության անհրաժեշտությամբ պայմանավորված:

Շեշտադրության կանոնարկման հիմքում ընկած են շեշտված և անշեշտ միավորների (հնչյունի, վանկի, բառի, շարույթի) հակադրությունը, տարբերակայնության ու հավելուրդայնության իրողությունը: Անհրաժեշտ է հիմնականոնի, բացառություն-կանոնների կողքին արժևորել տարբերակային ձևերը կամ շեշտակրական զուգահեռությունները, որոշել դրանց բնույթը, պարզել առաջացման աղբյուրները, ինչպես նաև հաղորդակցական-իրադրական այն պայմանները, որոնք թելադրում են այս կամ այն տարբերակի գործածությունը: Բնականաբար, գիտական չէ շեշտադրական տատանումներն ու տեղաշարժերը, շեղումները միանշանակ սխալ համարելը:

Հայերենում շեշտադրության նորմավորման ճանապարհը արտաքուստ շատ սահուն ու կարճ է թվում. բավարար է մեկ հիմնական կանոնի իմացությունը. և անգամ բառարաններին, ուղեցույցներին դիմելու խնդիրը չկա. ուղղակի նորմը պետք է իմանալ, այսինքն՝ շեշտադրական հիմնականոնն ու այդ կանոնի մի քանի բացառություն-կանոնները: Բայց նորմի յուրացումը ճանապարհ է բացում և հնարավոր շեղումների համար: Նշանակում է՝ խոսողների և գրողների կողմից նորմի յուրացման աստիճանը ոչ այնքան **լեզվական** խնդիր է, որքան խոսքային, որքան **հոգեբանական** և **մանկավարժական**:

Ընդհանուր առմամբ՝ կանոնների մի խումբ յուրացվում է առանց լրացուցիչ ջանքերի, մյուս խմբի յուրացումը պայմանավորված է դպրոցական կրթությամբ՝ ուսուցանողների հմուտ ջանքերի միջոցով, երրորդները մնում են չյուրացված կամ կիսայուրացված անգամ դպրոցական կրթություն ստանալուց հետո: Ահա թե ինչու շատ կարևոր է նորմավորման գործընթացը կազմակերպելիս պարզել, թե կանոնների ո՞ր խումբն է յուրացվում առանց նորմատիվ քերականությունների, առանց դպրոցական կրթության, որո՞նք են յուրացվում նորմատիվ քերականությունների, դպրոցի միջոցով, և որո՞նք են մնում չյուրացված կամ կիսայուրացված: Շեշտադրության յուրացումն սկսվում է ծննդյան օրից՝ բառերը լսելու առաջին իսկ պահից. լսելուն համապատասխան էլ սովորաբար խոսում ենք ու խոսքի մեջ շեշտադրում բառերը: Դպրոցում սովորում ենք ճիշտ խոսելու, բառերը ճիշտ հնչեցնելու կանոնները, թվարկում շեղումներն ու բացառությունները, անգամ շեշտադրական զուգորդումներն ենք ճանաչում, բայց հայերեն շեշտադրելու պարտավորվածություն չի մշակվում: Ուսուցանողների կողմից անուշադրության է մատնվում անգամ այն, թե դաս պատասխանող աշակերտը «Հայերենի շեշտը վերջնականկային է. ընկնում է միշտ վերջին վանկի վրա...» նախադասության մեջ ինչպե՞ս է շեշտում բառերը:

Դեռևս հին քերականներն են նշել կենդանական աշխարհի ծայների համեմատությամբ մարդկային ծայնի շեշտի յուրահատկությունը: «Այստեղ միաժամանակ կարևոր է այն, որ մարդկային լեզվի մեջ

ծայնի հատկությունների օգտագործման տարբերությունները, այդ թվում և տոնը, համարվում են ոչ թե բնածին բան, այլ ձեռքբերովի ունակություն, որ փոխանցվում է կրթությամբ: Սրանով Դավիթը ըմբռնում է լեզվականորեն օգտագործվող մարդկային ծայնի որակական տարբերությունը կենդանականից»¹⁷⁹, - գրում է Գ. Զահուկյանը: Շեշտը յուրացվում է բառի հետ միասին, նրա իմաստի ընկալմանը զուգընթաց: Ահա թե ինչու շատ հաճախ աննկատ են մնում շեշտադրական խնդիրները: Ընդհանրապես շեշտադրական նորմը ևս փոփոխվում է, փոփոխվում է շատ դանդաղ, գրեթե աննկատելի, «սողեսող», և այդ փոփոխությունները պատճառաբանվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր գործոններով՝

1. Փոփոխության օբյեկտիվ բնույթը պատճառաբանվում է լեզվի ներքին զարգացմամբ. այն լեզվի բնականոն ընթացքի հետևանք է: Օբյեկտիվ պատճառներով կատարված փոփոխությունները շատ հաճախ աննկատ են մնում, մինչև որ աստիճանական կուտակումները որակականի վերածվելու պահանջ-թելադրանք կամ սպառնալիք են դառնում:

2. Փոփոխությունը սուբյեկտիվ բնույթ ունի, եթե կախված է լեզվակիրների ցանկություններից և նրանց կամքով է կատարվում: Հաճախ է պատահում, որ այս կամ այն կանոնը չի յուրացվել անհատի կողմից, և այն տվյալ անձի խոսքային գործունեությունից դուրս է: Լինում է նաև այնպես, որ լեզվակիրը ծանոթ է կանոնին, բայց այն գործառելու համար մտքի ու հիշողության լարում է պետք, և, դրան գումարած, դա պետք է անել հաշված վայրկյանների ընթացքում. արդյունքում խոսողը աղավաղում է լեզվականոնը. գրում կամ խոսում է ոչ թե ճշտությամբ հետևելով, այլ ավելի հեշտ և դյուրին ձանապարհը նախընտրելով: Կա նաև երրորդը՝ օտարախոսությամբ պայմանավորված լեզվական նորաձևությանը (մոդային) հետևելը: Կարծում ենք՝ շեշտադրական նորմին առավելապես այս տիպի աղավաղումն է սպառնում: Սուբյեկտիվ պատճառներով աղավաղումներն ամենից հաճախ խոսակցական լեզվում են արտացոլվում,

¹⁷⁹ Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 130:

խոսակցական ոճում դրանց դրսևորման ոճական առանձնահատկությունների մասին հաճախ է խոսվում: Ավելին, շատ դեպքերում վիճակագրական արդյունքները (հարցումներ, ծայնագրություններ և այլն) կապվում են խոսակցական լեզվի նորմերի հետ. «մենք այսպես ենք խոսում», «մենք այսպես են լսում», «այսպես հեշտ է» և այլն: Վիճակագրությունը կարող է դառնալ նորմավորման գործընթացի կարևորագույն գործոն և չափանիշ, եթե դրա արդյունքները համապատասխանում են լեզվի պատմականորեն ձևավորվող սկզբունքներին, ներդաշնակում են լեզվի կանոնին ու ոգուն: Լեզվական նորմը վիճակագրական միջին չէ: Բայց վիճակագրությունը կարող է և որոշիչ գործոն դառնալ:

Այնուհանդերձ, ինչպե՞ս վարվել, երբ մի կանոնը հանրային կարծիքի ներգործության ուժեղացման սպառնալիքի պատճառով է փոփոխության ճանապարհը բռնում: Երբ թուլացել է հեղինակավոր լեզվաբանների հսկողությունը, որն էլ իր հերթին նշանակում է՝ թուլացել են լեզվաշինական, ինչու չէ, նաև լեզվաքաղաքականության աշխատանքները. վերջիվերջո լեզվի նորմավորումը լեզվաքաղաքականության հարցերից մեկն է: Ուրեմն՝ այդ աշխատանքները կատարող մարմինները թերանում են կամ անգործության են մատնված, ուրեմն՝ թուլացել է պետական վերահսկողությունը: Սա ամենից շատ ուղղախոսությանն է սպառնում, մասնավորապես շեշտադրությանը: Սակայն հենց այստեղ է, որ առավել ևս կարևորվում են լեզվական հսկողության և վերահսկողության հարցերը: Այսօր զանազան լեզուների ազդեցության տակ գտնվող հայերենյան լեզվավիճակն ամենից առաջ լեզվական միջամտության կարիք ունի, միջամտություն, որ հիմնված պիտի լինի լեզվաշինական ճիշտ քաղաքականության վրա, որը կարևոր նախապայման է ճիշտ խոսելու և գրելու համար:

Շեշտադրության նորմավորման ընթացքը կարգավորելու համար անհրաժեշտ է հայերենի շեշտադրության պատմական նկարագրությամբ, շեշտադրական կանոնների համակարգայնացման, շեղումների, միտումների և բացառությունների ճանաչման, շեշտառության տարբերակային ձևերի վերլուծության ճանապարհով, շեշտված և

անշեշտ միավորների արտաբերական առանձնահատկությունների և հակադրությունների միջոցով սահմանել շեշտադրական նորմը՝ ամրակայելով մեր լեզվի զարգացման ընթացքին, լեզվի ոգուն համապատասխան կանոններով: Շեշտադրության նորմավորման բոլոր չափանիշների հաշվառման հետ մեկտեղ շատ կարևոր է երևույթի ճիշտ գնահատումը, լեզվի զարգացման էությունից բխեցնելը:

Ամեն մի գրական լեզվի համար անհարժեշտ պայմաններ են միակերպ քերականությունը, միակերպ ուղղագրությունը, միակերպ ուղղախոսությունը, բնականաբար՝ նաև՝ միակերպ շեշտադրությունը՝ անկախ այն բանից, թե տվյալ լեզվի շեշտն ինչ բնույթ ունի: Ուղղախոսությունը սահմանում է ճիշտ և ճիշտ շեշտադրամբ խոսելու, կանոնական, գրական արտասանելու, հնարավոր արտասանական-շեշտադրական տարբերակներից նախընտրելիի, լեզվի ընդհանուր օրինաչափություններին համապատասխանողի, նրա էությունից բխողի ուղիղ ընտրություն կատարելու կանոններ:

Շեշտադրության նորմավորումը ևս համաժամանակյա կտրվածքով կատարվող գործընթաց է, և պետք չէ անցում կատարել տարժամանակյա կտրվածքին. համեմատել կարելի է, կարելի է զուգադրաբար քննել, բայց այն տվյալ ժամանակի համար պետք է կատարել: Բարբառն ու նրա շեշտադրությունը ներկա ժամանակում «անցյալ են դառնում»: Շեշտադրության հարցերը գիտականորեն լուծելու համար պետք է մի կողմ թողնել անհատական ճաշակը և հիմնվել լեզվի իրական, փաստական վիճակի, նրա պատմական ու ժամանակակից առանձնահատկությունների վրա, նրա զարգացման ներքին տրամաբանության վրա: Լեզուն «լռությամբ մերժում է» այն, ինչ չի բխում լեզվի կարիքներից ու նրա զարգացման ներքին տրամաբանությունից¹⁸⁰:

Կարծում ենք՝ սկզբունքային պիտի համարել նաև այն, որ նորմավորման գործընթացում «տեսնելը» դյուրին է, «կանխատեսելը»՝

¹⁸⁰ Տե՛ս՝ Տերմինաբանական և խոսքի մշակույթի հարցեր, 1, Ս. Աբրահամյան, Համակողմանի մոտեցում խոսքի մշակույթին, Եր., 1976, էջ 15:

դժվար: Եվ հենց այստեղ է, որ կանոնի ձգտող միտման կողքին սխալը՝ անընդունելին՝ անհանձնարարելին կարող է որոշ ժամանակ անց կանոն դառնալու իրավունք պահանջել, անգամ նվաճել այն... **Սա էլ է կանոն լեզվի կանոնարկման մեջ:**

Օրենքները նրա համար են, որ ճանաչվեն ու կիրառվեն: Ընդհանրապես Ա. Այտընյանը օրենքն անվանում է «գիտության փականք», և, երբ լեզվակիրը ստիպված է խոսել օրենքով, շեշտադրել օրենքով՝ առանց օրենքը ճանաչելու, «նույն գիտութեան փականքը փականքի տակ պահուած կը մնայ»¹⁸¹: Օրենքը չի կարող օրենք լինել, եթե նրա թիկունքում չկա հարկադրելու ընդունակ մի ուժ. շեշտադրական օրենքների դեպքում ևս «հարկադրելու ընդունակ ուժ» են **դպրոցական դասագրքերը, բուհական նորմատիվ քերականությունները, բառարանները, ուղեցույցները** (նաև՝ լեզվի կանոնարկման հարցերի ուսումնասիրությամբ հատկանշվող ցանկացած աղբյուր), **Տերմինաբանական կոմիտեի որոշումները**, ի վերջո՝ **ուսուցանողը** (ուսուցիչն ու դասախոսը, լեզվաբանն ու լեզվասերը):

Լեզվի, մասնավորապես շեշտադրության նորմավորումը կատարվում է գիտական որոշակի սկզբունքներով, որոնք արդեն կոդավորված լեզվում վերածվում են նորմավորվածությունը որոշելու, լեզվաչինական աշխատանքները գնահատելու չափանիշների: Այս գործընթացում անհրաժեշտ է՝

- Կռահել լեզվի ներքին զարգացման օրենքները, ըմբռնել օրինաչափությունները.
- -Ընտրել բնական չափանիշներ և մշակել գիտական սկզբունքներ՝ միշտ հիշելով՝ «օգտակարը պահի համար է, սկզբունքը դարերի համար է».
- Սահմանել կանոններ և օրենքներ՝ ելնելով ընդունված սկզբունքներից ու բնական չափանիշներից.
- Հեռու մնալ ամեն ինչ հայացնելու և հայերենացնելու, նաև գրականացնելու անօգտակար սովորույթից (փոխաբերել մտածել՝ ինչո՞ւ ճիշտ և ճիշտ շեշտադրությամբ չենք խոսում).

¹⁸¹ Տե՛ս՝ Ա. Այտընյան, նշվ., աշխ., էջ 5:

- Գիտակցել՝ շեշտադրական օրենքները հասարակության համար են, նրա խոսքը ուղղորդելու, լեզվի հաղորդակցական գործառնության իրականացման համար են, և դրանք, ինչպես լեզվական օրենքները, «քրեական օրենքներ չեն, որոնց կիրառումը կախված լինի միայն կիրառողի կամքից ու իմացությունից. սրանք օրենքներ են, որոնց իրագործումը, ինչպես լեզուն ինքը, հասարակական է»¹⁸²:

- Գիտական մոտեցում ցուցաբերել բացառությունների կանոնականացման ճանապարհին. բացառությունները հին ու կորած կանոնների դրսևորումներ են (և շատ կարևոր են հին ու կորած երևույթները հասկանալու համար), բացառությունները նաև ապագայի կանոնների նախերգանքներն են:

- Օրենքներ սահմանելիս «մեծ վախեր չունենալ» սխալների և աղավաղումների պատճառով. դրանք անխուսափելի են, բայց պետք է կարողանալ դրանք դարձնել ճիշտ ու հայերենանպաստը գտնելու մղիչներ:

Շեշտադրությունը ևս զարգանում է իր ներքին օրենքներով, և առանց խախտելու այդ օրենքները՝ անհրաժեշտ է կանոնարկման ենթարկել հայերենի ուղղախոսության այս ենթահամակարգը հետևյալ սկզբունքներով՝

➔ **Հնարավորինս պահպանել շեշտադրական ավանդույթը (մանավանդ որ հայերենն առավելություն ունի այլ լեզուների համեմատությամբ).** ավանդապահության օրենքը գործում է նաև այս ենթահամակարգում. շեշտադրությունը ևս պահպանողական է, հետևաբար այն **նորմավորելու հարցում ևս պետք է հենվել ավանդականության վրա և նրանից հեռանալ միայն անհրաժեշտության դեպքում՝** այն էլ **հեշտությամբ հետևելի ընդհանուր կանոն սահմանելու պայմանով:** Ինչպես ասում են, այստեղ ևս անհրաժեշտ է ճշտորեն զուգակցել ավանդապահականության և անվանդախատության օրենքները: Հենց սա է շեշտում Ս. Աբրահամյանը՝ գրելով՝ «Կետադրության բնագավառում կարևոր հանգամանք է ազգային

¹⁸² Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006, էջ 18:

ավանդույթների պահպանումը, եթե դրանք, իրոք, առավելություն ունեն այլ լեզուների կետադրության համեմատությամբ: Տարբեր լեզուներում գործող կետադրության ընդհանրությունների հետ միասին շատ լեզուներ ունեն յուրահատկություններ: Սա վերաբերում է նաև հայերենին»¹⁸³:

➔ **Չանտեսել առանձին լեզուների փորձը, բայց և այլ լեզուների ընդհանրությունների հետ միասին հաշվի առնել մայրենիի յուրահատկությունները՝ պահպանելով հայերենյան համակարգը, խուսափելով որևէ առավելություն չունեցող շեշտադրական հավելուրդներից:**

➔ **Ամեն մի գրական լեզվի համար միակերպ քերականության և ուղղագրության կողքին անհրաժեշտ պայման է նաև միակերպ ուղղախոսությունը՝ միակերպ շեշտադրմամբ:** Սա նշանակում է, որ շեշտադրական տատանումների դեպքում պետք է ընտրել միօրինականացմանը ու պարզեցմանը միտող տարբերակները:

➔ **Երբ մի բառ մի լեզվից անցնում է մի ուրիշի, որի շեշտադրության օրենքները տարբեր են, փոխառյալ բառը հարմարվում է վերջինիս օրենքներին:** հետևաբար՝ այլ լեզուներից օտար շեշտադրությամբ (հայերենի շեշտադրության օրենքներից տարբեր) բառեր փոխառելիս առաջնորդվել հայերենյան շեշտադրության օրենքներով:

➔ **Նորմավորումը պետք է կատարվի հնչաբանական տեսակետով:** պատմականորեն առաջնորդվելով հանդերձ՝ շեշտադրական նորմը սահմանելիս պետք է հենվել դպրոցական-գրական արտասանության վրա:

➔ **Շեշտադրական կանոնաշարքը, ըստ կարելիւյն, պիտի բավարարի նաև խոսակցական արտասանության պահանջներին:** լեզվի լավագույն կանոնները ծնվում են խոսքից և կանոն են դառնում լեզվի մեջ, որ կանոնարկեն խոսքը:

➔ **Միաժամանակ չպետք է կարծրացնել կանոնը, նրա «գերին դառնալ»:** պետք է գիտակցել՝ լեզվական նորմերը չեն կառավարում մարդու խոսքային գործունեությունը, բայց կողմնորոշում են,

¹⁸³ Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրություն, Եր., 1999, էջ 12:

թե ինչպես պետք է խոսել... Ոչ մի ինքնաստեղծ ու կենդանի լեզու չի պարփակվում կանոնների բազմությամբ. «Ասում են, թե քաղաքականության մեջ լավագույն կանոնն է չափից դուրս չկառավարելը: Այս կանոնը նույնքան ճիշտ է դաստիարակության մեջ», - գրում է Ժան Պոլը: Այս կանոնը նույնքան ճիշտ է և լեզվի նորմավորման գործընթացում. **լեզվական օրենքի ծայրահեղ խստությունը վնաս է լեզվին...** Շեշտադրության նորմավորման դեպքում ևս լավագույն կանոն պետք է դարձնել «չափից դուրս չնորմավորելը», «սանձերը չափից դուրս չծգելը»:

➤ **Շեշտադրության նորմավորումը և շեշտադրական նորմի սահմանումը համաժամանակյա կտրվածքով պետք է կատարել՝** հիմնվելով արդի հայերնյան իրական, փաստական վիճակի վրա. ժամանակի ոգուն համապատասխան կանոններ սահմանել՝ լեզվի կարիքներից ու նրա զարգացման ներքին տրամաբանությունից բխեցնելով:

➤ **Յուրաքանչյուր գրական լեզվի համար հարկ է հաշվի առնել արտասանական-շեշտադրական տատանումները** և դրանց արտացոլումը խոսքի մեջ: Անժխտելի է՝ հայերենում շեշտը կայուն է, գրեթե համընդհանրական կանոն կա, բայց մյուս կողմից՝ լեզուն երբեք բացարձակ միատարրություն չի ունենում: Շեշտադրության նորմավորման գործընթացում ևս անխուսափելի են գրական և բարբառային, տեղական և օտարաբան, նորմավորված և չնորմավորված, ավանդական և նորաբան տարբերակները: Ուրեմն՝ շեշտադրական նորմում պիտի կանոնականացնել շեշտադրական տարբերակներից, զուգաձևություններից ուղիղ ընտրություն կատարելը:

➤ **Զիմնավորված կամ թույլ հիմնավորված շեշտադրությունը պետք է կարգավորել բառերի սովորական շեշտադրությամբ՝** առաջնորդվելով հայերենի արտասանության առանձնահատկություններով. շեշտադրական զուգաձևություններից պետք է ընտրել նրանք, որոնք բացարձակ գերակշռություն ունեն և նպաստում են շեշտադրության միօրինականացմանը:

➤ **Շեշտադրական նորմը փոփոխող նոր կանոն(ներ) սահմանելիս շահ տ կարևոր է լավ իմանալ գրական լեզվի շեշտադրության**

գործող կանոնները. դրանք զետեղված են նորմատիվ քերականություններում՝ դպրոցական դասագրքերում: Մյուս կողմից՝ հենվելով գրական կենդանի խոսքի օրինաչափությունների վրա՝ հստակորեն պատկերացնել խոսակցական լեզվի «չգրված» կանոնները, որոնք ձևավորվող միտումներ են գրական լեզվի կանոնարկման ճանապարհին:

➤ **Լեզվի նորմավորման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել շեղումներին վերաբերող բոլոր զգուշացումները,** «անհանձնարարելի», «սխալ», «ոչ նախընտրելի», «ոչ թույլատրելի» հղումներով բնութագրվողները և նոր կանոններ սահմանելիս է՛լ ավելի հետևողականորեն սահմանազատել ճիշտն ու սխալը, կանոնականն ու անկանոնը, հանձնարարելին և ոչ հանձնարարելին: Այսինքն՝ շեշտադրական սխալը պետք է դրվի ճիշտ շեշտադրվածի կողքին, որպեսզի այն կա՛մ կանոնական դառնա, կա՛մ նահանջի («Ուղիղը պետք է դրվի թեքի կողքին, որպեսզի թեքը նույնպես ուղիղ դառնա». Կոնֆուցիոս):

➤ **Նորմավորելիս հնարավորինս քիչ կանոններ սահմանել.** այս դեպքում հեշտ կլինի նաև հետևել դրանց կիրարկմանը: Եթե լեզվում կանոնները քիչ են, այնտեղ նրանք կշիռ ունեն: Ֆ. Վոլտերի՝ պետության օրենքների մասին ասվածը կարելի է վերագրել նաև լեզվական օրենքներին. լեզվի մեջ օրենքների բազմաթիվությունը նույնն է, ինչ բժիշկների մեծ թիվը, որ հիվանդության և անգորության հատկանիշն է. այս առումով նորմավորված հայերենի հազարամյա շեշտադրությունն իր զարգացման ճանապարհին նորից ու նորից ամրակայում է գրեթե բացառություն չձանաչող համընդհանրական նույն կանոնը:

➤ **Հնարավոր չափով քիչ բացառություններ կանոն դարձնել և ճանաչել տալ դրանք:** Բացառության վրա պիտի նայել իբրև կանոնի կողքին կա՛մ մի ուրիշ երկրորդական կանոնի արդյունք, կանոն, որ լեզվի զարգացման անցյալում բնավ է՛լ երկրորդական չի եղել, կա՛մ՝ միտում, որ նոր-նոր ձևավորվող կանոնի հիմք կարող է դառնալ, բայց և դեռևս չունի իր բացատրությունը: **Լեզվական նորմը սահմանում է կանոն և կանոն է դարձնում նաև նրա բացառությունը:**

Շատերի կարծիքով չկա կանոն՝ առանց բացառության. դրանք ամեն մի կանոնի անբաժանելի հավելվածն են՝ սովորական, բայց և պարտադիր: Մյուսները պնդում են՝ եթե կանոնն ունի բացառություն, ուրեմն կանոն չէ: Հայ բանաստեղծն ասում է. «...Չէ՞ որ ամեն օրենք նաև Բացառությամբ է ամրանում...» (Գ. Էմին): Ուրեմն՝ պետք է կանոնարկել շեշտադրությունը՝ համընդհանրական օրենքն «ամրացնելով» հստակորեն սահմանված հնարավորինս քիչ թվով բացառություն-կանոններով:

➤ **Յուրաքանչյուր մակարդակի նորմավորման արդյունքները պետք է հաշվի առնել հաջորդ մակարդակի վերլուծության և նորմավորման ժամանակ.** շեշտադրման նորմավորման արդյունքները հատկապես շարահյուսական և տեքստաբանության, նաև խոսքի մշակույթում են կարևորվում, տաղաչափության մեջ, երգարվեստում՝ պայմանավորված հաղորդակցական տարբեր իրավիճակներով:

➤ **Անհրաժեշտ է հաշվի առնել շեշտադրության հարացուցային և շարակարգային արդյունքները:** Շատ հաճախ հարկ է պարզել ոչ միայն այն, թե ի՞նչ կա այդ լեզվում, այլև ինչի՞ց ինչքան կա: Քանակական հաշվումների ժամանակ պետք է որոշել հայերենի շեշտադրական կաղապարները, դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը և ապա կատարել քննություն: Պետք է հաշվի առնել նաև խոսքային ցանկացած ընտրանքում կանոնականի ու անկանոնի, նորմի և շեղման, բացառության, հարաբերական սխալի գործածության քանակային հարաբերակցությունը: Բոլոր դեպքերում քանակական վերլուծությունը հետապնդում է մեկ նպատակ՝ որակի բացահայտում:

Կանոնի յուրացման ընթացքը երկարատև է, և լեզվական յուրաքանչյուր կանոն կարիք ունի գործնականության: Ուրեմն պետք է հետևել, որ դրանք ներառվեն դպրոցական դասագրքերում, բայց ոչ անկյուններում կամ տողատակերում, հետևել, որ լեզվակիր հանրության յուրաքանչյուր անդամ տեղյակ լինի մեր գրական լեզվի շեշտադրման օրինաչափություններին ևս, իմանա ճիշտն ու սխալը (իսկ գիտակցելով սխալը՝ լեզվագործածողը նոր ուժով է դիմում

կանոնին) և ինքնավերհսկողությամբ աստիճանաբար ապահովի սեփական խոսքի որակն ու մակարդակը: **Ձևավորված լեզվական-շեշտադրական հմտությունը պետք է վերածել հաղորդակցական հմտության, խոսքի մշակույթի բաղադրիչ տարրի. անկաշկանդ ու կենդանի շփումը, հաղորդակցումը պիտի «շնչավորվի» նաև ճիշտ շեշտադրությամբ, հաղորդակցական-հնչերանգային ճիշտ երանգով... Լավագույնը շեշտադրությունը բուն իսկ խոսքի մեջ ինքնաբերաբար սովորեցնելն է, խոսքի մշակույթի ձևավորմանը ծառայեցնելն է:** «Ամեն ոք լավ պետք է իմանա, որ հոգ տանելով իր խոսքի նկատմամբ, դրանով իսկ հոգում է մեր ամբողջ շրջապատի, մեր ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման նկատմամբ, նպաստում է մեր գրական լեզվի մշակմանը, կատարելագործմանն ու զարգացմանը»¹⁸⁴:

Լեզվաշինական աշխատանքների ընթացքում պետք է առավել ևս կարևորել նորմի պահպանիչ հատկանիշը, ճիշտ ձևով գործառել Գ. Սևակի նշած ավանդախախտության և ավանդապահպանության օրենքները:

Լեզվի նորմավորման չափանիշ պիտի համարել լեզվի կանոնի և խոսքի կանոնի համապատասխանությունը. որքան լեզվի տեսության և լեզվի գործառության տարբերությունը քիչ է, այդքան էլ սահմանված կանոնը կենսունակ է, ուժեղ է և այդքանով էլ պարտադրականությունից վերածվել է հմտության:

Քաղաքակիրթ հասարակության մեջ լեզվակիր անձի խոսքը (գրավոր թե բանավոր) միշտ պետք է լինի հսկողության և ինքնահսկողության տակ: Ա. Այտընյանը նշում է, որ չկա ազգ ու ժողովուրդ, որ առանց ուսուցման ու կրթության սեփական մայրենիով անսխալ խոսելու և գրելու առանձնահատկությամբ պարծենա. բնական է, որ ամեն մի «մտացի» հասարակության համար ուսման և ուսանելու կարևորությունը ճանաչել տալը կարևոր նախապայման է. «Լեզու մ'որ աւանդական միայն է առանց գիտնական հիման, այսինքն թէ պարզապէս ժառանգութիւն մը եւ ոչ ուսման ստացուածք,

¹⁸⁴ Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, հ. 1, Եր., 1976, էջ 23:

կրնայ թերեւս ճշգրտութեամբ նաեւ վայելչութեամբ ալ գործածուիլ, բայց մինչեւ որոշ սահման մը»¹⁸⁵:

Ընդհանրապէս մարդու կենսագործունեության ընթացքում տարբերակվել են 3 տիպի նորմեր: Առաջին դեպքում դրանք հավաքվում են օրենսգրքերում, պետության կողմից ստանում են իրավական ուժ, պարտադրականության ուժ են ձեռք բերում որոշակի ժամանակներում, որոշակի միջավայրում, որոշակի հանգամանքներում: Երկրորդները էլ, որոնք չեն արձանագրվում օրենսգրքերում և օրենքի ուժ չեն ստանում, կարող են պետության կողմից հովանավորվել, կարող են չհովանավորել, ավելի շուտ ժողովրդական վերահսկողութանն են վերաբերում: Սրանք սովորույթներն ու ավանդույթներն են և ունեն միայն բարոյական ներգործության ուժ: Լեզվական նորմը այս երկու նորմերի միջև միջին տեղ է գրավում: Ի տարբերություն բարոյական նորմերի, որոնց կանոնները սովորաբար չեն ժողովրդում հաստուկ աշխատություններում և չեն ուսուցանվում դպրոցներում, լեզվագործածության կանոնները ուսումնասիրվում են մասնագետ գիտնականների կողմից, շարադրվում են գիտական աշխատություններում, դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում, ուսուցանվում են դպրոցներում, բուհերում, և հանրության յուրաքանչյուր անդամ ստանում է անհրաժեշտ ցուցում այն մասին, թե տվյալ լեզվական միավորը, երևույթը և այլն ի՞նչ համգամանքում, ի՞նչ դեպքում կարելի է գործածել, և ո՞ր դեպքում, ո՞ր հանգամանքում` ոչ: Ի տարբերություն օրենքի ուժ ունեցող կանոնների` լեզվագործածության կանոնները մինչև վերջերս իրավական ուժ չունեին, իշխանությունը չէր պատժում նրանց, ովքեր գիտակցաբար զանց էին առնում լեզվական նորմը կամ անգիտակցաբար սխալվում էին և շեղվում նրա կանոններից: Պարբերաբար հրատարակվող ուղեցույցներից վերջինում միայն լեզվական նորմերը մասնակի իրավական ուժ են ձեռք բերում` երևի թե պայմանավորված խստորեն պարտադրվածը պարտավորվածության վերածելու միտումով: Սրան նպաստում է ՀՀ օրենքը լեզվի մասին. հայոց լեզվի պահպանման և տարածման, անադարտության ապահովման, լեզվա-

¹⁸⁵ Ա. Այտընյան, նշվ., աշխ., էջ 5:

կան իրավունքների և պարտականությունների կողքին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է նաև պատասխանատվություն՝ սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում, օրենքից իրավախախտումների վերաբերյալ տուգանքներ նշվում ¹⁸⁶, բայց և ուղղախոսության մասին գրեթե չի մատնանշվում:

Հայ անվանիների կողմից այլ ժամանակների համար ասվածը արդիական է նաև մեր օրերի համար. **սահմանագծին հասած մեր ժամանակը երևի թե լռությունն ու անտարբերությունը, անհոգությունն ու անփութությունը ընդհատելու, «օրինաց մատեանը» հայալեզու Հայի ձեռքը տալու հրամայականն ունի:** Շեշտադրումը ձեռք բերովի ունակություն է և փոխանցվում է ուսուցմամբ ու կրթությամբ, իսկ այդ ճանապարհը կարճ է. ժամանակակից գրական հայերենում շեշտն ունի կանոնավոր՝ ամրակայված դրություն (բառի վերջին վանկի վրա), և ընդհանրական կանոնը մեկ անգամ իմանալուց հետո մնում է միայն բացառություն կազմող հարաշեշտ ու նախահարաշեշտ և անշեշտ բառերն իմանալ:

¹⁸⁶ Տե՛ս՝ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006:

Լեզվական նորմը ուղղախոսական, բառական-բառակազմական, ձևաբանական, շարահյուսական նորմերի ամբողջությունն է: Սրանցից առավել հաճախ և առավել շատ խախտվում է ուղղախոսական նորմը (արտաբերական-հնչական, շեշտադրական, հնչադարձության, առոգանության-հնչերանգային և այլն): Լեզուն իր բոլոր գործառությունները կատարում է ոչ թե նախադասության, այլ խոսքի միջոցով: Իսկ խոսքային գործունեության մշակույթը պահանջում է նոր տեսանկյունից քննել լեզվական նորմը՝ ներկայացնելով այն հաղորդակցական տարբեր երակներով ու որակներով: Լեզվական փոփոխություններն ու տեղաշարժերն սկզբնապես ձևավորվում են խոսքում: Խոսքային հաղորդակցական գործընթացում նախընտրություն է տրվում լեզվական այն միջոցներին, որոնք ավելի արդյունավետ են, ավելի հարմար են հաղորդակցվելու համար: Խոսքում կատարված քանակական և որակական փոփոխություններն ստեղծում են որոշակի համակարգ, որը քայլ առ քայլ անցնում է լեզվին, ձևավորվում որպես լեզվական կանոն կամ օրինաչափություն: Հենց այս տեսանկյունով էլ քննել ենք շեշտադրության նորմավորման հարցերը: Շեշտադրական նորմին տիրապետել չի նշանակում միայն կանոնների իմացություն, միայն բացառությունների ճանաչում, կարևոր են լեզվական նորմի պահպանմամբ խոսքի ճշտության ապահովումը, իմացական, զգայական-հուզական և կամային երևույթների արտահայտումը, դրանց հմուտ կիրառությունը ընդհուպ այն աստիճանի, որ լեզվականոնի խախտումները չվերածվեն հաղորդակցական արգելանքների, այսինքն՝ լսողն ու կարդացողը հասկանան այն, թե ի՞նչ է ուզում ասել կամ ի՞նչ է գրել լեզվավակիր-խոսքակիր անձը: Շեշտադրական նորմով սահմանված կանոնները խոսքային, հաղորդակցական գործունեության ուղղոր-

դիչներից են. դրանց ամբողջությունը լեզվական ընդհանուր և միասնական կողի շերտերից մեկն է:

Օգտագործելով հարցի վերաբերյալ հայերենագիտական աղբյուրներում և ընդհանուր լեզուներին նվիրված գիտական գրականության մեջ գոյություն ունեցող տեսակետները, քննելով հայ լեզվաբանական նյութը՝ հաշվի առնելով նաև մասնակի, բայց արժեքավոր համանման դիտողությունները և դրանք ընդհանրացնելով՝ կարելի է եզրակացությունների հետևյալ շարքը ներկայացնել՝

1. Լեզվի, նաև խոսքի մշակույթի մեջ կարևորվում է հատույթային (հատությային) և վերհատույթային միավորների ուսումնասիրությունը: Գրավոր խոսքում դրանք դրսևորվում են կետադրական նշանների միջոցով: Հնչյունաբանական-քերականական վերհատույթային (վերգծային) միավորներից է շեշտը:

2. Լեզվական շեշտը լեզվի պատմական կյանքի արդյունք է:

3. Եթե շեշտադրական նորմի համագործածական կանոնները պարտադիր են լեզվակիրների համար, ապա խոսքի մշակությային (հաղորդակցական) կանոնակարգը (նորմը) բավականին ճկուն է և խոսքակիրների համար տեղ է թողնում ստեղծագործելու, իրենց անհատականությունը դրսևորելու:

4. Շեշտի (բառական) ընկալումը կապված է լսողական տպավորության հետ: Բառային շեշտին ուղեկցող երևույթ է ձայնի բարձրացումը:

5. Շեշտը բառի որևէ վանկի արտասանական առանձնացումն է ձայնի ուժգնությամբ. վանկարար հնչյունի ուժգնությամբ՝ շեշտվածությամբ մի վանկն ավելի է առանձնանում մյուս վանկերից:

6. Առավել ուժգին շեշտ ունեն այն լեզուները, որոնցում այն ընկնում է առաջին վանկի վրա: Մասնագետների վկայությամբ՝ լսողության վրա ծանր տպավորություն է թողնում առաջնավանկային շեշտը: Այնինչ հաճելի տպավորություն է ստեղծվում այն դեպքում, երբ շեշտվում է վերջին ձայնավորը (հայերեն խոսքը, հետևաբար, հաճելի պիտի լինի թե՛ հայի, թե՛ օտարի համար):

7. Հայերենի բառային շեշտի դրսևորումը կախված է ձայնաբանական երեք գործոնների՝ ուժգնության, հաճախականության և

տնտեսության բարդ փոխհարաբերությունից: Ինչպես ցանկացած լեզվի, այնպես էլ հայերենի շեշտի ընկալման համար անհրաժեշտ է առնվազն երկու կամ երեք գործոնների համակցություն: Սովորաբար ասում են՝ հայերենի շեշտը ուժգնության հետ ունի և՛ տնտեսություն, և՛ բարձրություն: Տնտեսության և տոնայնության հատկանիշները լրացական դեր ունեն: Փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենի շեշտակիր վանկի տնտեսությունը ամենամեծն է բառի մնացած վանկերի համեմատությամբ:

8. Հայերենի շեշտը հաստատուն է, կայուն. դրվում է բառի վերջին վանկի ծայնավորի վրա, այսինքն՝ դիրքային կապվածություն ունի՝ վերջնավանկային է: Որոշ հանգամանքներով պայմանավորված՝ շեշտը կարող է արտահայտվել նախավերջին (կամ այլ) վանկում. ըստ բանասիրական աղբյուրների՝ հայերենի համար առավելություն է այն, որ **շեշտադրության միակերպությունը բարեխառնվում է հարաշեշտությամբ:**

9. Գրական հայերենի բառային շեշտը նկատելիորեն թույլ է, թեև հաղորդակցական այս կամ այն նկատառումով այն (նույնիսկ երկրորդականը) կարող է ուժեղացվել:

10. Հայերենում սովորական (հասարակ կամ ոչ սաստկական) շեշտն ունի սահմանազատիչ, սահմանանիշ նշանակություն (դեր). ազդանշում է հնչաբառի կամ արտասանական այլ միավորի ավարտը, արտասանական ամբողջություն, ավարտություն է տալիս նրան: Իբրև կանոն, ուր որ շեշտ է դրվում, նշանակում է, թե ավարտվում է մի բառ, և սկսվում է նոր բառ. այն «ֆոնետիկական ցեմենտ» է: Չունի նաև իմաստային ծանրաբեռնվածություն. ծառայում է հատկապես բառի ձևավորմանը և, երկրորդաբար, հնչաշղթայի միավորների ենթադասության արտահայտմանը:

11. Հայերենի շեշտի համար հատկանշական է նաև այն, որ դրսևորվում է 3 աստիճանով՝ ստորին (թույլ), միջին (սովորական), վերին (սուր): Առաջինը հանդես է գալիս բազմավանկ բառերի սկզբնավանկում՝ գլխավոր շեշտի հակադրությամբ, երկրորդը սովորական (հիմնական, բառական) շեշտն է, որը սովորաբար տեղակայվում է բառի լիափունջ վերջնավանկում և միավանկում: Նկատի ունենալով շեշտվող վանկի որոշակիությունը՝ սովորաբար բառա-

կան շեշտի երկու աստիճանները գրության մեջ չեն արտահայտում: Դրանք նշվում են միայն հնչյունական տառադարձություններում, առաջինը (˘) նշանով, իսկ երկրորդը՝ (˙): Երրորդը, որ գրությամբ արտահայտվում է, բնորոշվում է իր առավել ուժգնությամբ, ընդգծված հնչերանգով: Նման շեշտակրությունն անվանում են նաև պարտադիր սրաշեշտություն:

12. Շեշտը դիրքային սահմանափակություն ունի. հանդիպում է միայն ձայնավորների (**ա, ե, է, ի, ու, օ, ո**) վրա: Սրանցից միայն **ը**-ն շեշտակիր չէ, սակայն այս բացառությունն էլ ունի իր բացառությունը (մի քանի դեպքերում շեշտվում է):

13. Բառային շեշտի արտահայտման ժամանակ մեծ նշանակություն ունեն վանկում հնչյունների քանակն ու որակը: Ըստ որակի՝ ձայնավորներն ունեն տարբեր արժեքներ: Բոլոր ձայնավորներն էլ կարող են շեշտվել: Այսպես՝ հայերենում ամենաիզոթ ձայնավորը **ա**-ն է, իսկ ամենաթույլը՝ **ը**-ն: **Ը**-ի շեշտառությունը սահմանափակ է. շեշտվում է միայն այն դեպքում, երբ բառի միակ ձայնավորն է (և այդ բառը ձայնարկությունն է)՝ **թըխկ, շըխկ, չըխկ, հը**: Մնացած ձայնավորները բաշխվում են այս երկու սահմանային ձայնավորների միջև հետևյալ հաջորդականությամբ՝ **ա, օ, է, ու, ի, ը**: Շեշտված վանկի ձայնավորի վրա ազդում են նաև տվյալ վանկը կազմող հնչյունների քանակը և որակը, հնչյունների տարահզորության գործակիցները, վանկի դիրքը, արտասանական շղթայում բառի գրաված դիրքը և այլ գործոններ:

14. Ուղղախոսության, նաև շեշտադրական շատ ու շատ հարցերի ճիշտ և գիտական պատասխաններ կարելի է ստանալ փորձառական հնչյունաբանության միջոցով, վարկածային կամ թեական կարծիքները կարող են հաստատվել կամ չհաստատվել, որոշակիացվել կամ չեզոքացվել փորձառական հնչյունաբանության տվյալներով: Ընդունված է ասել, որ փորձառական հնչյունաբանության հիմնադիրը Հր. Աճառյանն է, բայց նմանատիպ ուսումնասիրություն առաջինը կատարել է Ռ. Թոխմախյանը:

15. Ըստ փորձառական հնչյունաբանության տվյալների՝ հայերենի հնչյունական շղթայում կա շեշտված և անշեշտ վանկերի

որոշակի ռիթմական կառուցվածք, որի համաձայն **«ամեն մի երրորդ վանկը ձգտում է լինել շեշտված»:**

16. Ինչպես տարբեր լեզուներում, հայերենում ևս շեշտված վանկերը արտասանվում են ավելի մաքուր կամ ամբողջական, իսկ անշեշտ վանկերը՝ ավելի թույլ կամ խուլ:

17. Միավանկ և բազմավանկ բառերի հակադրությունն է դառնում հիմք՝ դրանք միավորելու բառային շեշտ կրելու անհերքելի իրողությամբ: Այս հակադրությունը իրավունք է տալիս սահմանել, որ միավանկ բառերը ևս շեշտվում են:

18. Մի խումբ բառերում շեշտը միշտ հարցական ելևէջման հետ է հանդես գալիս, ինչպես օրինակ՝ **մի՞թե, ո՞րերորդ, քանի՞երորդ** և այլն: Սրանք հարցական երանգի նաև շեշտական, կամ բացականչական փոխարինումներով կարող են հանդես գալ, բայց այսպիսի դեպքերում գործառական-իմաստային էական փոփոխություններ չեն նկատվում:

19. Բառային շեշտը կարող է լինել գլխավոր կամ հիմնական, երկրորդական, երրորդական կամ թույլ: Այս բոլորի առկայությունը միևնույն լեզվում պարտադիր չէ, բայց բառը սովորաբար ունենում է գլխավոր կամ հիմնական շեշտ: Բազմավանկ և բարդ բառերում նկատելի են երկրորդական, ըստ որոշ լեզվաբանների՝ նաև երրորդական շեշտների դրսևորման գոտիներ:

20. Բառերը լինում են միաշեշտ, երկշեշտ և անշեշտ: Շեշտադրությունը ընկալելու համար շատ կանոն է անշեշտ և շեշտված վանկերի, անշեշտ և շեշտված բառերի հակադրությունը: Շեշտված վանկն արտաբերվում է արտաշնչության ավելի մեծ ուժով, քան չշեշտված(ներ)ը: Դրա հետևանքով շեշտված վանկերի ձայնավորը կամ շեշտված վանկի շեշտակիր ձայնավորը միշտ համեմատաբար ավելի ուժեղ և երկար է արտասանվում, քան անշեշտ վանկերինը:

21. Շեշտը լինում է բառային, քերականական և տրամաբանական: Շեշտը լինում է նաև խոսքային:

22. Բառում կարևորվում է շեշտված վանկը, շարույթում՝ շեշտված բառը, նախադասության մեջ՝ շեշտված անդամը: Նույն կերպ կարող ենք ասել՝ հնչաշղթայում հնչաբառի մեջ շեշտվում է վանկը, հնչատակտում՝ հնչաբառը, հնչադասության մեջ՝ հնչատակտը: Բոլոր դեպքերում լեզվական կամ խոսքային տվյալ միավորում

անշեշտ բաղադրիչները կամ կազմիչները միավորվում են շեշտված միավորի շուրջը:

23. Բառային շեշտը իմաստային-ոճական, իմացական-զգայական դեր չունի, իսկ շարույթի և նախադասության շեշտերն ունեն:

24. Նախադասության եղանակավորման իրականացման միջոցներից մեկը տրամաբանական շեշտն է:

25. Տրամաբանական (խոսքի) շեշտը և բառի շեշտը միասին և նույն դիրքում են դրվում, ուստի խոսքի շեշտով ավելի է ուժեղանում բառի շեշտը: Հայերենի շեշտը կայուն է, սակայն տրամաբանական շեշտի դեպքում այն կարող է փոխել իր տեղը և ընկնել բառի անգամ ցանկացած վանկի վրա:

26. Հայերենում հնչերանգը և շեշտը բառատարբերակիչ գործառնություն չունեն (հնչերանգը այդպիսի գործառնություն ունի չինդերենում և վիետնամերենում, շեշտը՝ ռուսերենում). նրանց դերը հաղորդակցային-ստորոգական է, օգտագործման նպատակը՝ անծի սուբյեկտիվ վերաբերմունքի (զգացական, կամային, իմացական) դրսևորումը:

27. Հայերենի շեշտը նաև տաղաչափության հիմքում է ընկած. սահմանանիշ դեր կատարելու հատկությամբ է պայմանավորված նաև մեր շեշտի տաղաչափական գործառնությունը:

28. Շեշտի դերը մեծ է նաև խոսքի նվագայնության և ներդաշնակության մեջ:

29. Շետադրական համանունությունը բնորոշ չէ հայերենին:

30. Շետադրության նորմավորման գործընթացը նույնպես լեզվաշինություն է՝ հոգածության և գիտակցական միջամտության անհրաժեշտությամբ պայմանավորված:

31. Շետադրումը ձեռք բերովի ունակություն է, որը, խոսքային դաստիարակությամբ ձևավորված, փոխանցվում է ուսուցմամբ ու կրթությամբ՝ վերածվելով հմտության...

32. Լեզվական-շեշտադրական նորմը կոդ է, որը կիրարկվում է խոսքում: Շետադրական նորմ-կոդը նորմատիվ քերականություններում՝ դպրոցական և բուհական դասագրքերում է:

33. Այն կարգավորվում է գրեթե բացառություն չճանաչող օրինաչափությամբ. ժամանակակից գրական հայերենում շեշտն ունի

կանոնավոր՝ ամրակայված դրություն. վերջնականկային է և կա-
յուն-շարժական:

34. Շեշտադրական նորմը քերականականի նման շատ դան-
դաղ է փոխվում:

35. Շեշտադրական նորմը սահմանում է նաև զանազան գոր-
ծոններով հիմնավորված բացառություն-կանոնները, օրինականաց-
նում է զուգաձևությունների գոյությունը, թույլատրելի համարում
օրինաչափության վերածվելու ներունակությամբ հատկանշվող
տարբերակների գործածությունը՝ համապատասխան հղումներով
արժեքավորելով դրանք, լեզվական արգելանքներ սահմանում
անօրինական, խորթ գործածությունների համար:

36. Շեշտադրության նորմավորման գործընթացում ևս անխու-
սափելի են գրական և բարբառային, տեղական և օտարաբան, նոր-
մավորված և չնորմավորված, ավանդական և նորաբան տարբե-
րակները: Շեշտադրական զուգաձևությունը նույնպես խոսքում է
ծնավորվում, դառնում նրա անսահման դրսևորումներից մեկը: Շեշ-
տադրական զուգաձևությունների առկայությունը շեշտադրական
նորմի գործառության տրամաբանական հետևանքն է:

Իսկ ի՞նչ առաջնահերթային խնդիրներ կան շեշտադրության
նորմավորման գործընթացում, ի՞նչ հարցեր, որ հստակեցման կա-
րիք ունեն:

**Ա. Ձևավորված լեզվական-շեշտադրական հմտության վերա-
ծումը հաղորդակցական հմտության.**

Մերօրյա հայերենում շեշտադրության կառուցվածքային և խոր-
քային նկարագրության արդյունքներն անփիճելիորեն թույլ են
տալիս ենթադրել, որ ճիշտ չէ շեշտի, շեշտադրության, վերջինիս
նորմավորման գործընթացը «կաշկանդել» հնչյունաբանական-ուղ-
ղախոսական մակարդակի սահմաններում: Արտասանությունը և՛
լեզվական մակարդակ է, և՛ խոսքային: Ահա թե ինչու, արդի լեզ-
վամտածողությանը համապատասխան, անվերապահորեն կարելի
է պնդել նաև՝ ընդհանուր առմամբ շեշտադրական նորմը և՛ լեզվա-
կան, և՛ խոսքային արտասանական-հնչական մանրահամակարգե-
րի ենթանորմերի հանրագումարն է: Նշանակում է՝ կարևորագույն
խնդիր է շեշտադրական օրինաչափությունները սահմանել լեզվա-

կան և խոսքիմշակութային նորմերի համադրմամբ: Մյուս կողմից՝ լեզվակիրառողի՝ տեսական նյութի իմացությունը գործնականորեն ափսոսաբեր է, այսինքն՝ ձևավորված լեզվական-շեշտադրական հմտությունը պետք է վերածել հաղորդակցական հմտության: Այս ճանապարհն անցնելու գրավականը տեսական նյութի «գործիքավորումն է»՝ ուղեցույցների, ուղղախոսական-տառադարձական բառացանկերի, քերականական դժվարություններից, լեզվա-խոսքային սխալներից խուսափելու վերաբերյալ դիտողություն-ցանկությունների հաշվառումով կայացված որոշումների և այլ ուղիների միջոցով: Եվ պետք է կտրուկ և «կատեգորիկ» կանոն-հանձնարարականներով առաջնորդվել. վերջնական ընտրությունը լեզվի «ծեռքում» է: Այսօր այս առումով որոշակի տեղաշարժեր կան. ստեղծվում են ուղեցուցային աղբյուրներ, որոնք կարող են նախագծեր կազմելու և համապատասխան որոշումների կայացնելու հիմք դառնալ:

Ինչ վերաբերում է գեղարվեստական խոսքին, ապա ո՞վ կարող է հատկապես բանաստեղծին արգելել վերջնականի փոխարեն այլ վանկ շեշտել կամ ընդհանրապես շեշտադրվել բառը, շեշտակիր ձայնավորի վրա մեկից ավելի գծանշաններ դնել կամ դրանք երկու և ավելի անգամներ կրկնել՝ բազմակի շեշտերով, (հարցական, բացականչական նշաններով), բառի մի վանկի վրա՝ հարցական նշան դնել, մյուսի վրա՝ շեշտ կամ բացականչական նշան... Սա խոսքարվեստային հատկանիշ է, որ կարող է խոսքիմշակութային նորմում կանոն դառնալ, բայց լեզվական նորմում՝ ոչ: Բայց և այնպես չենք կարող չկրկնել արդեն կրկնվածը՝ խոսքային դրսևորումներն են ներունակ բացառությունների, շեղումների տեսքով «երերուն դարձնելու» լեզվական նորմը և «տեղաշարժելու» լեզուն...

Բ. Օտար (փոխառված) բառերի շեշտադրությունը.

Նորմատիվ քերականություններում զետեղված յուրաքանչյուր կանոն օրենքի է վերածվում միայն համապատասխան որոշման հիման վրա: Շեշտադրության վերաբերյալ վերջին որոշումը 1957թ. դեկտեմբերի նիստում տերմինաբանական կոմիտեի կողմից հաստատված որոշումն է, որի նախագիծը կազմել է Ա. Ղարիբյանը: Այն ռուսական և օտարազգի հատուկ անունների շեշտադրության

մասին է, և շուրջ երեք քառորդ դար տեղեկատուից տեղեկատու է փոխանցվում՝ անտարբեր ժամանակի լեզվամտածողությամբ: Կարծում ենք, որ այսօր պետք է նոր նախագիծ կազմել, որը ոչ միայն ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ այլ լեզուներից օտարազգի անձնանունների փոխառության և նրանց շեշտադրման մասին պիտի լինի, այլև շեշտադրական տարատեսակ յուրահատկություններ ունեցող լեզուներից կատարված փոխառությունների, որը ոչ միայն անձնանունների, այլև տեղանունների (ընդհանրապես հատուկ անունների), նաև շատ հասարակ անունների շեշտադրության կանոնարկմանը պիտի վերաբերի: Մեր անձնական համոզմամբ աշխարհաքաղաքականության այսպիսի իրավիճակում ճիշտ լեզվաքաղաքականությունն այն է, որ օտար բառեր փոխառելիս դրանք թե՛ ուղիղ և թե՛ թեք ձևերում պետք է ենթարկել հայերենի շեշտադրությամբ, ինչպես Ա. Այտընյանն է ասում, «հայորեն շեշտել»: Այս դեպքում կարելի է հավելել՝ թույլատրելի համարել շեշտադրական զուգաձևությունները՝ ճիշտ համարելով վերջնականկային շեշտադրությունը, թույլատրելի՝ օտարաշեշտությունը: Ցանկացած զուգաձևության վախճանակետը միօրինակացման մեջ է՝ փոխառյալ հատուկ անունների հայերենացված շեշտադրությամբ, փոխառյալ հասարակ անունների՝ կամ հայերեն համարժեքների ստեղծման, կամ հայերենացման ճանապարհներով:

Գ. Կոչականի շեշտադրությունը.

Լեզվական նորմը սահմանում է՝ կոչականի պարտադիր-սուր շեշտը ընկնում է վերջին վանկի ծայնավորի վրա: Սակայն խոսքային մակարդակում վերհատույթային այս արտահայտիչը եղանակավորական-իմաստային տարբերությունների, տրամաբանական ելևէջումների ցուցիչ է դառնում, որը նաև գրավոր խոսքում է դրսևորվում՝ շեշտի դիրքային փոփոխակներով: Ասվածը լսողական տպավորությունների, վիճակագրության, փորձառական հնչյունաբանության տվյալներով հաստատվելու դեպքում գիտական կլինի թույլատրելի համարել կոչականի հարաշեշտությունը:

Դ. Բազմաբարդ բառերի շեշտադրությունը.

Հայ լեզվաբանության մեջ ուշադրություն են դարձրել նաև երեք և ավելի վանկերից, **համ(ա)-, հակ(ա)-, վեր(ա)-, գեր-** և այլ նախածանցներով կազմված բառերի **երկրորդական** շեշտի վրա: Գլխավոր շեշտին ուղենցող երկրորդական շեշտն իր բնույթով թույլ է և սովորաբար ընդգծում է նշվածների իմաստակիր բաղադրիչները, հատկապես արմատական մասերը: Ըստ փորձառական հնչյունաբանության տվյալների՝ հայերենի համար օրինաչափական է յուրաքանչյուր երրորդ վանկի շեշտվածությունը: Կարելի է օրինականացնել երկրորդական շեշտի գործածությունը, հակառակ դեպքում վերջնավանկային արտասանության ուղղորդվածությունը կարող է հասցնել նախավերջնավանկային կամ միջնավանկային շեշտադրության միտվածության:

Ե. Շեշտադրության նորմավորման գործընթացում մեկ-երկու հարցի հստակեցման անհրաժեշտություն ևս կա:

ա) Շատ հաճախ շեշտի մասին խոսելիս առավելապես բազմավանկ բառերին են ուշադրություն դարձնում՝ նրանցում առանձնացնելով շեշտակիր վանկը, որը հակադրվում է մյուսներին իր ուժգնությամբ, հստակությամբ և հնչեղությամբ: Բայց շեշտ ունեն նաև միավանկ բառերը, որոնցում հակադրության բացակայության պատճառով չի երևում շեշտի գոյությունը, որի պատճառով էլ լեզվաբաններից մի քանիսը նշում են, թե միավանկ բառերը շեշտակիր չեն:

բ) Մյուս հարցը հետևյալն է: Շեշտադրության ուսումնասիրության գործընթացում առավելապես նյութական խոսքի մասերի շեշտադրությունն է կանոնարկվել, իսկ ոչ նյութական խոսքի մասերից միայն պարտադիր սրաշեշտությամբ հատկանշվող բառերն են առանձնացվել: Իսկ մնացածները. դրանք շեշտակի՞ր են, թե՞ անշեշտ են...

Նմանատիպ հարցերի քննությունը պարտադիր է շեշտադրության նորմավորման գործընթացում, և շեշտի հնչական-հնչարտաբերական, արտասանական-ուղղախոսական բնութագիրը անհրաժեշտ է լրացնել խնդրո առարկայի բառական-բառակազմական, ձևաբանական-ձևակազմական և շարահյուսական-ոճական քննության տվյալներով, խոսքիմշակության կիրարկության (գործառության) օրինաչափական միտումների ընտրությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. 5, հ. 6, հ. 8, Երևան, 1971, 1974, 1985:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952:
4. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981:
5. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. բառ և խոսք, Երևան, 1986:
6. Աբրահամյան Ս., Հայերենի կետադրություն, Երևան, 1999:
7. Աբրահամյան Ս., Հայոց լեզու. Շարահյուսություն (Բուհական ձեռնարկ), Երևան, 2004:
8. Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու (Ղասագիրք 5-7-րդ դասարանների համար), Երևան, 1965:
9. Աղայան Է., Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964:
10. Աղայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու , 4, Երևան, 2004:
11. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3., հ. 6. Երևան, 1957, 1971:
12. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005:
13. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
14. Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955:
15. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979:
16. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հնչյունաբանություն (Ուղղախոսություն, ուղղագրություն), Երևան, 2008:
17. Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011:
18. Ավետիսյան Յու... և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
19. Ավետիսյան Յու., Թեյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ., Հայոց լեզվի ուղեցույց, Եր., 2017:
20. Բաղդկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, Երևան, 2012:
21. Բահաթրյան Ա., Հին հայոց տաղաչափական արվեստը, Եր., 1984 (1891-վերատպությունը):
22. Բարսեղյան Հ., Ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973:
23. Բեդիրյան Պ. Հայ լեզուն և մեր խոսքը (Գրական արևելահայերեն խոսքի ուղեցույց), Երևան, 2007:
24. Գասպարյան Ս., Կիրակոսյան Մ., Հայերեն-ռուսերեն / ռուսերեն-հայերեն բառարան, Երևան, 2011:
25. Գարեգինյան Գ., Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, թիվ 2:

26. **Գյուրջինյան Ղ.**, Հայերեն բառարան տեղեկատու. Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Երևան, 2001:
27. **Գյուրջինյան Ղ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա.**, Մայրենի, 5 (հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք), Երևան, 2015:
28. **Գրիգորյան Ա.**, Հայոց լեզու, (8-10-րդ դասարանների համար), Եր., 1963:
29. **Դավթյան Յու.**, Հայերենի կետադրության ինքնուսույց, Եր., 1995:
30. **Դարբինյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, կետադրություն, Եր., 1990:
31. **Զաքարյան Հ.**, Կետադրական բառարան, Երևան, 1998:
32. **Թոխմախյան Ռ.**, Հնչյունաբանական դիտարկումներ, (Գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2017:
33. **Թոխմայան Ռ.**, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Ե., 1983:
34. **Թորոսյան Ա.**, Հայերենի կետադրությունը (ուսումնասօժանդակ ձեռնարկ), Երևան, 2004:
35. Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Երևան, 1984:
36. Լեզվի և ոճի հարցեր, 5, Երևան, 1978:
37. **Խաչատրյան Լ.**, Լեզվաբանության ներածություն (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2008:
38. **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ա, Երևան, 2005:
39. **Կատվալյան Վ.**, Ուղղագրական և կետադրական ուղեցույց, Երևան, 1992:
40. Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:
41. Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975:
42. Հայոց լեզվի և ոճի հարցեր, 3, Երևան, 1975:
43. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի առձեռն բառարան, Երևան, 2011:
44. Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
45. **Դարագյուլյան Թ.** Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974:
46. **Դարիբյան Ա.**, Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941:
47. **Դարիբյան Ա., Պարիս Գ.**, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Եր., 1957:
48. **Դարիբյան Ա., Պարիս Գ.**, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, 1959:
49. **Դարիբյան Ա.**, Հայոց լեզու (Դասագիրք 5-7-րդ դասարանների համար), Երևան, 1964:
50. **Դավանցյան Գ.**, Ընդհանուր լեզվաբանություն, Հ. 1., Երևան, 1939:
51. **Մեյթիխանյան Փ.**, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Երևան, 2005:
52. **Մխիթարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության համառոտ ուղեցույց (Ուսումնական ձեռնարկ), Երևան, 2011:
53. **Մարգարյան Ալ.**, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
54. **Մարգարյան Ալ.**, Գորիսի բարբառը, Երևան, 1975:
55. **Մարգարյան Ալ.**, Հայերենի բաղիյուսական բարդությունները, Երևան, 1986:

56. **Մեյե Ա.** (Անտուան), Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:
57. **Մխիթարյան Հ.**, Հայերնի կետադրության համառոտ պատմություն, Երևան, 1972:
58. **Սուրադյան Մ.**, Շատախի բարբառը, Երևան, 1962:
59. **Պապոյան Ա.**, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2007:
60. **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարաբյուրյան Է.**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
61. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
62. **Պետրոսյան Վ.**, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան, 2015:
63. **Պողոսյան Պ.**, Հայոց լեզու (Օժանդակ ձեռնարկ բուհ ընդունվողների համար), Երևան, 1969:
64. **Պողոսյան Պ. Մ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1990:
65. **Ջահուկյան Գ.**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին ու միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:
66. **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959:
67. **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
68. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
69. **Ջահուկյան Գ., Աղայան Է. , Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980:
70. **Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզու, Ոճաբանություն (Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Երևան, 2007:
71. **Սահակյան Վ. Ա., Սահակյան Վ. Վ.**, Ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Երևան, 2010:
72. **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Երևան, 1985:
73. **Սարգսյան Ա.**, Ժամանակակից հայերենի կետադրությունը, Ե., 2012:
74. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999:
75. **Սուքիասյան Ա., Սուքիասյան Բ., Ֆելեքյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 2017:
76. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006:
77. Տերմինաբանություն և խոսքի մշակույթի հարցեր, 1, Երևան, 1976:
78. **Введенская, А. Павлова, Е. Кашаева,** Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2004.
79. **Вендина Т. И.,** Введение в языкознание, Москва, “Высшая школа”, 2003.
80. **Головин Б.,** Основы культуры речи, Москва, 1988.
81. Русский язык и культура речи, Москва, 2004.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	
Շեշտադրությունը որպես ուղղախոսության ենթադրուղ և խոսքի մշակույթի լեզվաբաղադրիչ	13
Շեշտի հիմնական գործառնությունները	18
Շեշտը արևմտահայերենում	21
Շեշտադրության կապը լեզվաբանասիրական և այլ գիտությունների հետ	23
ՇԵՇՏԻ, ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐՄԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱԳԻՏԱ- ԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՐՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	
Շեշտի և շեշտադրության հարցերի քննությունը լեզվագիտական- հայագիտական ուսումնասիրություններում	36
Շեշտադրական նորմը դպրոցական դասագրքերում, բառարաններում և ուղեցուցային աղբյուրներում	87
ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	99
Շեշտը բարբառներում	106
Օտար անունների շեշտադրությունը	122
Երկրորդական շեշտ	142
Անշեշտ բառեր	148
Քերականական շեշտ կամ շեշտագծանշված բառեր	156
ՇԵՇՏԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	162
Շեշտադրական շեղումներ	164
Շեշտադրական տեղաշարժեր և զուգաձևություններ	184
ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱՐԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԸ	204
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	218
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	228

ԶԱՐԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՐԱՋԱՆՅԱՆ

ՇԵՇՏԸ ԵՎ ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Ծանճապանյանի

Պատվեր՝ 7:
Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան-91